


ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

4/2013

АРМЕНОВЕДЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ
(сборник статей)

ARMENOLOGY RESEARCHES
(collection of articles)



Տպագրվում է ԱրՊՀ գիտական խորհրդի որոշմամբ

Մտնփանակերտ - 2014



ՀՏԴ 001(045)
ԳՄԴ 72 ց1
Հ 246

Խմբագրական խորհուրդ

- Բալայան Վ. Ռ. - գլխավոր խմբագիր, պ.գ.դ., պրոֆեսոր
Սաֆարյան Վ. Ա. - պատասխանատու քարտուղար, ԱրՊՀ պատմության
ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ
Դադայան Ս. Վ. - Արցախի գիտական կենտրոնի տնօրեն, պ.գ.թ., պրոֆեսոր
Մելքոնյան Ա. Ա. - ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ.,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Հովհաննիսյան Լ. Ծ. - ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն, բ.գ.դ., պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Պետրոսյան Հ. Լ. - ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ, պ.գ.դ.,
պրոֆեսոր
Մուսայելյան Հ. Գ. - ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ.,
պրոֆեսոր
Սարգսյան Ա. Յ. - ԼՂՀ կրթության եւ գիտության փոխնախարար, բ.գ.թ.,
դոցենտ
Կարապետյան Ս. - ՀՃՌԻԿ կազմակերպության տնօրեն

Հայագիտական ուսումնասիրություններ: Հոդվածների ժողովածու 4/2013.-
Ստեփանակերտ: ԱրՊՀ հրատ., 2014.- 204 էջ:

ՀՏԴ 001(045)
ԳՄԴ 72 ց1

Редакционная коллегия:

- Балаян В.Р. - главный редактор, д.и.н., профессор
Сафарян В.А. - ответственный секретарь, зав. кафедрой истории АрГУ, к.и.н., доцент
Дадаян С.В. - директор Арцахского научного центра, к.и.н., профессор
Мелконян А.А. - директор Института истории НАН РА, д.и.н., член корр. НАН РА
Оганесян Л.Ш. - директор Института языка НАН РА, д.ф.н., член корр. НАН РА
Петросян Г.Л. - зав. кафедрой культурологии ЕрГУ, д.и.н., профессор
Мусаелян О.Г. - декан филологического факультета АрГУ, д.ф.н., профессор
Саркисян А.Ю. - заместитель министра Образования и науки НКР, к.ф.н., доцент
Карапетян С. - председатель общественной организации по изучению армянской архитектуры.

Editorial Board:

- Balayan V.R. - Editor in Chief, Ph.D. in History, Professor
Safaryan V.A. - Executive Secretary, Head of the History Department of ASU, Ph. D. in History, Associate Professor
Dadayan S.V. - Chief of the Artsakh Scientific Centre, Ph.D. in History, Professor
Melqonyan A.A. - Director of the Institute of History of NAS in RA, Ph. D. in History, a member of NAS in RA
Hovhannisyan L. Sh. - Director of the Institute of Linguistics of NAS in RA, Ph. D. in Philology, member of NAS in RA
Petrosyan H. L. - Head of the Cultural Studies Department of YSU, Ph. D. in History, Professor
Musaelyan O.G. - the Dean of the Philological Faculty of ASU, PhD in Philology, Professor
Sargsyan A. Y. - Deputy minister of Education and Science of NKR, Ph. D. in Philology, Associate Professor
Karapetyan S. - Chairman of the Social Organization for the Study of Armenian Architecture

**ՇՈՒՇԻԻ ՈՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՋԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ¹**

Վարդգես Սաֆարյան

*Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ԱրՊՀ*

Համլետ Պետրոսյան

*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԵՊՀ*

Նորա Ենգիբարյան

ՀԱԻ

Շուշիի հին պատմության, հիմնադրման, կառուցապատման, նրա առանձին հուշարձանների պատկանելության խնդիրները մեկ անգամ չէ, որ հայտնվել են Ադրբեջանի զավթողական նկրտումների «հիմնավորումների» ցանկում: Տասնամյակներ շարունակ Ադրբեջանի կառավարությունը ու մտավորականությունը իրենց ժողովրդին քարոզել են մի առասպել, ըստ որի՝ Շուշին ծագել և գոյատևել է որպես ադրբեջանական քաղաք և ադրբեջանական մշակույթի բնօրրան: Եթե մինչև Շուշիի ազատագրումը տարածքի հայկական պատկանելիությունը հստակորեն ցույց տալու համար հայ հետազոտողները ստիպված էին բավարարվել առավելապես գրավոր աղբյուրների և նոր ժամանակների (XVIII-XIX դարեր) իրողությունների քննությամբ, ապա այսօր հնարավորություն կա լայնորեն օգտագործելու հնագիտական, վիճագրական, տեղագրական բնույթի բազմաթիվ աղբյուրները, որոնք ֆիզիկապես մատչելի են դարձել միայն Շուշիի ազատագրման շնորհիվ:

2004թ. մայիսին «Շուշի» հիմնադրամի նախաձեռնությամբ, «Երկիր» և «Երկիր ավետյաց» կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ դաշտային հնագիտական դիտումների միջոցով կազմվել է Շուշիի և շրջակայքի հնագիտական հուշարձանների ցուցակն ու դրանց տեղաբախշման քարտեզը: Ցուցակը ներառում էր պալեոլիթից մինչև XX-րդ դարի սկիզբն ընդգրկող մոտ 500 հուշարձան:

2005թ. հունիս-հուլիս ամիսներին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախումբը՝ Համլետ Պետրոսյանի գլխավորությամբ, հնագիտական պեղումներ իրականացրեց Շուշի քաղաքում և նրա շրջակայքում: Հետազոտությունը ընթացել է երկու հիմնական ուղղություններով՝ հնագույն դամբարանների պեղումներ, որոնց

¹ Հոդվածն ընդունված է 23.12.13:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ պատմության ամբիոնը:

նպատակն է հայերի կազմավորման խնդիրները լեռնաշխարհի այս հատվածում լուրջ գիտական հիմքերի վրա դնելը, և միջին դարերի հուշարձանների պեղումներ, որոնց նպատակն է ցուցել Շուշիի սարահարթի բնակեցված լինելն ու տեղում հայկական մշակույթի առկայությունը մինչև Փանահի հայտնվելը տարածաշրջանում:¹

Արշավախումբը 2005թ. Շուշիին հյուսիսից և հյուսիս-արևելքից հարող դամբարանադաշտերից յուրաքանչյուրում պեղել է մեկական դամբարան: Հյուսիսային դամբարանադաշտում ընտրվել էր 61 համարը կրող կիսավեր դամբարանը: Այն շրջապատված էր իրար կողքի, տարբեր մեծության քարերով շարված կրոնլեխի երկու շարքով: Առաջին շարքի շարի մեջ կային ուղղահայաց դրված մի քանի սալաքարեր: Հյուսիսային կողմի քարերը բացակայում էին: Կրոնլեխի երկրորդ շարքի քարերը դասավորված էին պարուրած: Դամբարանի հյուսիսային մասում (կրոնլեխի երկրորդ շարի ներսում) հայտնաբերվել են երկաթե գեղարդ և արծաթե դրվագված զարդաթիթեղ: Արևմտյան հատվածի կրոնլեխի քարերի մոտ գտնվել է բրոնզե զանգ և երկու ապարանջան:

Դամբարանախուցը ուղղանկյուն հատակագծով քարարկղ էր, որի պատերը շարված են միջին մեծության քարերով և մի քանի սալաքարերով: Արևելյան պատի հարավային, հյուսիսային արևելյան հատվածները բացակայում էին: Խցի մաքրման ընթացքում տարբեր մակարդակներից հայտնաբերել են մի քանի հարյուր խեցեբեկորներ, օբսիդանից նետասլաք, ուլունքներ:

Նախնական դիտարկումներով թիվ 61 դամբարանը թվագրվել է մ.թ.ա. VII-VI դարերով:

Պեղված երկրորդ դամբարանը՝ թիվ 175/1, գտնվում է հյուսիս-արևելյան դամբարանադաշտում՝ Ստեփանակերտից Շուշի մտնող ճանապարհի աջակողմյան երեք բլուրներից երկրորդի լանջին: Քարահողային լիցքից հայտնաբերվել է օբսիդիանի շեղք, խեցանոթի մի քանի բեկոր: Դամբարանի ծածկասալերը բացակայում էին: Խուցը պատված էր մանր քարերի լիցքով: Դամբարանախուցը ուղղանկյուն հատակագծով սալարկղ է, որի հյուսիսային կեսի տարբեր մակարդակներից հայտնաբերվել են դարչնագույն միականթ սափորի և կճուճի բեկորներ: Հարավային պատի մոտ՝ հատակին, դրված էին սև անոթի վատ պահպանված բեկորներ, գավազանի գլխադիր, ապարանջան, սարդիոնե ուլունք: Սակավաթիվ նյու-

¹ Ենգիբարյան Ն., Տիտանյան Ս., Շուշիի երկաթեդարյան դամբարանները, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, եր. 2007, էջ 260:

թերից ուշագրավ է գավազանի գլխադիրը: Այն սնամեջ է, գլանաձև իրանով, կիսաշրջանաձև գլխով: Հարդարված է երկայնակի անցնող միջանցիկ անցքերի և ելուստաձև շեղանկյունների շարքով: Այս իրերը լայն տարածում են ստանում մ.թ.ա. I հազ. սկզբում: Իշխանության խորհրդանիշ այս իրերի զուգահեռները կան Լծենում, Բալուկայում,¹ Խանաբադում² և այլ վայրերում: Հայտնաբերված բրոնզե բարակ լարից ապարանջանը պատկանում է ամենատարածված և երկար գոյատևող տեսակին, իսկ խեցանոթներից ամբողջական է միայն միականթ սափորը, որն էլ իր զուգահեռներն ունի մ.թ.ա X-VIII դարերում՝ Սիսիանի առաջին և Տեղի դամբարանադաշտերի նյութերում:

Երկաթեդարյան դամբարանների պեղումներին զուգահեռ 2005թ. հունիս-հունիս ամիսներին Շուշիում հետազոտվել են նաև միջնադարյան և ավելի ուշ շրջանի հուշարձաններ:

Շուշիի արևելյան պարսպապատին կից գտնվող Հայ-ռուսական գերեզմանոցի հին հատվածի պեղումները ցույց են տվել, որ այստեղ XII-XIII դարերում եղել է հայկական գերեզմանոց, որի խաչքարերը հետագայում XIX դարի կեսերին օգտագործվել են նոր թաղումների վրա: Այստեղ վավերացված XII-XIII դարերի հինգ խաչքարեր վկայում են, որ Շուշիի սարահարթը հայերի կողմից բնակեցված էր Խաչենի հայկական իշխանության ամենածաղկուն դարաշրջանում: Հետաքրքիր են նաև քաղաքի Հին հանգստարանի մի մասի մաքրման հետևանքով բացված տապանաքարերը: Նրանցից մեկը թվագրված է 1771թ., ինչը, փաստորեն, այսօր Շուշիի՝ պարսպապատերի մեջ առնված տարածքի ամենահին հայերեն արձանագրությունն է:

Չափազանց ուշագրավ կարելի է համարել Հունոտի կիրճի Ավանի կարան կոչվող ամրացված քարանձավի կողքի ամրոցի հետախուզական պեղումները: Նրա վերին հարթակի մաքրման ժամանակ բացված թոնրի շրջակայքից և լիցքից գտնվել են XII-XIV դարերին վերաբերող նյութերի բազմաթիվ նմուշներ: Հատուկ նշելի են մոնղոլական տիպի նետասլաքն ու չինական սելադոնի բեկորը, որոնք ոչ միայն ապացուցում են, որ Շուշիի սարահարթի արևելյան՝ Հունոտի կիրճը բնակեցված էր այդ ժամանակ, այլև, որ այստեղով անցնում էր առևտրական մի ճանապարհ, որի պահպանության համար էլ Խաչենի իշխանները ստեղծել էին այս ամրությունները: Այս նոր տվյալները հիմք են տալիս հենց այստեղ տեղադրելու պատմիչների հիշատակած Կարկառ ամրոցը, որը XVII դարի վերջերին՝

¹ Есаян С., Символы власти родо-племенной знати Армении эпохи поздней бронзы и железа, Вестник Ереванского университета, 1989.

² Сафарян В., Археологические находки в селе Ханабад, ИЖФ, 1992, N 1, с. 230.

հայ ազատագրական շարժումների ժամանակ, վերակառուցվեց և ստացավ Ավանի կամ Փոքր սղնախ անունը:

Նախնական եզրակացությունն այն է, որ ոչ թե պարսիկ ու թուրք եկվորները, այլ նրանցից առաջ հայ Մելիք-Շահնազարն ու Ավան հարյուրապետը XVIII դ. սկզբներին անրացրել-վերակառուցել են արդեն դարեր առաջ հայ իշխանների կողմից հիմնված ու կարևորված ամրակետերը:


Շուշիի պարսպապատերի մանրամասն դիտումների և համապատասխան մասնագիտական գրականության քննությամբ հաջողվել է պարզել, որ Շուշիի ներկա տարածքում մինչև Փանահի կողմից պարիսպների կառուցումը (XVIII դարի 50-ական թվականներ) եղած ամրոցներից մեկի ավերակները համընկնում են Մխիթարաշենի դարպասների կողքի պարսպահատվածին: Այստեղ ձեռնարկված լայնածավալ պեղումները տվել են լուրջ տվյալներ, որոնք վկայում են, որ պարսպապատերից ներս գտնվող այս հատվածը բնակեցված է եղել զոհե մ.թ.ա I հազարամյակի սկզբից: Սա մի լուրջ տվյալ է՝ վերջ դնելու Շուշի սարահարթն առաջին անգամ Փանահի կողմից բնակեցնելու ադրբեջանական առասպելին: Ամրոցը գտնվում է համարյա Շոշ գյուղի դիմաց և ընդամենը 250մ է հեռու խաչքարերով գերեզմանոցից: Հետաքրքիր է, որ 18-րդ դարում կառուցած աշտարակի շարվածքում դիտվում է 12-13 –րդ դդ. խաչքարի մի բեկոր:

2012թ. գարնանը Շուշի քաղաքի հարավ-արևելյան ծայրամասում՝ Ավան հարյուրապետի դրյակից շուրջ 100մ հյուսիս-արևմուտք, շինարարական աշխատանքների միջոցին հայտնաբերվել է վաղ քրիստոնեական ժամանակաշրջանին պատկանող դամբարանադաշտ: Շուշի քաղաքի տարածքում պատահաբար հայտնաբերված նման դամբարանները շատ կարևոր են հենց այն առումով, որ մինչև հիմա Շուշիի վաղքրիստոնեական մշակույթի ու պատմության մասին մենք բացարձակապես ոչինչ չգիտենք: 2005 թվականին մեր արշավախմբի ամենամեծ երազանքն էր վաղքրիստոնեական որևէ հուշարձան գտնել բուն քաղաքի տարածքում: Նորաբաց դամբարանները վկայում են, որ հայերը ապրել են Շուշի քաղաքի տարածքում արդեն իսկ 6-7-րդ դդ.:

Նկատի ունենալով հուշարձանի կարևորությունը՝ պայմանավորվածությամբ է ձեռք բերվել ամռան ամիսներին կատարել հնագիտական հետախուզական պեղումներ:

Ցավոք, նախատեսված պեղումները չեն իրականացվել:

Շուշիի պեղումները շատ կարևոր են հայրենի պատմության ու մշակույթի հետազոտության, պրոպագանդան տեսանկյունից և պիտի դառնան պետության հոգածության առարկա և շարունակվեն: Մենք իրավունք չունենք արհամարական վերաբերմունք ցուցաբերելու սեփական մշակութային ժառանգությանը:



Շուշիի և շրջակայքի հնագիտական քարտեզ



Դամբարան թիվ 61, մ.թ.ա. 7-6-րդ դդ. ընդհանուր տեսքը



Դամբարան թիվ 175/1 պեղումներից հետո



Իրեր թիվ 61 և 175/1 դամբարաններից



Հայ-ռուսական գերեզմանոցի 12-13-րդ դդ. խաչքարերից



Իրեր՝ գտնված Կարկառ ամրոցի հարթակի պեղումներից, 12-14 թդ դարեր



Շոշվա սղնախը. պեղված հատվածի ընդհանուր տեսքը



13-րդ դարի խաչքարի բեկոր Շոշվա սղնախի աշտարակի շարվածքում

Первые результаты и перспективы археологических исследований в Шуши и его окрестностях.

Вардгес Сафарян, Гамлет Петросян, Нора Енгибарян

Резюме

В 2004 г. по инициативе фонда «Шуши» в городе Шуши и его окрестностях были осуществлены полевые работы по составлению списка и карты, археологических памятников. Летом 2005 года арцахская археологическая экспедиция института археологии и этнографии НАН РА провела раскопки на территории города и в его окрестностях. В частности, были раскопаны два погребения железного века, проведены разведочные раскопки на территории крепости Авана (12-14 вв.) в местечке Унот. Интересны хачкары 12-13 вв., выявленные на армяно-русском кладбище 19-го века. Весной 2012 г. на юго-восточной окраине Шуши в ходе земляных работ были выявлены раннехристианские погребения. Исследования еще раз подтвердили несостоятельность и абсурдность утверждений азербайджанских властей о первом заселении Шуши лишь во времена Панаха.

**The first results and the prospects of archeological researches
in Shoushi and its outskirts**

Vardges Safaryan, Hamlet Petrosyan, Nora Engibaryan

Summary

In 2004 field operations, initiated by the fund of “Shoushi”, on drafting a list and a map of the archeological monuments were carried out in the town of Shoushi and its outskirts. In the summer of 2005 the Artsakh archeological expedition of the Institute of Archeology and Ethnography of the RA NAS carried out excavations in the territory of the town and its outskirts. In particular, two burials of the Iron Age were excavated; reconnaissance excavations were carried out in the territory of the fortress of Avan (12-14 centuries) in a place called Hunot. Interesting khachkars of 12 - 13 centuries were found in the Armenian-Russian cemetery of the 19th century. In the spring of 2012 early Christian burials were revealed in the south-eastern outskirt of Shoushi. The researches reaffirmed the groundlessness and the absurdity of the allegations of the Azerbaijani leadership about the first settlement in Shoushi in the time of Panakh.

ՆՈՐԱՅԱՅՏ ԱՄՐՈՑԸ՝ ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՄԵՐՁԱԿԱՅՔՈՒՄ¹

Լյուբա Կիրակոսյան

*Ճարտարապետական գիտությունների թեկնածու, դոցենտ
ԵՊՀ*

Արցախի անկրկնելի գետահովիտներից է Խաչենի ձորակը, որի ամբողջ երկայնքով հոսում է Խաչենագետը: Այս գեղատեսիլ հովիտը կառուցապատված է եղել վաղնջական ժամանակներից: Այստեղ բազմաթիվ են պատմաճարտարապետական հուշարձանները, որոնք, հարստացնելով բնական միջավայրը, ստեղծում են մի ինքնատիպ պատմամշակութային լանդշաֆտ: Ամմիջապես գետի ափերից վեր են խոյանում բարձրաբերձ լեռները, որոնք հովտի ամբողջ երկարությամբ անտառապատ են, իսկ ներքնահովտում՝ տեղ-տեղ պսակված ալպյան մարգագետիններով:

Ահա այսպիսի լեռան վրա, Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա գյուղի հարևանությամբ՝ Խաչենագետի ձախ ափին է գտնվում նորահայտ ամրոցը (նկ.1): Այստեղ 2007թ. մայիսին հետախուզական պեղումներ է իրականացրել Արցախի հնագիտական արշավախումբը²: Տեղագնումը, պեղումների արդյունքներն ու կատարված չափագրությունները հնարավորություն են տալիս պարզելու ամրոցի գլխավոր հատակագիծը (նկ.2): Այն տարածվում է լեռան՝ ծովի մակերևույթից 630,0 մ բարձրության վրա գտնվող, մոտ 1.0 հա տարածք զբաղեցնող սարահարթի վրա: Ամբողջ տարածքը պարսպապատ է: Ողջ պարագծով երևում են դրանց մնացորդները (նկ. 3): Պարիսպները կրկնում են բնական ռելիեֆի ուրվագիծը: Ըստ այդմ ստացվել է հյուսիս-հարավ երկայնակի առանցքով ձգված օվալաձև հատակաձև: Բարձրադիր են ամրոցի կենտրոնական և հարավային հատվածները: Կենտրոնական մասում դիտելի են 2,0x4.0 մ հատակագծային չափերով և 0,6 հաստությամբ պատերով ամրոցի ներքին սենյակներից մեկի շինարարական մնացորդները, որը վկայում է ներքին կառուցապատման մասին: Հյուսիսային կողմն ավելի ցածրադիր է, բարձրությունների տարբերությունը հասնում է 10,0 մետրի: Պեղումների շնորհիվ ամրոցի հարավարևմտյան հատվածում բացվել են մոտ 40,0 մետրանոց հարավային պարսպապատի կեսը և ամրոցի մուտքը: Մուտքին ու ժայռածեղպին կից բացվել են կիսակլոր աշտարակի մնացորդները(նկ.4): Կիսակլոր և բլրորաձև աշտարակներով են

¹Հողվածն ընդունված է 20.11.13:
Հողվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ պատմության ամբիոնը:
²Արշավախմբի պետ՝ պատմ. գիտ.դրկ.՝ Հ.Պետրոսյան, հնագիտական ջրկատի ղեկավար՝ Ն.Ենգիբարյան:

ամրացված նաև Արցախի Տիգրանակերտի¹, մայրաքաղաք Արտաշատի պարիսպները²: Դրանք քառանկյունիների նկատմամբ ունեն այն առավելությունը, որ չունեն մեռյալ տարածություն, և եթե քառանկյունի աշտարակների անկյունները հեշտությամբ քանդվում էին, ապա բոլորածնները վտանգից ապահովված էին: Մուտքը ամրոցի պաշտպանական համակարգի ամենախոցելի հատվածն է, որի տեղի ընտրությանը հատուկ ուշադրություն է հատկացվել: Այն պաշտպանված է ինչպես կիրճի կողմից, այնպես էլ՝ աշտարակով: Մուտքերն աշտարակներով ամրացնելու սկզբունքը Հայկական լեռնաշխարհում դարավոր ամրաշինական ավանդույթի արգասիք է: Այս մոտեցումը նկատվում է հնագույն բերդշեներում³, ուրարտական ամրաշինության մեջ⁴, անտիկ և վաղմիջնադարյան պաշտպանական համակարգերում⁵: Այս ամրոցի մուտքն ունի ճակատային ասիմետրիկ տեղադրություն: Նրա առանցքը պարսպապատին ուղղահայաց է: Մուտքն ունի բավական յուրօրինակ կառուցվածք. դեպի ներս լայնացող է (դրսի կողմից 3,4, ներսից՝ 3,8)(նկ.5): Այն առանձնանում է նաև իր բավական լայն բացվածքով, որը պաշտպանական տեսակետից այնքան էլ տրամաբանական չէ: Մուտքը և հատկապես աշտարակը շարված են խոշոր բլոկներով (մինչև 1.0x0,5x0,45 մ չափերով)՝ եռաշերտ երկճակատանի սկզբունքով: Պարսպապատն իրականացված է կոպտատաշ ճակատներ ունեցող, կանոնավոր շարված խոշոր քարերով և ունի 3,5 մ լայնություն: Պահպանված բարձրությունը մինչև 1,0 մ է՝ երկու-երեք շարքերով: Քարերը շարված են պատի երկու կողմերում՝ կանոնավոր շարքերով: Հելլենիստական շրջանի՝ նույն Տիգրանակերտի պարիսպների չոր, անշաղախ շարվածքի փոխարեն, որտեղ հենց քարն էր բեռնվածության հիմնական կրողը, պատի կառուցվածքում իբրև որմնաքարերն իրար կապակցող է ծառայել խիբարախառն հողից կազմված միջուկը (նկ.6): Այստեղ միջուկի ծավալը զգալի գերազանցում է ճակատային քարերի ծավալին: Աշտարակը նույնպես հոծ է՝ արտաքինից կիսաշրջանաձև շարված

¹ Հ. Պետրոսյան, Լ. Կիրակոսյան, *Մշակութային հետազոտություններն Արցախում*, Երեւան, 2009, էջ 28:

² Ժ. Խաչատրյան, *Քաղաքամայր Արտաշատը պատմահնագիտական լույսի ներքո*, ՊԲՀ, 2007, թիվ 2, էջ 2:

³ Գ. Միքայելյան, *Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները*, Երեւան, 1968, էջ 38:

⁴ К.Оганесян, *Архитектура Теишебаини, Кармир-Блур IV, Ереван, 1955, էջ 36, Burney Ch. A. and Lawson R. J., Measured plans of Urartian fortresses, Anatolian Studies, vol.10, 1960, p.192-194. С. Есаян, А.Калантарян, Ошакан I, Ереван, 1988, էջ 107, Կ.Ղաֆադարյան, *Արգիշտիխնիսիի քաղաքի ճարտարապետությունը*, Երեւան, 1984, էջ 43, 55, Հ.Ավետիսյան, Ա.Բորիսյան, *Ուրարտուի հնագիտություն (ամրոց-բնակավայրեր և դամբանային համալիրներ)*, Երեւան, 2010, էջ 34:*

⁵ Г.Тирациян, *Культура древней Армении (IV в. до н. э. – III в.н.э.)*, Ереван, 1988, էջ 161, Լ. Կիրակոսյան, *Վաղմիջնադարյան ամրոց-բնակատեղիների ամրաշինության հարցեր*, ՀՀ 1993-1995թթ. հնագիտ. հետազոտ. արդյունքներին նվիրված 10-րդ գիտ. նստաշրջան, Ձեկ. թեզ., Երեւան, 1996, էջ 37-39:

խոշոր բլոկներ, ներսում՝ քարահողային լիցք: Խոշոր բլոկները դրված են ժայռային հիմքի վրա (նկ.7): Պարսպի իրականացման այս եղանակը, որը հանդիպում է Հայկական լեռնաշխարհի այլ ամրաշինական համակարգերում, հնարավոր է դարձնում այս նորահայտ ամրոցը նախնական թվագրել ուշ անտիկ (մ.թ. 2-3-րդ դդ.) կամ վաղմիջնադարյան (4-8-րդ դդ.) շրջանով: Հետագա պեղումները ավելի հստակեցուն կմտցնեն թվագրության հարցերում: Պետք է նշել նաև, որ ինչպես պեղումների ժամանակ, այնպես էլ ամրոցի տարածքից հայտնաբերված վերագտնյա խեցեղենի բազմաթիվ բեկորները վերաբերում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակին: Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ բարձունքը բնակեցված է եղել դեռևս այս ժամանակներում¹: Ամրոցների թվագրման և ժամանակագրորեն ստույգ տարբերակման խնդիրը նրանց ուսումնասիրության դժվար հարցերից մեկն է: Կառուցված լինելով պաշտպանական տեսակետից հարմար դիրքերում՝ նրանք դարերի ընթացքում չեն կորցրել իրենց դերը, ենթարկվել են տարբեր ժամանակների շինարարական վերանորոգումների և արմատական վերակառուցումների, ինչը բնորոշ է Հայկական լեռնաշխարհի ամրաշինական մշակույթին ընդհանրապես²:

Բարձունքը, որի վրա կառուցված է ամրոցը, հանդիպակաց է Վանքասարին և անմիջապես հաջորդում է նրան: Տեղանքի ուշադիր զննման արդյունքում հետաքրքիր պատկեր է ուրվագծվում: Վանքասարից (որի վրա է տարածվում Տիգրանակերտի ամրացված հատվածը) հետո՝ դեպի հյուսիս, ռիթմիկ շարքով՝ Ստեփանակերտ-Մարտակերտ մայրուղու եզրով, բարձունքներ են ձգվում (նկ.8): Հավանական պիտի համարել նաև այլ ամրությունների գոյությունն այդ լեռնազանգվածների վրա, մանավանդ եթե նկատի ունենանք Տիգրանակերտի առկայությունն այս տարածքում և նաև դրանով պայմանավորված այն կարևոր ստրատեգիական նշանակությունը, որը վերապահված էր Խաչենագետի ներքնահովտին՝ որպես Հայկական լեռնաշխարհի դարպաս և պաշտպանական համակարգ³: Ավելի քան հավանական է այսպիսի համակարգի գոյությունը, քանզի հնուն բերդերը կառուցվում էին տարբեր զավառների կամ աշ-


¹ Հ. Պետրոսյան, Լ. Կիրակոսյան, Վ. Սաֆարյան, Ա. Ժամկոչյան, Ռ. Վարդանյան, Ի. Կարապետյան, Տ. Վարդանեստվա, Արցախի Տիգրանակերտի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները (2005-2009թթ.), Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2005-2010թթ., Ստեփանակերտ, 2011, էջ 15:

² Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 1-ին, Երեւան, 1996, էջ 71:

³ Հ. Պետրոսյան, Լ. Կիրակոսյան, Վ. Սաֆարյան, Ա. Ժամկոչյան, Ռ. Վարդանյան, Ի. Կարապետյան, Տ. Վարդանեստվա, Արցախի Տիգրանակերտի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները Տիգրան Մեծ, Տիգրան Մեծի գահակալության 2100-ամյակին նվիրված միջազգային գիտա-ժողովի նյութերի ժողովածու (2005), Երեւան, 2011, էջ 238:

խարհների սահմանագծերին: Այս պաշտպանական կառույցները տեղադրվել են լեռնագագաթների վրա՝ գետահովիտները հսկելու նպատակով: Այսպիսի համակարգեր գոյություն ունեն Հայկական լեռնաշխարհի տարբեր տարածաշրջաններում¹: Այս ամրոցը, գտնվելով Խաչենագետի ներքնահովտում, ունեցել է այն ռազմավարական դերը, ինչը ուսումնասիրողները վերագրում են Շիկաքար ամրոցին՝ Կարկառի և Խաչենի վերին հովիտների պաշտպանության գործում²:

Տիգրանակերտի մերձակայքում հայտնաբերված՝ վերևում ներկայացված ամրոցը հայկական ավանդական ամրոցաշինության սկզբունքներով կառուցված համալիր է: Այդ են վկայում ինչպես տեղադրությունը, այնպես էլ պարիսպների և ներքին սենյակների պատերի կառուցման եղանակն ու պարիսպ-աշտարակ-մուտք հատակագծային և ծավալատարածական հորինվածքը:




Նկ. 1. Նորահայտ ամրոցի տեղադրությունը




Նկ.2.Ամրոցի հյուսիսային պարսպի մնացորդները Լուսանկարը՝ Հ. Պետրոսյանի

¹ Ա.Զարյան, Սյունիքի ամրոցաշինության որոշ սկզբունքների մասին, ՊԲՀ, Երեւան, 1988, թիվ 1. էջ 231:

² Ս.Սարգսյան, Խաչենի ամրոցները, Ստեփանակերտ, 2002, էջ 148:



Նկ.3. Արրոցի գլխավոր հատակագիծը



Նկ.4. Արրոցի պեղված հատվածը՝ հարավային պարսպապատը և մուտքը, հատակագիծ և ճակատներ, չափագրությունը՝ Լ. Կիրակոսյանի




Նկ. 5. Ամրոցի մուտքը՝ տեսարան դեպի ներս: Լուսանկարը՝ Յ. Պետրոսյանի



Նկ.6. Հարավային պարսպապատի պեղված հատվածը:
Լուսանկարը՝ Յ. Պետրոսյանի



Նկ.7. Հարավային կիսաշրջանաձև աշտարակը՝ տեսարան դեպի Վանքասար և Խաչենագետի ներքնահովիտ: Լուսանկարը՝ Յ. Պետրոսյանի



Նկ.8. Խաչենահովտի ներքնահովտի բարձունքները և նրանց վրա բացահայտված ամրությունները

Крепость, найденная в окрестностях Арцахского Тигранакерта.

Люба Киракосян

Резюме

В статье представлены принцип застройки и строительное искусство крепости, найденной на левом берегу реки Хаченагет близ Тигранакерта в Арцахе. Крепость рассматривается как одно из звеньев оборонительной системы в долине Хаченагета в нижнем течении и как пример вековой традиции фортификационной культуры на Армянском Нагорье.

Newly Excavated Fortress near Tigranakert in Arstakh.

Lyuba Kirakosyan

Summary

The article concerns the building art and principles of construction of the fortress which was excavated on the left bank of Khachenaghet river near Tigranakert in Arstakh. It is regarded as one chain of the defense system of the Kachenaghet valley in its lower current and a sample of the ancient defense constructivel traditions on the Armenian Highland.

ՇՈՒՇԻԻ ԵՎ ՇՐՁԱԿԱՅՔԻ ԽԱՉՔԱՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅՈՐ¹

Համլետ Պետրոսյան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԵՊՀ

Խաչքարը, որպես կանոն, բացօթյա միջավայրում ուղղաձիգ կանգնած, աշխարհի չորս կողմերի հանդեպ հստակ կողմնորոշում ունեցող քարասալ է, որի արևմտահայաց տափակ երեսը զբաղեցնում է կենտրոնում տեղադրված խաչից և նրան ուղեկցող բուսա-երկարաչափական զարդերից, երբեմն էլ՝ թռչունների, կենդանիների և մարդկային կերպարներից բաղկացած քանդակային հորինվածքը:

Խաչքարը հայ մշակույթի ինքնատիպ զարգացման արգասիքն ու ցուցիչն է, հայ ինքնության ամենաբնութագրական խորհրդանշաններից մեկը: Մերձավոր Արևելքի քրիստոնյա ժողովուրդներից և ոչ մեկը նման կոթողներ չի ստեղծել, ուստի խաչքարը նաև հայ մշակույթի ամենատարբերիչ նշաններից մեկն է: Իր զարմանահրաշ քանդակային հորինվածքներով, խաչի փրկագործական խորհրդաբանությամբ և քարի հավերժությունն ներշնչող մշտականությամբ այն եղել է հայ հավատացյալի ամենապաշտելի, իսկ բացօթյա տեղադրությամբ և բազմաքանակությամբ՝ նաև ամենամատչելի սրբություններից մեկը:²

Արցախի վանքերում, գյուղատեղիներում, հին գերեզմանոցներում, ճանապարհների խաչմերուկներում, աղբյուրների մոտ, բարձունքների վրա և այլուր պահպանված հազարավոր խաչքարերն այդ տարածքների հայկականության ամենավառ ապացույցներից մեկն են: Չնայած նման մեծաքանակությանը, ժողովրդի կողմից դրանց հանդեպ տածվող հատուկ ակնածանքին և, ի վերջո, հայ ինքնության ամենազորավոր փաստարկը լինելու հանգամանքին՝ Արցախի խաչքարերն այսօր էլ մնում են չհետազոտված, հիմնականում չիրատարակված, պետական կամ հասարակական հատուկ հոգածության սահմաններից դուրս այն աստիճան, որ դրանց առանձին օրինակների ավերումը, տեղաշարժն ու անհետացումը

¹ Դողվածն ընդունված է 24.11.13:

Դողվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ պատմության ամբիոնը:

² Պետրոսյան Հ., Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008, էջ 9 (այսուհետ՝ Խաչքար):

շատ տարածված և, որպես կանոն, կարծեք թե «աննկատ» մնացող երևույթ է:¹

Խաչքարի առկայությունն արդեն իսկ ցուցում է հայ էթնիկ տարրի ներկայությունն ու մշակութային գործունեության ծավալումը տվյալ տարածքում: Ահա թե ինչու Շուշիի և շրջակայքի խաչքարերի հետազոտությունն առանձնակի գիտական կարևորություն ունի:

Շուշիի և շրջակայքի՝ իմ կողմից հավաքած խաչքարերը ներառում են բուն Շուշին և նրա անմիջական շրջապատը, ինչպես նաև նրան հարող որոշ տարածքներ (Սարուշենի սուրբ Սարիբեկ, Ղայբալու, Խալիփալու, Շոշ գյուղ, Կարմիր գյուղ, Փիրումաշեն եկեղեցի, Աղին նահատակ, Կրկ-ժան, Կարմիր ավետարան վանք, Ղոնդիկ Անապատ, Ավետարանոց, Փախլու, Մռակած, Բանուր նան և այլն), որը շատ դժվար է անվանել ամբողջական: Հուսով եմ ապագայում լրացնելու այդ բացը: Տվյալ քննության նյութ ենք դարձրել հենց բուն Շուշիի և անմիջական շրջապատի՝ 12-13-րդ դարերի խաչքարերը, որոնք բացարձակ մեծամասնություն են կազմում ողջ հավաքած նյութի մեջ: Ավելի ուշ շրջանի՝ 14-17-րդ դարերի խաչքարերին, որոնք ուշագրավ են այն առումով, որ շատ մոտ են այն ժամանակին, երբ Շուշիի սարահարթում առանձնակի ակտիվություն են ցուցա-

¹ Արցախի խաչքարային մշակույթին առաջինն անդրադարձել է անվանի հայագետ Հովսեփ Օրբելին: Գիտնականը հետազոտության առարկա է դարձրել Արցախի խաչքարերի եզակի դրսևորումներից մեկը՝ խաչքարային պատկերաքանդակը: Հոդվածն առաջին անգամ լույս է տեսել 1915թ. և երիտասարդ գիտնականի՝ 1909թ. Արցախ կատարած գիտական գործուղման արդյունքներից մեկն էր (Օրբելի И. А. Бытовые рельефы на хаченских крестных камнях 12-13-го вв // Записки Восточного отделения Императорского русского археологического общества, т. 22, вып. 3-4, с. 327-335): Այն ոչ միայն փորձում էր բնութագրել այդ եզակի երևույթը, այլև մատնանշում էր, թե ինչպիսի լայն հեռանկարներ կարող է ունենալ խաչքարային մշակույթի ուսումնասիրությունն ընդհանրապես: Արցախի խաչքարերին, նորից խաչքարային պատկերաքանդակի կապակցությամբ, նկարագրելով Խաղբալյան տոհմի նախահայրենիքը՝ Գանձասարի դիմաց գտնվող Հավապտուկ վանքն ու Գառնաքարի շրջակայքը, անդրադարձել է նշանավոր հայագետ Գարեգին Հովսեփյանը (Հովսեփյան Գ., Խաղբալյան կամ Պոռոշյանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս, 1969, էջ 16): Հետագայում այս ուղղությունը դարձավ ավանդական, և այսօր հայտնի են մի քանի հոդվածներ, որտեղ նույնպես հիմնականում ներկայացվում կամ քննվում է Արցախի խաչքարային պատկերաքանդակը (Վարախանյան Գ., Երաժիշտ կատարողների քանդակներ 12-13-րդ դդ. Խաչքարերի վրա/Լրբեր հասարակական գիտությունների, 1976, թիվ 3, էջ 99-105: Улубабян Б. Хачкары Арцаха // Четвертый межд. симпозиум по армянскому искусству: Тез. докл., Ереван, 1985, с. 273-274. Դիվան հայ վիմագրության, սր. 5 /Կավեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 25-27, 31 և հջրդ., նկ. 13, 14, 20: Мкртчян Ш. Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ереван, 1989, с. 19-20. Վարապետյան Ս., Պորեցիք գետահովտի պատմաճարտարապետական հուշարձանները ըստ նորահայտ արձանագրությունների/Լրբեր հասարակական գիտությունների, 1984, էջ 75-86: Петросян Г. К интерпретации группы сюжетных рельефов на хачкарах Арцаха // Պատմա-բանասիրական հանդես, 1997, թիվ 2, էջ 164-171: Միայն վերջերս հրատարակված գրքում է, որ փորձել ենք համառոտ բնութագրել Արցախի խաչքարային մշակույթը (տե՛ս Խաչքար, էջ 96-97, 155-157, 177-180, 299-310, 315-319 և այլն):

բերում Փանահն ու նրա հետնորդները, նպատակ ունենք անդրադառնալ մի այլ առիթով:

Բուն Շուշիիում՝ պարիսպներից ներս ինձ հայտնի են երկու խաչքարերի բեկորներ, որոնցից մեկն այժմ պահվում է Շուշիի պատմա-երկրագիտական թանգարանում և այստեղ է բերվել բանտի տարածքից (նկ. 1), ուր այն օգտագործված է եղել որպես բակի սալահատակի քար: Երկրորդ բեկորը ծագում է Մխիթարաշենի դարպասներ կոչվող հատվածից, որն իրականում 17-րդ դարի վերջի ամրոց է, և խաչքարի բեկորն օգտագործվել է որպես աշտարակի շինաքար: Երկուսն էլ պատկանում են այս տարածքի՝ 12-13-րդ դարերի տիպական խաչքարերի թվին՝ հյուսածո երիզներով խորանի մեջ տեղադրված՝ եռաելուստ երկատումներով կենտրոնական խաչ և խորանի վերնանկյուններից դեպի խաչահատումն իջնող խաղողի ողկույզներ: Շուշիի անիջական շրջապատում, որը ներառում է Քարին տակ և Ղայբալու վտակների միջագետքը, վավերացվել են մոտ երկու տասնյակի հասնող խաչքարեր, որոնք, բացի մեկից (այն թեականորեն կարելի է թվագրել 10-11-րդ դարերով, նկ. 2), նույնպես պատկանում են 12-13-րդ դարերին, հորինվածքը նորից սահմանափակվում է հուսածո զարդագոտիներով, խորանում ներառված խաչերով, մի քանի օրինակների վրա կան պատկերաքանդակներ: Արձանագրություններ վավերացվել են միայն երեք դեպքում. դրանք, ցավոք, դեռևս ամբողջովին չեն ընթերցվում:

Շուշիի ավելի ընդարձակ շրջակայքը ներակայացնում է համարյա նույն տեսականին: Սակայն այս դեպքում առկա են շատ ավելի ուշագրավ պատկերաքանդակներ և արձանագրություններ, որոնք հնարավոր են դարձնում ավելի ամբողջականորեն ներկայացնել երևույթը:

Ընդհանրապես, 12-13-րդ դարերի խաչքարերի նման առատությունը խիստ օրինաչափ է Արցախի համար և միայն Շուշիի և նրա շրջակայքի առանձնահատկությունը չէ: 12-րդ դարի կեսերից Արցախում սկսվում է քաղաքական ու մշակութային մի վերելք, որն իր գագաթնակետին հասնում է 12-րդ դարի վերջերին ու 13-րդ դարի առաջին կեսին՝ հիմքում ունենալով ազգային-ազատագրական կռիվների հետևանքով ձեռք բերած քաղաքական անկախությունը և դրանով պայմանավորված տնտեսական ու մշակութային զարգացումը: Հենց այս ժամանակին էլ վերաբերում է արցախյան խաչքարերի գերակշիռ մեծամասնությունը:

Շուշիի և շրջակայքի բոլոր խաչքարերն էլ պատրաստված են միջին և բարձր կարծրության սպիտակ և դեղնավուն տեղական կրաքարից, սակայն ժամանակի ընթացքում հատկապես այն խաչքարերը, որոնք հողով

չեն ծածկվել, ձեռք են բերել մոխրագույն երանգ: Որոշ օրինակների վրա պահպանվել են նաև նեղացող պոչուկները, մի դեպքում նաև՝ ուղղանկյուն անցքով պատվանդանը: Կարելի է հավանական համարել, որ դրանք ուղղակի խրվել են հողի մեջ և միայն եզակի դեպքերում են ամրացվել են քարե պատվանդանի վրա: Արցախում, խաչքարերի վերաբերյալ իմ կողմից հավաքած տվյալների հիմամբ, կարելի է հավանական համարել, որ Շուշիի և շրջակայքի խաչքարերը կանգնեցվել են հանգուցյալների վրա և կազմել, ի տարբերություն տապանաքարի, որը հորիզոնական դիրք էր ունենում, գերզմանային կառույցի ուղղաձիգ բաղկացուցիչը: Սալերը, որպես կանոն, վերևից դեպի ներքև նեղանում (երբեմն շեշտակի) և ներքևում ավարտվում են եռանկյուն, հազվադեպ՝ սեղանաձև պոչուկով: Սալի չափերը չեն անցնում 1,5 մետրից, բարձրության և լայնության համաչափությունը պահպանվում է 1,5:1 հարաբերությամբ, այսինքն խաչքարերը գետնամած են և չունեն խաչքարային լավագույն օրինակներին բնորոշ սլացիկությունը:

Հորինածքի կառուցվածքը շատ պարզ է՝ հյուսածո խարանի մեջ ներառված խաչ, խորանի վերնակյունից դեպի խաչահատումն իջնող խաղողի ողկույզներ, խաչատակից եզակի դեպքերում բարձրացող արմավազարդեր կամ նրա փոփոխակներ: Վարդյակը վկայված է նույնպես եզակի դեպքերում, հաճախ այն ավելի խնջույքի սեղան է հիշեցնում, երբեմն էլ վարդյակի հատվածը՝ խաչից ներքև, զբաղեցում է պատկերաքանդակը: Եզրագոտիները կազմվում են եռալար, եզակի դեպքերում՝ քառալար մեկ, երկու, երբեմն էլ երեք ժապավեններից, որոնց ինքնահույսվում են կամ իրար են հյուսվում՝ կազմելով պարզ պարանահյուս, էլիպսներ, շրջաններ կամ էլ քառաէլիպս ավելի բարդ զարդեր (նկ. 3): Առայժմ եզակի Շուշիի հյուսիսային գերեզմանոցից գտնված խաչքարը, որի եզրագոտին կազմված է ռելիեֆ շրջան-բլթակներից: Քանդակը խիստ հողմնահարված է, չի բացառվում, որ բլթակները նույնպես քանդակազարդ են եղել:

Քիվը ծավալային առունով առանձնացված չէ, նախշի առունով էլ այն հաճախ չի առանձնանում և հանդիսանում է եզրագոտու պարզ շարունակությունը, երբեմն ավելի լայն, քան բուն զարդագոտին է: Միայն եզակի դեպքերում է, որ քիվը նախշային առունով առանձնանում է:

Կենտրոնական խաչերը հիմնականում ունեն եռաէլիպս (մի դեպքում՝ քառաէլիպս) երկատվող թևեր, այսինքն՝ կրկնում են դասական ծաղկուն խաչի հիմնաձևը, թեև հանդիպում են և երկբլթակ երկատուններով կենտրոնական խաչեր: Օժանդակ խաչերը միայն երկբլթակ են: Բավականին

տարածված են երկու կենտրոնական խաչերով հորինվածքները, որոնք ամենայն հավանականությամբ կանգնեցվել են երկու անձի հիշատակին:

Պիտի ընդունենք, որ այս խաչքարերի ամենաառանձնահատուկ և հետաքրքիր բաղկացուցիչը պատկերաքանդակներն են՝ այնքան բնորոշ արցախյան խաչքարերին ընդհանրապես: Դրանք ներկայացնում են այն մարդկանց, ում նվիրված է խաչքարը: Դրանք, որպես կանոն տեղադրվում են խաչից ներքև՝ զբաղեցնելով այլ խաչքարերում վարդյակին հատկացվող հատվածը: Ընդունված է նաև պատկերաքանդակների տեղադրումը կենտրոնական խաչի ստորին թևի երկու կողմերում: Պատկերվում են ոչ միայն առանձին կերպարներ, այլ նաև թեման երկամ տեսարաններ, որոնք սովորաբար ընդհանուր եզր չունեն պաշտոնական քրիստոնեության հետ՝ չնայած տեղադրված են խաչի հարևանությամբ և ուղեկցվում են վերջին օրվան ուղղված կանոնիկ արձանագրություններով: Արձանագրությունները թեև որոշ դեպքերում օգնում են պարզել, թե ովքեր են պատկերված, սակայն բուն հորինվածքների իմաստի մասին որևէ տեղեկություն չեն պարունակում: Քանդակները ներկայացնում են ռազմիկների, իշխանների և արհեստավորների, կանանց և երեխաների: Կարելի է առանձնացնել կռվի և խնջույքի, անմխիթար սզի, «ընտանեկան դիմանկարի» թեմաները: Այս տեսակետից էլ Շուշիի և շրջակայքի խաչքարերն էական առանձնահատկություն չեն ցուցաբերում: Դառնալով ամենատարածված թեմաներին՝ խնջույքին և կռվին, նկատենք, որ մեր օրինակներից ամենաուշագրավը Ադին նահատակի մի խաչքարն է, ուր տեսնում ենք ներկայացված երկու թեման էլ՝ հեծյալ զինյալը և նրա պատվին կազմակերպվող խնջույքը (նկ. 4): Թեև քանդակը քայքայված է, բայց հստակորեն կարելի է տեսնել, որ ձին, ինչպես և մնացած դեպքերում է, ներկայացված է շարժման մեջ, այն դեպքում, երբ հեծյալը լրիվ ստատիկ է, մարմնի վերին կեսով շրջված դեպի դիտողը: Ձին թամբած է, սանձած, սանձի ծայրերը գտնվում են հեծյալի աջ ձեռքում: Ինքը հեծյալը կրում է գնդածև վերջույթվ գլխարկ, որի հյուսածո եզրերն իջնում են ուսերին: Նա զինված է երկար նիզակով, որը պահում է ձախ թևի տակ և գոտուն ամրացված թրով: Ուղքերն ասպանդակի մեջ են: Հեծյալի դիմաց կանգնած է նույնատիպ գլխարկով անգեն մի տղամարդ, որը ձախ ձեռքով բռնել է սափորը, իսկ աջով հեծյալին է պարզում գավաթը: Նրանից աջ պատկերված է մի կին, թերևս՝ հեծյալի մայրը: Այս երկու կերպարներից ներքև պատկերված են երկու սեղան-մատուցարաններ՝ ուտելիքներով հանդերձ. կարելի տարբերակել հավը և, թերևս, հացերը:

Կռվի թեմային մոտենում է որսի թեման որը ներկայացված է Ջառուն բաղից ծագող մի խաչքարի վրա (ՈՎ. 5): Հերոսը գինված է նետ-աղեղով, նա արդեն գետնել է մի չորքոտանու, ըստ երևույթին՝ որսի մասնակիցներն են նաև բազմերը: Ուշագրավ է, որ այստեղ էլ ներկայացված է նրա մատռվակը՝ սափորով և գավաթով: Աջ կողմում պատկերած կերպարը, որը ձեռքը մեկնել կամ հպել է հերոսին, հավանաբար նրա մայրն է կամ կինը:

Հայ միջնադարյան աշխարհընկալման համակարգում լայնորեն տարածված էին մահը հաղթահարելու երկու հիմնական համալիրներ՝ <հավերժ խնջույքը> և <հավերժ կռիվը>:¹ Միջնադարյան խնջույքի գագաթնակետը <գինարբուքն> էր, որի ժամանակ երևան է գալիս գինու՝ որպես կենաց կամ աստվածային հեղուկի ողջ <գորությունը>: Գինին հին հասարակություններում արյան հետ իր արտաքին մեմանության և օրգանիզմի վրա ունեցած ներգործության շնորհիվ առասպելապոետիկ մտածողության մեջ հեշտությամբ փոխարինում էր արյանը²՝ դրանով իսկ ձեռք բերելով մահը հաղթահարելու, անմահություն պարգևելու սրբազան գործառույթ³: Մահը հաղթահարելու նույն պատկերացումն է ընկած ժողովրդական-եկեղեցական տոների սրբավայրերում կազմակերպվող խնջույքի հիմքում, նույն ծիսաառասպելական գործառույթն է ընկած նաև հանգուցյալի պատվին տրվող ճաշկերույթի հիմքում, որը հնում կազմակերպում էին հենց գերեզմանի վրա կամ գերեզմանոցում: Թվում է՝ մեծ մոտեցման դեպքում խաչքարային պատկերաքանդակներում <կյանքի բաժակն> ընպելու և խնջույքի տեսարանները լրիվ բացատրելի են դառնում: Հանգուցյալը պատկերացվում էր դրա միջոցով որպես իր մահը հաղթահարող, սեփական անմահությունն ապահովող:

Մահը հաղթահարելու մյուս ձևը հենց մահվանն սպանելն էր՝ ի դեմս նրա զանազան կերպավորումների: Ըստ էության՝ ռազմական ուժի ցուցադրությունը մասն էր կազմում <հավերժ կռիվ> ընդարձակ ցանկի, որը ներառում էր նաև որսի տեսարանները, թշնամու հետ մենամարտը, կենդանամարտի տեսարանները: Խաչքարային պատկերաքանդակը, որպես

¹ Պետրոսյան Հ., Անանիա Շիրակացու <Խրախճանականքը> և միջնադարյան խնջույքը // Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը, Երևան, 2000, էջ 356-361: Петросян Г. Средневековый пир и закавказские карасы для подачи вина на стол // Археология, этнология и фольклористика Кавказа: Материалы международной конференции, Эчмиадзин, 2003, с. 343-347.

² Иванов В.В. Вино // Мифы народов мира, Москва, 1991, с. 236.

³ Арутюнян С., Реликты благославения про общественном жертвоприношении // Պատմա-քանդակագիտական հանդես, 1971, թիվ 3, էջ 256-262:

կանոն, սահմանափակվեց միայն ռազմական ուժի ցուցադրությամբ և որսով: Թշանուն սպանելու թեման այդպես էլ պատկերագրորեն չմշակվեց հայ մշակույթում, ինչը, կարծում ենք, միջնադարի հայ քրիստոնեական մշակույթի ամենակարևոր հումանիստական դրսևորումներից է:

Այս թեմաների անընդհատ կրկնումը, բազմացումը և տարածումը ոչ միայն խաչքարերի և տապանաքարերի, այլև աշխարհիկ շինությունների, եկեղեցիների, արհեստագործական տարբեր իրերի վրա արդյունք էին այն պատկերացման, ըստ որի՝ մահվան հաղթահարումը ոչ թե միանվագ գործողություն էր, այլ անընդհատ, հավերժ գործընթաց, այստեղից էլ և՛ մեր <հավերժ խնջույքի> ու <հավերժ կռվի>:

Խաչքարային պատկերաքանդակում հանդիպում են և այսպես կոչվող <ընտանեկան տեսարաններ>՝ հայրն ու մայրը վաղաժամ մահացած որդու հետ, մայրը որդու հետ, ամուսիններ: Նրանց սեռը կարելի է որոշել հիմնականում գլխանոցներով: Կանայք զույգ կամ երկտակ գլխաշորերով են, ստորին տապակը ծածկում է ճակատը, կուրծքը և վիզը, վերինը՝ միայն գլուխը: Ազգագրական բազմաթիվ օրինակներով քաջ հայտնի է, որ բերանկալը համարյա պարտադիր էր ոչ վաղ անցյալի արցախյան կնոջ տարագի համալիրում և թերևս ծագում է շատ հին զրադաշտական-կրակապաշտական ավանդույթից, համաձայն որի՝ կնոջ շունչը չափտի շփվի սրբազան կրակի հետ: Ուշագրավ է, որ մեր քանդակներում դրանք բացակայում են: Կնոջ զգեստն ունի լայն կախվող թևեր, երբեմն դիտելի է նաև վերնաշապիկի գոտկատեղից ներքև սկսվող նեղ կամ լայն քղանցքը: Տղամարդիկ, եթե զինված չեն, որպես կանոն, տարբերակվում են եռանկյունաձև կամ կոնաձև գլխարկներով, որոնք երբեմն ունեն ուսերին իջնող <ծամեր>, երբեմն նրանք կրում են գոտի, հազվադեպ պատկերվում է բեղ-մորուքը: Շուշիի ամմիջական շրջապատից չորս խաչքարերի վրա պատկերված են հավանաբար ամուսիններ կամ մայր ու որդի: Պյանոր նաև սրբատեղուց ծագող խաչքարերից մեկի վրա՝ թվագրված 1229 թվականով, ամուսինները կանգնած են սեղան-սինիի մոտ՝ ձեռքերն իրար պարզած (նկ. 6): Արձանագրության մեջ հիշատակվող Չայրանուն անձնանունը, եթե նկատի ենք ունենում այս ժամանակներում տարածված օտար անձնանունների բազմաքանակությունը, ուշագրավ տվյալ է տեղաբնակների էթնիկ ցուցիչի տեսակետից: Պարզ է, որ միայն հայկական շրջապատում կարող էր օգտագործվել այս անձնանունը: Կողքի խաչքարի վրա քանդակված է միայն կինը: Առավել ուշագրավ է Ձառուն բաղից ծագող խաչքարերից մեկը, ուր ամուսինները բռնել են

մեկական խաչեր, իսկ նրանց միջև ծաղկող թփին բազմել են զույգ թռչուններ(նկ. 7):

Այս խմբի մեջ են մտնում նորից ամուսնական զույգ պատկերող խաչքարը Շուշիի հայ-հունական գերեզմանոցից, ուր այն 19-րդ դարում վերօգտագործվել է որպես տապանաքար (նկ. 8), Ղոնդիկ անապատի խաչքարերից մեկը, Կարմիր ավետարան վանքի մի խաչքար, ուր կերպարներից մեկն ունի կենդանակերպ վզով ավարտվող սափոր և այլն:

Արցախի խաչքարային պատկերաքանդակում համարյա բացակայում են կենցաղային, տնտեսական կյանքի հետ կապված տեսարանները, թեմաներ, որոնք 16-րդ դարից ի վեր լայնորեն տարածվում են տապանաքարային պատկերաքանդակում: Եվ ուշագրավ է, որ Աղին նահատակի մի խաչքարում, թվում է, ներկայացված է հյուսնը կամ տակառագործը (նկ. 9):

Ինչպես տեսնում ենք, դիտարկվող պատկերաքանդակներն արտահայտում էին գաղափարներ, որոնք կապ չունեն պաշտոնական քրիստոնեության հետ: Ավելին, նույնիսկ թվում է, թե դրանց մեծագույն մասը չպիտի տեղ գտներ հոգու փրկության քրիստոնեական գաղափարն արտահայտող խաչքարի վրա: Սակայն ժամանակակիցների համար դա այնքան էլ հակասություն չէր: Հավատն Արդար դատաստանի հանդեպ չէր բացառում և հավատը խնջույքի կամ կռվի միջոցով մահը հաղթահարելու նկատմամբ: Հանգամանք, որն էլ պայմանավորել է զուտ ժողովրդական թեմաների պատկերումը խաչքարերի վրա:

Նախնական այս քննության հիման վրա կարելի է եզրակացնել, որ Շուշիի և շրջակայքի խաչքարային մշակույթը ներկայանում է Արցախի խաչքարային դպրոցի՝ 12-13-րդ դարերի թեև շարքային, բայց տիպական օրինակներով: Որոշ արձանագրական տեղեկություններ և թեմաներ հնարավորություն են տալիս նոր բնութագրեր ավելացնելու Արցախի խաչքարային մշակույթին: Մյուս կողմից էլ ակնհայտ է ժամանակագրական անհամաչափությունը, թվում է՝ ապագայում ջանքեր պիտի գործադրել 9-11 և 14-17-րդ դարերի օրինակների հայտնաբերման և հետազոտության ուղղությամբ:

Շուշիի միջնադարյան քրիստոնեական-հայկական կերպարի հավաստման գործում խաչքարերն առաջնային նշանակություն ունեն, և այս ուղղությամբ աշխատանքները, կարծում են, չպիտի հանգեն միայն անհատ հետազոտողի ջանքերին:



Նկ. 1 Խաչքարի բեկոր, 12-12-րդ դարեր, Շուշիի բանտի տարածքից (Շուշիի պատմա-երկրագիտական թանգարան)



Նկ. 2 Խաչքար, 10-11-րդ դարեր, Կարմիր ավետարան վանք



Նկ. 3. Խաչքար, 12-13-րդ դարեր,
Զառուն բաղ



Նկ. 4 Խաչքար, 12-13-րդ դարեր,
Աղին նահատակ վանք



Նկ. 5 Խաչքարային
պատկերաքանդակ, 12-
13-րդ դարեր, Զառուն
բաղ (Մտեփանակերտի
պատմա-
երկրագիտական
թանգարան)



Նկ. 6 Խաչքարային պատկերաքանդակ, 12-13-րդ դարեր,
Բանուր նան սրբատեղի



Նկ. 7 Խաչքարային
պատկերաքանդակ, 12-
13-րդ դարեր, Ջառուն
բաղ (Ստեփանակերտի
պատմա-
երկրագիտական
թանգարան)



Նկ. 8 Խաչքարային պատկերաքանդակ, 12-13-րդ դարեր, Շուշի, հայ-հունական գերեզմանոց



Նկ. 9 Խաչքարային պատկերաքանդակ, 12-13-րդ դարեր, Աղին նահատակ

Культура хачкаров города Шуши и его окрестностей.

Гамлет Петросян

Резюме

В статье подробно описаны, датированы и типологизированы хачкары города Шуши и его окрестностей. Подробным анализом выявлены символика и семантика их геометрико-растительных и фигуративных композиций.

Culture of Khachkars of Shushi and its Environs.

Hamlet L. Petrosyan

Summary

In the article the khachkars of Shushi and its environs are described in detail, dated and typologized. The symbolism and semantics of their geometric-vegetal and figurative compositions are revealed by the detailed analysis.

**ՀԱԳՈՒՅՆ ՀԵՏՔԵՐ՝ ՀԱԲԱՆԴ-ԳՈՐԻՍԻ
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒ ՏՈՂՄԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ¹**

Սերգեյ Հախվերդյան

Դոցենտ

Գորիսի պետական համալսարան

*«Հայաստանի արևելյան կամ պարսկական մասը հայոց պատմության մեջ իր դերով ու նշանակությամբ էապես տարբերվում է Արևմտյան Հայաստանից, նրան է պատկանում այն նվիրական սկզբունքների ու հիմունքների զարգացման ու պահպանման գլխավոր դերը, որի վրա հենված էր հայոց պատմական կյանքը»
(Ադունց Ն., Հայաստանը Գոլուտիմիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 27):*

Հաբանդ գավառը զբաղեցնում էր Մեծ Հայքի Սյունիք նահանգի միջ-նաշխարհի խիստ լեռնային դժվարամատչելի տարածքը: Միջնադարյան Հաբանդն իր տարածքով համապատասխանում է ներկայիս Գորիսի շրջանին: Դ. Ալիշանի բնորոշմամբ՝ Հաբանդն իր «դժվարակոխ» վայրերով սակավածանոթ էր այլոց ինչպես հնում, այնպես էլ նոր ժամանակներում²: Հաբանդում, շնորհիվ իր գյուղերի կամ, ինչպես տեղացիներն են կոչում, շեների դժվարամատչելիության ու բնիկ-բնակիչների պնդակեցության ու հարատևման կամքի, պահպանվել են խիստ ազգային պահպանողական մտածողությունն ու ավանդությունները, և դա զգացվում է Հաբանդ-Գորիսի տոհմանուններում և տեղանուններում: Նկատենք, որ սյունիքյան կամ զանգեզուրյան ազգային կանացի տարազի՝ դաբայի վերջին կրողներն ապրել են հենց Գորիս քաղաքում և նրա շրջակա գյուղերում³:

Սերնդեսերունդ փոխանցված տոհմանունների անխաթար պահպանման հարցում գորիսեցիների ավանդապաշտությունն անգնահատելի գանձեր է պարունակում: Գորիսի Խնձորեսկ գյուղի տոհմանուններում մինչև օրս մնացել և գործածվում են հազարամյակների հնություն ունեցող տոտեմիզմի հետքերը. այստեղ հանդիպում ենք Արջունց, Կատվանց (կատու), Մոկնանց (մուկ), Քչղականց (կաչաղակ), Բազունց (բազե), Թոխսանց (թուխս), Մաքունց (մաքի), Բրղանանց (բրղանի-դղում), Գիչունց (կեչի) տոհմանունների:

¹ Գողվածն ընդունված է 15.10.13:

² Գողվածը տպագրության է երաշխավորել ԱրՊԳ պատմության ամբիոնը:

³ Տես Ալիշան Դ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 70-71:

⁴ Սյունեցի կնոջ ազգային գունագեղ տարազ (դաբա) կրող վերջին մոհիկանն եղել է 101 տարեկան Շուշան աքերը (Շուշանիկ Գովսեփյան): Նա մահացել է 2003 թ. Գորիսում:

Յեթանոսական շրջանից են գալիս նաև Բակունց և Բագունց (բագին) հայտնի ազգանուն-տոհմանունները:

Հաբանդ-Գորիսի տոհմանուններում և տեղանուններում հանդիպում ենք հին դարերի ու ժամանակների պատմության, կատարված դեպքերի, անցքերի, իրադարձությունների, Սյունիքում բնակված ցեղերի ու նրանց պաշտամունքի հետքերի¹:

Սյունիքի տարածքում հին ժամանակներում հայտնվել են նաև ոչ հայկական ցեղեր, ինչպես, օրինակ՝ սկյութ-սակերը կամ մարական-իրանական այլ ցեղեր: Նրանցից, անշուշտ, որոշակի հետքեր մնացել են: Այդ ցեղերը Սյունիքում և նրա Հաբանդ գավառում (Հաբանդում մանավանդ՝ աննշան) որոշակի հետքեր թողել են: Բայց այդ ցեղերը Սյունիքում և նրա Հաբանդ գավառում հայտնվել են որպես անկոչ, ժամանակավոր հյուր: Այլազգի ցեղերի ազդեցությունը Սյունիքի բնիկ հայ էթնոսի վրա եղել է հպանցիկ, այդ ազդեցությունը էական դեր չի խաղացել սյունեցու մարդաբանական տիպի, հիմնական լեզվանյութի, ինչպես նաև հոգևոր մշակույթի ձևավորման վրա: Երկար ժամանակ տիրապետող էր այն կարծիքը, որ սակ-սկյութները էական դերակատարություն են ունեցել Սյունիքի, հետևապես նաև Հաբանդ-Գորիսի բնակիչների ազգագրական բնութագրի, բնակիչների լեզվի վրա, փոխել նույնիսկ երկրանունը: Իհարկե, պատմական անժխտելի փաստ է, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան տարածք է ներթափանցել հնդիրանական (սկյութական) սակ ցեղը (ըստ Ն. Ադոնցի՝ դա եղել է 680 թ. Ք. ա.) և որոշ ժամանակ հաստատել իր գերիշխանությունը: Բայց սակերը եկան և ձուլվեցին նստակյաց կենցաղ ու ավելի բարձր մշակույթ ունեցող բնիկ հայերին, այլ ոչ թե լեզու կամ երկրանուն փոխեցին: Ազատասեր սյունեցիները պայքարել և հայրենի լեռներից դուրս են քշել սակերին, իսկ եթե մնացող էլ եղել է, ապա նրանք ձուլվել են տեղական նստակյաց ցեղերի հետ՝ թողնելով մեկ-երկու տեղանուն կամ տոհմանուն: Թվում է՝ սակերի հիշատակի արձագանքներից են Ստ. Օրբելյանի՝ Սյունիքի գավառների գյուղացուցակում մատնանշած Շագվա (Հաբանդ), Շաքե-Շաքի (Այլախ), Շեկե, Շեքքս (Բաղք) գյուղանունները² ու գուցե նաև մինչև օրս Գորիսում պահպանված Շեգունց և Սակունց տոհմանունները, Ասակ անձնանունը: Ն. Ադոնցը ընդհանրապես ժխտում է սկյութ-սակերի կողմից Հայկական լեռնաշխարհի բնակիչների վրա ազդեցության հնարավորությունը: «Խոսք չի կարող լի-

¹ Գորիսի տեղանունների ծագման հնագույն արմատների մասին հարցերը քննության են առնվել Ա. Ումառյանի «Սյունիքը դիցարան» գրքում (Երևան, 1981):

² Օրբելյան Ստ., Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծանոթագր. Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 395, 400:

նել սկյութների որևէ ազդեցության մասին Հայաստանի վրա», - եզրակացնում է ականավոր պատմաբանը¹:

Հաբանդ գավառում, ինչպես և ողջ Սյունիքում, հայ էթնոսի, նրա հոգևոր մշակույթի և լեզվի ձևավորման գործում այլ է հայասների, խուռիների, խեթ-հեթիթների, քաշերի, բաղերի, Վանի թագավորության և էթիունի բնակիչների խաղացած դերը: Նրանք եղել են կազմավորվող հայ ժողովրդի ատաղձը ինչպես ողջ լեռնաշխարհում, այնպես էլ Սյունիքում ու նրա գավառներում: Հայոց արևելյան կողմերում հայ ժողովրդի կազմավորման ընթացքի մեջ հատկապես նշանակալի դեր է խաղացել արարատյան սեպագիր արձանագրություններից մեկ հայտնի էթիունի անունով հայկական պետականությունը: Էթիու-էթիունին զբաղեցնում էր Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասը և Սյունիքից զատ՝ ներառում էր Արցախը, Ուտիքը և այլ հայկական երկրամասեր: Ահա թե ինչ է գրում էթիուի մասին Վ. Գայսերյանը. «Շնորհիվ իր կազմակերպվածության, զարգացած տնտեսության, աշխարհագրական նպաստավոր դիրքի, ինչպես նաև, անկասկած այստեղ ևս, հայկական էթնոսով բնակեցված լինելու՝ էթիու երկիրը դառնում է Հայկական լեռնաշխարհում ձևավորվող քաղաքական բոլոր կազմավորումների կենտրոնը՝ այդպիսին էլ մնալով հայ ժողովրդի պատմության ամբողջ ընթացքում»²: Նշենք, որ էթիունիի հայկական պետականության հետ կապված շատ հարցեր դեռևս կարիք ունեն խոր ուսումնասիրությունների³:

- ^{xliiii} Pontificia Commissio ad redigendum Codicem iuris canonici orientalis, *Fontes, Series III*, Aloysius Tautu et al. (ed.), Vatican, vol. I, 1943, no. 395, pp. 811-813; Thomson, *op. cit.*, p. 209; Peter Halfter, *Das Papsttum und die Armenier in frühen und hohen Mittelalter, von den ersten Kontakten bis zur Fixierung der Kirchenunion im Jahre 1198*, Köln, 1996, pp. 150-157.
- ^{xliiii} Dédéyan, *La chronique*, *op. cit.*, p. 57; Vahram, *op. cit.*, pp. 509-510; Samuēli K'ahanayi, *op. cit.*, p. 140; *Chronique de Michel*, *op. cit.*, vol. 3, pp. 396-397.
- ^{xliiii} Sebastiano Pauli, *Codice diplomatico del sacro militare ordine Gerosolimitano oggi di Malta*, 2 vol., Lucca, 1733, 1737, nos. 76, 77, 210, pp. 77-81, 251.
- ^{xliiii} Grigor Kat' l. Tlay, *N. Lambronac' i*, Venice, 1865, pp. 239-241; Kirakos, *op. cit.*, p. 111.
- ^{xliiii} Grigor Tlay, *Banastelcut'yunnerew Poemner*, Yerevan, 1972, no. 7, pp. 244-333.
- ^{xliiii} Pōtos Ananean, «Nersēs Šnorhali, Miĵekelec'akan Yaraperut' iwnner», *Bazmavep CLIV (1996)*, pp. 219-221, 234-236; Halfter, *op. cit.*, pp. 172-177.
- ^l Thomson, *op. cit.*, p. 210; Hayeren Jeřagreri Hišatakaranner, *E-ŽB dd.*, *op. cit.*, no. 270, p. 259; Pontificia Commissio, *op. cit.*, no. 395, p. 812; *La continuation de Guillaume de Tyr (1184-1197)*, Margaret Ruth Morgan (ed.), Paris, 1982, p. 97.
- ^{li} *Imād al-Dīn al-Isfahānī, Conquête de la Syrie et de la Palestine par Saladin*, Henri Massé (French transl.), Paris, 1972, pp. 193, 229; *The Rare and Excellent History of Saladin or al-Nawādir al-Sultāniyya wa'l-Mahāsīn al-Yūsufiyyaby Bahā' al-Dīn Ibn Shaddād*, D. S. Richards (transl.), Aldershot, 2001, pp. 114-117.
- ^{lii} «Continuations de Guillaume de Tyr», XXVI 27, in *Recueil des historiens des croisades, Historiens occidentaux*, Paris, vol. 2, 1859, p. 215.
- ^{liii} Dédéyan, *op. cit.*, p. 65.
- ^{liiii} Dédéyan, *op. cit.*, p. 68; *La continuation de Guillaume de Tyr*, *op. cit.*, pp. 164-166; *Chronique d'Ernoul*, *op. cit.*, pp. 319-320; *The Chronography of Bar Hebraeus*, Gregory Abū'l-Faraj, 1225-1286, Ernest A. Wallis Budge (transl.), 2 vol., London, 1932, vol. 1, p. 344; Claude Cahen, *La Syrie du Nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche*, Paris, 1940, pp. 582-586.
- ^{liiii} *Chronique d'Ernoul*, *op. cit.*, p. 321; *La continuation de Guillaume de Tyr*, *op. cit.*, pp. 176-177; Samuēli K'ahanayi, *op. cit.*, p. 144; Dédéyan, *op. cit.*, pp. 71-72; Pontificia Commissio, *op. cit.*, vol. II, 1944, pp. 556-557; *Lignages d'Outremer*, *op. cit.*, pp. 66, 108, 136-137.
- ^{liiii} «Continuations de Guillaume de Tyr», *op. cit.*, XXVI 27, pp. 215; *Chronique d'Ernoul*, *op. cit.*, p. 303; *Lignages d'Outremer*, *op. cit.*, p. 165.
- ^{liiii} «Continuations de Guillaume de Tyr», *op. cit.*, XXVI 27, p. 215; Hayeren Jeřagreri Hišatakaranner, *E-ŽB dd.*, *op. cit.*, nos. 294, 300, pp. 293, 302; *Id.*, *ŽG d.*, *op. cit.*, no. 17, p. 39; Dédéyan, *op. cit.*, p. 72.
- ^{liiii} Kirakos, *op. cit.*, pp. 156-157; Marino Sanudo, « Liber Secretorum Fidelium Crucis », III 8, 3, in *Gesta Dei per Francos*, Jacques Bongars (ed.), 2 vol., Hanau, 1611, vol. 2, p. 184.
- ^{liiii} *Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens*, Victor Langlois (ed. and French transl.), Venice, 1863, pp. 105, 112, 115, 117-118; Pontificia Commissio, *op. cit.*, vol. II, p. 555.
- ^{lix} Dédéyan, *op. cit.*, p. 81.
- ^{lxi} Cahen, *op. cit.*, pp. 596-623.
- ^{lxii} Othmar Hageneder & al., *Die Register Innocenz' III*, Rome/Vienna, vol. 7, 1997, no. 126, p. 228; Pontificia Commissio, *op. cit.*, vol. II, p. 316.
- ^{lxiii} Hageneder, *op. cit.*, vol. 7, nos. 126, 127, pp. 228, 230; Pontificia Commissio, *op. cit.*, vol. II, p. 316.
- ^{lxiv} Hageneder, *op. cit.*, vol. 7, no. 249, pp. 475-477; Pontificia Commissio, *op. cit.*, vol. II, p. 206.

- ^{lxxv} Kamāl al-Dīn, *Histoire d'Alep* (1146-1246), E. Blochet (French transl.), Paris, 1900, p. 141; al-Dahabī, *Les dynasties de l'Islam*, Arlette Nègre (French transl.), Damascus, 1979, p. 187; Cahen, *op. cit.*, p. 604.
- ^{lxxvi} Dédéyan, *op. cit.*, pp. 84, 87; Kirakos, *op. cit.*, p. 159; *Lignages d'Outremer*, *op. cit.*, pp. 66, 81-82, 88, 90, 92, 137, 143; "Continuations de Guillaume de Tyr", *op. cit.*, XXX, 11, p. 305.
- ^{lxxvii} Dédéyan, *op. cit.*, p. 86; *Le Trésor des chartes*, *op. cit.*, pp. 122-125.
- ^{lxxviii} Pontificia Commissio, *op. cit.*, vol. II, pp. 404-405.
- ^{lxxix} « Wilbrandi de Oldenborg Peregrinatio », I 18, in Johann C. M. Laurent, *Peregrinatores Medii Aevi Quatuor*, Leipzig, 1864, p. 175; Pontificia Commissio, *op. cit.*, vol. II, 130, p. 366.
- ^{lxxx} Pontificia Commissio, *op. cit.*, vol. II, p. 441.
- ^{lxxxi} Dédéyan, *op. cit.*, p. 89; Hayeren Jeřagreri Hiřatakaraner, *ŽG d.*, *op. cit.*, nos. 59, 65, pp. 96, 103; Samuēli K'ahanayi, *op. cit.*, p. 147; "Continuations de Guillaume de Tyr", *op. cit.*, XXXI 7, p. 318; Kamāl al-Dīn, *op. cit.*, p. 150.
- ^{lxxxii} Pietro Pressutti, *Regesta Honorii papae III*, 2 vol., Rome, 1888, 1895, nos 675-677, 693, 707, vol. I, 1888, pp. 118, 121, 123.
- ^{lxxxiii} Olivier le Scolastique, « Histoire de Damiette », § XX, in *Corpus Historicum Medii Aevi*, Jean-Georges Eccard (ed.), t. II, Leipzig, 1723, coll. 1417-1418; Sanudo, *op. cit.*, III 11, 9, p. 209; *Les Gestes des Chiprois*, Gaston Raynaud (ed.), Genève, 1887, p. 20, 28.
- ^{lxxxiv} Anna Sirinian, « Da Drazark a Roma: una pagina di storia ciliciana nel colofone del manoscritto Arch. Cap. S. Pietro B 77 », in *Dall'Italia e dall'Armenia, Studi in onore di Gabriella Uluhogian, Valentina Calzolari, Anna Sirinian & Boghos Levon Zekian* (ed.), Bologna, 2004, p. 74; Dédéyan, *op. cit.*, p. 90; Samuēli K'ahanayi, *op. cit.*, p. 147.
- ^{lxxxv} « Lettre de Jean de Brienne à l'abbé Gervaise », in *Sacræ Antiquitatis Monumenta*, Charles Louis Hugo (ed.), Etivall, vol. 1, 1725, Epistola XXXVI, p. 36; Pressutti, *op. cit.*, no. 2320, t. I, p. 385.
- ^{lxxxvi} Sirinian, *op. cit.*, p. 76; *Lignages d'Outremer*, *op. cit.*, pp. 137-138; *The Chronography of Bar Hebræus*, *op. cit.*, p. 380.
- ^{lxxxvii} Hayeren Jeřagreri Hiřatakaraner, *ŽG d.*, *op. cit.*, nos. 89, 93, 100, pp. 130, 133, 139; Dédéyan, *op. cit.*, pp. 95-96; Kirakos, *op. cit.*, pp. 188-189; Thomson, *op. cit.*, p. 213; Samuēli K'ahanayi, *op. cit.*, p. 148; *Lignages d'Outremer*, *op. cit.*, pp. 138, 145; *Les Gestes des Chiprois*, *op. cit.*, pp. 20, 29-30; Olivier le Scolastique, *op. cit.*, § XLV, col. 1450; *The Chronography of Bar Hebræus*, *op. cit.*, p. 380.
- ^{lxxxviii} *The Chronography of Bar Hebræus*, *op. cit.*, p. 381; Samuēli K'ahanayi, *op. cit.*, p. 149; *Lignages d'Outremer*, *op. cit.*, pp. 67, 68, 92, 95, 138, 145; "Continuations de Guillaume de Tyr", *op. cit.*, XXXII 15, p. 348.
- ^{lxxxix} Pressutti, *op. cit.*, nos 3494, 4080, 5222, vol. 1, p. 568, vol. 2, pp. 86, 290.
- ^{lxxx} Hayeren Jeřagreri Hiřatakaraner, *ŽG d.*, *op. cit.*, no 474, p. 587; Dédéyan, *op. cit.*, p. 96; Samuēli K'ahanayi, *op. cit.*, pp. 148-149; Vahram, *op. cit.*, pp. 517-518; Thomson, *op. cit.*, p. 213; *The Chronography of Bar Hebræus*, *op. cit.*, p. 390; *Lignages d'Outremer*, *op. cit.*, p. 139.
- ^{lxxxxi} Pontificia Commissio, *op. cit.*, vol. III, 1950, pp. 298, 319, 332-335.
- ^{lxxxii} Guillaume de Nangis, « Vie de Saint Louis », Daunou & Naudet (ed.), in *Recueil des Historiens des Gaules et de la France*, Paris, t. XX, 1840, p. 368.
- ^{lxxxiii} *Lignages d'Outremer*, *op. cit.*, pp. 92, 95, 139, 145; "Continuations de Guillaume de Tyr", *op. cit.*, XXXIV 2, p. 442; Sanudo, *op. cit.*, III 12, 4, p. 220.
- ^{lxxxiv} Hayeren Jeřagreri Hiřatakaraner, *ŽG d.*, *op. cit.*, nos 282, 477, pp. 343, 593; *Lignages d'Outremer*, *op. cit.*, pp. 143, 166; "Continuations de Guillaume de Tyr", *op. cit.*, XXXIII 41, p. 408; Sanudo, *op. cit.*, III 11, 14, p. 215; Lewond Aliřan, *Sissouan ou l'Arméno-Cilicie*, Venice, 1899, p. 77.
- ^{lxxxv} Hayeren Jeřagreri Hiřatakaraner, *ŽG d.*, *op. cit.*, nos 156, 266, 282, pp. 201, 323, 343; Dédéyan, *op. cit.*, pp. 100, 112; *Lignages d'Outremer*, *op. cit.*, pp. 67, 100.
- ^{lxxxvi} Hayeren Jeřagreri Hiřatakaraner, *ŽG d.*, *op. cit.*, no 264, p. 320; Dédéyan, *op. cit.*, p. 96; *Lignages d'Outremer*, *op. cit.*, pp. 92, 99, 103, 139; Pontificia Commissio, *op. cit.*, vol. V 1, 1953, p. 53; "Continuations de Guillaume de Tyr", *op. cit.*, XXXIV 2, p. 440; *Le Trésor des chartes*, *op. cit.*, p. 146.
- ^{lxxxvii} Jean Richard, « La lettre du Connétable Smbat et les rapports entre Chrétiens et Mongols au milieu du XIII^{ème} siècle », in *In memoriam Hařg Berberian, Dickran Kouymjian* (ed.), Lisboa, 1986, p. 688.
- ^{lxxxviii} *Die Selschukengeschichte des Ibn Bibi*, Herbert Duda (German transl.), Copenhagen, 1959, pp. 224-230; Kamāl al-Dīn, *op. cit.*, p. 226; Samuēli K'ahanayi, *op. cit.*, p. 150.
- ^{lxxxix} Grousset, *L'Empire du Levant*, *op. cit.*, p. 397.

- ^{xc} Kirakos, *op. cit.*, pp. 364-372; Hayeren *Jeřagreri* Hiřatakaraner, *ŽG d.*, *op. cit.*, no 225, p. 277; Thomson, *op. cit.*, p. 216; Vahram, *op. cit.*, p. 519; John Boyle, « The journey of Het'um I, King of Little Armenia, to the Court of the Great Khān Mōngke », *Central Asiatic Journal* 9 (1964), pp. 175-189.
- ^{xcv} Kirakos, *op. cit.*, pp. 380, 384, 388; Thomson, *op. cit.*, pp. 217-218; Hayeren *Jeřagreri* Hiřatakaraner, *ŽG d.*, *op. cit.*, no 251, p. 301; Dédéyan, *op. cit.*, p. 105; *The Chronography of Bar Hebraeus*, *op. cit.*, pp. 431, 436; Raschid Eldin, *Histoire des Mongols de la Perse*, Etienne Quatremère (ed. and French transl.), Paris, 1836, pp. 338-341.
- ^{xcvi} «Continuations de Guillaume de Tyr», *op. cit.*, LXXXI, p. 637; *Les Gestes des Chiprois*, *op. cit.*, p. 164; Ibn al-Furāt, *Ayyubids, Mamlukes and Crusaders*, U. and M.C. Lyons (transl.), Cambridge, 1971, p. 42.
- ^{xcvii} Raschid Eldin, *op. cit.*, pp. 346-351; «Continuations de Guillaume de Tyr», *op. cit.*, p. 638; Kirakos, *op. cit.*, pp. 388-389 (D, p. 498).
- ^{xcviii} Patasxanik' Mxit'aray K'ahanayi Skewriac'woy yalags hamapatuut'ean Erkotasan Arak'eloc', Jerusalem, 1860, p. 15.
- ^{xcix} Joannes Dominicus Mansi, *Sacrorum Conciliorum Nova et Amplissima Collectio*, new ed., 53 vol., Paris, 1901-1927, vol. XXIV, col. 59; *Pontificia Commissio*, *op. cit.*, vol. V 1, pp. 104-105, vol. VI, 1944, p. 139.
- ^c Al-Dahabī, « The Tarikh al-Islam of adh-Dhahabi », Joseph de Somogyi (French transl.), *Journal of the Royal Asiatic Society* (1932), p. 843; Makrīzī, *Histoire des sultans mamlouks*, Etienne Quatremère (French transl.), 2 vol., Paris, 1837, 1845, vol. t. II 2, p. 19.
- ^{cvi} Hayeren *Jeřagreri* Hiřatakaraner, *ŽG d.*, *op. cit.*, nos 693, 695, pp. 861, 863; Hayton, « La Fleur des Histoires de la Terre d'Orient », livre III, ch. 39, Louis de Mas Latrie (ed.), in *Recueil des historiens des croisades, Documents arméniens*, Paris, vol. 2, 1906, pp. 192-193, 316-317; *Les Gestes des Chiprois*, *op. cit.*, pp. 299-300; Makrīzī, *op. cit.*, t. II 2, p. 149; Angus Donal Stewart, *The Armenian Kingdom and the Mamluks, War and diplomacy during the Reigns of Het'um II (1289-1307)*, Leyden, 2001, pp. 136-139.
- ^{cvi} Hayton, *op. cit.*, ch. 40, pp. 194, 317-318; *Les Gestes des Chiprois*, *op. cit.*, p. 302; Girolamo Golubovich, *Biblioteca bio-bibliografica della Terra Santa e dell'Oriente francescano*, 5 vol., Quaracchi, vol. 1, 1906, § 109, p. 360.
- ^{cix} Hayeren *Jeřagreri* Hiřatakaraner, *ŽG d.*, *op. cit.*, nos 554, 558, 560, 569, 570, 600, pp. 683, 688, 691, 700, 702, 746-747; Samuēli K'ahanayi, *op. cit.*, pp. 153, 163; Abou'l-Fidā, *The Memoirs of a Syrian Prince*, Peter Holt (transl.), Wiesbaden, 1983, pp. 18-19; Makrīzī, *op. cit.*, t. II 1, p. 141; *The Chronography of Bar Hebraeus*, *op. cit.*, p. 493; Alvinda Mirzoyan, *Le reliquaire de Skevra*, New York, 1993, pp. 11-13, 91-92; Stewart, *op. cit.*, pp. 74-82.
- ^c *Pontificia Commissio*, *op. cit.*, vol. V 2, 1966, pp. 160-161; *Les Gestes des Chiprois*, *op. cit.*, p. 315; *Lignages d'Outremer*, *op. cit.*, pp. 91, 140, 144.
- ^{ci} *Pontificia Commissio*, *op. cit.*, vol. V 2, pp. 119-120, 160; *Lignages d'Outremer*, *op. cit.*, pp. 91, 140.
- ^{cii} Golubovich, *op. cit.*, §§ 99, 109, pp. 328-339, 360; Hayeren *Jeřagreri* Hiřatakaraner, *ŽG d.*, *op. cit.*, nos 567, 573, pp. 698, 705; *Les Gestes des Chiprois*, *op. cit.*, pp. 283, 302, 305; *Lignages d'Outremer*, *op. cit.*, p. 92; Claude Mutafian, « Franciscains et Arméniens (XIIIe-XIVe siècle) », *Studia Orientalia Christiana, Collectanea* 32 (1999), Le Caire-Jérusalem, pp. 247-252.
- ^{ciii} Mkrtič' Ēmin, *Stp'annosi Siwniac' Episkoposi Patmut'iw'n Tann Sisakan*, Moscow, 1861, pp. 329-337; Malakia Ōrmanean, *Azgapatum*, Constantinople, 1912-1913, § 1218, coll. 1768-1770.
- ^{civ} Clemente Galano, *Conciliationis Ecclesiae Armenae cum Romana*, 3 vol., Rome, vol. 1, 1650, pp. 510-511; François Tournebize, *Histoire politique et religieuse de l'Arménie depuis les origines des Arméniens jusqu'à la mort de leur dernier roi (l'an 1393)*, Paris, [1910], pp. 320-327; Ōrmanean, *op. cit.*, § 1274, coll. 1845-1846.
- ^{cv} Hayeren *Jeřagreri* Hiřatakaraner, *ŽD d.*, Lewon Xaç'ikyan (ed.), Yerevan, 1950, no. 72, p. 55; Samuēli K'ahanayi, *op. cit.*, p. 153; *Les Gestes des Chiprois*, *op. cit.*, pp. 325-326; Makrīzī, *op. cit.*, t. II 2, p. 279; Abou'l-Fidā, *op. cit.*, p. 47; Stewart, *op. cit.*, pp. 171-180.
- ^{cvi} *Les Gestes des Chiprois*, *op. cit.*, pp. 316-317; Florio Bustron, « Chronique de l'île de Chypre », René de Mas Latrie (ed.), *Collection de documents inédits sur l'histoire de France, Mélanges historiques, Choix de documents*, V, Paris, 1886, p. 138; George Hill, *A History of Cyprus*, 4 vol., Cambridge, vol. 2, 1948, pp. 216-260; Peter Edbury, *The Kingdom of Cyprus and the Crusades, 1191-1374*, Cambridge, 1991, pp. 113-131.
- ^{cvi} Bustron, *op. cit.*, pp. 162, 184, 192, 244; « Chronique d'Arménie par Jean Dardel », ch. 28, in *Documents arméniens*, vol. 2, *op. cit.*, p. 23.
- ^{cvi} Bustron, *op. cit.*, pp. 250-251; Edbury, *op. cit.*, pp. 135-136.
- ^{cix} Dardel, *op. cit.*, ch. 25-26, p. 21.
- ^{cx} Dardel, *op. cit.*, ch. 35, 39, pp. 27, 30; Samuēli K'ahanayi, *op. cit.*, p. 168.
- ^{cx} Dardel, *op. cit.*, ch. 81-82, pp. 65-66.
- ^{cxii} Hayeren *Jeřagreri* Hiřatakaraner, *ŽD d.*, *op. cit.*, nos. 635-636, p. 516; Dardel, *op. cit.*, ch. 108-109, pp. 83-85; Aliřan, Sissouan, *op. cit.*, pp. 260-261.

Ответ армян крестоносцам
Клод Мутафян
Резюме

Первоисточники свидетельствуют, что в осуществлении своих программ на Востоке крестоносцам содействовали только армяне. Крестоносцы же, создав свои королевства на Востоке, начали бороться против армян. Поняв новую ситуацию, Рубениды в 20-х годах 12-го века изменили свое отношение к крестоносцам, пытаясь на этот раз использовать их для укрепления своей власти. Эта политика была продолжена и при Хетумидах. Под давлением мусульманских эмиратов Хетумиды, а затем Лусиняны пытались получить поддержку римского Папы, что углубило возникшие в крае противоречия. Это и стало причиной падения Киликийской Армении.

Հայերի պատասխանը խաչակիրներին
Կլոդ Մուտաֆյան
Ամփոփում

Սկզբնաղբյուրները վկայում են, որ արևելքում իրենց ծրագրերի իրագործման համար խաչակիրներին աջակցում էին միայն հայերը: Խաչակիրները, արևելքում ստեղծելով իրենց թագավորությունները, սկսեցին պայքարել հայերի դեմ: Ռուբինյանները, հասկանալով նոր կացությունը, 12-րդ դարի առաջին երկու տասնամյակներից հետո փոխեցին իրենց վերաբերմունքը խաչակիրների նկատմամբ՝ այս անգամ փորձելով նրանց օգտագործել իրենց իշխանությունը ամրապնդելու համար: Այդ քաղաքականությունը շարունակվեց նաև Հեթումյանների ժամանակ: Մահմեդական ամիրայությունների ճնշման տակ Հեթումյանները, այնուհետև Լուսինյանները փորձեցին ստանալ Պապի աջակցությունը, որը խորացրեց երկրում ծայր առած հակասությունները: Դա էլ պատճառ դարձավ Կիլիկյան Հայաստանի անկման համար:

**ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ ԵՎ ՎԱՆ-
ՎԱՍՊՈՒՐԱՎԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
1917 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ-1918 Թ. ՓԵՏՐՎԱՐԻՆ¹
Ավետիս Հարությունյան**

*Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ*

1917 թ. աշնանը թուրքական բանակն ի վիճակի չէր ռազմական և ոչ մի լուրջ գործողություն ձեռնարկելու Կովկասյան ճակատում, որն այդ պահին ձգվում էր Սև ծով–Երզնկա–Խնուս–Վան–Ռևանդուզ գծով՝ մոտ 500 կմ երկարությամբ:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ինչպես նաև Ռուսաստանի քաղաքական շրջադարձային փոփոխությունների հետևանքով երկրի ներսում սկիզբ առած հեղափոխական խմորումների կործանարար ալիքը, որը խարխուլում էր Կովկասյան ճակատի ամրությունը և բանակի մարտունակությունը՝ ռուսական զորքերի գերագույն սպայակույտը որոշեց որոշ չափով բեռնաթափել Կովկասյան ճակատի ռուսական բանակային միավորումները: Ըստ այդմ՝ 1917 թ. հոկտեմբերի սկզբներին Կովկասյան IV կորպուսի ռազմական գործողությունների շրջանից դեպի Հյուսիսային Կովկաս հեռացավ Կովկասյան կազակային II դիվիզիան, որից հետո հետ կանչվեց նաև Վանի ջոկատի հրամանատար, կուբանյան կազակային զորաջոկատի գնդապետ Բելին, որի հետ Վանը լքեց նաև Վոլգյան III կազակային գնդի երկու հարյուրակ: Ռուսական զորամիավորումների այս տեղափոխումն ինքնաբերաբար առաջ բերեց անկազմակերպ և քառասյին իրավիճակ: Վանում մնաց միայն հայկական V հրաձգային գնդի V վաշտը՝ գնդապետ Պ. Փիրունովի գլխավորությամբ (որը հետագայում ինքնասպան եղավ Երևանում), սահմանապահ III հետևակային զույգը՝ գնդապետ Օստրեինի գլխավորությամբ և լեռնային IV մարտկոցը:

Հաշվի առնելով ստեղծված իրադրությունը՝ Կովկասյան IV կորպուսի ժամանակավոր հրամանատար, գեներալ-մայոր Ա. Կուլեբյակինը, Վանի ջոկատի հրամանատար նշանակեց Կովկասյան 8-րդ հրաձգային գնդի նախկին հրամանատար, գեներալ-մայոր Մ. Սիլիկովին (Մ. Սիլիկյանին),² որը, գալով Վան, անմիջապես ձեռնամուխ եղավ բարձիթողի վիճակում

¹ Հոդվածն ընդունվել է 27.09.13:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ պատմության ամբիոնը:

² Մ. Սիլիկյանը մինչ այդ Մուշի կայագործի պետն էր. – Տես Վ. Մկրտչյան, Սարդարապատի հերոսը. գեներալ Մովսես Սիլիկյան, Երեւան, 2012, էջ 9:

հայտնված ռուսական կայագրում կարգ ու կանոն հաստատելու և ջոկատի ռազմունակությունը բարձրացնելու գործին:¹

Բանն այն է, որ ռուս սահմանապահները, գտնվելով բարոյալքված վիճակում, Վանում իրենց պահում էին լկտի ձևով և հաճախ զինվորական ծառայությունն իրականացնում էին հարբած վիճակում՝ չարաշահելով տեղական խաղողի օղու օգտագործումը: Նրանք երբեմն ապօրինաբար ներխուժում էին վանեցիների տները, կազմակերպում էին գողություններ, թալան, բռնություններ և նույնիսկ սպանություններ:

Գեներալ Մ. Սիլիկովը, որին մեծապես օգնում էր նաև Վանի կոմիսարիատը՝ Կոստի Համբարձումյանի գլխավորությամբ, ձեռնարկում էր բոլոր միջոցները բանակում հարբեցողությունն էապես արմատախիլ անելու և քաղաքով մեկ «տոնական թափառումները» վերացնելու ուղղությամբ: Սակայն ոչինչ չէր օգնում, քանի որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո խիստ ընկել էր զինվորական իշխանությունների հեղինակությունը:

Բարոյագրված այս տրամադրությունն ազդում էր նաև արևելահայ զինվորների վրա, որոնք իրենց հայացքը հառել էին դեպի իրենց հարազատ Անդրկովկաս, որտեղից պարբերաբար ստացվում էին կովկասյան թաթարների և սահմանամերձ քրդերի հակահայկական ելույթների լուրերը: Արդյունքում աճում էր հայրենիք վերադառնալու նրանց ցանկությունը:

Գեներալ Մ. Սիլիկովը ենթադրում էր, որ կռվել չցանկացող սահմանապահ զինվորների անհապաղ հեռացումը Վանից էլ ավելի կուժեղացներ Վանի ջոկատի ազգային միատարրությունը և կօգներ համախմբելու ջոկատը առաջիկա ռազմական խնդիրների լուծման ժամանակ: Այդ հարցով նա դիմում է Կովկասյան IV կորպուսի ժամանակավոր հրամանատար, գեներալ Ա. Կուլեբյակինին՝ առաջարկելով որքան հնարավոր է շուտ իրականացնել ռուս սահմանապահների տեղափոխումը Վանից, քանի որ պատերազմական գործողությունները սկսելուց հետո նրանց վարքագիծը կարող էր ազդել նաև հայերի վրա:²

Հաշվի առնելով ռազմաճակատի գծի քայքայումը՝ 1917 թ. հոկտեմբերին Վանի ջոկատի հրամանատար գեներալ Մ. Սիլիկովի օրոք Կովկասյան IV կորպուսի հրամանատարի հրամանով և Վանի շրջանի զինվորական զորակոչի անցկացման միջոցով հայկական V հրաձգային հարվածող գնդին կից նախատեսվեց ձևավորվել նոր III գումարտակ, որը ստացավ «մահապարտների գունդ» անունը: Այդ հրամանով և Վանի Շրջանային կոմիսարիատի ու

¹ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 37, ք. 36:

² ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 37, ք. 36:

տեղական կուսակցական և ազգային կազմակերպությունների օժանդակությամբ սկսվեց 18-25 տարեկան բոլոր զինակոչների հավաքագրումը և ուսուցումը:¹ Միաժամանակ զենք և զինամթերք հայթհայթելու նպատակով Թիֆլիս գործուղվեցին հատուկ պատվիրակներ: Սակայն այս մտահաղացումը հեռու էր իրականացումից, քանի որ շուտով հրապարակվեց մի նոր հրաման՝ տեղական նոր՝ Վանյան IV գնդի կամավարման մասին: Փաստորեն կասեցվեց Վանի III գումարտակի ձևավորումը, սակայն արագ և հաջողությամբ ձեռնարկվեց նոր՝ IV գնդի ստեղծումը:

Սակայն 1917 թ. նոյեմբերին Վանից մեկնեց նաև գեներալ Մ.Սիլիկովը, և Վանի ջոկատի հրամանատարության պարտականությունները ստանձնեց հայկական V գնդի հրամանատար, գնդապետ Պավել Փիրումովը:²

Հաշվի առնելով Կովկասյան ռազմաճակատում իրենց համար ստեղծված անբարենպաստ իրավիճակը՝ 1917 թ. նոյեմբերի 17 (21)-ին թուրքական երրորդ բանակի հրամանատար Ֆերիկ-Վեհիբ-Մեհմեդ փաշան ռուսական Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար գեներալ Մ. Պրժևալսկուն դիմեց՝ զինադադարի մասին խնդրանքով: Իրականում, սակայն, թուրքական կառավարող և զինվորական վերնախավի նպատակը հաշտություն կամ խաղաղություն կնքելը չէր. նրանք, ըստ էության, ցանկանում էին ժամանակ շահել:

Ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Մ. Պրժևալսկին երզրումի ռուսական բանակի հրամանատարի միջոցով Վեհիբ փաշային պատասխան ուղարկեց հետևյալ հեռագիրը. «Պարոն գեներալ, զինադադարի առաջարկությամբ Ձեր նամակը ստացա եւ շտապում եմ տեղեկացնել Ձեզ, որ ես պատրաստ եմ ընդառաջ գնալ Ձեր մարդկային առաջարկին: Այդ նպատակով ես առաջարկում եմ իրար դեմ մարտնչող մեր երկու բանակներին ամբողջ կովկասյան ռազմաճակատում դադարեցնել ռազմական գործողությունները եւ չիրականացնել որեւէ ռազմավարական վերախմբավորում, մնալ ներկայումս զբաղեցրած դիրքերում՝ սպասելով զինադադարի կնքմանը: Այդ պայմանին Ձեր համաձայնության դեպքում ես առաջարկում եմ Ձեր կողմից նպաստավոր պատասխան ստանալուն պես թուրքական եւ ռուսական բանակների ներկայացուցիչներից ստեղծել հատուկ հանձնաժողով, որին հանձնարարել մանրամասնորեն մշակել երկու կողմերի համար էլ ընդունելի զինադադարի պայմաններ: Պարտքս եմ համարում մեր այս նամակագրության մասին հա-

¹ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 1:

² ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 1:

ղորդել անգլիացիների միջագետքյան բանակի հրամանատարին: Գեներալ, խնդրում եմ ընդունեցեք խորին հարգանքներիս հավաստիքը»:¹

1917 թ. նոյեմբերի 22-ին Կովկասյան կոմիսարիատն իր պատմական կոչով դիմեց Կովկասյան բանակին և Անդրկովկասի բնակչությանը՝ թուրքերի հետ զինադադար կնքելու համար որոշում կայացնել, որի ընթացքում հրավիրվելիք Սահմանադիր ժողովը պետք է վերջնականապես ավարտեր պատերազմը:²

Երկկողմանի համաձայնությունից հետո Հոկտեմբերյան հեղափոխությունից 41 օր անց՝ դեկտեմբերի 5-ին, Երզնկայում կնքվեց զինադադար³: Դրանից անմիջապես հետո Կովկասյան ռազմաճակատում հրավիրվեցին զինվորական ժողովներ, և որոշումներ ընդունվեցին «զենքերը վար դնել» և «վերադառնալ տուն»: Ռուս զինվորը, ինչպես նկատում է Եղ. Գեղամյանցը, «բարոյական արբեցության ենթարկվեց և թքնելով ամեն բանի վրա՝ թողեց պատերազմի դաշտն և խումբ-խումբ վերադաձավ իր հայրենիքը, - Ռուսաստան»⁴: Մինչև դեկտեմբերի 25-ը ռուսական առաջապահ ու պահեստի կես միլիոնանոց բանակի և ոչ մի զինվոր չպետք է մնար Կովկասյան ճակատում:

Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ավ.Ահարոնյանը Պողոս Նուբարին ուղղած իր՝ 1917թ. դեկտեմբերի 25-ի թիվ 114 հեռագրում նշում էր, որ «Հայոց Ազգային խորհուրդը... պատիվ ունի հաղորդելու, ... որ ռուսական բանակը գրեթե կատարելապես լքում է Կովկասյան ճակատը»,⁵ որը պարզապես «մեֆիստոֆելյան ծաղրանք մըն էր, ավելին, կեղծիք մըն էր»:⁶ Ավ. Ահարոնյանի բնորոշմամբ՝ ռուսական բանակի նահանջով վերանում էր այն գաղտնի որոշումը, որով Հայաստանը պատերազմից հետո կցվելու էր ցարական Ռուսաստանին:⁷

Հաշվի առնելով Կովկասյան ճակատի մեծ ձգվածությունը, զորացրումը և պայքարը հակահեղափոխության դեմ՝ Էնգելիում, Ջուլֆայում, Շահ-թախտ կայարանում, Սարիղամիշում և Տրապիզոնում, համապատասխանաբար ձևավորվում են Արևելապարսկական ռազմաշրջանի, Ուրմիայի,

¹ Փաստաթղթեր եւ նյութեր Անդրկովկասի և Վրաստանի արտաքին քաղաքականության մասին, ժողովածու, Թիֆլիս, 1919, էջ 13:

² ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 27, թ. 1:

³ Այդ մասին առավել հանգամանորեն տես Արամ Ամիրխանյան, Ռուս և թուրք զինադադարը. պատմական անցքեր 1917–1918 (Փայտօս Տանօ), Ֆրեզնո, 1921:

⁴ Եղիշե Ա. Քահ. Գեղամյանց. Տաճիկները Կովկասում և Բաքվի անկումը, պր. առաջին, Երևան, 1994, էջ 11:

⁵ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 158, թ. 1:

⁶ Կ. Սասունի. Տաճիկահայաստանը Ռուսական տիրապետության տակ (1914–1918). Տաճիկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի Հանրապետության կազմության մեջ, Բոստոն, 1927, էջ 160:

⁷ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 158, թ. 2:

Վանի, Երզրում-Երզնկայի և Տրապիզոնի շրջանների բուլշևիկյան իշխանության ռազմահեղափոխական կոմիտեներ:¹

Ե՛հիշտ է, «տրված հրահանգ-հրամանը տարիների ընթացքում հոգնաբեկ ու տանջված և ամեն բոլոր սպանվելու սարսռալից վտանգն ապրած զինվորների և զինվորականների սրտից էր խոսում»,² սակայն, ըստ էության, բուլշևիկյան հեղափոխությունը զանգվածային ձևով և խառնաշփոթորեն քայքայում էր ռազմաճակատը: «Մշակ» թերթի հավաստմամբ՝ «ռուս զինվորը, որ առաջ, այնքան հիանալի ժեստով մը, ցուցուց աշխարհին իր անպարտելիությունը, երբ հոս Արևելքին մեջ, խիզախեց մինչև Երզրումի անառիկ ամրությունները, այժմ շատ անպատվաբեր կերպով կլքե իր ընկերներու անգին արյան գնով գրավված երկիրները և Ռուսիա կմեկնի «հող և ազատություն» ստանալու համար»:³

Ռուս հասարակ զինվորն այլևս չէր ցանկանում կռվել և ենթարկվել զինվորական հրամանատարներին և ձգտում էր օր առաջ բռնել տունդարձի ճանապարհը՝ բախտի քմահաճույքին թողնելով տասնյակ հազարավոր զինվորների արյան գնով ազատագրված Արևմտյան Հայաստանի տարածքը:

Երզնկայի զինադադարից հետո առաջ եկած դասալքությունը մեծ աղետ էր ռազմաճակատի սահմանամերձ տարածքներին մոտ գտնված ազգաբնակչության համար: Ինչպես նույն «Մշակ»-ն է արձագանքում՝ «բուլշևիկական «երկրորդ հեղափոխության» ստեղծած տարականությունն ու կազմալուծումը իր ամբողջ պեսպիսություններով ի հայտ կուգա գրավված վայրերուն մեջ, որոնցմե մեկն է Վան»:⁴ Այդ էր պատճառը, որ Վ. Տերյանը և Ս. Լուկաշինը Արևմտյան Հայաստանի ազատագրման ու անկախության վերաբերյալ իրենց կազմած զեկուցագրում և Արևմտյան Հայաստանի անկախության հռչակման մասին Վ. Տերյանի կազմած հրովարտակի նախագծում նշում էին, որ «անհրաժեշտ քանակությամբ ռուսական զորքերը կթողնվեն Վանի, Երզրումի և Բիթլիսի սահմաններում այնքան ժամանակ, մինչև որ հայ ժողովուրդը հնարավորություն կստանա համաժողովրդական քվեարկությամբ վճռելու անկախ Հայաստանի ներքին կարգի հարցը, և մինչև որ կկազմակերպվի հայկական ոստիկանություն»:

¹Борьба за победу Советской власти в Грузии. Документы и материалы (1917–1921 гг.). Тбилиси, 1958, с. 179.

²Ս. Սարխադյան, *Կյանքիս հուշերից*, Երևան, 2007, էջ 171:

³«Մշակ», Թիֆլիս, 1918 թ., մարտի 20, թիվ 59:

⁴Վասպուրական, 1915–1930, Վենետիկ, 1930, էջ 105, նաև Վան-Վասպուրականի հերոսամարտ, 75, Երևան, 1990, էջ 115:

երկրի ներքին կարգն ու արտաքին անվտանգությունն ապահովելու համար»:¹

Վան-Վասպուրականի ղեկավար մարմնի անդամներն անցնում են գործի և ջանում հուսալքումի ընդհանուր տրամադրությունը ցրել: Սակայն, անկարող լինելով կասեցնել ռազմաճակատի ընդհանուր քայքայումը, նրանք պայմանավորվում են Վանի ռուսական զորամասի ղեկավարության հետ, որ ռուսներն իրենց հետ ոչինչ չտանեն՝ բացի անձնական զենքերից ու ճանապարհի սննդամթերքից:

Բանն այն էր, որ դեռևս Ա. Կերենսկու կառավարության օրոք նախապես հայտարարվել էր, որ Արևմտյան Հայաստանի ճակատի վրա կռվող բանակի հայ զինվորները հայագոհ զորավարների ղեկավարությամբ կարող էին տիրանալ կազմալուծվող ռուսական բանակի անբավ մթերքներին և պաշտպանելով Կովկասյան ճակատը հուսահատության մատնված թուրքական բանակից՝ ապահովել Արևմտյան Հայաստանի ազատագրումը:² Իսկ ռուսներն Արևմտյան Հայաստանում թողել էին 3000 թնդանոթ, 3000 գնդացիր, 1 մլրդ փամփուշտ, 100 հազ. զինվորի համար նախատեսված հագուստ և ուտելիք, 15–17 հազ. ձի, 1 մլն ռուբլ, 100 հազ. հրացան, փոխադրության համար նախատեսված բազմաթիվ կառքեր, մեքենաներ, ձիու թամբեր, բենզին, կաշի և օժանդակ ամեն տեսակի պիտույքներ:³ Այդ ամենի խելացի օգտագործման դեպքում կարելի էր 2-3 տարի սնվել, հագնվել, զինվել և կռվել: Սակայն հայերն, ընդհանուր առմամբ, բավարարվում են միայն թողած հարստության փշրանքներով: Դրանք հիմնականում թալանվում են քրդերի կողմից և հետո էլ ընկնում սոված ու ոջլոտած թուրք զինվորների ձեռքը, որոնք ուտում, հագնվում, զինվում, մի փոքր հանգստանում և վերակազմում են քայքայված դիվիզիաները, ապա, անցնելով հարձակման, հետ էին գրավում ոչ միայն ռուսների կողմից գրավված հայկական նահանգները, այլ նոր նվաճումներ կատարում Անդրկովկասում: Ի բարեբախտություն հայերի՝ Վանում տեղակայված ռուսական 10000-անոց բանակը վասպուրականցիներին է թողնում ոչ միայն իր գրաված երկիրը, այլև պահեստները, զենքերն ու ռազմամթերքը: Միայն Սավալիում հայերին է փոխանցվում 150 կառք և 900 ձի⁴: Սակայն Սավալիի, ինչպես նաև Առնիսի ռուսական լքված պահեստներից, որոնք համալրված էին զինվորական ամեն տեսակի մթերքներով, «հնար չեղաւ պետք եղած չափով օգտուելու, փոխադրական միջոցներու անբաւա-

¹Վ. Տերյան. *Երկեր, հ. 4, Երևան, 1925, էջ 404–405:*

²Յ. Երամյան. *Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, Աղեքսանդրիա, 1929, էջ 437:*

³Ա. Միհրանեան. *Ինչպե՞ս պետք է գրաւել Թրքահայաստանը (Զօր. Անդրանիկի կարծիքը), Կ. Պոլիս, 1921, էջ 7:*

⁴«Մշակ», *Թիֆլիս, 1918 թ., մարտի 20, թիվ 59:*

րարութեան եւ եղանակի խստութեան պատճառով: Այնպէս, որ զինուորներ մեծ մաս մը առանց տաք շորերու եւ ոտնամաններու ստիպուած էր իր զեղջկական հագուստով եւ միակ շապիկով մը մեկնիլ խրամներ, Ոստանի եւ Առնիսի բարձունքներու վրայ, լուռ ու անտրտունը»:¹

Տուն շտապող ռուս զինվորները՝ ենթարկվելով Վան-Վասպուրականի դեկավար մարմնի որոշմանը, վերցնում են իրենց անձնական զենքերը, ճանապարհի համար անհրաժեշտ սննդամթերք, պաշտպանության համար 2 թնդանոթ և 60 հոգուց բաղկացած հայկական հեծելազորային ուղեկցող մի խումբ՝ Մեսրոպ Ջանոյանի ու Խաչիկ Խռանյանի դեկավարությամբ ու 1917 թ. դեկտեմբերի երկրորդ շաբաթվա ընթացքում ճանապարհ են ընկնում դեպի Պարսկաստան–Երևան՝ պայմանով, որ հետագայում 2 թնդանոթները և հայ հեծելախումբը հետ ուղարկվեն Վան:

Թվում էր թե Վանի պաշտպանության գործը հաջողված էր:

Սակայն արձակուրդ գնալու նպատակով 1917 թ. դեկտեմբերի 19-ին (հին տոմարով՝ հունվարի 1-ին) Վանից մեկնեց նաև գնդապետ Պ. Փիրունովը: Նրա փոխարեն՝ Հայկական V գնդի հրամանատարության պարտականությունները ստանձնեց փոխգնդապետ Պողոսյանը, որն աչքի էր ընկնում իր կամային և բնավորության թույլ հատկանիշներով և ապաշնորհությամբ:

Դեկտեմբերի 21-ին Վանից մեկնելու ցանկություն հայտնեցին նաև փոստը, հեռագիրը, կայծապարպիչ կայանը, մարտկոցը և հացի փռերը: Շնորհիվ Վանի շրջանի կոմիսար Կոստի Համբարձումյանի անխոնջ աշխատանքի՝ հաջողվեց համոզել մարտկոցի զինվորներին՝ մնալ Վանում:

Սակայն դեկտեմբերի 25-ին մյուս հաստատություններն անկանոն հեռացան Վանից:²

Ռուսական բանակի նահանջի հետ հեռանում են նաև Ձեմստվոների և Քաղաքների միության 300 ներկայացուցիչները³, որոնք իրենց գործունեությունը փոխանցում են Վանի կոմիսարությանը⁴:

Վանում հաստատվեց անկումային տրամադրություն: Հայկական V գնդում հաճախակի սկսեցին լսվել զինվորների պահանջներն իրենց արձակուրդի մասին:

Ռուսական զորքերի վերադարձից հետո ճակատագրական և մահու ու կենաց հարց էր դարձել Արևմտյան Հայաստանի նվաճված երկրամասերի պաշտպանության խնդիրը, քանի որ ռազմաճակատից հեռացել էր շուրջ

¹ Եղ. Վարդանեան, «Նահանջ բիրոց» Վասպուրականի, էջ 9-10:

² ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 1:

³ Թեոդիկ. Ամենուն Տարեցույցը, Ժ-ԺԴ տարի, 1916–1920, 4. Պոլիս, 1920, էջ 109:

⁴ «Հորիզոն», Թիֆլիս, 1918 թ., մարտի 9, թիվ 50:

500000-անոց ռուսական բանակը, և ռազմաճակատը կազմալուծվել ու մնացել էր անտեր:¹

Արևմտյան ճակատից վերադարձող զինվորները տրամադիր չէին տեղափոխվելու Կովկասյան ճակատ: Ցաք ու ցրիվ եղած հայկական գնդերը զործում էին ինքնագլուխ՝ առանց միասնական ղեկավարի և առանց իրար հետ կապ պահպանելու: «Կովկասահայ ժողովուրդին մեջ բարոյալքումը կը գորանար հետզհետե...»:²

Արևմտահայությունը խորհում էր, որ թուրքը հեշտությամբ ոտք չդներ գրավված վայրերում, չհամալրվեր զենքի, հոգուստի և կենսամթերքի ռուսական պահեստներով, իսկ հաջորդ օրն էլ սուրը չշողացներ արևելահայության գլխին: Դեռևս 1917թ. դեկտեմբերի 1-ին Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Լեբեդինսկին իր թիվ 136 հրամանագրով հայերին պաշտոնապես արտոնել էր ստեղծել առանձին զորաբանակ կամ կորպուս՝ Կովկասյան ճակատը պաշտպանելու համար՝ հրամանատար նշանակելով Թ. Նազարբեկյանին:

Երկրի պաշտպանության կարևորագույն հարցը հրատապ լուծում էր պահանջում, քանի որ վասպուրականցին իր գոյության պահպանումը վստահում էր իր զենքին և հավաքական ուժին: Վասպուրականի ղեկավար մարմինը, հաշվի առնելով ստեղծված նոր կացությունը, ինքնապաշտպանության և ինքնապահպանման համար միջոցներ է ձեռք առնում, ինչպես դա արվեց 1915 թ. Ապրիլյան հերոսամարտի ժամանակ: Ա. Մաքսապետյանի հավաստմամբ՝ «կ'աճապարեինք իշխանության կազմակերպումը շուտ ավարտել, որպեսզի արտաքին ու պատերազմական գործերը երեսի վրա չմնան»:³

Վանյան V գնդի համալրման հրամանն ի կատար ածելու համար 1918թ. հունվարի 1-ին Վանի շրջանում հայտարարվեց 20-35 (18-40) տարեկան երիտասարդների պարտադիր զորահավաք, իսկ ավելի ուշ՝ մինչև 50 տարեկան տղամարդկանց համընդհանուր զորակոչ: Հավաքագրումն ընթանում էր բավականին հաջող: Ձեռք կրելու ընդունակ երեկվա արիեստավորները, խանութպանները, ուսուցիչները, քաղաքական գործիչները, զինապարտները և ընդհանրապես բոլորը ներկայացան հավաքատեղի, անցան զորանոց և ենթարկվեցին զինվորական ընդհանուր կարգ ու կանոնին:

¹ Կ. Սասունի, *Թրքահայաստանը Ա Աշխարհամարտի ընթացքին (1914-1918)*, Բեյրութ, 1966, էջ 144:

² Ա. Դարբինյան, *Հայ ազատագրական շարժման օրերէն. Յուշեր 1890 էն 1940*, Երեւան, 2003, էջ 217:

³ Վասպուրական, 1915-1930, էջ 107-108, տես նաև՝ Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 118:

Այս ձեռնարկումը ժողովրդի կողմից ընդունվեց շատ բարձր գիտակցունով և սիրով, քանի որ մեծացվում էին պաշտպանության ուժերը, իսկ ժողովուրդն էլ լծվում էր գործունյա պայքարի: V գնդի սպաները, մարզելով զորակոչիկներին, կազմեցին երկու գունդ՝ 2376 սվինով և 80 գնդացիորով: Դրանցից մեկը 100 ձիավորով հետագայում ուղարկվեց Ոստանի ճակատ, 800 հոգի և 100 ձիավոր՝ Առնիս-Արճեշի ճակատ, իսկ 200-ը՝ Բերկրի-Սավալի գիծը (Իգդիրի ճանապարհը) պաշտպանելու:¹

Ձևավորվեց ուսումնասիրամանատարական կազմ, որի օգնությամբ, վանում բացված սպայական դպրոցում պատրաստվեցին շուրջ 30 ենթասպաներ:² «Ամեն պարագայում,- հիշում է ժամանակակիցներից մեկը,- պարծենում էինք, որ սպաներ պատրաստելու համար դպրոց ունենք»:³ Արևելահայ սպաների ձեռքի տակ մարզվելուց հետո նրանք փետրվարի 1-ին մտան բանակ և որպես հարյուրապետ, հիսնապետ և զինվորական պահեստների կառավարիչներ՝ անձնվիրաբար ծառայեցին իրենց հայրենիքին:⁴ Բայց, քանի որ սպաների պակասը զգացնել էր տալիս, ստիպված կազմակերպվեց սպայական երկրորդ դասընթացը՝ նախատեսված 50 հոգու համար:⁵

Հայնկույսների եկեղեցու մոտ՝ Ակոբա Քար քարաժայռի կողքին, նորաթուխ սպաների ղեկավարությամբ կազմակերպվեցին հրաձգության, իսկ քաղաքի արևելյան կողմում՝ Ուրբաթ Առուի դաշտում՝ քայլքի պարամունքներ:⁶

Այնքան մեծ էր զորակոչի ոգևորությունը, որ դրան իրենց մասնակցելու ցանկությունը հայտնեցին նաև տարիքով փոքրերը: Այդ մասին Եղ. Վարդանեանը համոզմունքով արձագանքում է. «Ոգևորութեան ալիքներ մեծերէն անցնելով թափանցած էին 10-12 տարեկան փոքրիկներու սրտերու մէջ փոթորկելով անոնց հոգիներ: Եւ ահա Արտամետ գիւղ բնակող Շատախցի 50 փոքրիկներ՝ որոնց հայրեր եւ մեծ եղբայրներ արդէն զինուոր էին եւ խրամներու մէջ, մի մի փայտ ուսերուն դրած, զինուորական շարքով եւ «Մեր հայրենիք» երգելով ամբողջ ժողովրդեան ծափերու մէջէն

¹ Ա. Հացագործյան, Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (ականատեսի հուշեր), ԲՀԱ, 1969, թիվ 1, էջ 218:

² ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 1:

³ Ս. Սարխարյան, Կյանքիս հուշերից, էջ 171:

⁴ Վասպուրական, 1915–1930, էջ 108, տես նաև՝ Ա. Հացագործյան, Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (ականատեսի հուշեր), ԲՀԱ, 1969, թիվ 1, էջ 218:

⁵ Նրանցից շատերը հետագայում մասնակցեցին Սարդարապատի հերոսամարտին և 1921 թ. փետրվարյան ապստամբությանը. - Տես Վասպուրական, 1915–1930, էջ 108, տես նաև՝ Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 119–120:

⁶ Եղ. Վարդանեան, «Նահանջ բիրոց» Վասպուրականի, էջ 18:

զորանոց կուգային պահանջելով, որ իրենց ալ զէնք տրուի, իրենք ալ կ'ուզեն կռուի դաշտ մեկնիլ: Շատախի առիւծներու արժանաւոր կռիւններն էին անոնք, Հայ անկուն նկարագրի կենդանի պատկերներն էին անոնք, զորոնք մի շաբաթ զօրանոցի մէջ զինուորի նման կերակրել է վերջ ճամբու կը դնէին ըսելով - Հայաստան չի մեռնիր քանի, որ ձեզ նման փոքրիկներ ունի»:¹

Իր քանակով քիչ V հայկական զունդը ստիպված էր ճակատը պաշտպանելուն զուգընթաց իրականացնել ներքին ծառայություն, որի գլխավոր խնդիրն էր հետևակային և հեծյալ խմբերով ապահովել տեղի բնակչության անվտանգությունը տարբեր տեսակի ավազակախմբերի հարձակումներից: Այդ նպատակով առանձնացված Վանի ոստիկանական երկու վաշտերը ղեկավարում էին Լևոն Շաղոյանը և Գրիգոր Բուլղարացին,² որոնց օգնության եկան նոր ձևավորված IV հայկական գնդի զորամասերը: Վանից մինչև Շերբեկ (Խոյի ուղղությամբ) և Վանից-Սավալի զինվորական հանգրվանները զբաղեցվեցին Վանի ոստիկանների կողմից:

Մ. Գրեյսին հանձն առավ հոգալ Վանի իշխանության զինբաժնի ամբողջ ծախսը, որն ամսական կազմում էր մոտավորապես կես մլն ռ.: Միաժամանակ նա խոստացել էր տալ 20 գնդացի և 12 թնդանոթ՝ իրենց հրահանգիչներով:

Վանի գնդի կողմից զբաղեցվեցին ռուսների թողած Առնիսը և Արճեշը: Բացի դրանից՝ V հայկական գնդի մեկ վաշտի հետ Ոստանի դիրքերում կանգնած էր IV Վանյան գնդի վաշտը:³

1918 թ. հունվարի 13-ին V հայկական հրաձգային հարվածող գնդի 7-րդ վաշտը և Վանյան IV գնդի 1-ին վաշտը Հայկական 5-րդ հրաձգային հարվածող գնդի պրապորշիկ Տիգրան ժամհարյանի գլխավորությամբ մեկնեց Ոստան՝ Հայկական 5-րդ հրաձգային հարվածող գնդի երկու վաշտերին փոխարինելու համար:⁴

Վասպուրականի հայկական այդ գնդերի մեկնումը ռազմաճակատ կատարվեց հանդիսավոր իրադրության մեջ՝ իշխանության բոլոր անդամների, Վանի չափահաս բնակչության և աշակերտների մի մասի ներկայությամբ: Հուզիչ և ոգևորիչ ճառով հանդես եկավ հայտնի գործիչ Ավետիք Սահակյանը, որն այդ ժամանակ գտնվում էր Վանում⁵: Վասպուրականի նվիրական հողի պաշտպանությունն ամբողջությամբ հանձնվում էր հայ-

¹ Եղ. Վարդանեան, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 18:

² Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 62:

³ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 1:

⁴ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 1:

⁵ Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 120:

րենի կտրիճներին, որոնց խիզախությունից ու տոկունությունից էր կախված տեղի ազգաբնակչության մնալ-չմնալու հարցը:

Հասնելով տեղ՝ 1918 թ. հունվարի 14-ին Տիգրան ժամհարյանը ստանձնեց Ոստան-Դերս-Խանի պաշտպանական գծի պարտականությունները:

Սակայն Վասպուրականի ինքնապաշտպանության վրա իր բացասական ազդեցությունն ունեցավ V հայկական հրաձգային հարվածող գնդի մեկնումը Իգդիր:

1918 թ. հունվարի 18-ին Պարսկաստանի վրայով Վան-Վասպուրականից Կովկաս են մեկնում ռուսների վերջին զինվորները, փոստ-հեռագրատան մնացած պաշտոնյաները և թնդանոթածիզները:

Այդ ամենի անմիջական ազդեցության տակ 1918 թ. հունվարի 20-ին Ոստանի վաշտի անունով ստացվեց 4 զինվորների հեռախոսագիրը, որով նրանք կոչ էին անում ռազմաճակատի պաշտպաններին ինքնական թողնել ճակատը և հեռանալ Կովկաս: Տ. ժամհարյանի բացատրական աշխատանքների արդյունքում վաշտն այդպիսի քայլը որակեց որպես դավաճանություն:¹

Սակայն 1918 թ. հունվարի 25-ին գնդի մնացած վաշտերի 250 հայ սպաներ և զինվորներ (ըստ Յ. Երամյանի՝ 300-400,² իսկ ըստ Եղ. Վարդանյանի՝ 300 հոգի³), որոնք պահում էին Ոստանի դիրքերը, «վարակվելով ռուսերու վատասերիչ օրինակեն»⁴ և տարված ռուսների «տունդարծի» լոգունգով, հաշվի չառնելով երկրի առջև ծառայած լուրջ վտանգը, ծանր կացությունը և ժողովրդի ու կառավարության խնդրանքը և հորդորը, իրենց հետ վերցնելով շարժական խոհանոցը, երկանիվ պատերազմական կառքերը, զինանոցը և ձիերը, լքում են Վան-Վասպուրականի ճակատը և մեկնում Կովկաս: Դա, փաստորեն, կատարյալ դավաճանություն էր, որի անմիջական արդյունքը եղավ այն, որ հաջորդ օրը Վանից հյուսիս ընկած Գեոլու գյուղի մեջ նրանք հարձակման ենթարկվեցին իրենց իսկ մարտական ընկերների կողմից, որի հետևանքով սպանվեց 5 և վիրավորվեց 7 զինվոր: Եղբայրասպան այս արարքը, եթե նույնիսկ ուներ արդարացուցիչ պատճառ, սակայն արժանացավ ժողովրդի արհամարհանքին⁵:

Տունդարծի վարակը շարունակվեց նաև հետագայում: 1918 թ. փետրվարին Տ. ժամհարյանի գնդի 1-ին գումարտակը, որն այդ ժամանակ գտնվում էր Սավալիում, սկսեց ամենօրյա պահանջներ ներկայացնել, որպես-

¹ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 1:

² Յ. Երամյան. *Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, Աղեքսանդրիա, 1929, էջ 437*:

³ Եղ. Վարդանեան, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 17:

⁴ Յ. Երամյան. *Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, Աղեքսանդրիա, 1929, էջ 437*:

⁵ Եղ. Վարդանեան, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 18:

զի գնդի մյուս գումարտակները թողնեն Վանը և նահանջեն Սավալի: Փոխգնդապետ Պողոսյանը, որն անձամբ գտնվում էր հուսահատ վիճակում, չկարողացավ ոչինչ ձեռնարկել: Սակայն որոշ ազդեցիկ սպաների միջոցով նա հրաման արձակեց և արգելեց ճակատի ինքնակամ քայլերը:¹

Այսպիսով՝ Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղափոխությանը հաջորդած իրադարձությունները կազմաքանդիչ նշանակություն ունեցան ինչպես Կովկասյան ողջ ռազմաճակատի, այնպես էլ Վան-Վասպուրականի պաշտպանության համար, որի արդյունքում Վանում տեղակայված ռուսական 10000-անոց բանակը բռնեց տունդարձի ճանապարհը՝ ճակատագրի քմահաճույքին թողնելով Վասպուրականի ազգաբնակչությանը:

Уничтожение Кавказского фронта и вопрос защиты Ван-Васпуракана с октября 1917 г. по февраль 1918г.

Аветис Арутюнян

Резюме

Осенью 1917 года турецкая армия не была в состоянии вести какие-либо серьезные военные действия на кавказском фронте, который на тот момент тянулся приблизительно на 500 км по линии Черное море-Ерзнка-Хнус-Ван-Ревандуз.

Учитывая неблагоприятные для них условия на кавказском фронте, 17-ого ноября 1917 года командир третьей турецкой армии Вегип паша обратился к главному командиру русской кавказской армии с просьбой о перемирии, которое заключили 5-ого декабря в Ерзнка.

После перемирия встал вопрос дезертирства, ставшего катастрофой для населения Ван-Васпуракана.

После возвращения русской армии фатальным вопросом стала проблема защиты завоеванных регионов Васпуракана, так как эту часть фронта оставили более 100 000 солдат русской армии и фронт распадался.

Важнейший вопрос защиты Васпуракана требовал решения, так как жители Васпуракана свою защиту доверяли только оружию и коллективной силе. Учитывая создавшуюся ситуацию, руководящий орган Васпуракана принял меры по самозащите, как это было сделано в 1915 году во время апрельской освободительной войны.

Для осуществления приказа пополнения полка Ванян V, 1-ого января 1918 года в области Вана была объявлена мобилизация молодежи с 25-35 (18-40) лет, а позднее, общий призыв мужчин до 50 лет.

¹ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, ք. 2:

Destruction of the Caucasian Military Front and Issue of the Van-Vaspurakan Defence at October 1917 – February 1918

Avetis Harutyunyan

Summary

In autumn of 1917 Turkish army was unable to take any serious military action on Caucasus military front, which was at that moment stretched about 500 km long by the line Black Sea-Erzznka-Khnus-Van-Revanduz.

Considering adverse circumstances, developed in the Caucasus front, the third commander of the Turkish army Vegib Pasha on November 17, 1917 has requested a truce to the supreme commander of the Russian army of the Caucasus, which was negotiated on December 5 in Erzznka.

After the armistice the desertion has arisen, which became a big disaster for the population of the Van-Vaspurakan.

After return of the Russian troops there became a fateful issue of defense of the occupied territories of the Vaspurakan, because from this front segment departed 100000 of Russian army, and military front was disbanded.

The most important issue of the Vaspurakan defence required an urgent solution because the population of the Vaspurakan relied the confidence of self-existence only on its weapon and collective strength. In response to this situation, governing authorities of Vaspurakan have taken appropriate arrangements for self-defense and self-preservation, as it was done during the April heroic battle.

For execution of the order of the manning the 5 Van regiment on January 1, 1918 in the Vanarea was declared a compulsory recruitment of the 20-35 year olds, and later the total recruitment of all men under 50 years.

ՌՈՒՔԵՆԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՇՈՒՐՁ¹

Խաչատուր Ստեփանյան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ

Հայաստանի առաջին Հանրապետության անկումից հետո Ռուբենը (Մինաս Տեր-Մինասյան) շատերի հետ ստիպված եղավ անցնել արտասահման, որտեղ, կուսակցական, հրապարակախոսական աշխատանքներին զուգահեռ, ձեռնամուխ եղավ իր հուշերի՝ «Հայ յեղափոխականի մը յիշատակները»-ի շարադրմանը: Ռուբենը 19-րդ դ. վերջի և 20-րդ դ. սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի ականավոր գործիչներից է: Նա առաջին հանրապետության տարիներին լուրջ դեր կատարեց արևմտահայ գաղթականների տեղավորման, թուրք-թաթարական հակապետական ապստամբությունների ճնշման, հայոց բանակաշինության գործում:

Ռուբենի հուշերը նախապես (1920-1940-ական թթ.) մաս-մաս հրատարակվել են Բոստոնի «Հայրենիք» ամսագրում:

1953 թ. Լոս Անջելեսում Ռուբենի մահից հետո ամերիկահայ մի քանի հայրենասեր բարերարների նախաձեռնությամբ «Յիշատակները» հրատարակվեցին ամբողջական ձևով՝ յոթ հատորով²: Դրանից հետո դրանք վերահրատարակվել են ևս երեք անգամ (1972 թվականին՝ Բեյրութում, 1982 թվականին՝ Թեհրանում և 1990 թվականին՝ Երևանում): Եվս մեկ անգամ 1992 թվականին հիշատակարանը (հակիրճ տարբերակով՝ մեկ հատորով) ֆրանսերեն լեզվով հրատարակվել է նաև Փարիզում:

Ընդհանրապես պատմական գործիչների թողած հուշերը բավականին մեծ արժեք ունեն հայոց պատմության ուսումնասիրության համար: Այս առումով բացառություն չէ նաև Ռուբենի հուշագրությունը, որը շարադրված է դեպքերի անմիջական մասնակցի կողմից:

Ռուբենի հուշագրությունը ոչ միայն օգտակար սկզբնաղբյուր է, այլև սերունդներին ազատության ոգով դաստիարակելու իսկական ուղեցույց: Այն լցված է հայրենաշունչ ոգով ու գաղափարական հագեցվածությամբ:

Հարկ է նշել, որ Ռուբենը մեզ ներկայանում է տաղանդավոր գրողին հատուկ դիտողականությամբ ու գրական ճաշակով, խոր վերլուծություններ անելու բացառիկ կարողությամբ, պատմելու անկաշկանդ ոճով եւ հարուստ լեզվով: Ռուբենի հուշերը հարուստ են ազգագրական, պատ-

¹ Հոդվածն ընդունված է 15.09.13:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ պատմության ամբիոնը:

² Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ա-է հատոր, Լոս Անճելլես, 1952:

մաաշխարհագրական, դիցաբանական, բանահյուսական տեղեկություններով: Ոչ միայն պատմաբանը, այլև բանասերը, բանաստեղծը, լեզվաբանը, ազգագիրը, վիպագիրը, հոգեբանը անսպառ նյութ կարող են գտնել այստեղ¹:

Հուշերի առաջին հատորում Ռուբենը ներկայացնում է Կարսի կատարած կարևորագույն դերը 19-րդ դ. վերջի և 20-րդ դ. սկզբի հայ ազգային ազատագրական պայքարում: Կարսում ստեղծվել էր այնպիսի ազգային մթնոլորտ, որտեղ անկախ ծագումից և հասարակական դիրքից, յուրաքանչյուր հայ մոռանում էր հատվածական, եսամոլական, օտարամոլական և այլ վտանգավոր զգացումները: Այստեղ, հանուն սեփական հայրենիքի և ժողովրդի ազատության, բոլորը սիրահոժար պատրաստ էին ցանկացած զոհաբերության: Կարսը յուրահատուկ կայան է եղել Հայաստանի տարբեր հատվածների համար: Ազատագրական պայքարի բոլոր գործիչները երախտագիտության յուրահատուկ զգացում են ունեցել Կարսի հանդեպ: Կարսը հարազատ ապաստարան է եղել բոլորի համար: Եվ դա եղել է ոչ թե իբրև շնորհ, այլ ազգային ծառայություն²:

Կարսը յուրօրինակ «դպրոց» է հանդիսացել հատկապես դեպի Երկիր՝ Արևմտյան Հայաստան, ազատագրական պայքարի մեկնել ցանկացողների համար: Վերջիններիս հետ այստեղ լուրջ աշխատանքներ են տարվել: Կարսը նաև Արևմտյան Հայաստան զենք տեղափոխելու կարևոր հենակետ էր: Ռուբենը նկարագրում է, թե այստեղից ինչպես են Արևմտյան Հայաստան անցել Հրայր Դժոխքի (Արմենակ Ղազարյան), Տուրբախի (Հարություն Կիրակոսյան), Ջալլաթի (Երվանդ Բարբերյան), Իշխան Հովսեփ Արղությանի, Արաբոյի (Առաքել, Ստեփանոս Մխիթարյան), Աղբյուր Սերոբի (Սերոբ Վարդանյան), Խլաթցի ճարտարի (Հակոբ Վարդանյան, Աղբյուր Սերոբի հորեղբոր որդին), Սևքարեցի Սաքոյի (Սարգիս Ծովանյան), Սեպուհի (Արշակ Ներսիսյան) և այլոց զինատար խմբերը: Կարսի հեղափոխական պատմությանն անդրադառնալիս Ռուբենը կարևորում է այստեղ Արամ Մանուկյանի (Սերգեյ Հովհաննիսյան) ունեցած դերը բազմատեսակ ուղղություններով տարված կազմակերպական աշխատանքներում:

¹ Ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը Ռուբենի հուշագրության արժեքի մասին խոսելիս գրում է, որ եթե Ռուբենի փոխարեն մեկ ուրիշը գնար Տարոն, «ապա, անտարակույս, հայ պատմագրությունը զրկված կլիներ Դուրան-Բարձրավանդակի հեղափոխական շարժման, Գևորգ Չաուշի կյանքի վերջին տարվա, լեռներ բարձրացած կամ անտառներ մտած ֆիդայիների ապրելակերպի, կենցաղի, անձնագրողության, հերոսապատումների անխառն հայրենասիրության նկարագրություններից» (տես՝ Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, Գիրք 1, Երևան, «Հայագիտակ», 2003, էջ 628):

² Ռուբեն, Նշվ. աշխ., Ա հատոր, էջ 121-122:

Ռուբենը գրում է նաև, որ Կարսում և Գյումրիում զենք էին հայթայթում հիմնականում ռուսական զինվորական պահեստներից: Առավել տպավորիչ են Գյումրիի պահեստներից մեկից «Պաղվալի Վաղոյի» ղեկավարությամբ մեծաքանակ զենքի և զինամթերքի դուրս բերումը: Ձենք-զինամթերքի այդ խմբաքանակը հետագայում օգտակար եղավ ոչ միայն Արևմտյան Հայաստանին օգնելու համար: Այդ զենքերը կիրառվեցին նաև Անդրկովկասում թուրք-թաթարական կռիվների ժամանակ¹:

Հուլեթի առաջին հատորում Ռուբենը անդրադառնում է նաև հայ ազատագրական պայքարում ունեցած Հյուսիսային Պարսկաստանի դերին: Նա մասնավորապես խոսում է թուրք պարսկական սահմանի հարևանությամբ գտնվող սուրբ Թադևոս Առաքյալի վանքի մասին: Այս վանքը յուրօրինակ հենակետ էր Պարսկաստանից Վան և Արևմտյան Հայաստանի այլ շրջաններ զենք-զինամթերք, կռվող ուժեր և գործիչներ ուղարկելու համար: Ռուբենը նշում է, որ չնայած իր առանձնացված վայրում գտնվելուն՝ Թադևոս Առաքյալի վանքը մեծ դեր է կատարել արևմտահայ ազատագրական պայքարում:

Ռուբենը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաև թուրք-պարսկական սահմանի վրայով Արևմտյան Հայաստան անցած զինատար խմբերի մասին: Նա նկարագրում է Փոխիկի (Վահրամ Հովհաննիսյան), Հաջի Լևոնի (Ախալցխացի Լևոն), Երկաթի (Արմենակ Լևոնյան) խմբերի սահմանն անցնելու փորձությունները: Խոսվում է, թե արևմտահայ եղբայրներին օգնության հասնելու համար ինչպիսի դաժան փորձությունների միջով են անցել ազատագրական շարժման նվիրյալ գործիչները:

Այս հատորում կրկին խոսելով Կարսի հեղափոխական անցուղարձի մասին՝ Ռուբենը նկարագրում է ևս մի քանի խմբերի սահմանն անցնելու փորձերը, հայ մարտիկների նկատմամբ ռուս զինվորական Բիկովի տմարդի և նենգ վերաբերմունքը, ինչպես նաև վերջինիս ահաբեկումը հայ վրիժառուի կողմից:

Հիշատակների երկրորդ հատորը Ռուբենը սկսում է քիչ հայտնի մի ծրագրի պատմությամբ: 1904թ. նախատեսվում էր Սուխումի-Սոչիի հայության մի մասին վերաբնակեցնել Հյուսիսային Պարսկաստանում՝ պատմական Մեծ Հայքի Հեր և Ջարևանդ գավառներում²: Ծրագրի իրականացումը մասամբ թուրքերի միջամտությամբ, մասամբ հավանական կոտո-

¹ Ռուբեն, Նշվ. աշխ., Ա հատոր, էջ 222:

² Այս մասին առավել մանրամասն իր հուշերում գրում է 1917-1921թթ. Սոչիի Հայոց ազգային խորհրդի նախագահը (տես՝ Կարեն, Արևմտահայ գաղութ մը Կովկասի մէջ, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1930թ., դեկտեմբեր, 1931թ., յունվար, մարտ, ապրիլ, յունիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր, 1932թ., յունվար, մարտ, ապրիլ):

րածների մտավախությամբ չիրականացվեց: Ռուբենը գրում է, որ վերաբնակության հարցով ՀՅԴ Բյուրոն նրան գործուղել էր Հյուսիսային Պարսկաստան: Եվ ծրագրի տապալունից հետո նա մնում է Պարսկաստանում՝ Երկիր անցնելու մտադրությամբ: Հենց այս ընթացքում եղած հուշերն էլ ամփոփելիս Ռուբենը ևս մեկ անգամ կարևորում է Հյուսիսային Պարսկաստանի, այստեղ գործող դաշնակցական կազմակերպության դերը արևմտահայ ազատագրական պայքարում: Այս հատորում Ռուբենը կարևորում է թուրք-պարսկական սահմանի վրա գտնվող Դերեկա վանքի դերը: Վանքի դերն արժևորելիս նա հաճախ է մեջբերում Նիկոլ Դումանի խոսքերը: Վերջինս երկար ժամանակ գործել է այստեղ: Դերեկա վանքի դերն այնքան մեծ է եղել, որ ազատագրական շարժման գործիչները նույնիսկ ձեռնամուխ են եղել նրա վերանորոգմանը¹: Ռուբենը նկարագրում է Դերեկա վանքի շուրջ Նիկոլ Դումանի մղած բազմաթիվ կռիվները: Նա անդրադառնում է նաև 1896թ. Խանասորի արշավանքին: Հետաքրքիր են այս մարտական գործողությանը Ռուբենի տված գնահատականները: Նա գրում է, որ արշավանքը մեծ ազդեցություն ունեցավ քրդերի հոգեբանության վրա: Նրանք տեսան, որ հայը կարող է պատժել իրեն կոտորողին և դա կարող է անել կազմակերպված և բավականին մեծ ուժերով: Քրդերի վրա մեծ տպավորություն է թողել ֆիդայիների ցուցադրած ուժը, որ հետագայում ազդել է այդ հայերի հանդեպ շրջանի քրդերի ունեցած տրամադրվածությանը²: Ռուբենը գտնում է, որ Խանասորի արշավանքից հետո մեծապես արդյունավետ են դարձել թուրք-պարսկական սահմանով զինատար և մարտական խմբերի անցումը Վան, որովհետև քրդերը սկսել են վերապահումներով աջակցել կառավարական գործերին և հաճախ զգուշություն են ցուցաբերել հայ զինյալների հետ մարտի մտնելիս: Բացի այդ «բիրեղացաւ այն գաղափարը, որ պէտք է փարիլ զէնքին»³:

Վասպուրականի աշխարհագրական, ընկերային և քաղաքական պայմանները ներկայացնելիս Ռուբենը կենտրոնանում է մի կարևոր հանգամանքի վրա: Նա արձանագրում է, որ Վանում հայերը մեծամասնություն էին կազմում: Այս հատվածում հուշագիրը նկարագրում է նաև 1890-ականներին հայկական երեք ազգային կուսակցությունների ծավալած գործունեությունը Վանում: Վան քաղաքում ուժեղ դիրք ունեին արմենականները: Չնայած որ 1890-ականների սկզբին հնչակյանները հայկական

¹ Ռուբեն, նշվ. աշխ., Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ա հատոր, էջ 413:

² Նույն տեղը, էջ 423:

³ Ռուբեն, նշվ. աշխ., Բ հատոր, էջ 310:

կուսակցություններից ամենահամատարած և ամենաուժեղն էին՝ Վանում նրանց դիրքերը թույլ էին: Ռուբենն անդրադառնում է նաև Վանի նահանգում Դաշնակցության գործունեությանը, նշում է, որ այստեղի առաջին դաշնակցական գործիչը Պետոն (Ալեքսանդր Պետրոսյան) էր: Դաշնակցություն այստեղ առավել հզորության է հասնում 1894 Սասունի ապստամբությունից հետո:

Այնուհետև Ռուբենն անդրադառնում է 1896թ. Վանի կոտորածներին և ինքնապաշտպանական կռիվներին: Արժեքավոր են ինքնապաշտպանությունից հետո Վանից հեռացող մարտախմբերի (Մ. Ավետիսյանի, Մարտիկի, Պետոյի) վերաբերյալ հաղորդած տեղեկությունները:

Սկզբնաղբյուրային նշանակություն ունեն 1896-1905թթ. Վանում ծավալված ազատագրական խմորումների ու իրադարձությունների նկարագրությունները: Առանձնապես հետաքրքիր և յուրօրինակ է Վանա Իշխանի (Նիկոլ Պողոսյան) Վասպուրականի լեռնային շրջաններում՝ Լեռնապարում, կատարած կազմակերպական աշխատանքների նկարագրությունը: Արցախցուն հատուկ համառությամբ նա կարողանում է լեռնային անմատչելի այս շրջաններում ազատագրական պայքարի մղել քուրդ շեյխերի և թուրքական կառավարության կողմից հալածվող ժողովրդին, կազմակերպել նրա կյանքը:

Ռուբենն անդրադառնում է նաև 1905թ. Աղթամարի կռվից հետո Իշխանի կողմից Արսեն վարդապետի սպանվելու փաստին: Արսեն վարդապետը թուրքական կառավարության ներկայացուցիչներին մատնել էր ֆիդայիների՝ Աղթամարի վանքում գտնվելու մասին, ինչի պատճառով անխուսափելի էր դարձել վերոնշյալ կռիվը: Մինչ այդ էլ Արսեն վարդապետը այլ մատնությունների մեջ էր կասկածվում: Եվ Իշխանը որոշում է պատժել նրան: Արսեն վարդապետի սպանությունից հետո խոսակցություններ տարածվեցին, թե սպանությունը տեղի է ունեցել վանքը կողոպտելու նպատակով: Բանն այն է, որ Իշխանը ազգրավել էր վարդապետի բոլոր պատվանշանները, որոնք նա ստացել էր թուրքական պետությունից: Սակայն առեղծվածային էր մնացել վարդապետի մատանու անհայտանալը: Ռուբենը գտնում է, որ Իշխանն իր հետ ոչինչ չպետք է վերցներ, որպեսզի ավելորդ կասկածների տեղիք չտար: (Նա տարբեր ուժերի կողմից մեղադրվում էր վարդապետի մատանին գողանալու մեջ, ինչն ինքը ժխտում էր):

Հուլեթի երրորդ հատորը Ռուբենը սկսում է Տարոնի ազգային-քաղաքական, ժողովրդագրական, վարչական, սոցիալ-տնտեսական վիճակի նկարագրմամբ: Հուլազգիրը մանրամասն ներկայացնում է 19-րդ դ. վեր-

ջին հայկական այս երկրամասում հայ գյուղացիության ծանր վիճակը, նրանից գանձվող բոլոր հարկատեսակները, թուրքական և քրդական հարստահարությունները, երկրամասի ժողովրդագրական պատկերը, ցույց տալիս, որ հայերը կազմել են բացարձակ մեծամասնություն: Ռուբենն իր հուշերում ևս մեկ անգամ փաստում է այն հանգամանքը, որ Օսմանյան կառավարության վարած հայահալած քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում ստեղծել էր այնպիսի վիճակ, որը տեղի բնիկ հայությանը կանգնեցրել էր կամ արտագաղթելու, կամ ձուլվելու, կամ էլ զենքով ազատություն ձեռք բերելու ընտրության առջև:

Այնուհետև հուշագիրը մանրամասն նկարագրում է Տարոնում հայ ժողովրդի ծավալած զինված պայքարը թուրքական բռնատիրության և քրդական սանձարձակությունների դեմ: Նա ներկայացնում է ազատատենչ այս երկրամասում 1880-ականների վերջերից ծավալված բոլոր գործողությունները՝ հայ հոգևորականների և աշխարհիկ առաջին գործիչների քարոզչական աշխատանքները, Մարգար Վարժապետի և Արաբոյի ընդվզումները, Միհրան Տամատյանի կազմակերպչական աշխատանքները և ձերբակալությունը, տարոնցիների բազմաթիվ կռիվներ, որոնք մղվել են ոչ միայն ֆիդայիների, այլև հասարակ գյուղացիների, այդ թվում՝ կանանց կողմից¹:

Արժեքավոր է Ռուբենի կողմից Սասունի 1894թ. ապստամբության նկարագրությունը: Նա նշում է, որ Տամատյանի ձերբակալությունից, Հրայր Դժոխքի Տարոնից բացակայելուց հետո անհրաժեշտություն էր Մեծն Սուրադի (Համբարձում Պոյաճյան) վերադարձը²: Վերջինս ստանձնում է ապստամբության ղեկավարությունը: Հուշագիրը ներկայացնում է ապստամբների կողմից տարբեր՝ Ծովասարի, Շատախի, Սպիտակ սարի, Ալիանքի ճակատներում մղված մարտական գործողությունները, որոնց ընթացքում սասունցիները անասելի հերոսությունների են դիմում: Սասունի առաջին ապստամբությունը ուժերի խիստ անհավասարության պատճառով պարտությամբ է ավարտվում: Ռուբենը նկարագրում է նաև ապստամբության ղեկավարների ձերբակալումն ու բանտարկությունը:

Հուշերի այս հատորում Ռուբենը խոսում է նաև Սասունի 1894 թ. ապստամբության պարտությունից հետո Տարոնում Հնչակյան կուսակցության դիրքերի անկման և դաշնակցական գործիչների ակտիվացման մասին: Հուշագիրը նկարագրում է Տարոնում առաջին դաշնակցական գոր-

¹ Արժանահիշատակ են Վարդենիսի, Ղարաչորանի, Տատրագունի, Շենիկցի կանանց «յոթ գդալի», Սպաղանքի, Խոժոժավանքի, Խնձորեկի, Տալվորիկի և այլ կռիվները: (տես՝ հ. 3, էջ 45-100)

² Ռուբեն, նշվ. աշխ., Գ հատոր, էջ 47-105:

ծիչների՝ Ռոստոմի (Ստեփան Ջորյան), Թաթուլի (Արամ Արամյան), Տուրբախի, Ջալլաթի, Աբրոյի (Սկրտիչ Սահակյան) կատարած աշխատանքները: Առավել տպավորիչ է այս հատվածում Տարոնի հոգևոր առաջնորդներից Վարդան վարդապետ Հակոբյանի գործունեության և դերի արժևորումը: Ռուբենը Վարդան վարդապետի օրինակով ցույց է տալիս, թե հայ հոգևորականները ինչ կարևոր դեր են կատարել հայ ազգային-ազատագրական պայքարում: Վարդան վարդապետը իր համարձակությամբ, նվիրվածությամբ, խնդիրներին դիվանագիտորեն մոտենալու հատկություններով յուրահատուկ տեղ ունի Տարոնի ազգային-ազատագրական շարժման պատմության մեջ, ինչի մասին հարուստ լեզվով պատմում է հուշագիրը:

Այնուհետև Ռուբենը խոսում է Աղբյուր Սերոբի (Վարդանյան) ծավալած ֆիդայական գործունեության մասին: Նա փաստում է, որ Սերոբի շնորհիվ Խլաթի գավառը 1895-1896 թթ. գերծ մնաց համիդյան կոտորածներից¹:

Հետաքրքիր է նաև Ռուբենի հուշերում 19-րդ դ. վերջին և 20-րդ սկզբին հայ ազգային-ազատագրական պայքարում գյություն ունեցող երկու մարտավարական ուղղությունների ներկայացումը: Ձինված ազատագրական պայքարի հենց սկզբից ուրվագծված այդ ուղղություններն արդեն առավել վառ արտահայտվեցին 1890-ականների վերջերին: Հուշագիրը այդ ուղղություններից մեկն անվանում է ժողովրդական-հեղափոխական, իսկ մյուսը՝ ֆիդայական-զինվորական²: Առաջին ուղղության հիմնական ջատագովը Հրայր Դժոխքն էր, որի կապակցությամբ Ռուբենը երբեմն այս ուղղությունն անվանում է «Հրայրի շկոլա», իսկ երկրորդ ուղղության հիմնական պաշտպանը Գեւորգ Չաուշն էր՝ համապատասխան «Գևորգի շկոլա» անվանումով:

Ժողովրդական-հեղափոխական ուղղությունը մարմնավորում էին նախ Սիիրան Տամատյանը, ապա՝ Վարդան վարդապետը, Գուրգենը (Բաղդասար Մալյան), Սերոբը, Հրայր Դժոխքը: Այս հոսանքի հիմնական գաղափարական հիմնավորումն այն էր, որ պետք էր լրջորեն պատրաստվել ժողովրդական լայն շարժման՝ ձգտելով խուսափել կորստաբեր մանր կռիվներից: Կարևորվում էր նաև հարևան ժողովուրդների հետ դաշնակցած զինված համընդհանուր ապստամբություն բարձրացնելը:

Ֆիդայական-զինվորական հոսանքի ներկայացուցիչները (Գևորգ Չաուշ, Սպաղանաց Մակար, Անդրանիկ և ուրիշներ) սկզբունքով դեմ չէին Հրայրի դավանած ուղղությանը: Ֆիդայական կռիվներին ապավինելը

¹ Ռուբեն, նշվ. աշխ., Գ հատոր, էջ 151-153:

² Նույն տեղը, էջ 200:

նրանք պայմանավորում էին ոչ միայն թշնամու հանդեպ լցված վրեժով, այլև այդ ձևով ազատագրական պայքարի գաղափարը ժողովրդի մեջ վառ պահելու անհրաժեշտությամբ:

Աղբյուրագիտական արժեք ունեն մահ Յրայր Դժոխքի գործունեության մանրամասն նկարագրությունները: Վերջինս իրեն հատուկ յեղափոխական փիլիսոփայությամբ ժողովրդին քարոզում էր ապավինել միայն սեփական ուժերին, միասնականությանն ու կազմակերպվածությանը¹: Յրայր Դժոխքը, հետևելով իր դավանած մարտավարությանը, կարողացավ կազմակերպական լուրջ հիմքերի վրա դնել համընդհանուր ապստամբության նախապատրաստությունը: Սակայն թուրքական կառավարության կողմից հրահրված Սասունի 1904 թ. ապստամբությունը փոխեց իրերի ընթացքը:

Այնուհետև Ռուբենը նկարագրում է Սասունի երկրորդ ապստամբությունը, մարտական գործողությունները տարբեր ճակատներում, Յրայր Դժոխքի հերոսական մահը: Յրայրի սպանությունից հետո Սասունի ինքնապաշտպանությունը մտնում է վճռական փուլ: Թուրքերը, սեղմելով պաշարման օղակը, ի վերջո ստիպում են ապստամբներին դադարեցնել դիմադրությունը: Ռուբենը նշում է, որ Սասունի երկրորդ ապստամբության պարտությունից հետո ապստամբության ղեկավարների մոտ կարծրացավ այն համոզումը, որ ֆիդայական մանր կռիվներով հնարավոր չէ հասնել ժողովրդի ազատագրությանը, անհրաժեշտ է լայնածավալ գործողությունների նախապատրաստվել: Այլ խոսքով՝ ազգային-ազատագրական շարժման մեջ արդեն տիրապետող է դառնում Յրայր Դժոխքի դավանած ուղղությունը:

Այնուհետև Ռուբենը ներկայացնում է ֆիդայիների Տարոնից հեռանալը, Աղթամարի կռիվը:

Աղթամարի կռից հետո ֆիդայիների մի մասը Գևորգ Չաուշի և Կորյունի (Գոմսա Իսո) գլխավորությամբ վերադառնում է Տարոն, իսկ մյուս մասը Անդրանիկի գլխավորությամբ անցնում է Կովկաս: Այնուհետև Ռուբենը ներկայացնում է Գևորգի 1904-1905 թթ. ֆիդայապետության շրջանը բազմաթիվ կռիվներով:

Երրորդ հատորի վերջում Ռուբենը հետաքրքիր լեզվով նկարագրում է ֆիդայիների կենցաղը, նրանց ծանր, զրկանքներով ու վտանգներով լի կյանքը²:

¹ Ռուբեն, նշվ. աշխ., Գ հատոր, էջ 238:

² Նույն տեղը, էջ 425-444:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի լուսաբանման առումով պակաս արժեքավոր չէ Ռուբենի հիշատակների չորրորդ հատորը: Այստեղ նախ հուշագիրն անդրադառնում է 1906թ. Տարոնում տիրող կացությանը և Հ.Յ. Դաշնակցության կողմից տարվող քաղաքականությանը: Սասունի ապստամբության ճնշումից հետո թուրքական իշխանություններն ավելի էին խստացրել բռնաճնշումները ժողովրդի նկատմամբ: Հեղափոխական գործիչների համար տեղաշարժվելը, առավել ևս գործունեություն ծավալելը դարձել էր խիստ դժվար և վտանգավոր: Այս պայմաններում աշխատելու լուծումներ է առաջարկում 1906թ. ամռանը Սուրբ Կարապետի անտառներում տեղի ունեցած Դուրան Բարձրավանդակի Շրջանային ժողովը¹:

Այս հատորում Ռուբենը կրկին անդրադառնում է ազատագրական պայքարի մարտավարությանը: Նա նշում է, որ Գևորգ Չաուշը նույնպես աստիճանաբար հակվում էր համընդհանուր ապստամբությանը նախապատրաստվելու գաղափարին: Ռուբենն այստեղ նկարագրում է բազմաթիվ ֆիդայիների կողմից գործած հերոսական դեպքեր, մարտական գործողությունները: Առավել արժեքավոր և տպավորիչ է Սուլուխի կռվի և Գևորգի մահվան նկարագրությունը²:

Հատկանշական է այն, որ Ռուբենը մեղադրվում է Գևորգ Չաուշի սպանության մեջ: Չնայած այն հանգամանքին, որ Ռուբենի կարծիքը իրեն վերագրվող մեղադրանքի վերաբերյալ առաջին հայացքից կարող է ոչ առարկայական թվալ, այնուամենայնիվ, մեր համոզմամբ՝ նա չէր կարող Գևորգին սպանել: Ռուբենն իր հուշերում նկարագրում է դեպքերի ընթացքը Սուլուխում, որից պարզ երևում է նրա անմեղությունը:

Իրականում Ռուբենին մեղադրելու հիմքն այն է, որ Ռուբենը և Գևորգը ազգային-ազատագրական պայքարը շարունակելու տարբեր մարտավարական ուղղություններ էին դավանում: Սակայն այս պնդումը անհիմն է, քանի որ Ռուբենն արդեն համոզել էր Գևորգին:

Չորրորդ հատորում այնուհետև Ռուբենը նկարագրում է Տարոնում տեղի ունեցած բազմաթիվ իրադարձություններ: Եվ դեպքերը հասնում են մինչև Օսմանյան սահմանադրության հռչակումը:

Հինգերորդ և վեցերորդ հատորներում պատմագիտական առումով արժեքավոր են Օսմանյան սահմանադրության հռչակման և նրա վերաբերյալ հայ քաղաքական գործիչների և անձամբ հուշագրի կարծիքների վերաբերյալ եղած անդրադարձը:

¹ Դուրան-Բարձրավանդակ կռիվում էր ՀՀԴ Տարոնի կազմակերպական շրջանը:

² Ռուբեն, նշվ. աշխ., Դ հատոր, էջ 157-199:

Ռուբենը նշում է, որ սուլթանին տապալված տեսնելու համընդհանուր ոգևորվածությունը կուրացրել էր բոլորին: Միայն քչերն էին, ովքեր խիստ վերապահումներով էին մոտենում հռչակված ազատությանը, արդարությանը և հավասարությանը: Ռուբենը, քննելով դաշնակցության դիրքորոշումը, գրում է, որ թեև կուսակցությունը պայքարում էր սուլթանին տապալելու համար, հետագայի գործնական քայլերը մշուշոտ էին: Մինչդեռ, ըստ նրա, կարելի էր նույնիսկ վերահսկել ամբողջ հեղափոխական շարժումը և դեպքերը զարգացնել ցանկալի ընթացքով: Դրա համար անհրաժեշտ էր առանձին-առանձին գործելու փոխարեն համախմբել ուժերը: «Իթթիհատտի համօսմանեանականութենէն դէպի համիսլամականութիւն եւ համաթուրանականութիւն հակելու յանցանքը պէտք որոնել ոչ միայն թուրքերու, այլ եւ Օսմանեան պետութեան բաղկացուցիչ ազգերու՝ ալպանացիներու, մակեդոնացիներու, յոյներու, պուլկարներու, արաբներու եւ հայերու մէջ, որոնք ընդհանուր պետական ամբողջականութեան հողէն զուրկ, աւելի տարուած էին իրենց մասնակի շահերու ապահովման մտահոգութեամբ», - գրում է հուշագիրը¹:

Անդրադառնալով սահմանադրությունից ակնկալվող բարեփոխումներին Ռուբենը գրում է, որ սահմանադրության եությունը պէտք է կազմեն հայերի իրավունքների վերականգնումը, հողային խնդրի լուծումը, հին պաշտոնյաների, աղաների, աշիրեթների ոչնչացումը, տուրքերի կանոնավորումը:

Հայտնի է, որ սահմանադրության հռչակումից հետո Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական պայքարը անկում ապրեց: Ստեղծված իրավիճակում դաշնակցությունը, ցավոք, կորցրեց զգոնությունը, և ինքնապաշտպանության խնդիրը այլևս գերակա ուղղություն չէր:

Սահմանադրության ընդունումից հետո Ռուբենը սբ. Կարապետի վանքում հրավիրում է ՀՅԴ Տարոնի (Դուրան-Բարձրավանդակի) շրջանային ժողով: Ժողովը որոշում է, որ սահմանադրության առկայության պայմաններում ֆիդայիները դառնան պարզ քաղաքացիներ, անցնեն իրենց ընտանեկան հարկերի տակ եւ զբաղվեն գյուղատնտեսական աշխատանքներով²:

Ռուբենը երկար ժամանակ զինվորական և նման տիպի կազմակերպական աշխատանքներ կատարելուց հետո դժվարանում էր, իրեն պատրաստ չէր գտնում զբաղվելու մշակութային գործունեությամբ: Նա ժողովի

¹ Ռուբեն, նշվ. աշխ., Ե հատոր, էջ 41-42:

² Նույն տեղում, էջ 53:

ընդունած բանաձևերի մասին գրում էր. «զլուխս համաձայն էր ասոր, բայց հոգիս եւ զգացմունքներս կբողոքեիմ»¹:

Նկարագրելով Տարոնում սահմանադրության հռչակումից հետո ստեղծված իրավիճակը՝ Ռուբենը նշում է, որ հայ ազգաբնակչության համար իրականում տեղի ունեցած փոփոխությունները շատ քիչ էին: «Յայերի վրայից վերացուած էին քաղաքական հալածանքները, բայց նրանց տուն տուող բոլոր վարչական թէ տնտեսական, արդարադատական թէ ոստիկանական, աւատական թէ կրօնական յոռի վերաբերումները կը շարունակուէին: Սահմանադրութիւնը եկած էր՝ իշխանութիւնը եւ ոչ թէ ռեժիմը փոխելու: Այդ աւելի զգալի էր գաւառներում, մանաւանդ Տարոնում», - գրում է Ռուբենը²:

Բավական տպավորիչ է Ռուբենի այն նկարագրությունը, որ երիտթուրքական տեղացի ղեկավարները մեծ զոհաբերություն և շնորհ էին համարում հայերին՝ որպէս քրիստոնյաների, հալածանքներից ազատելը: Սակայն կաշառակերությունը, հարստահարությունը առաջվա նման բնական էին համարվում, նրանք անկեղծորեն չէին կարող ըմբռնել դրանց վերացումը:

Մինչդեռ հայության մոտ բավական մեծ հույսեր էին արթնացել: Ըստ Ռուբենի՝ այնքան մեծ էր ոգևորությունը, որ Օսմանյան խորհրդարանի պատգամավոր ընտրված Մշո Գեղամը (Գեղամ Տեր-Կարապետյան) 21 կետից բաղկացած մի ծրագիր է կազմում: Այս ծրագիրը նախատեսում էր բոլոր գաղթականների, պանդուխտների վերադարձ, քաղաքական և տնտեսական իրավունքների վերականգնում, քաղբանտարկյալների ազատ արձակում, հայերից խլված հողի և գուլքի վերադարձ, հայկական գյուղերում բռնի տեղավորված մահմեդականների վտարում, հավասար իրավունքով քրիստոնյաներին զենք կրելու թույլտվության ստացում, ազգային եկեղեցական սեփականության վերականգնում, քրիստոնյաների հավասար իրավունքի տրամադրում պետական տարբեր պաշտոններում, հատկապէս դատարաններում և այլն³:

Սակայն դեպքերի ընթացքը ցույց տվեց, որ ոչ մի էական փոփոխություն էլ չի լինելու: Դաշնակցության հավատը դեպի երիտթուրքերը սպառվում է: Պարզ է դառնում, որ անհիմաստ է երիտթուրքերի միջոցով կամ օգնությամբ վերագրավել կորսված ազգային և հողային իրավունքները, նպաստ բերել հայկական բարենորոգումներին: Ավելին՝ դրանց

¹ Ռուբեն, նշվ. աշխ., Ե հատոր, էջ 75:

² Ռուբեն, նշվ. աշխ., 2 հատոր, էջ 94:

³ Նույն տեղում, էջ 98-100:

մասին երիտթուրքերին հիշեցնելը նոր աղետ էր բերելու հայ ժողովրդի գլխին: Ռուբենը գրում է, որ արդեն 1909թ. սկզբից «թուրք յեղափոխութիւնը աւելի ակներեւ կերպով ցուցադրեց իր անկարողութիւնը կամ դիտաւորեալ չկամութիւնը հայերու հանդէպ»¹:

Ուշագրաւ է Ռուբենի դիտողությունը 1909թ. մարտի 12-ին երիտթուրքերի, հնչակյանների, դաշնակցականների և ևս մի քանի քաղաքական կազմակերպությունների միջև կնքված հեղափոխությունը խորացնելուն միտված համաձայնագրի վերաբերյալ: Հուշագիրը նկատում է, որ համաձայնագրի ստորագրմանը չեն մասնակցել բալկանյան, հունական, քրդական, արաբական կուսակցությունները: Եւ տարօրինակ ձևով այս ժողովուրդները գերծ մնացին ցեղասպանությունից և հասան անկախանալու իրենց նպատակին²:

Հետաքրքիր է նաև Ռուբենի կողմից օսմանյան սահմանադրության օրերին Կ. Պոլսում գտնվող գերմանացի մի լրագրող Պարվուսի տպավորությունների ներկայացումը: «Դուք կ'ըսեք՝ թուրք յեղափոխութիւն, բայց ես կը տեսնեմ, որ հոս չկայ յեղափոխութիւն, այլ կայ յեղաշրջում: Դուք կ'ըսեք՝ հին եւ որ ռեժիմներ, բայց ես այդ չեմ տեսներ, այլ կը տեսնեմ անձերուն եւ դերակատարներու փոփոխութիւն միայն, տարբեր հագուստներու մէջ, ինչ որ չի նշանակեր յեղափոխութիւն: Ատոր համար է, որ համեմատաբար անարիւն է այսպէս կոչուած թուրք յեղափոխութիւնը: Ֆրանսայի մէջ յեղափոխութիւնը արիւնալի էր, որովհետեւ հոն յեղափոխութիւն կար, իսկ հոս՝ պաշտօններու նոր բաժանում միայն», - ասում է Պարվուսը³: Փաստորեն այս ընթացքում Կ. Պոլսում գտնվող եվրոպացիները ևս տեսնում ու համոզվում էին, որ Թուրքիայում տեղի ունեցածը պարզ հեղաշրջում էր միայն, որից ոչ թուրք ժողովուրդների կյանքում դրական փոփոխությունները ակնառու չէին:

Թեև հռչակվել էր ազատություն, Ռուբենը ներքին մտավախություն ուներ երիտթուրքերին չվստահելու, ինչի կապակցությամբ նա գրում է. «Համիդը թէև արքորական էր եւ Ելլտըզը զբօսարան, բայց անոնց ուրուականները աւելի հզօր էին դարձած:... Հավասարութեան, եղբայրութեան, ազատութեան ցուցատախտակները աչքիդ առջեւ էին, բայց անորոշ բան մը կը հարկադրէր շօշափել գրպանդ՝ ատրճանակիդ ներկայութիւնը ստուգելու համար»⁴:

¹ Ռուբեն, նշվ. աշխ., 2 հատոր, էջ 108:

² Նույն տեղում, էջ, 138:

³ Նույն տեղում, էջ 303:

⁴ Նույն տեղում, էջ 371:

Իսկ այդ մտավախության պատճառը թերևս այն էր, որ Սուլթանի հեռանալով չէր հեռացել նրա դավանած պանիսլամիզմի գաղափարախոսությունը, ընդհակառակը, այն սկսվեց օգտագործվել որպես պետական գաղափարախոսություն¹:

Առանձնապես հետաքրքիր է պոլսահայ մտայնության վերլուծումը Ռուբենի կողմից: Տպավորիչ է նրա կողմից պոլսահայերին տրվող բնորոշումը. «Կ. Պոլսում հայերը գերազանցապես ազգասեր են, Իսկ Հայաստանում՝ հայրենասեր»²:

Ռուբենը գրում է, որ թուրքական իշխանությունները թեև իրենց ձեռքում էին պահում Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը և ազգային մարմինները, այնուամենայնիվ բավարար երաշխավորված չէին ամբողջ կայսրության հայությանը հնազանդության մեջ պահելու առումով: Թերևս սրանով էր պայմանավորված այն հանգամանքը, որ հայկական գավառներից աչքի ընկնող գործիչներին փորձում էին տեղափոխել Կ. Պոլիս, իսկ չենթարկվելու դեպքում հալածում էին երկրից:

Թուրքերին հաջողվել էր երկատել կայսրության տարածքում ապրող հայությանը: «Թուրք քաղաքականութունը կարողացած էր հայութեան ամբողջական մարմնին մեջ երկ ու իրարու հակառակ տարրեր ստեղծել: Գլուխը՝ բերուած էր Պոլիս, ու ան դադրած էր լինելէ ցանկալի եւ կենսական ազդակ մը հայութեան համար: Մարմինը կը մնար Հայաստանի գաւառներուն մէջ: Միեւնոյն մարմնի երկու մասերը իրարու հակադիր էին եղած ու այդպես ալ հասան 1908-ի սահմանադրութեան», - գրում է Ռուբենը³:

Կարելի է ասել, որ այս երկատված վիճակը ևս պայմանավորեց հայոց ցեղասպանության ժամանակ լուրջ դիմադրության բացակայությունը հայերի կողմից:

Ոչ պակաս արժեքավոր է Ռուբենի հիշատակների յոթերորդ հատորը, որի առաջին հատվածում ներկայացված է խմբապետ Մուշեղ Ավետիսյանի հուշերը 1915-1916 թթ. Սասունի հերոսամարտի մասին⁴:

Այս հատորում առանձնապես հետաքրքիր են ՀՅԴ-Բոլշևիկ համագործակցության փորձերի վերաբերյալ տեղեկությունները: Այստեղ հուշագիրը ներկայացնում է համատեղ գործունեության նախագիծը⁵:

¹ Ռուբեն, նշվ. աշխ., 2 հատոր, էջ 372-373:

² Նույն տեղում, էջ 320:

³ Նույն տեղում, էջ 347:

⁴ Մուշեղ Ավետիսյանի հուշագրության արժեքի մասին գրել է պատմաբան Միեր Կարապետյանը (տես՝ Կարապետյան Ա., Գևորգյան Է., Մելքոնյան Է., Արզարյան Ա., Հայոց մեծ եղեռնի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, «Զանգակ-97», 2010, էջ 103-107):

⁵ Ռուբեն, նշվ. աշխ., է հատոր, էջ 142-143:

Այստեղ տեղեկություններ կան Հայատանի առաջին Հանրապետության կազմավորման, ներքին կյանքի կազմակերպման, գաղթականության տեղավորման, թաթարական հակապետական ապստամբությունների զսպման, ՀՅԴ նորընտիր բյուրոյի գործունեության մասին:

Այսպիսով՝ անվերապահորեն կարելի է պնդել, որ Ռուբենի հուշագրությունը 19-րդ դ. վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրության համար լավագույն սկզբնաղբյուրն է: Այստեղ մանրամասն տեղեկություններ են ներկայացված հայ ֆիդայական շարժման վերաբերյալ: Հանգամանալից ներկայացվել են հայ ազգային-ազատագրական պայքարի հիմնական ռազմավարությունն ու մարտավարությունը: Արժեքավոր են Օմանյան սահմանադրության հռչակումից հետո հայության համար ստեղծված կացության վերլուծությունն ու գնահատականները: Ռուբենի հիշատակները սկզբնաղբյուրային նշանակություն ունեն նաև Հայաստանի առաջին Հանրապետության պատմության ուսումնասիրման համար:

Ռուբենի հուշագրությունը նաև յուրատեսակ ինքնագնահատական կարելի է համարել ազգային-պետական գործչի ծավալած բազմամյա հայրենանվեր գործունեության:

Об историкографической ценности мемуаров Рубена.

Хачатур Степанян

Резюме

В статье делается попытка представить историкографическую ценность мемуаров выдающегося деятеля Рубена (Минас Тер-Минасян). Его труд (“Воспоминания армянского революционера”) является непревзойденным источником для исследования истории армянского национально-освободительного движения, отношений между АРФД и младотурками, Первой Республики Армении.

On Historic Values of Ruben's Memories

Khachatur Stepanyan

Summary

The article tries to present historic value of eminent actor Ruben's (Minas Ter-Minasyan) memories. “Memories of an Armenian Revolutioner” is a unique source for exploring of Armenian revolutionary-liberation struggle, relations between Armenian Revolutionary Party and Yeritturks, and for the survey of history of the First Republic of Armenia.

**ԼՂԻՄ-ԻՑ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ՝ ԱՂԻՔԵՋԱՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԵՐԿՐԱՄԱՍԸ ՀԱՅԱԹԱՓԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿ ՈՒ ՄԻՋՈՑ¹**

Վահրամ Բալայան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱրՊՀ

Արցախը Խորհրդային Ադրբեջանին բռնակցվելուց հետո ԱդրիսՍՀ ղեկավարությունը, գիտակցելով, որ բռնակցված տարածքներում հայ ազգաբնակչությունը չի հաշտվի ստեղծված իրավիճակի հետ, սկսեց միջոցներ ձեռնարկել այդ տարածքների ժողովրդագրական վիճակը փոփոխությունների ենթարկելու ուղղությամբ:

1920-ական թվականներից մինչև 1950-ական թվականների վերջը Լեռնային Ղարաբաղից ամեն տարի հազարավոր երիտասարդներ էին հավաքագրվում և ուղարկվում հանրապետության արդյունաբերական կենտրոնները կառուցապատելու, ինչպես նաև՝ Միլի և Մուղանի անջրդի հողահանդակները յուրացնելու:

Մշակովի հողահանդակների պակասը, ցածր բերքատվությունը, ոռոգման համակարգերի բացակայությունը Լեռնային Ղարաբաղի հայությանը ստիպում էին հարևան ադրբեջանական շրջաններում զբաղվել արտագնա աշխատանքով:

Հարևան թուրքաբնակ և քրդաբնակ շրջանների համեմատ՝ Լեռնային Ղարաբաղը, Բաքվի և Լենքորանի գավառներից բացի, ամենախիտ ազգաբնակչություն ունեցող երկրամասն էր:

Այսպես. 1926թ. վիճկագրական տվյալների համաձայն մեկ քառակուսի կիլոմետրի վրա Ադրբեջանում ապրում էր 26,8 մարդ, Ադրանի գավառում՝ 30, Գանձակի գավառում՝ 26,2, Գյոկչայի գավառում՝ 24,7, Ջեբրայիլի գավառում՝ 17,6, Ջաքաթալայի գավառում՝ 18,6, Լենքորանի գավառում՝ 38,6, Սալյանի գավառում՝ 13,4, Շենախիի գավառում՝ 12,2, ԼՂԻՄ-ում՝ 31,1 մարդ²: 1921թ. Լեռնային Ղարաբաղում այդ թիվը կազմել է 36,1 մարդ³: Նման թվային փոփոխությունը կապված էր բնակչության արտագաղթի հետ:

¹ Հոդվածն ընդունված է 13.11.13:

Հոդվածը տպագրության է նրաշխավորել ԱրՊՀ պատմության ամբիոնը:

² Գ.Սեյրան, Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները, Թիֆլիս, 1928, էջ 10:

³ Գ.Кочарян, Нагорный Карабах, Баку, 1925, с. 13.

Լեռնային Ղարաբաղի կտրտված աշխարհագրական դիրքը խանգարում էր կուլտուրական հողագործության վարմանը: 1926թ. տվյալների համաձայն՝ ԼՂԻՄ-ը ուներ 380.832 դեյատին տարածություն, որից 140.000 դեյատինը (37 տոկոս) ծածկված էր մացառներով ու անտառներով, 62.647,07 դեյատինը (16 տոկոս) պիտանի էր կուլտուրական հողագործության համար, 38.000 դեյատինը (10 տոկոս) արոտավայրեր էին, իսկ մնացած 140.285 դեյատինը (37 տոկոս) անպիտան հողեր էին¹:

Աղբբեջանի ԿԿՅԿ 1926թ. տվյալներով՝ 100 տնտեսություններին բաժին էր հասնում Ղուբայի գավառում՝ 336,85 դեյատին, Աղդամի գավառում՝ 331,00 դեյատին, Բաքվի գավառում՝ 308,40 դեյատին, Գյանջայի գավառում՝ 238,14 դեյատին, Ջեբրայիլի գավառում՝ 238,14 դեյատին, Շամխորի գավառում՝ 201,52 դեյատին, Քրդիստանի գավառում՝ 134,55 դեյատին, իսկ ԼՂԻՄ-ում՝ 113,73 դեյատին վարելահող²:

Ներկայացված թվերի համաձայն՝ ԼՂԻՄ մեկ շնչին բաժին էր հասնում 0,2-0,5 դեյատին մշակովի հողամաս: Ըստ շրջանների՝ Ջրաբերդում այդ թիվը կազմում էր 0,55 դեյատին, Վարանդայում՝ 0,47 դեյատին, Դիզակում՝ 0,42 դեյատին, Խաչենում՝ 0,4 դեյատին, իսկ Շուշիում՝ 0,2 դեյատին³:

Սակավահողության պատճառով Լեռնային Ղարաբաղի գյուղացիներն ստիպված հողեր էին վարձակալում հարևան թուրքաբնակ շրջաններից: Երբեմն ստացված բերքի կեսը բաժին էր հասնում հողատերերին:

1920-30-ական թվականներին Լեռնային Ղարաբաղում սովն ու համաճարակ հիվանդությունները մասսայական բնույթ էին կրում: Ժամանակաշրջանի մամուլը անդրադարձել է այդ հարցերին: Բազմաթիվ նյութեր են պահպանվում նաև արխիվում: «Կոմունիստ» թերթը գրել է. «...Հաց չկա: Ամեն օր սովի պատճառով բազմաթիվ մահացության դեպքեր են տեղի ունենում: Ծաղիկը համաճարակի բնույթ է ստացել: Շաքարի և աղի գաղափարը մոռացվել է: Աղի բացակայության պատճառով անհաշիվ հիվանդություններ են զարգանում»⁴:

Մի քանի տարի անց թերթը արձանագրում է. «Գյուղացիները աղքատության պատճառով չեն կարողանում նավթ գնել և ձմռան օրերին՝ մութն ընկնելուն պես, ժամը 5-ից 6-ից քնում են: Շաքարի մասին գյուղացին վաղուց է, ինչ բոլորովին մոռացել է:

¹ Народное хозяйство Закавказья в цифрах 1927г., ЗСФСР, ЦСУ, Тбилиси, 1927, с. 82.

² Г. Кочарян, Աշվ. աշխ., էջ 13:

³ Գ. Սեյրան, Աշվ. աշխ., էջ 13:

⁴ «Կոմունիստ», 24 հունիսի, 1920:

Չնայած դրան՝ կառավարությունն ստիպում է Ղարաբաղից միջոցներ հանգանակել Գերմանիայի պրոլետարիատին օգնելու համար»¹:

«Ի՞նչ է իրենից ներկայացնում Լեռնային Ղարաբաղը: Մի տնտեսապես և կուլտուրապես քայքայված երկիր, ազգամիջյան կռիվների հետևանքով քարուքանդ եղած, վերջին տարիների սովի, անբերրիության, բնության պատուհասների շնորհիվ նվազած մի խղճուկ ու թշվառ երկիր՝ զուրկ տնտեսական որևէ շահավետ աղբյուրից, արդյունաբերությունից, կտրված դրսի աշխարհից, զուրկ կանոնավոր հաղորդակցության միջոցներից և այլն, և այլն: Մի երկիր, որի ազգաբնակչության խոշոր մասը, ապրուստի միջոցներ չգտնելով, շարունակ դիմում է քաղաքները, ձգտում դեպի արդյունաբերական կենտրոններ...»²: «Գյուղացիներից շատերը ստիպված են իրենց անասունները վաճառել և հաց գնել: Շատերն էլ թողնում են գյուղը, իրենց տնտեսությունը և անցնում քաղաքները»³:

ԼՂԻՄ վիճակագրական վարչության ուսումնասիրությունից պարզվել է, որ մարզի ոչ մի տնտեսությունում մինչև 1925թ. բերքահավաքը հացը չի բավարարել⁴:

ԼՂԻՄ-ում մշակովի հողահանդակների պակասը, ցածր բերքատվությունը, ոռոգման համակարգերի բացակայությունը և ժողովրդի սոցիալական ծանր վիճակը ադրբեջանական իշխանությունների կողմից հմտորեն օգտագործվեց:

Ղարաբաղի դաշտային հատվածների՝ արդեն թուրքաբնակ տարածքները մշակելու, Բաքվի, իսկ 1950-60-ական թվականներից էլ՝ Սումգայիթի արդյունաբերական ձեռնարկություններն սպասարկելու նպատակով, ապագայում բարեկեցիկ կյանքի խոստումներով, ադրբեջանական իշխանությունները ԼՂԻՄ ազգաբնակչության շրջանում լայն քարոզչություն ծավալեցին, ինչը շուտով իր հետևանքներն ունեցավ:

1920-ական թվականների կեսերից սկսած՝ մի քանի հարյուր հայ ընտանիքներ Լեռնային Ղարաբաղից տեղափոխվեցին և բնակություն հաստատեցին Միլի և Մուղանի տափաստանում:

Դեռևս միջնադարում Կարա կոյունլու և աղ կոյունլու թուրքմենական ցեղերի ճնշման տակ Կուր-արաքսյան միջագետքը սկսեց հայաթափվել: Այդ գործընթացն անդառնալի թափ ստացավ ուշ միջնադարում: Հատկապես կործանարար էր Ղարաբաղի Փանահ և Իբրահիմ խաների քաղաքականությունը: Թուրքական ծագում ունեցող ցեղերը տեր դարձան

¹ «Կոմունիստ», 8 հունվարի, 1924, 9 հունիսի, 1924:

² Նույն տեղում, 4 մարտի, 1924:

³ Նույն տեղում, 15 սեպտեմբերի, 1924:

⁴ Г. Кочарян, *նշվ. աշխ.*, էջ 47:

բարեբեր և այգեվետ լայնարձակ դաշտավայրին: Սկզբնական շրջանում քոչվորների համար այն ծառայում էր որպես ձմեռային արոտավայր, իսկ 18-րդ դարի վերջերից քայլ առ քայլ նրանք փորձեցին անցնել նստակեցության: Արդյունքում ոռոգովի հողատարածքները վերածվեցին չոր տափաստանների:

Ցարական Ռուսաստանը Ղարաբաղին տիրելուց հետո փորձեց տնտեսապես յուրացնել Կուր-արաքսյան հայկական միջագետքը: Հայերի կողմից կառուցված նախկին ջրանցքների և գետերի ափերին ձևավորվեցին ռուս գաղթականների՝ մոլոկանների, դուխաբորների բնակավայրերը: Այդ ժամանակներից շրջանառության մեջ դրվեց ռուսական Մուղան հասկացությունը: Նորից վերագործարկվեցին մոռացության մատնված նախկին ջրանցքները: Դրանք ավելի շատ հայտնի էին «Գյավուր-արխ» անունով, ասել է թե՛ քրիստոնյաների կամ հայերի ջրանցք: Դրանցից ամենախոշորը, սկիզբ առնելով Արաքսից, իր մեջ էր առնում Քոնդալան, Խոնաշեն, Կարկառ, Խաչեն և Լեռնային Ղարաբաղից հոսող այլ ավելի մանր գետերի ջրերն ու ոռոգում հազարավոր հեկտար հողատարածքներ: Խորհրդային տարիներին «Գյավուր-արխին» պաշտոնապես տրվեց «Վերին Ղարաբաղյան» անունը:

Մինչև 1910-ական թվականները «Աթաբեկով» ընկերության, իշխանուհի Ունցևայի, Ռուստամբեկովների միջոցներով կառուցվեցին մի քանի նոր ջրանցքներ¹:

1918-20-ական թվականներին, ազգամիջյան ընդհարումների հետևանքով ամայացան նաև ռուսական բնակավայրերը: Թուրքերի ճնշումների տակ նրանք հեռացան իրենց երկիրը: Դաշտավայրը նորից քոչվոր թրքախոս ցեղերի բազմաթիվ անասնահոտերի ոտքի կոխան դարձավ:

Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը խնդիր դրեց ԼՂԻՄ-ի հայության ջանքերով մշակովի դարձնել դաշտային Ղարաբաղը: Միաժամանակ որոշվեց ԼՂԻՄ-ի սահմանագծով ստեղծել թուրքաբնակ գյուղեր՝ ստիպելով քոչվորներին անցնել նստակեցության և ընդգրկվել կոլտնտեսությունների մեջ:

ԱԽՍՀ ժողովոմխորհը 1929թ. մարտի 20-ին և բարձրագույն տնտեսական խորհուրդը՝ նույն թվականի ապրիլի 15-ին, որոշեցին «Գյավուր-արխի» երկայնքով ստեղծել բնակավայրեր և ջրարբի դարձնել շրջակա հողահանդակները²:

¹ «Հայաստանի Հանրապետություն», 22 հունվարի, 1998:

² ԼՂՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 2, թ. 12:

Նախատեսվում էր սկզբնական շրջանում մշակովի դարձնել 18.245 հա հողատարածքներ, որից 2.250 հա բաժին էր հասնում ԼԴԽՄ-ի վերաբնակներին¹: 1930թ. սկզբներից ԼԴԽՄ-ից 1.200 տնտեսություններ հաստատվեցին «Գյավուր-արխի» շրջակայքում²: Միաժամանակ, ջրանցքը կառուցելու նպատակով, ԼԴԽՄ-ից 3.000 բանվորներ հավաքագրվեցին: Ամեն մի բանվոր պարտավոր էր 40 խորանարդ մետր հողային աշխատանք կատարել և հանձնել «Գյավուր-արխի» շինարարության վարչությանը³:

Ծանր աշխատանքը, կլիմայական պայմանների կտրուկ փոփոխությունը մասսայական հիվանդությունների և մահացության պատճառ էին դառնում:

Միջնադարում գոյություն ունեցած հայկական նախկին բնակավայրերի տեղը հայերը հիմնեցին նոր գյուղեր՝ Թագաքյանդն ու Շահունյանը՝ Աղջաբեդու շրջանում, իսկ Խաչենստրոյն ու Քեբիրլին՝ Ժդանովի շրջանում: Սկզբնական շրջանում այս գյուղերում ադրբեջանցիներն աշխատում էին որպես անասնապահներ, իսկ 1960-ական թվականներից նրանք սկսեցին գնել հայերի բնակավայրերը: Հարթավայրային շրջաններից վերջին հայ ընտանիքները բռնագաղթեցին 1988թ.:

1920-ական թվականների կեսերից Լեռնային Ղարաբաղից արտագաղթը մասսայական բնույթ էր կրում: Դեպքերին ականատեսը գրել է. «Հողագրկության հետ կապված ազգաբնակչության արտագաղթը Ղարաբաղից մասսայական բնույթ է ստացել: Դրան նպաստում են նաև պարբերաբար կրկնվող երաշտը, կարկուտը, կենդանիների կտտորվածքը (ազարը) և այլն: Ղարաբաղից հեռացածներն այսօր հայրենիքում ապրողներից անցնում են: Բաքվի հայ բնակչության կեսից ավելին ղարաբաղցիներ են, Նուխու, Արեշի, Գյոկչայի բնակչության կեսը Ղարաբաղից են դուրս եկել: Անդրկովկասյան երկրներում և հյուսիսային Կովկասում կգտնեք ղարաբաղցիների խոշոր գաղութներ: Պարսկաստանում, Ասիայի հեռավոր քաղաքներում, Ամերիկայում, Արևմտյան Եվրոպայում ցրված են հազարավոր ղարաբաղցիներ:

...Էմիգրացիայի մի մասն ընդմիջտ կտրվում է հայրենիքից, իսկ մյուս մասը կարճ ժամանակով կտրվում է հայրենիքից՝ վաստակելու և իր քայքայված տնտեսությունը վերականգնելու համար: Ժամանակավոր էմիգրանտների մի մասը Բաքվում բանվորագրվում է, մյուս մասը մշակ-

¹ «Կոմունիստ», 8 հունվարի, 1929:

² Նույն տեղում, 28 հունվարի, 1930:

³ Նույն տեղում, 2 մարտի, 1930:

համբալ է դառնում, իսկ մի խոշոր մասն էլ զբաղվում է արհեստներով, ինչպես որմնադրությամբ, քարտաշուքությամբ:

Ղարաբաղի կենտրոնականի 1925թ. օգոստոսի նստաշրջանում Դիզակի գավառի կենտրոնի նախագահ ընկ. Շահենի զեկուցումից պարզվեց, որ Դիզակից այդ տարին հեռացել են 4.895 հոգի, որը կազմում էր Դիզակի ամբողջ ազգաբնակչության 18%-ը: Նույնը ավելի կամ պակաս չափով կարելի է պնդել Վարանդայի ու Խաչենի մասին¹:

«Տարեց տարի բնակչության նոր հավաք է կազմակերպվում, ընտանիքների առավել եռանդուն և գործունյա անդամներն ստիպված լքում են իրենց հայրենիքը,- ցավով գրել է դեպքերին ականատես Գ.Քոչարյանը: - ...Լեռնային Ղարաբաղում տուն չկար, որի մեկ անդամին չուղարկեին արտագնա աշխատանքի»²:

Արտագնա աշխատանքը խրախուսելու նպատակով առավել շատ բանվորական ուժ հավաքագրած պաշտոնյաներին և կոլտնտեսություններին պարգևներ էին տալիս:

Բաքվի իշխանությունների հրահանգով այն անձինք և հիմնարկությունները, որոնք հրաժարվում էին բանուժ տրամադրել, պատժամիջոցների էին ենթարկվում:

Այսպես՝ 1930թ. Լեռնային Ղարաբաղից Ադրբեջանի տարբեր շինարարական կազմակերպությունների համար պետք է հավաքագրվեր 1.000 բանվոր, մինչդեռ հաջողվել է միայն 27 հոգու համոզել: «Կոմունիստ» թերթը դա գնահատել է որպես «օպորտոնիստական վերաբերմունք և թերագնահատվել է այդ կարևոր գործը»³:

Որոշ գյուղերի՝ Խերխանի, Ննգիի, Ջարդանաշենի կոլտնտեսությունների վարչությունները հրաժարվում են բանվորական ուժ տրամադրել⁴: Անհնազանդներին պատժելու և արցախահայությանը հայեցիքից կտրելու գործընթացին նոր թափ հաղորդելու նպատակով 1933թ. հունիսի 21-ին ԱԽՍՀ ժողովոստորից նախագահ Միր Ջաֆար Բաղիրովի ստորագրությամբ հետևյալ որոշումը կայացրեց. «Չաշվի առնելով այն հանգամանքը, որ մի շարք կազմակերպություններում անընդհատ անտեսվում է կոլտնտեսություններից բանվորական ուժի հավաքագրման գործը, այդ ամենը թողնված է ինքնահոսի ու որի հետևանքով արտադրական պլանների իրագործումը դրվել է վտանգի տակ՝ ԱԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշում է.

¹ Գ.Սեյրան, նշվ. աշխ., էջ 11:

² Գ.Կոչարյան, նշվ. աշխ., էջ 35:

³ «Կոմունիստ», 14 հոկտեմբերի, 1931:

⁴ Նույն տեղում, 21 հունիսի, 1931:

1. Բոլոր տնտեսական կազմակերպություններին պարտավորեցնել, գործող օրենքների համաձայն, բանվորական ուժի հավաքագրումը պայմանագրային հիմունքներով իրականացնել կոլտնտեսությունների և մեծատնտեսների հետ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առանձին շրջգործկոմների կողմից բանվորական ուժ վարձակալող կազմակերպություններին անհիմն արգելվել է համապատասխան աշխատանքը կատարել, ուստի շրջգործկոմների բոլոր նախագահներին պարտավորեցնել անձնական պատասխանատվությամբ անվերապահորեն թույլ տալ աշխատանքի ժողկոմիսարի կողմից նախօրոք իջեցրած պլանների համաձայն այդ ներկայացուցիչներին ժամանակին իրագործել իրենց պարտականությունները: Միաժամանակ նրանց օժանդակել և ցույց տալ համապատասխան օգնություն:

Բոլոր շրջգործկոմներին զգուշացնել, որ անհիմն մերժումը կդիտվի որպես բանուժի հավաքագրման կուսակցության և կառավարության կարևորագույն որոշման ձախողման փորձ: Մեղավորները կենթարկվեն ամենախիստ պատասխանատվության»¹:

1930-ական թվականներին այօրինակ որոշումը չկատարելը մարզի ղեկավարության համար հղի էր ամենածանր հետևանքներով: ԱԽՍՀ ժողկոմխորհի որոշմանը 1933թ. հուլիսի 1-ին հաջորդեց ԱդրԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Հ.Ռահմանովի նամակը՝ հասցեագրված Լեռնային Ղարաբաղի մարզկոմի քարտուղարին և մարզկոմի նախագահին, որտեղ ասված էր. «ԱԽՍՀ-ում նավթարդյունաբերության զարգացման և նոր նավթառատ շրջանների հետախուզման ու շահագործման, ինչպես նաև այդ աշխատանքների իրագործման հետ կապված շինարարական աշխատանքների կազմակերպման համար «Ադրնավթ»-ը ներկայումս բանվորական ուժի խիստ կարիք է զգում: ԱդրԿ(բ)Կ Կենտկոմը առաջարկում է Ձեզ տարբեր արհեստների տեր սևագործ բանվորներ հավաքագրելու համար ձեր շրջանում գտնվող «Ադրնավթ»-ի ներկայացուցիչներին ամենուր գործնական աջակցություն և օգնություն ցույց տալ:

Բանուժի հավաքագրման գործը պետք է կազմակերպել հարվածային կարգով»²:

Այս որոշումների և հրահանգների կատարման գործում նախանձելի ակտիվություն էին ցուցաբերում ԼՂԻՄ-ի՝ ազգությամբ թուրք ղեկավարները: 1933թ. հուլիսին Բաքվի նավթահորերում աշխատելու համար

¹ԼՂՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 53, թ. 354:

²ԼՂՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 53, թ. 289:

1.325 մարդ է հավաքագրվում¹: 1936թ. հունիսի 23-ին մարզգործկոմի նախագահի տեղակալ Մամեդովը շրջգործկոմների նախագահներին հրահանգում է 244 բանվոր Ստեփանակերտի, 354-ը՝ Դիզակի, 151-ը՝ Շուշիի, 322-ը՝ Մարտունու շրջաններից հավաքագրել և ուղարկել Բաքվի շինհրապարակներ²: Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի և ժողկոմխորհի 1936թ. օգոստոսի 23-ի որոշմամբ՝ սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին հանրապետության բամբակացան շրջաններին մարզը 4.250 բանվոր տրամադրեց³: 1940թ. մարտից 400 բանվորներ ուղարկվեցին Ջուլֆայի երկաթուղին կառուցելու, իսկ 200-ը՝ Բաքվում աշխատելու⁴: ԼՂԻՄ կոլտնտեսականների ուժերով, առանց վարձատրության, 1940թ. կառուցվեց Եվլախ-Ստեփանակերտ երկաթգիծը⁵:

ԼՂԻՄ-ում բանուժի հավաքագրման գործընթացը հիշեցնում է միջնադարյան ժամանակահատվածում գոյություն ունեցած մարդահարկին: Այն պլանավորված և համակարգված բնույթ ուներ: Մարզը զրկվում էր իր կենսական ուժերից: Շինարարության ասպարեզում արհեստավորներ ունենալու համար, Ադրբեջանի կառավարության որոշմամբ, 1930թ. Ստեփանակերտում և հայաշատ Շամախիում բացվում են հատուկ դասընթացներ⁶:

Մինգեչաուրի հիդրոէլեկտրակայանի և Սուլճայիթի կառուցման նպատակով 1950-60-ական թվականներին ԼՂԻՄ-ից և Ադրբեջանի հայաշատ շրջաններից բանվորների հավաքագրման գործը նոր թափ ստացավ: Նմանօրինակ քաղաքականությունը հանգեցրել էր մարզի հայ բնակչության տեսակարար կշռի անընդհատ նվազմանը: Այսպես՝ 1921թ. տվյալներով՝ Լեռնային Ղարաբաղում ապրում էր 129.243 մարդ, որոնցից 122.426-ը, այսինքն՝ 94,73 տոկոսը հայեր էին, 6.560-ը՝ թուրքեր(5,07 տոկոս), իսկ 0,20 տոկոսը՝ 267 մարդ՝ հույներ, ռուսներ, քրդեր⁷: Մինչև 1959թ. հայերի թիվը կրճատվեց և հասավ 110.1 հազարի⁸: Ընդ որում՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության մեծ արտահոսքը մինչև երկրորդ աշխարհամարտն ուղեկցվում էր բնական բարձր աճով: Վերջինիս շնորհիվ հայ բնակչության աճի որոշ միտում նկատվեց: 1926 և 1939թթ.

¹ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 53, թ. 42:

² Նույն տեղում, գ. 8, թ. 3, 4, 15, 16, 17, 20:

³ Նույն տեղում, թ. 30:

⁴ Նույն տեղում, ֆ. 250, ց. 4, գ. 1, թ. 1:

⁵ Նույն տեղում, թ. 9:

⁶ Նույն տեղում, ֆ. 1, ց. 2, գ. 24, թ. 19:

⁷ М. Карапетян, Этническая структура населения Нагорного Карабаха в 1921г. (По сельскохозяйственной переписи Азербайджана 1921г.), Ереван, 1991, с. 10.

⁸ НКАО, 50 лет в дружной советской семье, Степанакерт, 1974, с. 33.

մարդահամարների ընթացքում մարզի հայ բնակչության ընդհանուր թիվը 111.7 հազարից հասավ 132.8 հազարի: Նույն տարիներին մարզի բնակչության ընդհանուր թիվը 125.3 հազարից հասավ 159.8 հազարի կամ ավելացավ 20,4 տոկոսով¹:

Փաստորեն հայերի տեսակարար կշիռը մարզի ընդհանուր բնակչության թվակազմում կրճատվեց հոգուտ ադրբեջանցիների:

Քաղաքական այդ գործընթացներն իրենց կնիքը թողեցին ինչպես ԱխՍՅ, այնպես էլ ԼՂԻՄ-ի ժողովրդագրական գործընթացների վրա: Եթե 1926թ. ԼՂԻՄ-ի բնակչությունը կազմում էր ԱխՍՅ ընդհանուր բնակչության 5,4 տոկոսը, ապա 1989թ. մարդահամարի տվյալներով՝ այդ ցուցանիշը իջավ մոտ 2,7 տոկոսի²:

Այդ կործանարար գործընթացին վերջ տալու համար 1963թ. մարտի 15-ին Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Գ.Մելքունյանը և ԼՂԻՄ խորհրդի գործկոմի նախագահ Մ.Օհանջանյանը դիմել էին ԱխՍՅ մինիստրների խորհրդի նախագահ Է.Ալիխանովին՝ վերանայելու հայ երիտասարդության հավաքագրման՝ Ադրբեջանի կառավարության կողմից դեռևս 1929թ. մշակված ծրագիր-պլանը: Նամակում ասված էր. «16 տարիների ընթացքում կազմակերպված ձևով մարզի շրջաններից հավաքագրվեցին և հանրապետության արդյունաբերական ու շինարարական կետեր ուղարկվեցին տասնյակ հազարավոր բանվորական ձեռքեր(ուժ): Նշված կոնտինգենտն աշխատանքային պայմանագրերի ժամկետի ավարտումից հետո մնաց նոր աշխատանքային վայրերում՝ դառնալով քաղաքների մշտական բնակիչներ:

Այդ պատճառով մարզում սուր կերպով զգացվում էր բանվորական ուժի պակաս, հատկապես լեռնային գոտիների կոլտնտեսություններում, որտեղ գյուղատնտեսական աշխատանքների հիմնական տեսակները մեքենայացման հնարավորություն չունեին և իրականացվում էին ձեռքով»³:

Այսպիսով՝ ԼՂԻՄ-ից բանվորական ուժը Ադրբեջան տեղափոխելու միջոցով ԱդրիՍՅՅ ղեկավարությունը առավել շատ լուծում էր քաղաքական խնդիրներ, այն է՝ հայաթափել Արցախը և վերջնականապես յուրացնել նրա տարածքը:

¹Нагорный Карабах за 50 лет (1923-1973гг.), статистический сборник, с. 17; Всесоюзная перепись населения 1959г. Азербайджанской ССР, Москва, 1963, с. 140.

²ЗСФСР в цифрах, Тифлис, 1926, с. 4-5; Статистический ежегодник, ч. 1-2, Баку, 1989, с. 14.

³ԼՂՀ պետադիտիվ, ֆ. 1, ց. 1, գ. 20, թ. 208:

**Политика перемещения рабочей силы из НКАО в Азербайджан
как цель и средство выдворения армян из родного края**

Ваграм Балаян

Резюме

После присоединения Арцаха к Советскому Азербайджану, руководители Аз. ССР начали принимать меры по изменению демографического положения его территорий. Для этого, начиная с 1920-х гг. до конца 1950-х гг. каждый год тысячи молодых людей из Нагорного Карабаха были завербованы и отправлены на строительство промышленных центров республики, а также для освоения земель Милля и Мугани, где они и оставались.

**The Policy of Moving the Manpower from NKAR to Azerbaijan as the
Aim and Means of getting Rid of the Armenians from the Territory.**

Vahram Balayan

Summary

After the annexation of Artsakh to Soviet Azerbaijan, leaders of the Azerbaijani SSR realizing that Armenian population of annexed territories would not agree to the created situation, began to take measures to change the demographic status of those territories. For achieving their aim, beginning from the 1920th up to the end of the 1950th, every year thousands of young men from Nagorno Karabakh were recruited and sent to build the industrial centers of the republic and also to irrigate the lands of Mill and Mughan.

ԼՂԻՄ-ի ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱՎՈՐԻ ԿԱՋՄԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՁ¹

Նույն Սարունյան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱրՊՀ

Լեռնային Ղարաբաղը պատմական հանգամանքների բերումով քսաներորդ և ներկա դարաշրջաններում վիճահարույց տարածաշրջան էր հանդիսանում ինչպես նախկին խորհրդային ժամանակաշրջանում, այնպես էլ ներկա անկախ քաղաքական պետական միավորումների ազատ հարաբերությունների պայմաններում:

Արցախը, դարեր ի վեր լինելով Հայաստանի պատմական գավառներից մեկը, ամբողջ պատմության ընթացքում ստիպված էր պաշտպանել գոյության և ինքնատիպության իր իրավունքը:

Ուշ միջնադարում ձևականորեն գտնվելով շահական Պարսկաստանի կազմում՝ Ղարաբաղի մելիքություններն իրենց փաստացի իշխանությունը կարողացան պահպանել նույնիսկ այն ժամանակ, երբ Արևելյան Հայաստանն ամբողջությամբ կորցրել էր երբեմնի անկախության մնացորդները²:

Պետականության ավանդույթները երբեք չեն մոռացվել Ղարաբաղի հայերի գիտակցության մեջ, և այդ էր պատճառներից մեկը, որ հետագայում՝ ճգնաժամային պատմական պահերին, Լեռնային Ղարաբաղում անմիջապես ձևավորվել են ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու և նրա կենսագործունեությունն ապահովելու ընդունակ պետական կառույցներ:

Լեռնային Ղարաբաղի տարածքն անցյալում նույնպես դիտվել է իբրև առանցքային՝ իրենց տիրապետությունը Անդրկովկասում հաստատելու համար պայքար մղող պետությունների կողմից³:

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց և ռուսական կայսրության փլուզումից, հատկապես 1917 թվականի բոլշևիկյան հեղաշրջումից հետո Լեռնային Ղարաբաղի համար սկսվեց ծանր մի շրջան, որը ողբերգականորեն անդրադարձավ ողջ տարածաշրջանի հետագա ճակատագրի վրա:

1918 թվականը ելակետային դարձավ Ղարաբաղյան հիմնախնդրի պատմության մեջ. Ռուսական կայսրության փլուզմանն ու Կովկասյան

¹ Հոդվածն ընդունված է 21.11.13:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ պատմության ամբիոնը:

² С.Лисицян, Армяне Нагорного Карабаха, Ереван, 1992, стр 53.

³ Ս.Սելջունյան, Լեռնային Ղարաբաղ, Երեւան, 1990, էջ 4:

ռազմաճակատի քայքայմանը հետևեց թուրք-գերմանական զինված ներխուժումն Անդրկովկաս:

Հարկ է նշել, որ արդեն այդ ժամանակ մեծ տերություններն ու համաշխարհային հանրությունը՝ ի դեմս Ազգերի լիգայի, վիճելի ճանաչեցին Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: Իսկ Խորհրդային Ռուսաստանի արտգործոցն Արթուր Չիչերինը Ղարաբաղի մասին վլադիմիր Լենինի հարցմանը պատասխանել էր, որ Ղարաբաղը բուն հայկական տարածք է, և Ղարաբաղի հանձնումն Ադրբեջանին համարել էր իրենց սկզբունքներին հակասող քայլ¹:

Առաջին աշխարհամարտի դադարեցման նպատակով մղվող կռիվներից և Թուրքիայում ցեղասպանության հետևանքներից քայքայված Հայաստանը համաձայնեց վիճելի ճանաչել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը և տարածքային վեճերի լուծումը թողնել միջազգային հանրությանը՝ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման անկապտելի իրավունքը հաշվի առնելու պայմանով:

Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վիճելի լինելը ճանաչվել է նաև 1919-20 թվականներին Փարիզի խաղաղության վեհաժողովի, արդեն Խորհրդային դարձած Ռուսաստանի, ինչպես նաև Ադրբեջանի կողմից:

1920 թվականի դեկտեմբերին Հայաստանի Խորհրդայնացումից հետո, նորաստեղծ Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության իշխանությունները հռչակեցին վիճելի տարածքների նկատմամբ ունեցած իրենց հավակնություններից հրաժարվելու մասին և պաշտոնապես ճանաչեցին Լեռնային Ղարաբաղի ժողովրդի «ազատ և լիակատար ինքնորոշման» իրավունքը: Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ այդ քայլն ընդամենը բոլշևիկների իշխանության հաստատումից հետո Ադրբեջանի ղեկավարների մարտավարական խորամանկությունն էր²:

Ռուսաստանի բոլշևիկները Հայաստանը Խորհրդայնացնելուց հետո յուրօրինակ ձևով որոշեցին Լեռնային Ղարաբաղի հետագա ճակատագիրը: «Պրոլետարական հեղափոխությունը» մահմեդական Արևելքում տարածելու գաղափարով տոգորված նոր իշխանությունը 1921թ. հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովբյուրոյի պլենումի ապօրինի որոշմամբ³ Լեռնային հայկական Ղարաբաղը, որը պատմական Հայաստանի Արցախ նահանգի վարչատարածքային միավորի լեռնային մասն էր կազմում,

¹ P. Казанджанян, К предыстории самоопределения Нагорного Карабаха, Москва, 1997, стр. 29.

² Կ. Քալայան, Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994 թթ.,

գիտական թեզ, Երևան, 2002թ., էջ 12:

³ ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 30, ք. 5: Տես՝ Դ. Արրահամյան, Արցախյան գոյամարտ, Երևան, 1991, էջ 57, Нагорный Карабах, Историческая справка, Ереван, 1988, стр. 33.

բռնակցվեց նորահաստատ Խորհրդային Ադրբեջանին՝ «լայն ինքնավարության իրավունքներով և Շուշի մայրաքաղաքով»¹:

Ադրբեջանի Կ(Բ)Կ Կենտկոմը 1923 թ. հուլիսի սկզբներին ստեղծեց կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեի ժամանակավոր նախագահություն հետևյալ կազմով՝ Սերո Մանուցյան(մարզկոմի քարտուղար), Արմենակ Ղարաբոյան (Կարակոզով), Բաշիր Բինյաթով, Միխայիլ Չալյան և Մուկուչ Արզանյան²:

Իսկ 1923 թվականի հուլիսի 7-ին Ադրբեջանի ԿԳԿ-ի հռչակագրով «Լեռնային Ղարաբաղի հայկական մասում»³ կազմավորվեց ինքնավար մարզ: Հռչակագրում նշվում էր, որ Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր կոմիտեն որոշում է. «1. Ղարաբաղի հայկական մասում կազմակերպել ինքնավար մարզ՝ Խանքենդի կենտրոնով: 2. Ինքնավար մարզի վարչական օրգաններն են մարզային գործադիր կոմիտեն և տեղական խորհուրդները: 3. Մինչև մարզային գործադիր կոմիտեի կազմակերպումը ստեղծել ժամանակավոր հեղափոխական կոմիտե... 4. Մարզգործկոմի ֆինանսական և տեխնիկական անհրաժեշտ միջոցները տրվում են Ադրբեջանական ԽՍՀ ընդհանուր միջոցներից՝ Անդրկենտգործկոմի անմիջական կարգադրությամբ: 5. Մարզի կանոնադրությունը մշակելու, Ղարաբաղի ինքնավար մարզին անցնող վարչական միավորները փաստորեն հանձնելու, ինչպես և ինքնավար մարզի սահմանները որոշելու համար ստեղծել խառն հանձնաժողով՝ Լեռնային Ղարաբաղի, դաշտային Ղարաբաղի, Քրդստանի և Ադրբեջանական ԽՍՀ կենտրոնական իշխանության ներկայացուցիչներից, որին հանձնարարել ավարտել իր աշխատանքը մինչև օգոստոսի 15-ը: Ադրկենտգործկոմի փոխնախագահ՝ Մ.Բ.Կասումով: Ադրկենտգործկոմի քարտուղար՝ Մ.Խանբուդաղով»⁴:

Հռչակագրով նշված ժամկետում՝ 1923 թ. օգոստոսի 15-ին, առաջադրված խառն հանձնաժողովը, որի կազմի մեջ մտնում էին «նախագահ Ադրբեջանի ռազմածովային ժողկոմ Կարակը, անդամներ Կարակոզովը, Սվիրիդովը, Իլդրընը և Բունիաթգադեն»⁵, ավարտեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տերիտորիայի որոշումը: Նա բռնում էր Փոքր Կովկասի արևելյան ելուստը և դաշտային Ղարաբաղի մի մասը՝ 4.387 քառ.կիլոմետր ընդհանուր տարածությամբ: ԼԴԽ-ի սահմաններն էին՝

¹ Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник материалов и документов, Ереван, 1992г., стр 0.

² Գ.Հովհաննիսյան, Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971, էջ 231:

³ Бакинский рабочий, N 151, 9 июля 1923.

⁴ Правда о Нагорном Карабахе, Степанакерт, 1989, стр.56-57.

⁵ Բ.Ուլուբաբյան, Արցախյան գոյապայքարը, Երևան, 1994, էջ 158:

արևելքից՝ Աղդամի շրջանը, արևմուտքից՝ Լաչինի(Քաշաթաղի) և Քյալբաջարի(Քարվաճառ) շրջանները, հարավից՝ Կարյազինոյի(Ֆիզուլի) շրջանը, հյուսիսից՝ նախկին Գյուլիստանի(Շահումյանի) և Կասումիս-մայիլովի շրջանները: Սարգը ընդգրկում էր Շուշի քաղաքը, Խանքենդի ավանը (Վարարակն) և 248 գյուղեր և գյուղակներ: 1926 թվականի դեկտեմբերյան մարդահամարի տվյալներով՝ մարզերում ապրում էին 125.159 մարդ, որից 116.934 հոգի գյուղերում, իսկ 8.225 հոգի՝ քաղաքում¹:

Լեռնային Ղարաբաղի մնացած մասը՝ պատմական Գյուլիստանը, վերափոխված Շահումյանի շրջանը և Հյուսիսային Արցախը՝ ներկայիս Խանլարի (Գյանջա քաղաքի հետ միասին), Ղաշքեսանի, Գետաբեկի, Շամխորի և մի շարք այլ շրջանների լեռնային և նախալեռնային մասերը՝ որպես վարչական առանձին շրջաններ, ևս մտցվեցին Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ:

Այսպիսով՝ հայկական բնակչության ճնշող մեծամասնության կամքին հակառակ Լեռնային Ղարաբաղը ոչ միայն հանձնվեց Ադրբեջանին, այլև արհեստականորեն մասնատվեց վարչատարածքային առանձին միավորների՝ բնական կերպով հաստատված տարածքային և ազգային-պետական միասնությունից նրան զրկելու և սահմաններն անորոշ դարձնելու նպատակով:

1923 թվականին երկրամասի տարածքում կազմավորվեց Ինքնավար Մարզ Լեռնային Ղարաբաղում: 1923 թվականի հուլիսի 24-ին Ադրբեջանի Կենտգործկոմի նոր հռչակագրով վերացվեց Ղարաբաղի գործերի գծով կոմիտեն և փոխարենը ստեղծվեց Ինքնավար Մարզի ժամանակավոր հեղափոխական կոմիտե (նախագահ՝ Արմենակ Ղարաբյոզյան), որը լուծարվեց նույն թվականի նոյեմբերի 9-ին՝ մարզային խորհրդի առաջին համագումարն ավարտվելուց հետո²:

1923թ. օգոստոսին ԻՄԼՂ-ի տարածքում կազմակերպվեցին շրջաններ՝ Ջրաբերդի (կենտրոնը՝ գյուղ Մարդակերտ), Խաչենի (կենտրոն՝ գյուղ Խանքենդի), Վարանդայի (կենտրոն՝ գյուղ ճարտար), Դիզակի (կենտրոն՝ գյուղ Հադրութ) և Շուշին՝ քաղաքի իրավունքով: 1924թվականին կազմավորվեց Շուշիի շրջանը (կենտրոն՝ քաղաք Շուշի)³:

ԻՄԼՂ-ի կազմի մեջ չմտցվեց Արցախ-Ղարաբաղի լեռնային մասի զգալի հատվածը: Դուրս է թողնվում Խամսայի մելիքություններից Գյուլիստանի

¹ Գ.Սեյրան, Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները, Թիֆլիս, 1928, էջ 71: Տես՝

Գ.Հովհաննիսյան, Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971, էջ 223:

² «Խորհրդային Ղարաբաղ», 24 հուլիսի, 1924:

³ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 14, ք. 7:

մեկիքության ամբողջ տարածքը՝ Շահումյանի շրջանն ու Խանլարի շրջանի մեծ մասը, ինչպես նաև Դիզակի մեկիքության զգալի մասը:

Այսինքն՝ Ադրբեջանական ԽՍՀ, խախտելով Կովբյուրոյի «Լեռնային Ղարաբաղի հայկական հատվածից ստեղծել ինքնավար մարզ...» որոշումը, մարզի կազմում չի ներառել ԼՂ հարավային (Կուրաթլու, Ջանգելան, Ֆիզուլի, Ջաբրայիլ), արևմտյան (Լաչին, Քելբաջար), կենտրոնական (Խանլար, Շահումյան) և հյուսիսային (Դաշքեսան, Գետաբեկ, Շամխոր) շրջանները, որտեղ հայերը կազմում էին բնակչության մեծամասնությունը¹:

Բացի դրանից՝ կանխամտածված կերպով ԼՂԻՄ-ի իրենց կազմած տարածքը արհեստականորեն, նեղ շերտով՝ 5 կիլոմետր երկարությամբ, կտրում են Հայկական ԽՍՀ-ի հետ ընդհանուր սահման ունենալու հնարավորությունից: Լեռնային Ղարաբաղի և Հայկական ԽՍՀ-ի միջև եղած արցախյան հայկական տարածություններում ստեղծում են Լաչինի, Քյալբաջարի, Ջանգելանի շրջանները, որտեղի հայ բնակչությունը տարբեր պատճառներով ստիպված է լինում հեռանալ (Արցախի արևմտյան հատվածում նրա երկու շրջաններից՝ Քյալբաջար և Լաչին, ստեղծվել է «Կարմիր Քրդստանը», որը գոյատևել է մինչև 1936 թվականը)²:

Այսպիսով՝ ԻՄԼԴ-ը, որն ընդգրկում էր Արցախի տարածքի մի փոքր հատվածը, չորս կողմից շրջափակվում է Ադրբեջանի կազմի մեջ մտցված վարչական շրջաններով և մեկուսացվում Հայկական ԽՍՀ-ից:

1936 թվականին «Ինքնավար Մարզ Լեռնային Ղարաբաղում» վարչական միավորը վերանվանվեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ»-ի՝ հինգ վարչական շրջաններով, երկու քաղաքով և յոթ քաղաքատիպ ավանով³:

Ստեփանակերտի (1978 թվականից՝ Ասկերանի) շրջանն ընդգրկում էր 48 բնակավայր(գյուղ), Հադրուբինը՝ 41, Մարտակերտինը՝ 61, Մարտունունը՝ 40, Շուշիինը՝ 30⁴:

1986 թվականին Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից ընդունված «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մասին» ԼՂԻՄ-ի պետականության բնորոշ հատկանիշները ԽՍՀՄ ազգային-պետական կառուցվածքի համակարգում արտացոլող օրենքում հաստատագրված է, որ ԼՂԻՄ-ի կարգավիճակը որոշվում է ԽՍՀՄ սահմանադրությամբ և «Ինքնավար Մարզի տարածքը չի կարող փոփոխության ենթարկվել առանց ԼՂԻՄ-ի ժողպատգամավորների խորհրդի համաձայնության» (հոդված 3):

¹ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, 1988-1994, Հանրագիտարան մեկ հատորով, Հայկական հանրագիտարանի հրատարակչություն, Երևան, 2004, էջ 225:

² Նույն տեղում, էջ 237:

³ ՀՄՀ, հ.4, Երևան, 1978, էջ 578:

⁴ Նույն տեղում, էջ 582:

Ադրբեջանական իշխանությունների կողմից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ տարածքային սահմանափակումների մեկուսացումը ՀԽՍՀ-ից մարզի հայ բնակչությանը ստիպեցին պայքարել տարածաշրջանը Ադրբեջանի կազմից դուրս բերման համար: Շրջադարձային էր 1988 թվականին ծավալված արցախյան ազատագրական շարժումը, որի արդյունքում 1991 թ. սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի միավորմամբ հռչակվեց Լեռնային Ղարաբաղի անկախությունը:

Չնայած 1992թ. հունվարի 7-ին Ադրբեջանական ԽՍՀ ընդունել է «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը լուծարելու մասին» օրենքը (Բաքվի կողմից թվագրված է 23.11.1991)¹, սակայն օրենքը հակաիրավական է, քանի որ Ադրբեջանի Հանրապետությունը չի դարձել Ադրբեջանական ԽՍՀ-ի իրավահաջորդը և որևէ առնչություն չունի Լեռնային Ղարաբաղի հետ:

Արդեն 1992 թ. մայիսի 9-ին ԼՂՀ ՊԲ կողմից Շուշիի ազատագրումը, բեկում մտցնելով արցախյան ազատագրական պատերազմի մեջ, հաստատագրեց Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իրավունքները պատմական հայրենական հողի վրա:

К вопросу об образовании административно-политической единицы НКАО.

Нуне Сарумян

Резюме

В статье отмечается, что арцахский народ всегда боролся за независимость. В ходе этой борьбы существенное значение имели образование АОНК в 1923 году и НКАО. Говорится об административно-территориальных образованиях на территории НКАО и провозглашению НКР.

On the Question of the Formation of NKAR

Nune Sarumyan

Summary

The article deals with the problem of Artsakh people, who fought for their independence. The main place was given to the name of AR of NK in 1923 which was renamed into NKAR. About administrative-territorial foundations on the territory of NKAR and proclamation of the NKR was also spoken in the given article.

¹ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, 1988-1994, Երևան, 2004, էջ 225:

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԱՂԻԲԵՋԱՆԻ ՎԱՐԱԾ ԲՈՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

(1923-91թթ)¹

Սարգիս Ասատրյան

ԱրՊՀ ասպիրանտ

Ժողովրդագրության զարգաման օրինաչափությունների դրսևորման ուղղությունների, միտումների, վերաբնակեցման և տարաբնակեցման քաղաքականության, ինչպես նաև բնակչության աճի գործոնների դերի բացահայտման ու գնահատման հիման վրա կարելի է ուրվագծել և ընդհանուր առմամբ կանխատեսել Լեռնային Ղարաբաղի բնակչության ժողովրդագրական պատկերը երկարատև հեռանկարի տարբեր փուլերի համար: Հետևաբար ԼՂՀ պատմության համար նշանակալից ժամանակահատվածի (1923-91թթ.) բազմակողմանի ուսումնասիրումը չի կարող իրականացվել՝ առանց ժողովրդագրական գործընթացների համակողմանի հետազոտման:

Ընդհանուր առմամբ՝ բնակչության զարգացման օրինաչափությունները ձևավորվում են բուն ժողովրդագրական գործընթացների՝ պատմականորեն հանդես եկող ու տվյալ պահին ինքնուրույն գործող երևույթների և հասարակության սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցության ներքո: Յուրաքանչյուր տվյալ պահին ծննդի, մահվան, ընտանիքի մեծության ու գաղթի ընթացքի վրա մեծապես ազդում է բնակչության տարիքային կազմը, որը գոյանում է պատմական զարգացման ընթացքում հասարակության սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցող փոփոխություններին և տեղաշարժերին համընթաց, ինչպես նաև արտակարգ երևույթների (պատերազմ, բնական աղետներ, տարափոխիկ հիվանդություններ և այլն) հետևանքով: Եվ եթե վերջինիս էլ գումարենք այն հանգամանքը, որ արցախահայությունը ԱդրիսՄՀ-ի կազմում յոթանասուն տարիների ընթացքում ենթարկվել է խորհրդա-ադրբեջանական տարաբնույթ բռնաճնշումների, ապա պատկերը ավելի ընդհանրական կդառնա:

Հատկանշական է այն փաստը, որ Ղարաբաղյան շարժման նախորդող և հաջորդող տարիներին Ադրբեջանը, պետական մակարդակով օգտագործելով բոլոր հնարավոր տարբերակները, ԱդրիսՄՀ-ում և ԼՂԻՄ-ում արցախահայության դեմ իրականացնում էր էթնիկ գտման քաղաքականու-

¹ Հոդվածն ընդունված է 21.12.13:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ պատմության ամբիոնը:

թյուն, որն էլ հանգեցնում էր երկրամասի հայաթափմանը և ժողովրդագրական պատկերի թուրքացմանը: Ուստի Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ազգային իրավունքները ոտնահարելու և նրա նկատմամբ խտրական քաղաքականություն կիրառելու իմաստը Լեռնային Ղարաբաղը հայաթափ անելու և մարզը ադրբեջանականացնելու մեջ էր¹:

Եվ եթե անդրադարձ կատարենք ԼՂԻՄ-ի ժողովրդագրական գործընթացների պատմությանը, ապա կտեսնենք, որ դրանք Ղարաբաղում՝ Խորհրդային կարգերի հաստատման առաջին մի քանի տարիներին, ինչ-որ չափով նպաստեցին բնակչության ընդհանուր թվաքանակի կայունացմանը և ավելացմանը, որը, թեպետ, հիմնականում տեղի էր ունենում բնական աճի շնորհիվ: Սակայն Լեռնային Ղարաբաղի ԱդրԽՍՀ-ի կազմի մեջ մտնելուց հետո սկիզբ է առնում նրա հայ բնակչության արտագաղթը, որը հանգեցրել է մարզի հայ բնակչության կշռի անընդհատ նվազմանը: Այսպես՝ եթե 1921 թվականին հայերը կազմում էին երկրամասի բնակչության 94.4 տոկոսը, ապա 1930 թվականի տվյալներով՝ այդ ցուցանիշը կազմեց 83.1 տոկոս²: 1923 թվականին, երբ ձևավորվեց ԼՂԻՄ-ը, երկրի բնակչությունը կազմում էր 157.3 հազար մարդ, որից՝ 149.6 հազար հայեր և 7.7 հազար ադրբեջանցիներ: Ինչպես երևում է տվյալներից՝ հայերը կազմում էին բացարձակ մեծամասնություն:

Եթե նախախորհրդային ժամանակաշրջանում Ղարաբաղի բնակչության զգալի մասը (աշխատունակ, ընտանիքի հայր հանդիսացող երիտասարդ տղամարդիկ) մեկնում էին հեռավոր վայրեր աշխատելու, ապա խորհրդային իշխանության, ադրբեջանական գաղութատիրության տարիներին մարզերից մեկնում էին հիմնականում չամուսնացած երիտասարդները՝ սոցիալ-տնտեսական տարրական պայմանների բացակայության պատճառով: Մեխանիկական շարժերի համանման տենդենցները պայմանավորեցին բնակչության «ծերությունը» և դրա հետևանքով ծնելիության մակարդակի կտրուկ նվազումը և մահացության մակարդակի բարձրացումը:³

1926 թվականին գյուղական բնակչության ծնելիությունը հասավ 4.3 տոկոսի, մահացությունը՝ 1.5 տոկոսի: Բնակչությունը աճեց 2.8 տոկոսով: Ազգաբնակչության 90 տոկոսը /112686 հոգի/ հայեր են, 9.6 տոկոսը՝ /12006 հոգի/ ադրբեջանցիներ, 0.3 տոկոսը՝ ռուսներ և 0.1 տոկոսը՝ այլ ազգի ներկայացուցիչներ: 1923-1979 թվականներին մարզի գյուղական

¹ Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991, էջ 61:

² Народное хозяйство СССР за 70 лет, Москва, 1987, с. 405.

³ Нагорный Карабах. Историческая справка. Ереван, 1988, с. 46-47.

բնակչությունը կրճատվեց 61.3 հազարով՝ առավելապես հայկական բնակչության հաշվին: Վերացան մի քանի տասնյակ գյուղեր:¹ Խորհրդային ազգագրագետ Ն.Գ.Վոլկովան այդ կապակցությամբ գրել է. «Գյուղերը, որտեղ ապրում էին հայերը, հայաթափվեցին և բնակեցվեցին ադրբեջանցիներով: Հայկական բնակչությունը ողջ մնաց միայն այն տեղերում, որտեղ մուսավաթները ոտք չեն դրել»:²

1926-1939 թվականների մարդահամարների ժամանակաընթացքում, Ադրբեջանում հրատարակված վիճակագրական տվյալներով, մարզում հայ բնակչությունը ավելացավ 18.9 տոկոսով, այսինքն՝ 1926 թվականի 111.7 հազարից 1939 թվականին հասավ 132.8 հազարի:³ Իսկ ադրբեջանական բնակչությունը ավելացավ 11.9 տոկոսով:⁴

1939 թվականի հունվարի 17-ին մարզում անցկացվեց բնակչության նոր հաշվառում: Մարդահամարի տվյալներով՝ ԼՂԻՄ-ի ընդհանուր բնակչությունը կազմել է 150.8 հազար մարդ⁵, որից 132.8 հազարը՝ հայեր, 14.1 հազարը՝ ադրբեջանցիներ, 3.2 հազարը՝ ռուսներ, 0.7 հազարը՝ մյուս ազգությունները:⁶

ԼՂԻՄ-ի բնակչության թիվը և ազգային կազմը 1939 թվականի մարդահամարի տարիներին

Աղուսյակ 1 Ազգություններ	Բնակչության թիվը	Տոկոսներով
Հայեր	132.8	88.0
Ադրբեջանցիներ	14.1	9.1
Ռուսներ	3.2	2.1
Մյուս ազգություններ	0.7	0.4
Ընդամենը	150.8	100

7

¹ Սեյրան Գ., Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները, Երևան, էջ 8-9:

² Кавказский этнографический сборник, т. 4, Москва, 1969, с. 10.

³ Всесоюзная перепись населения 1959 г. Азербайджанской ССР, Москва, 1963, с. 140.

⁴ Тер-Саркисянц, А.Е., Некоторые тенденции этнокультурного развития армян Нагорного Карабаха, Լրաբեր հասարակական գիտությունների, հ. 8, Երևան, 1988, էջ 15:

⁵ Նույն տեղում:

⁶ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 142, ց. 1, գ. 9, թ. 2:

⁷ Нагорный Карабах. Историческая справка, Ереван, 1988, с. 47.

Աղյուսակ 2

Շրջաններ	Բնակչությունը	Հայեր	Ադրբեջանցիներ	Ռուսներ
Մարտակերտի	40812	36453	2833	1244
Մարտունու	32398	30235	1501	457
Ստեփանակերտի	29321	26881	2014	563
Շուշիի	10818	4177	6306	256
Հադրութի	27128	25975	727	349

1

Ինչպես երևում է տվյալներից՝ մարզի հինգ շրջաններից ադրբեջանցիները մեծամասնություն են կազմել Շուշիի շրջանում: 1939 թվականին Շուշիի շրջանի բնակչությունը կազմել է 10818 մարդ, որից ադրբեջանցիները՝ 6306 մարդ կամ 58.3 տոկոս և հայերը՝ 4177 մարդ կամ 38.6 տոկոս: Ընդ որում՝ ադրբեջանցիներից շատերը ապրել են Շուշի քաղաքում, որի բնակչությունը 5424 մարդ էր, իսկ շրջանի գյուղական վայրերում հայերը կազմել են մեծամասնություն:²

Արցախահայությունը մեծ կորուստներ ունեցավ նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Մինչ պատերազմը մարզի 51 տոկոսը կամ 76745 մարդ կազմել են տղամարդիկ, իսկ 74092 մարդ կամ 49 տոկոսը կանայք էին: Սակայն այդ ցուցանիշը փոխվեց պատերազմից հետո: 1959 թվականին կանայք կազմեցին բնակչության 53 տոկոսը կամ 68735 մարդ, իսկ տղամարդիկ՝ 49 տոկոս կամ 61671 մարդ:³ Ռազմաճակատ ուղարկված տղամարդկանց մի մասը մնացին ռազմի դաշտում՝ իրենց կյանքը զոհաբերելով հանուն հայրենիքի փրկության, իսկ մյուս մասն այլևս չվերադարձավ հայրենիք՝ տեղափոխելով նաև ընտանիքի մյուս անդամներին: Ռազմաճակատ ուղարկվեցին նաև կանայք /2000/, սակայն կանանց զոհերը քիչ էին, քանի որ նրանցից շատերը չէին մասնակցում ռազմական գործողություններին, այլ ցուցաբերում էին բուժօգնություն և այլ ծառայություններ էին կատարում:⁴

¹Մելիք-Շահնագարյան Լ., Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1998, էջ 5:

²Достижения Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах. Статистический сборник, Степанакерт, 1963, с.30.

³Достижения Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах. Статистический сборник, с. 31.

⁴Мирзоян Б., Нагорный Карабах (Размышления над статистикой), Լրաբեր հասարակական գիտությունների, հ.7, Երևան, 1988, էջ 44:

Ընդհանրապես, Երկրորդ Համաշխարհային պատերազմը խոր հետք թողեց արցախահայության ժողովրդագրական պատկերի վրա: Համեմատելու համար նշենք, որ միայն ԼՂԻՄ-ից մոբիլիզացվեց և ռազմաճակատ ուղարկվեց 45 հազար ղարաբաղցի /կամ բնակչության 32 տոկոսը/, դա այն դեպքում, երբ ռազմաճակատ ուղարկված ադրբեջանցիների թիվը կազմել է ընդամենը տոկոս՝ չնայած ընդհանուր թվաքանակում կազմում էին մարզի բնակչության 10 տոկոսը:

Սակայն մարզի հայ ժողովուրդը առավել ծանր կորուստներ կրեց հետպատերազմյան հետագա տասնհինգ տարիների ընթացքում՝ ընդհուպ մինչև 1959 թվականը: Այդ տարիներին ԼՂԻՄ-ի բնակչությունը բավականին կրճատվեց. ավելի քան 30 հազար ղարաբաղցի լքեց մարզը, իհարկե, ոչ ինքնակամ:¹

1959 թվականի հունվարի 15-ին Լեռնային Ղարաբաղում անց կացվեց բնակչության նոր հաշվառում: Մարդահամարի տվյալներով՝ մարզի ողջ բնակչությունը կազմել է 130.406 մարդ², որից 110.053-ը կամ 84.4 տոկոսը՝ հայեր, 17.995-ը կամ 13.8 տոկոսը՝ ադրբեջանցիներ, 1790 մարդ կամ 1.37 տոկոս ռուսներ, 0.5 հազարը՝ այլ ազգերի ներկայացուցիչներ:³

1950-1960-ական թվականներից աճեց բնակչության արտահոսքը դեպի Հայաստանի Հանրապետության տարածք՝ Երևան, Կապան, Գորիս, Քաջարան և այլն: Դեպի Հայաստանի Հանրապետության բնակչության արտահոսքի ուղիներից մեկն էլ հանդիսանում էր այն, որ երիտասարդներից շատերը, սովորելու գնալով նրա բուհերում և մասնագիտական ուսումնական հաստատություններում, այլևս հետ չէին վերադառնում: Մինչդեռ տեղում մասնագետների կարիքը լրացնելու համար շատ դեպքում գործուղվում էին Բաքվից՝ գլխավորապես ադրբեջանցիները:

Հայ ժողովրդի արտագաղթը բացասական ազդեցություն է թողնում հայկական ընտանիքների չափերի, բնակչության արագ ծերացման վրա: Այդ տարիներին բնակչության տարիքային կազմում կտրուկ նվազել է երիտասարդների թիվը, և աճել տարեց մարդկանց թիվը: Դա վկայում է այն մասին, որ մահացության թիվը գնալով ավելի էր մեծանում, քան ծնելիության չափը:

1970 թվականի հունվարի 15-ին ԼՂԻՄ-ում անցկացվեց բնակչության նոր հաշվառում: Մարդահամարի տվյալների համաձայն՝ մարզի ընդհանուր բնակչությունը կազմել է 150.3 հազար մարդ, որից 121.1 հազա-

¹ Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, Երևան, 2002, էջ 286:

² Народы Кавказа, т. 1, Москва, 1960, с.20.

³ <http://census.stat-nkr.am/>

րը կամ 80.4 տոկոսը՝ հայեր,⁴ 27.2 հազարը կամ 18.1 տոկոսը՝ ադրբեջանցիներ, 1.3 հազարը կամ 0.9 տոկոսը՝ ռուսներ, 0.7 հազարը կամ 0.5 տոկոսը՝ այլ ազգերի ներկայացուցիչներ:¹

Ընդամենը տասնմեկ տարվա ընթացքում (1959-1979 թթ.) հայերի թիվը 84.4 տոկոսից հասավ 80.6 տոկոսի, իսկ ադրբեջանցիների թիվը 18.0 հազարից հասավ 27.2 հազարի կամ ավելացավ 4.3 տոկոսով:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ 1939-1979 թվականներին բավականին բարձր բնական աճի պայմաններում մարզի հայ բնակչությունը կրճատվել է մոտավորապես 10 հազարով:² 1926-1979 թվականների միջև ընկած ժամանակահատվածում ԼՂԻՄ-ում հայկական բնակչությունը աճել է ընդամենը 10.2 տոկոսով, իսկ ադրբեջանականը՝ համարյա 3 անգամ ավելի, դա այն դեպքում, որ 1926 թվականին հայերը կազմել են 89.1 տոկոս, իսկ ադրբեջանցիները՝ 10.1 տոկոս:³ Այդպիսի արդյունքները մարզից հայ բնակչության արտահոսքի և ադրբեջանցիների մշտական հոսքի հետևանքներն էին: Բնակչության թվաքանակի և կազմի նմանօրինակ փոփոխությունները շարունակվեցին նաև հետագա տարիներին՝ ընդհուպ մինչև 1988 թվականը: Հատկանշական է նաև այն փաստը, որ 1921թ. տվյալներով՝ այլ էթնիկ խմբերը կազմել են Ադրբեջանի բնակչության 15%-ը կամ 266.7 հազար մարդ, և հաշվի առնելով նրանց աճի տեմպերը՝ այդ էթնիկ խմբերի թվաքանակը 1980-ականների սկզբին պետք է անցներ մեկ միլիոնից: Սակայն 1979թ. այդ բոլոր էթնիկ խմբերի թվաքանակը կազմում էր ընդամենը 57.1 հազար մարդ կամ 0.9%, և մարդահամարների արդյունքների հրապարակման ժամանակ դրանք ընդգրկվեցին «այլ ազգություններ» կարգում:

1989 թվականի հունվարի 12-ին ԼՂԻՄ-ում անցկացվեց բնակչության նոր հաշվառում:

Մարդահամարի տվյալներով՝ մարզի բնակչությունը կազմել է 189.1 հազար մարդ, որից 145.5 հազարը կամ 76.9 տոկոսը հայեր էին,⁴ 40.7 հազարը կամ 21.5 տոկոսը՝ ադրբեջանցիներ, 1.9 հազարը կամ 1.0 տոկոսը՝ ռուսներ և 1.0 հազարը կամ 0.5 տոկոսը կազմել են այլ ազգերի ներկայացուցիչներ:⁵ Ինչպես երևում է տվյալներից՝ տասը տարվա ընթացքում (1979-1989 թթ. մարդահամարների ընթացքում) մարզի բնակչու-

¹ НКАО 50 лет в дружной советской семье (1923—1973), Степанакерт, 1973, с. 17.

² Նըվ. աշխ., էջ 45:

³ Մելքունյան Ս., Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, 2005, էջ 53:

⁴ Խորհրդային Ղարաբաղ, 20 հունվարի, 1989:

⁵ СССР в цифрах, Тифлис, 1926, с.4.

թյունը աճել է 16.9 հազարով: Բարձրացավ նաև հայ բնակչության տեսակարար կշիռը՝ 1979 թվականին՝ 123.1 հազար մարդ, 1989թ՝ 145.5 հազար: Դա 1988 թվականի Սումգայիթյան և նրան հաջորդած դեպքերի հետևանքն էր: Ադրբեջանական հայաշատ վայրերից փախստական հայերի որոշ խումբ բնակություն հաստատեց ԼՂԻՄ-ում՝ իր նախկին բնակավայրերում: Այդ պատճառով է 1989 թվականի մարդահամարի տվյալներով մարզի հայ բնակչության տեսակարար կշիռը փոքր-ինչ բարձրացավ:¹ Ասեմք, որ մարդահամարից հետո այդ տոկոսը անկում է ապրել մարզում ադրբեջանցիներով բնակեցված շրջաններում ինտենսիվ բնակարանաշինարարություն իրականացնելու և ադրբեջանցիներով բնակեցնելու հետևանքով:⁶ Հասկանալի է նաև այն պարզ իրողությունը, որ «հայկական հատվածը» ԱդրԽՍՀ և Ադրբեջանական Հանրապետության բնակչության միակ հատվածը չէ, որի հաշվին տասնամյակներ շարունակ իրականացվել է հանրապետության բնակչության «թյուրքացման» քաղաքականությունը: Այս առումով հատկանշական է ԱդրԽՍՀ և Ադրբեջանական Հանրապետության թալիշների մասին պաշտոնական տվյալների պատմությունը:²

1989 թվականի մարդահամարն անցկացվել է դարաբաղյան հակամարտությունը սկսվելուց մեկ տարի անց՝ Սումգայիթում, Կիրովաբադ-Գյանջայում և այլ բնակավայրերում հայկական ջարդերից հետո, ջարդեր, որոնք սադրել են հայերի զանգվածային հեռացումը Ադրբեջանից: Ուստի չի կարելի ճշգրիտ համարել այդ հաշվառման արդյունքները, որոնցում նշված են 390.505 հայեր Ադրբեջանում: Սա են վկայում նաև ադրբեջանական աղբյուրները: Ուշագրավ է, որ «խաղաղ» 1979 թվականին մարդահամարն Ադրբեջանում «հայտնաբերել է» 475.486 հայեր:³

Խոսելով ԼՂԻՄ-ում բնակչության տարաբախշման մասին՝ պետք է նկատել, որ 1989 թվականին տվյալներով՝ բնակչության խտությունը կազմում էր 42.7 մարդ: Համեմատաբար խիտ էին բնակեցված հիմնականում նախալեռնային գոտիները, որտեղ խտությունը հասնում էր 65 մարդու: Ամենից խիտը բնակեցված էր Մարտունու շրջանը (36.2), ամենից նոսր՝ Հադրութի շրջանը (21.3 մարդ):⁴ Այսպես՝ 1979 թվականին այն կազմել է 56.8 տոկոս, իսկ 10 տարի հետո դարձավ 48.3 տոկոս: Կանանց

¹ «Խորհրդային Ղարաբաղ», 20 հունվարի, 1989:

² Марджанян А., Азербайджанская статистика о численности талышей и прочих национальностей, - В сб. Введение в Историю и Культуру Талышского Народа. Под ред. проф. Г. Асабяна, Ереванский Государственный Университет, Ереван, 2011, с. 29-36.

³ http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_79.php?req=7

⁴ Ամիրջանյան Թ., Արզումանյան Վ., Լեռնային Ղարաբաղի աշխարհագրություն, Ստեփանակերտ, 1994, էջ 56:

տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր քանակում կազմել է 51,8 տոկոս: 1989թ. մարդահամարի տվյալներով արտադրության մեջ զբաղվածների ընդհանուր թվում բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցողները կազմել են 70577 մարդ կամ ամբողջի 92 տոկոսը:¹

Սակայն արդարացի կլինի նշել, որ Ղարաբաղյան շարժման, ԽՍՀՄ փլուզման, Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի կողմից հրահրված պատերազմի, ԼՂՀ հռչակման հետևանքով երկրում ստեղծված միգրացիոն անվերահսկելի տեղաշարժերի, քաղաքական, սոցիալ-տնտեսական անկայուն պայմաններում 1989թ. Լեռնային Ղարաբաղում անցկացված վերջին մարդահամարի արդյունքները օբյեկտիվ պատճառներով շատ շուտ կորցրեցին իրենց արդիականությունը և, բնականաբար, չէին կարող արտահայտել ժողովրդագրական պատկերի ճշմարտացիությունը:

Ուշադրություն է արժանի այն փաստը, որ Ադրբեջանական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի հանձնման արդեն առաջին հինգ տարիներին և ԼՂԻՄ ստեղծումից 3 տարի հետո հայ ազգաբնակչության թիվը նվազել է 11-12 հազար մարդով: ԽՍՀՄ-ում անցկացված վերջին մարդահամարի (1989) տվյալներով ԼՂԻՄ-ում ապրում էր 40 հազար 600 ադրբեջանցի, այսինքն՝ ինքնավարության բնակչության ընդհանուր թվաքանակի 21,5 տոկոսը:²

Այսպիսով՝ Խորհրդային Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի գտնվելու տարիներին ադրբեջանական բնակչության տոկոսը 4,9-ից հասել է 21,5-ի (աճի տեմպը՝ 484 տոկոս), իսկ հայ ազգաբնակչության տոկոսը 94,8-ից կրճատվել է 76,9-ի:³

Անառարկելի է նաև այն հանգամանքը, որ եթե Ադրբեջանի գաղութային քաղաքականության հետևանքով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իրավունքները ամենուրեք չոտնահարվեին, նրանք ստիպված չլինեին հեռանալ հայրենիքից, ապա ԼՂԻՄ-ի հայ բնակչության թիվը արդեն 1989թ. 189,1 հազարի փոխարեն կկազմեր շուրջ 500 հազար մարդ:

1988թ.ազգային-ազատագրական պայքարի պատճառով բնակչության կառուցվածքում հայերի տեսակարար կշիռը էապես փոխվեց: 1988թ. բնակչության թիվը կազմում էր 189 հազար մարդ, իսկ 1990թ.՝ 195,2 հազար մարդ, որի 98 տոկոսը հայեր էին:⁴ Արցախի բնակչության թվա-

¹Մելքունյան Ս., Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, 2005, էջ 368-369:

²Մայիլյան Ս., Ստորումներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի միջև հակամարտությունում վերադարձի և դրա այլընտրանքների մասին <http://theanalyticon.com/?p=243>

³Նույն տեղում:

⁴ԼՂՀ սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշները, 1985-1996, Ստեփանակերտ, 1998, էջ 8:

քանակի նման աճը հիմնականում պայմանավորված էր Բաքվից և Ադրբեջանի մյուս շրջաններից հայերի բռնագաղթմամբ:

Համեմատելու համար նշենք, որ եթե 1979թ. մարդահամարի տվյալներով՝ Ադրբեջանում բնակվում էին 475,5 հազար հայեր, ապա նրանցից ավելի քան 300 հազարը 1988-1990թթ. ստիպված եղավ բռնել գաղթի ճանապարհը:¹

Ցավով պետք է նկատել, որ 90-ական թվականներին բնակչության արտաքին միգրացիոն տեղաշարժերի մի մասը, գրանցման համակարգի տեսադաշտից դուրս մնալով, խեղաթյուրել է ժողովրդագրական ցուցանիշների հաշվառումը և վերլուծությունը:

Պատերազմի տարիներին տնտեսությունը կաթվածահար վիճակում էր, իսկ զինադադարից հետո, ինչպես և սպասվում էր, զարգացման խանգարիչ պատճառներից հանդիսացան մարդկային կորուստները: 1991-1994 թվականներին հազարավոր մարդկային կորուստներ եղան, որոնց գերակշիռ մասը աշխատունակ տարիքի տղամարդիկ էին: Ի դեմս նրանց՝ հասարակությունը կորցրեց և՛ սերնդատուներ, և՛ աշխատուժ: Պատերազմի ժամանակ մոտ 66000 բնակիչներ ստիպված տեղահանվեցին իրենց բնակավայրերից: Ջինադադարից հետո Արցախ վերադարձավ 35000-ը: Սակայն հաշվի առնելով, որ նրանց գյուղերը կամ լրիվությամբ ավերված էին, կամ մինչ օրս էլ հակառակորդի տիրապետման տակ են՝ այդ մարդիկ դարձան տեղահանվածներ: 1988-1989 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից ներգաղթեց մոտ 23000 մարդ (Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայ բնակչության 15.8%-ը՝ ըստ 1989 թվականի մարդահամարի տվյալների), և պետությունը կանգնեց փախստականներ ընդունելու, նրանց օթևան և ապրուստի միջոցներ տրամադրելու փաստի առջև:²

Ադրբեջանից Հայաստան փախստականների մի քանի հոսք է եղել: 20 հազարի չափ առաջին խումբը ստիպված էր փախչել 1988-ի փետրվարին՝ Բաքվի մերձակա Սումգայիթ քաղաքում տեղի ունեցած ջարդերից հետո, երբ տեղացի հարյուրավոր հայեր սպանվեցին, և հարյուրավորներն էլ վիրավորվեցին: Փախստականների երկրորդ և ավելի խոշոր ալիքը, որ ի հայտ եկավ 1988-ի երկրորդ կեսին և շարունակվեց մինչև 1989-ի վերջը, ներառեց մոտ 215 հազար փախստական: Երրորդ ալիքը (շուրջ 45 հազար մարդ) հետևանք էր 1990 թվականին Բաքվի կենտրո-

¹ Մելիք-Շահնազարյան Լ., Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1998, էջ 30 և 32:

² Տես՝ ԼԴՀ կառավարությանը առընթեր արխիվ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգ, 26, հունվարի 2010թ. թիվ 21 որոշում:

նական հատվածում տեղի ունեցած բռնությունների:¹

1991 թվականին «Կոլցո» օպերացիայի վերջին փուլի արդյունքում, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզին (ԼՂԻՄ) հարակից Շահումյանի շրջանի (շուրջ 12 հազար մարդ) և Գետաշենի ենթաշրջանի՝ ներառյալ Գետաշեն և Մարտունաշեն (շուրջ 5100 մարդ) գյուղերի հայաբնակ տարածքների բնակիչների մնացած մասը ևս ստիպված եղավ հեռանալ բնօրրանից:² Ըստ տարբեր աղբյուրների՝ 1990 թ. Ղարաբաղում հաստատվել էր մոտ 30.000 փախստական, իսկ զինադադարից հետո, ճշտված տվյալներով, ԼՂՀ տարածքում ապրում էր Ադրբեջանից բռնագաղթած 21.150 մարդ:³

Պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ խիստ նվազեց բնակչության բնական աճը: Այսպես՝ եթե 1993թ. 1000 բնակչի հաշվով ծնվածների թիվը կազմում էր 10,6 մարդ, ապա նույն ժամանակահատվածում մահացածների թիվը 1000 բնակչի հաշվով կազմեց 16,6 մարդ: Համեմատության համար նշենք, որ շարժման նախօրյակին Արցախում ծնվածների միջին տարեկան թվաքանակը 1000 շնչի հաշվով կազմում էր 22,3 մարդ, շարժման տարիներին այդ թիվը կրճատվեց գրեթե 2 անգամ:⁴

Լեռնային Ղարաբաղի բնակչության ընդհանուր թվաքանակը յոթանասուն տարիների կտրվածքով՝

Տարիներ	Ընդամենը, հազ. մարդ	Այդ թվում		Բնակչության ընդհանուր թվաքանակը տոկոսներով	
		քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական
1926	125.3	8.3	117.0	6.6	93.4
1939	150.8	15.9	134.9	10.5	89.5
1959	130.4	27.0	103.4	20.7	79.3
1970	150.3	57.3	93.0	38.1	61.9
1979	162.2	70.1	92.1	43.2	56.8
1989	189.1	97.8	91.3	51.7	48.3

¹ Պողոսյան Գ., Ավագյան Գ., Փախստականների սոցիալական ադապտացիան, Երևան, 1996, էջ. 5-7:

² Ա. Այունց, Հարկադիր տեղաշարժը ղարաբաղյան հակամարտությունում <http://theanalyticon.com/?p=257>

³ «ԼՂ Հանրապետություն», 02. 04. 1995:

⁴ ԼՂՀ սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշները, 1985-1996, Ստեփանակերտ, 1998, էջ 8:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ Ադրբեջանի վարած էթնիկ գտումների քաղաքականությունը, ռազմական գործողությունները և սոցիալ-տնտեսական իրավիճակի վաթարացումը մեծ հետք թողեցին բնակչության ընդհանուր թվի և ծննդի մակարդակի, բնակչության տարիքային կազմում տեղի ունեցող տեղաշարժերի վրա: Դա հանգեցրեց սոցիալ-տնտեսական նոր պայմանների վերաճմանն ու վատթարացմանը և բնակչության «ծերացմանը»: Բանն այն է, որ Լեռնային Ղարաբաղի բնակչության զարգացման օրինաչափությունները ձևավորող գործոնների դերը, դրանց բնույթի փոփոխության և մի շարք նոր գործոնների ձևավորման ընթացքը, մասնավորապես շրջափակումները, Արցախի ողջ տարացքում լայնամասշտաբ պատերազմական գործողությունները, տնտեսական ու էներգետիկ ճգնաժամը, անժամանակ մասնավորեցումները, հապշտապ սեփականաշնորհումները և մեծ չափեր ստացած պարտադրված արտագաղթը հանգեցրին բնակչության ընդհանուր թվաքանակի և ծննդի նվազմանը:

Демографическая картина Нагорного Карабаха в свете политического давления Азербайджана (1923-91)

Саркис Асатрян

Резюме

В статье рассматривается картина демографического процесса в НКАО, которая была насильственно объединена с Азербайджанской ССР в период с 1921-1991 гг. Регион был подвержен различным репрессиям со стороны государственной машины Советского Азербайджана, что привело к постоянному сокращению численности населения армян в регионе, ухудшению социально-экономической ситуации, "старения" населения.

Тем не менее, факты и цифры, представленные в статье, еще раз доказывают очевидное преобладание армянского населения на своей исторической родине.

Demographic Picture of Nagorno-Karabakh in the Light of Political Pressure of Azerbaijan (1923-91)

Sargis Asatryan

Summary

The article studies the picture of demographic process in NKAO, which was forcibly united with Azerbaijani SSR in the period of 1921-1991. The region was subject to various repressions by the state machine of soviet Azerbaijan, which brought to constant depopulation of Armenians in the region, worsened the social-economic situation and, resulted in "aging" population.

Nevertheless the facts and figures represented in the article once again prove the evident preponderance of the Armenian population in their historical homeland.

**ՍՓՅՈՒՔԻ ԴԵՐՆ ԱՐՑԱԽԻ ՆՈՐԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ¹**

Վաչիկ Հարությունյան

ԱրՊՀ ասպիրանտ

Սփյուռք երևույթն անցել է եզրույթաբանական ձևակերպման մի քանի փուլերով: Ի սկզբանե սփյուռք (դիասպորա) եզրույթը (հուն. diaspora-ցրում) նշանակում էր «Բաբելոնյան գերությունից հետո (մ.թ.ա. 586 թ.) Պաղեստինից դուրս տարածված հրեաների ամբողջությունը: Աստիճանաբար այդ եզրույթը սկսեց կիրառվել նաև իրենց բնակության նոր շրջաններում ազգային-մշակութային փոքրամասնության կարգավիճակում գտնվող այլ կրոնական և էթնիկական խմբերի համար»²:

Սույն հոդվածի շրջանակներում նպատակ ենք ունեցել ներկայացնել Արցախի զարգացման գործում սփյուռքի ներդրումը և Հայաստանում ու սփյուռքում առկա բացասական երևույթները, որոնք խարխլում են «Եռամիասնության» հիմքերը:

20-րդ դարի սկզբին տեղի ունեցած երկու կարևորագույն իրադարձությունների՝ Առաջին աշխարհամարտի և Հայոց Մեծ եղեռնի հետևանքով ձևավորված ու հետագա տասնամյակներում որակական ու քանակական զգալի փոփոխությունների ենթարկված հայկական սփյուռքն իր զարգացման բոլոր փուլերում էական ներդրում է ունեցել թե՛ խորհրդային Հայաստանի, և թե՛ Հայաստանի երրորդ հանրապետության տնտեսական, մշակութային, սոցիալական, գիտական, կրթական կյանքում ու մասամբ նաև պետականակերտման գործընթացում:

Արցախյան շարժման ու ադրբեջանա-հայկական պատերազմի արդյունքում պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան ծայրամասում կազմավորված հայկական երկրորդ պետությունը՝ Արցախի Հանրապետությունը, իր կայացման առաջին իսկ օրերից ի զորու չէր ինքնուրույն լուծելու նորանկախ պետության առջև ծառայած բազմաթիվ խնդիրները, ուստի նա ստիպված էր ապավինվել մայր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության ու աշխարհասփյուռ հայության աջակցության վրա: Այս երևույթը միջազգային հարաբերություններում եզակի չէ, ու այն օրինաչափ է համեմատաբար համախմբված սփյուռք ունեցող որոշ ազգերի համար:

¹ Հոդվածն ընդունված է 20.11.13:

² Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ պատմության ամբիոնը:

² Советский энциклопедический словарь, - Москва, 1992, - С. 393.

Սակայն խնդիրն այն է, որ ի սկզբանե ճիշտ չգնահատվեց սփյուռքի ներուժն, ու հաճախ նրա հնարավորությունները գերազնահատվեցին: Նման պայմաններում, իհարկե, հնարավոր չէր լուրջ արդյունքների հասնել: Այս համատեքստում հարկ է մեջբերել 1999 թ. գարնանը Յեռավոր Արևելքի երկրներ կատարած այցից հետո ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի խոսքը. «Ափսոս, որ Հարավային Կորեայում հայեր չեն ապրում: Շատ լավ կլիներ, որ այդ երկրում էլ հայեր ապրեին»¹: Արտգործնախարարի այս անկեղծ հայտարարությունը մասամբ բացատրվում է պարզ գերատեսչական շահով: Բայց չէ՞ որ հայերը Հարավային Կորեա կարող են արտագաղթել կամ Հայաստանից՝ նվազեցնելով հայրենիքի ազգաբնակչության թիվը, կամ արդեն փոքրիշատե կազմակերպված համայնքներ ունեցող այլ երկրներից՝ թուլացնելով հայ ավանդական գաղթավայրերը՝ զուգահեռաբար նաև առավել բարենպաստ պայմաններ ստեղծելով ուժացման համար: Նույն միտքը լայնորեն տարածված է նաև հայկական սփյուռքում: Մասնավորապես, հայտնի մտավորական, Վենետիկի համալսարանի պրոֆեսոր Լևոն Ջեքիյանը նշում է. «Եթե նույնիսկ Սփյուռք չունենայինք՝ բաղձալի կըլլար, որ Սփյուռք մը ստեղծեինք: Քանի վրացիի որ հանդիպած եմ, զգացած եմ իրենց մեջ ցավ մը, գրեթե «նախանձ» մը (բարի կամ ոչ՝ ըստ անձին), որ իրենք Սփյուռք չունին... Այս չի նշանակեր, որ իյնանք մյուս ծայրահեղության մեջ, թե Հայաստանը պարպենք, որ Սփյուռքը զորացնենք»²: Նա համաձայն չէ, որ «սփյուռքային իրավիճակը ըմբռնվի լոկ իբր հայրենիքե և հողե զրկում, լոկ իբր անցման շրջան մը, սոսկ ժխտական հղացումներով, առանց որևէ դրական բովանդակության: Ներկայիս, ինչ որ զգալիորեն կնշմարվի Սփյուռքի մտավորականության բավական ընդարձակ մեկ հատվածին մեջ, խորացումի շարժում մըն է՝ ի խնդիր Սփյուռքի դրական արժեքներուն, դրական մտա-հղացումին ու դրականորեն՝ իբր այդ ապրումին»³:

ՀՀ արտգործնախարարի և վենետիկցի պրոֆեսորի այսպիսի անվերապահորեն դրական տեսակետը սփյուռքի մասին մասամբ արտահայտում է ժողովրդային մտայնության մեջ վաղուց արմատավորված մակերեսային մտապատճենը (ստերեոտիպ), որը, վերջին հաշվով, հայ քաղաքական մտքի երկարատև բացակայության հետևանք է:

Ավելին՝ գնալով հաճախակի կարելի է լսել մի նոր, չափազանց վտանգավոր տեսակետ, որով Հայաստանի՝ հայության կյանքում ունեցած տե-

¹ Այվազյան Ա., *Հիմնատարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի, Մասն 1.-երեւան, 2003, էջ 127*
² Վենետիկյան միջանվագ, *Աշխատասիրությամբ՝ Ռուզան Ջաքարյանի, Երեւան, 2000, էջ 107:*
³ Նույնի, էջ 94:

ըը, կշիռն ու դերակատարումը թերագնահատվում են, հայրենիքը և ազգային պետականությունը համարվում են երկրորդական, իսկ հայերի ցրված և անորոշ նպատակներով գոյատևումը՝ առաջնային:

Սփյուռքը, բնականորեն, մշտապես ծփում-տատանումի մեջ է. մասամբ՝ օտարացման-ծուլման ընթացքում, մասամբ էլ՝ հայ հավաքական կյանքն ամրացնող ու հարստացնող աշխատանքներում: Սփյուռքի մի մասը, ցավոք, անխուսափելիորեն ձուլվում-կորչում է օտար ազգերի մեջ, իսկ մյուս՝ հայրենասեր հատվածին առայժմ հաջողվում է ներգրավել ու մասնակից դարձնել ազգային կյանքին: Յետևաբար սփյուռքը հայության մեծ ներուժն է ու միաժամանակ ամենահեղհեղուկ հատվածը, և սփյուռք ունենալը բավականին պարտավորեցնող է: Այս հանգամանքը հաճախ է անտեսվում, որն էլ բացասաբար է ազդում այսպես կոչված «եռամիասնության» ապահովման վրա:

Մյուս կարևորագույն խնդիրը, որին պետք է անդրադառնալ, թերևս, հայ ժողովրդին այնքան բնորոշ տեղայնական շահերի գերագնահատումն ու մասնատվածությունն է, որն առավել ցավալի է դրսևորվում սփյուռքում: Այս երևույթը հայկական սփյուռքին բնորոշ է իր կայացման հենց սկզբից:

Ի հիմնավորումն վերոնշյալի՝ մեջբերենք ժամանակին ՅՅԴ-ի և հայ ավանդական մյուս կուսակցությունների գործունեությանն անդրադարձած Գարեգին Նժդեհի խոսքերը. «Մեր ժողովուրդը ոչ միայն քաղաքականապես խաբված է, այլև բարոյապես զրպարտված Եվրոպայում և Ամերիկայում: Այս տեսանկյունից՝ Դաշնակցությունը՝ որպես հզոր գաղութային կազմակերպություն, ունի ամենամեծ մեղքը: Այն, ինչն արտասահմանում կոչում են հայկական քարոզչություն, ոչ այլ ինչ է, քան գթասրտություն աղերսող լալկան նվնվոց, որն արտասահմանացիների մոտ առաջացնում է լոկ խղճահարություն և շարունակ աճող արհամարհանք»¹:

Զնայած բացթողումներին ու առկա խնդիրներին, այնուամենայնիվ, անժխտելի է հայկական սփյուռքի ներդրումն Արցախի զարգացման գործում: Սփյուռքահայ բազում անհատներ, կազմակերպություններ, միություններ, կուսակցություններ, հիմնադրամներ իրենց հայրենանվեր ներդրումն են ունեցել Արցախում: Ստորև ներկայացնենք դրանցից մի քանիսին:

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՅԲԸՄ, Armenian General Benevolent Union) հիմնադրվել է 1906 թ. Կահիրեում՝ հայտնի ազգային գործիչ Պողոս Նուբարի և եգիպտահայ համայնքի ականավոր ներկայացուցիչներ Յագուբ Արթինի, Երվանդ Աղաթոնի, Նազարեթ Տաղա-

¹ Գ. Քաջագունի, Նշխարներ. Գարեգին Նժդեհ, Երևան, 2002, էջ 19:

վարյանի, Գրիգոր Եղիայանի և այլոց կողմից՝ հայրենաբնակ հայ ժողովրդի հոգևոր, մշակութային ու տնտեսական զարգացմանը նպաստելու նպատակով: ԴԲԸՄ-ի անմիջական նախաձեռնությամբ 2004 թ. ստեղծվեց Ղարաբաղի կամերային նվագախումբը¹: 2011 թ. «Ֆրոլֆուլ Արմենիա» հիմնադրամը՝ արգենտինահայ բարերար պարոն Էդուարդո Էռնեսկյանի նախաձեռնությամբ ու Հայկական բարեգործական ընդհանուր միության և ԼՂՀ կառավարության հետ համատեղ, սկիզբ դրեցին ՆՈՒՌ (Նոր ուսումնական ռազմավարություն) ծրագրին Արցախում: Ծրագրի նպատակն է Արցախի միջնակարգ դպրոցների 1-4-րդ դասարանների աշակերտներին և նրանց ուսուցիչներին ապահովել հատուկ կրթական նպատակներով ստեղծված ՄՕ լաբորատորիայի համակարգիչներով և համացանցով: 2013 թ. մայիսի դրությամբ՝ 4403 աշակերտներ ապահովվել են լաբորատորիայով, որի շնորհիվ ստեղծվել են հավասար հնարավորություններ բոլորի համար, ու նոր տեխնոլոգիաները ներգրավվել են դպրոցական ամենօրյա դասերում²:

Առանձնապես տպավորիչ է «Հայաստան» համահայկական հիմնադրամի (ՀՀՀ) գործունեությունը Արցախում: Այսօրվա դրությամբ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Հայաստանում ու Արցախում իրագործված ծրագրերի ընդհանուր գումարը կազմում է ավելի քան 235,800,000 ԱՄՆ դոլար³: 1995-1999 թթ. հիմնադրամի գլխավոր ծրագիրը «Գորիս-Ստեփանակերտ» ավտոմայրուղու (64 կմ) շինարարությունն էր: 2000-2009 թթ. գլխավոր ծրագիրը ԼՂՀ շրջաններն իրար կապող «Հյուսիս-Հարավ» ավտոմայրուղու (170 կմ) շինարարությունն է, իսկ 2009-2012թթ.՝ Ստեփանակերտի հանրապետական հիվանդանոցի կառուցումը:

Հայ օգնության միությունը (ՀՕՄ, անգլերեն՝ Armenian Relief Society) կանանց բարեգործական կազմակերպություն է: 1998 թվականից ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի (ECOSOC) անդամ է: Հիմնադրվել է 1910 թվականին՝ ՀՀԳ գործիչ Է. Ակունու (Խաչատուր Մալունյան) ջանքերով, ԱՄՆ-ի հայ կանանց տարբեր կազմակերպությունների միավորմամբ և կոչվել ՀՀԳ Կարմիր Խաչ: 1946 թ. պատգամավորական ժողովի որոշմամբ կազմակերպությունը վերանվանվել է Հայ օգնության միություն (ՀՕՄ): ՀՕՄ-ի գործունեությունը ընթացել է առողջապահական, սոցիալական և կրթական-դաստիարակչական ոլորտներում⁴:

¹ <http://www.agbu.am/am/project-programs-2/2013-07-29-08-30-30/2013-07-30-06-01-50/aknark-ko/1386-nkr-kamerayin-nvagaxumb-13>

² <http://www.agbu.am/am/project-programs-2/2013-07-29-08-30-30/2013-07-30-06-55-39/aknark-nur/1388-nur-2013-arm>

³ <http://www.himnadram.org/index.php?lang=2&id=4>

⁴ <http://www.arsarmenia.org/index.php?act=history&langs=am>

1996 թվականից Արցախում գործում է Արցախի ՀՕՄ-ը, որը հիմնել է «Սոսե» մանկապարտեզների ցանց Ստեփանակերտ, Այգեստան, Ավդուռ, Քարինտակ, Հաղորտի, Աշան, Շուշի և այլ բնակավայրերում:

Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ, անգլերեն՝ Fund for Armenian Relief) ստեղծվել է 1988 թ. Սպիտակի երկրաշարժից անմիջապես հետո՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի նախաձեռնությամբ: Սկզբնապես կոչվել է Հայաստանի վերականգնման առաջնորդարանի ֆոնդ (ՀՎԱՖ): 1992 թվականից՝ Հայ օգնության ֆոնդ: Արցախին օգնելու նպատակով 1997 թ. ՀՕՖ-ը մասնաճյուղ է բացել Ստեփանակերտում: Մասնաճյուղի միջոցով բժշկական պարագաներ ու գրենական պիտույքներ են տրամադրվել Արցախի բուժփիմնարկներին ու դպրոցներին: ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության տրամադրած 15 միլիոն դոլար դրամաշնորհով ՀՕՖ-ը 2002 թ. հոկտեմբերից ձեռնամուխ է եղել «Մարդասիրական օգնություն Լեռնային Ղարաբաղին» լայնածավալ ծրագրի իրագործմանը, որն ընդգրկում է շինարարության, առողջապահության, ջրային համակարգերի վերանորոգման և այլ ոլորտներ¹:

Միացյալ հայկական ֆոնդը (ՄՀՖ, անգլերեն՝ United Armenian Fund) բարեգործական կազմակերպություն է: Հիմնադրվել է 1989 թ. Լոս Անջելեսում: 1989 թվականից ի վեր ֆոնդը Հայաստան և Արցախ է հասցրել շուրջ 350 միլիոն դոլարի մարդասիրական օգնություն²: Սկզբում կազմակերպությունն առանձնակի կարևորություն է տվել դեղորայքի և բժշկական սարքերի մատակարարմանը: Սակայն ժամանակի ընթացքում, ելնելով Հայաստանի և Արցախի տնտեսական կացության թելադրանքից, ընդլայնել է գործունեության ասպարեզը (համակարգիչներ, կապի միջոցներ, գյուղատնտեսական և կրթական պիտույքներ հայաստանյան և արցախյան հաստատությունների համար):

1921 թ. Նյու Յորքում Միհրան և Ջաբել Կարագյոզյանների կողմից հիմնված Հովարդ Կարագյոզյան հաստատությունը (ՀԿՀ, կոչվում է նաև «Հովարդ Կարագյոզյան» հիշատակի ընկերակցություն) իր ներդրումն է ունեցել Արցախի առողջապահության ոլորտում, մասնավորապես ակնաբուժության բնագավառում:

Հայաստանյայց ավետարանչական եկեղեցին (կոչվում է նաև Հայ ավետարանական եկեղեցի) քրիստոնեության երեք հիմնական ուղղություններից մեկի՝ բողոքականության հայ հետևորդների եկեղեցին է: Կազմավորվել է 1846 թ.՝ Կ. Պոլսում: Հայ ավետարանական եկեղեցիների ավե-

¹ «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 687:

² Նույնի, էջ 720:

տարանչական գործունեության կազմակերպիչը և գործադիր մարմինը, հայ ավետարանական առաջին և առայժմ միակ միսիոներական կազմակերպությունն Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցությունն է (ՀԱԸ): Ընկերակցությունն իր ծրագրերը ՀՀ-ում և Արցախում իրականացնում է Ֆրանսիայի «Հույս Հայաստանի համար» կազմակերպության սերտ համագործակցությամբ: Ծրագրերն ունեն երկու ուղղվածություն՝ բարեսիրական ու ընկերային և կրթական ու դաստիարակչական: ՀԱԸ կարևոր խնդիրներից են նաև գյուղատնտեսության, շինարարության, կրթության բնագավառներում ՀՀ-ին և ԼՂՀ-ին աջակցելը:

Այսպիսով՝ 20-րդ դարասկզբի քաջածանոթ ողբերգական իրադարձությունների հետևանքով կազմավորված հայկական սփյուռքը նոր խթան հանդիսացավ հայ ժողովրդի պատմական զարգացման ճանապարհին: Չնայած հայոց արժեհամակարգում նշնարվող ճգնաժամային երևույթներին՝ արդի շրջանում հայությանը հաջողվել է համատեղ ուժերով ձեռնամուխ լինել պետականակերտման գործընթացին, որի համար վառ ապացույց են հանդիսանում Արցախում ունեցած չափավոր, բայց կայուն ձեռքբերումները, որոնք առանց սփյուռքի օժանդակության անհնարին կլինեին:

Роль диаспоры в решении насущных проблем республики Арцах.

Вачик Арутюнян

Резюме

В статье рассматривается вопрос кризисных явлений в армянской диаспоре, наблюдаемых в настоящее время и их влияние на процессы, происходящие на Родине, а также повествуется о патриотической деятельности компаний, союзов, фондов и братств диаспоры в НКР.

The Role of Diaspora in the Sefflement of the Problems of Republic of Artsakh

Vachik Harutyunyan

Summary

The article touches upon the newly emerging critical phenomena and their influence it present, their influence on the processes in the Motherland, as well as the patriotic activity of various companies, unions, funds and parties of Diaspora in NKR.

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ՆՈՐԱՆԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԵՎ (1990-2001թթ.)¹

Էդուարդ Պողոսյան

Դոցենտ

Երևանի Խ. Աբովյանի անվան Հայկական
պետական մանկավարժական համալսարան

Անկախացումից հետո բավականին հակասական հարաբերություններ ձևավորվեցին Թուրքիայի հետ:

Ըստ էության Թուրքիայի հետ Հայաստանի ուղղակի հարաբերությունների զարգացումը հանգեցրեց դրանց սրմանը: Այդ ամենի պատճառները պետք էր որոնել թե պատմական ոչ վաղ անցյալի և թե նորագույն շրջանում Լեռնային Ղարաբաղի հակամարտության առումով Թուրքիայի բռնած բացահայտ հակահայկական դիրքորոշման մեջ: Հենց սկզբից էլ թուրքական կողմի՝ առաջին հայացքից նույնիսկ դրական դիրքորոշումների ձևակերպումները համենայն դեպս հայ մարդու համար բացահայտ ցինիզմի տարրեր էին պարունակում: Այսպես՝ բազմաթիվ էին դեպքերը, երբ թուրքական պաշտոնական շրջանակների ներկայացուցիչները, էրզիր կորցրած և այն վերագտնելու անխոնջ փափագով ապրող ժողովրդին արտահայտելով Թուրքիայի պաշտոնական շրջանակների տեսակետը, գրեթե նույնությամբ կրկնում էին. «Մենք լիովին բավարարված ենք այն սահմաններով, որոնք գոյություն ունեն մեզանում»²:

Թուրքական քարոզչամեքենան անընդհատ պնդում էր, որ իբր Թուրքիան, ճանաչելով Հայաստանը կառուցողական և բացառիկ դրական քայլ էր կատարել հայ ժողովրդի նկատմամբ և, հետևաբար, Հայաստանն էլ իր հերթին նույն կերպ պետք է պատասխաներ Թուրքիայի դրական քայլերին: Մինչդեռ իրականությունը այն էր, որ Թուրքիան անմիջապես ԽՍՀՄ փլուզումից հետո 1991թ. դեկտեմբերին, ճանաչելով Հայկական անկախ պետությունը իր որոշակի սահմաններում, դրանով իսկ նպատակ էր հետապնդում վերջնականապես կանխելու մերթ ընդ մերթ ամենատարբեր մակարդակներով դրսևորվող հայոց տարածքային արդարացի պահանջատիրությունը:

Բնութագրելով նախնական փուլում հայ-թուրքական հարաբերությունները՝ չի կարելի չհանգել այն հետևությանը, որ ՀՀ իշխանությունների

¹ Հոդվածն ընդունված է 15.10.13:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ պատմության ամբիոնը:

² «Հայաստանի Հանրապետություն», 6 փետրվարի, 1992:

որոշ շրջանակներ՝ տարված նորարարական հովերով, որն ուներ նաև իր օբյեկտիվ հիմքերը, հաճախ փորձում էին անտեսել պատմական փորձը, տուրք էին տալիս դրսից ներարկվող կարծեցյալ իրատեսական գաղափարներին: Անկախացման տակավին առաջին իսկ օրերից ՀՀ իշխանությունները հայտարարում էին, որ իրենք իրատեսորեն վարում են բացառապես պահի թելադրանքից բխող արտաքին քաղաքականություն, որ վճռականորեն բացառում են արտաքին քաղաքականության մեջ զգայական ու, ինչպես ՀՀԵ-ական գաղափարախոսներն էին նշում, «ազգային-հայրենասիրական մտայնությունը», որը, ըստ նրանց, դուրս էր պետական գործի տարողությունից¹:

Թուրքական, եվրոպական, ռուսաստանյան լրատվամիջոցները 1991 թվականի դեկտեմբերին հողվածներ էին տպագրել այն մասին, որ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Թուրքիային հասկացրել էր, թե հայկական կողմը պատրաստ է հրաժարվել դարասկզբին օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանությունը հիշատակող ամենամյա սգո միջոցառումներից՝ պայմանով, որ Թուրքիան Հայաստանի հետ հաստատի տնտեսական համագործակցության նպաստավոր պայմաններ, մասնավորապես, Հայաստանին թույլատրվի Թուրքիայի տարածքով բեռնափոխադրումներ անել²:

Եվ իրոք ստացվեց մի բավականին զարմանալի իրավիճակ, երբ տակավին անկախացած Հայաստանում իշխանությունների ջանքերով գնալով թուլանում էր հայ դատի պաշտպանությանն ուղղված քաղաքական գործընթացների թափը: Այսպես 1993 թվականի ապրիլ-քսանչորսյան հերթական երթը կրում էր ծայրահեղ անկազմակերպ բնույթ: Ավելին, թատերական հրապարակին հարակից տարածքում, ուր ամենամյա սգո երթից առաջ ընթանում էր հանրահավաք, կարծես օրվա խորհրդին անհաղորդ, աշխուժով ծավալվել էր «նոր կյանքի» յուրօրինակ այցեքարտը դարձած վերնիսաժի առևտուրը: Միաժամանակ թե բացօթյա շուկայի առևտրականների և հաճախորդների և թե՛ դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր սգո երթի մասնակիցների դեմքերին դրոշմված էր ցեղասպանություն ապրած ազգի ներկայացուցչի համար մի անբնական, խորապես անհասկանալի կացության մեջ հայտնվածի շփոթմունքը: Ժամանակի առումով չափազանց կարճատև, ընդամենը հայացքների հանդիպման տևողությամբ, այդ պահը, փաստորեն, իրենով կարծես խորհրդանշում էր հայաստանյան հասարակության գաղափարական բաժանման հնարա-

¹ Սարգսյան Կ., Պետական սկիզբ և ազգային շարունակություն, Երևան, 1999, էջ 140:

² «Հայաստանի Հանրապետություն», 13 դեկտեմբերի, 1991:

վորությունը «նոր օրերի իրատեսական» և ազգային կենսական խնդիրների առաջնայնությունը ընդունող ընկալումների: Հասկանալի է, որ շուկայական տնտեսության պայմաններում դժվար էր իշխանություններին մեղադրել բացօթյա առևտուրը այդ օրը չարգելելու մեջ: Խնդիրը հանրապետությունում այն միջավայրի ձևավորումն էր, որում հայ հասարակության մեջ աստիճանաբար սերմանվում էր քանահրական վերաբերմունք հայ դատի բուն էության նկատմամբ: Եվ, իհարկե, այդ արվում էր իշխանությունների ամենակտիվ մասնակցությամբ և թելադրանքով: Այսպես՝ 1993 թվականին ՀՀ 5-րդ համագումարում ՀՀ նախագահը իր ելույթում մասնավորապես նշել էր. «ՀՀ-ի և ներկա իշխանությունների համար հայ դատն այսօր Հայոց պետականության կայացումն է, Հայաստանի բարգավաճումն ու հզորացումը...»¹: «Այսօր գործ ունենք պատմական պահի հետ և չպետք է կորցնենք պատմության ընձեռած այս հնարավորությունը: Դա վիթխարի կորուստ կլիներ մեր ազգերի ու երկրների համար: Առճակատում մեզ կդարձնի պատմական հակամարտության զերիներ: Մենք պետք է վեր կանգնենք դրանից: Եվ եթե հայկական դեկավարությունը նույն վերաբերմունքը ցուցաբերի մեր հանդեպ, որը մենք ենք դրսևորում հայ ժողովրդի հանդեպ, շուտով դուք կդառնաք բաց սահմանների վկաները և կզգաք, թե ինչպես է բարձրանում ձեր կենսամակարդակը: Սկիզբ կառնի տնտեսական աշխույժ համագործակցություն, ձեր երկիրը կբացվի աշխարհի առջև, և զալիք սերունդները երախտապարտ կլինեն ձեզ բարի կամքի այդ քայլի համար»: Եզրափակող նախադասություններից արդեն պարզ է, որ այս վերջին մեջբերումը ամենևին էլ ՀՀ հերթական համագումարում ՀՀ առաջին նախագահի ելույթի շարունակությունը չէ, չնայած ակնհայտ է արտահայտված երկու տեսակետների տրամաբանական և նույնիսկ ոճաբանական ամենասերտ կապը: Մեջբերումը արված է տակավին 1992 թվականի սկզբին նախկին ԽՍՀՄ-ում Թուրքիայի վերջին դեսպան, արտաքին աշխարհում տասնամյակներ շարունակ թուրքական պետության կենսական շահերը հետևողականորեն պաշտպանած, փորձված դիվանագետ Վուլքան Վուրալի տված հարցազրույցից²:

Հայ դատի այդքան լայն, անեզր սահմանումը ՀՀ իշխանությունների կողմից, ըստ էության, անառարկա էր դարձնում հիմնախնդիրը՝ պարզապես այն վերածելով կարծեցյալ իրատեսության զոհի: Ըստ էության՝ ՀՀ-ական իշխանությունները հայտարարություններ անելով բազմակարծու-

¹ «Հայաստանի Հանրապետություն», 29 հունիսի, 1993:

² Նույն տեղում, 6 փետրվարի, 1992:

թյան, մտքի ազատության անհրաժեշտության մասին, իսկական արշավանք էին սկսել հայ ժողովրդի ազգային կենսական շահերը պաշտպանող քաղաքական ուժերի դեմ: Թվում է՝ նման տեսակետը հիմնավորելու լավագույն և հնարավորինս անխոցելի միջոցը պարզապես այն օրերի քաղաքական վերնախավի անափ ինքնավստահության պայմաններում արտահայտված տեսակետների ուղղակի մեջբերումներն են, հենց որոնց ընդհանրացումն էլ պատկերացում է տալիս այդ շրջանի պետական քաղաքականության ու մասնավորապես Թուրքիայի հետ հարաբերությունների տեսական ակունքների մասին: Շարունակելով ներկայացնել այն օրերին ՀՀ ղեկավար քաղաքական ուժի համագումարում Հայաստանի պետական արտաքին քաղաքականության և հատկապես հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ պետության առաջին դեմքի կողմից ներկայացված ծրագրային դրույթները՝ թվում է՝ կարիք կա արդեն արված ուղղակի մեջբերումներին ավելացնել ևս մի քանիսը, որոնք առավել հստակ կերպով կվկայեն հատկապես Թուրքիայի հետ հարաբերություններում հայ ժողովրդի պատմական ազգային ամենակենսական շահերի, մեղմ ասած, անտեսումը: Լ. Տեր-Պետրոսյանը իր արդեն հիշատակված ելույթում, անդրադառնալով հայ-թուրքական հարաբերություններին, մասնավորապես նշել է. «ՀՀԾ-ն և Հայաստանի ներկա իշխանություններն իրենց առջև մշտապես դրել են միայն իրական և լուծելի խնդիրներ և այսուհետև էլ մտադիր չեն շեղվել այդ գործելակերպից: Պատրանքներն ու սնամեջ քաղաքական բարձունքները միմիայն թունավորել են ազգի հոգին և հոխորտանքների ու սնապարծության թմրադեղով, թերաբժեքության բարդույթով վարակել նրան», այնուհետև բանախոսը, փորձելով ընդհանրացնել խնդրո առարկա հիմնահարցի առումով հայ իրականության խորքային երևույթները, մասնավորապես ավելացրել է. «Հայոց պետականության կայացման, Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման և, ընդհանրապես, ազգային գաղափարախոսության դրսևորման ընթացքում այսօր ընթանում է անհաշտ պայքար քաղաքական մտքի երկու ուղղությունների պատմական իրավունքի վրա հիմնված ավանտյուրիզմի և ռեալ իրականության վրա հիմնված ռացիոնալիզմի միջև: ...Այսօր հայ ժողովուրդը որոշ ընդդիմադիր կուսակցությունների ջանքերով նորից կանգնած է նույն փորձության, նույն երկրորդական առջև, թեև իրականում երկրորդանք գոյություն չունի, քանի որ առաջին տարբերակը մեկընդմիջտ ապացուցել է իր լիակատար սնանկությունը և կործանարարությունը»¹: Հասկանալի է, որ քաղաքական

¹ «Հայաստանի Հանրապետություն», 29 հունիսի, 1993:

ավանտյուրիզմի մեջ ՀՀԸ իշխանավորների կողմից մեղադրվում էր նախ և առաջ ՀՅԴ-ն:

Բերված փաստերը հանգեցնում են միայն մեկ հետևության՝ նորակախ Հայաստանի իշխանությունները հայ դատը, ցեղասպանությունն ու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը փորձում էին դարձնել Թուրքիայի հետ միջպետական քաղաքական առևտրի առարկա: ՀՀԸ-ական իշխանավորների քաղաքական անփորձության արդյունքում դրսից սերմանվող կարծեցյալ իրապաշտությունը վեր էր ածվել նորակախ Հայաստանի արտաքին թատերաբեմում և, հատկապես, Թուրքիայի հետ հարաբերություններում հիմնական սկզբունքի: Հետաքրքիր է, որ հայկական իշխանություններին չէր նախազգուշացնում նույնիսկ այն հանգամանքը, որ Հայաստանին ուղղված իրատեսության կոչերը հիմնականում հնչում էին հենց Անկարայից: Հայտնի ճշմարտություն է, որ հասարակական կյանքը բնապատմական երևույթ է, որում իրենց տեղն ունեն նաև հարաբերությունների զուտ բնական զարգացումները: Այդ առումով, իհարկե չբացարձակացնելով տեսակետը, ընդամենը համամանության սկզբունքի ընձեռող հնարավորություններից ելնելով՝ հիշեցնենք, որ բնության մեջ գայլերը, հենց իրենց բնագոյաին որոշակի գործելաոճով շահելով մարդու կողմից ընտելացված թերևս ամենախելացի կենդանական տեսակի՝ շների վստահությունը, նրանց ներքաշում են իրենց ոհմակի մեջ, դուրս տանում բնակավայրից և այդ դյուրահավատ կենդանիների մտով լրացնում իրենց սննդի չափաբաժինը: Իհարկե, պարզունակություն կլիներ բնական ու հասարակական երևույթների բացարձակ նույնացումը, բայց նաև թվում է՝ չի կարելի կոնկրետ դեպքում անտեսել նաև նրանց ակնառու նմանությունը: Նման գործելաոճը հատուկ է գայլերի բոլոր տեսակներին, նույնիսկ փոքրասիական «գորշ գայլերին»:

Ըստ էության՝ հենց նման իրողության անտեսումն էր պատճառը, որ ՀՀ իշխանությունների ներկայացուցիչները, սկսած 1992 թվականից մինչև 1994 թվականը ներառյալ, գաղտնի, անդրկուլիսյան հանդիպումներ էին ունեցել թուրքական ծայրահեղ աջ «գորշ գայլեր» կուսակցության ղեկավարների հետ, իսկ 1993 թվականին՝ Ֆրանսիայում կայացել էր ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի անձնական հանդիպումը «գորշ գայլերի» ղեկավար Ալփասլան Թուրքեշի հետ, որը յուրաքանչյուր առիթով չէր հապաղում հայտարարել իրենց ցեղակից «ազերիների արյունը հեղող» հայերին ոչնչացնելու անհրաժեշտության մասին: Այսպես՝ թուրքական ծայրահեղ ազգայնական թերթերից մեկում 1993 թվականին զետեղված հակահայկական հերթական հոդվածներից մեկը ավարտվում էր հետևյալ կերպ. «...ապագայում Կովկասում, ներառյալ Հայաստանը, հայերի թիվը, ինչպես

այսօր Անատոլիայում, թանգարանային թիվ պիտի դառնա: Եթե նույնիսկ հայերը գրավեն ամբողջ Ադրբեջանը, դա նրանց վախճանը կլինի»¹:

Թուրքական կողմը համոզման մեթոդը փորձում էր փոխլրացնել հայերին պետական մակարդակով ահաբեկելու գործելաոճով:

Տակավին 1992 թվականի սկզբին Թուրքիայի նախագահ Թ. Օզալը ցինիկորեն բացահայտ կերպով առաջարկել էր «հայերին թեթևակի վախեցնելու» նպատակով որոշակի գործողություններ ձեռնարկել²: Հարկ է նշել, որ հայտարարությունը արվել էր այն բանից հետո, երբ ընդամենը օրեր առաջ Թուրքիան իր որոշ զինվորական կազմավորումներ առաջ էր քաշել դեպի Հայաստանի հանրապետության պետական սահմանը և ձեռնամուխ եղել ինժեներական շինությունների կառուցմանը³: Չնայած թուրքական երրորդ դաշտային բանակի ստորաբաժանումների ծավալումը Հայաստանի սահմանի երկայնքով և Կարսի նահանգում սկսված «Ձմեռ-92» զորավարժությունները թուրքերի կողմից ներկայացվում էին, որպես բանակի նախապես ծրագրված պլանային զորավարժանք⁴, այնուամենայնիվ, հաշվի առնելով տարածաշրջանի ընդհանուր գոյավիճակը՝ այդ և նման այլ քայլեր բավականին սրեցին առանց այն էլ պայթյունավտանգ դրությունը⁵: Թուրքական կառավարական որոշ շրջանների կողմից առաջարկվում էր արգելել դեպի Հայաստան Թուրքիայի տարածքով իրականացվող բեռնափոխադրումները⁶: 1992 թվականի սկզբներին հայ-ադրբեջանական հակամարտության սրման պատճառով Թուրքիան որդեգրեց ավելի կոշտ ադրբեջանամետ դիրքորոշում⁷: Այդ ընթացքում Թուրքիայում զնալով ավելի էին ուժգնացել Ադրբեջանի օգտին միջամտելու պահանջները: Թուրքիայի քաղաքական շրջանակները կառավարությունից պահանջում էին ռազմական, քաղաքական, տնտեսական և այլ միջոցներով սատարել «ադրբեջանցի եղբայրներին»⁸:

Այդ ժամանակահատվածում Թուրքիայում անցկացված հարցումների տվյալներով երկրի ազգաբնակչության շուրջ 40%-ը իշխանություններից պահանջում էր անհապաղ ռազմական միջամտությամբ աջակցել իրենց ազգերի ցեղակիցներին⁹:

¹ «Հայաստանի Հանրապետություն», 5 մայիսի, 1993:

² Նույն տեղում, 12 մարտի, 1992:

³ Նույն տեղում, 22 փետրվարի, 1992:

⁴ Նույն տեղում, 25, 28 փետրվարի, 1992:

⁵ Նույն տեղում, 13 մայիսի, 1992:

⁶ Նույն տեղում, 10 մարտի, 1992:

⁷ Նույն տեղում, 12 մարտի, 1992:

⁸ Նույն տեղում, 26 մարտի, 1992:

⁹ Նույն տեղում, 20 մայիսի, 1992:

Եվ Թուրքիան անցավ կտրուկ գործողությունների: Այսպես՝ 1992 թվականի ամռան չվացուցակից հանվեց Երևան-Չալեպ-Երևան չվերթը թուրքական տարածքով ատրոֆիլիտի իրականացվող թռիչքների ցանկից: Թռիչքները կարող էին իրականացվել, եթե ամեն անգամ թուրքական կողմին համապատասխան դիմում ուղղվեր Հայաստանից: Ընդ որում՝ թուրքական կողմը ամեն մի այդպիսի թռիչքի թույլտվությունը կտար միայն այն դեպքում, եթե ինքնաթիռը պահանջի դեպքում անհապաղ վայրէջք կատարեր Թուրքիայի տարածքում՝ տեղափոխվող բեռը ստուգելու համար¹: Նման որոշման դեմ անմիջապես հայտարարությամբ հանդես եկավ ՀՀ ԱԳ նախարարությունը, որում, հաստատելով Հայաստանի Հանրապետության ձգտումը՝ նորմալացնելու և զարգացնելու Հայաստանի և Թուրքիայի միջև միջպետական հարաբերությունները, շեշտելով, որ թուրքական և ադրբեջանական ինքնաթիռներն ակտիվորեն անարգել կերպով օգտագործում են Հայաստանի տարածքը, կոչ էր անում Թուրքիային վերացնել Հայաստանի նկատմամբ իրականացվող խտրականությունը²: Սակայն հետագայում էլ թուրքական իշխանությունները չէին խորշում դիմել աշխարհի տարբեր մասերից Թուրքիայի տարածքով Հայաստան թռչող ինքնաթիռների թուրքական օդանավակայաններում ստիպողական վայրէջքի և ուղեբեռների մանրազնին ստուգման միջազգային իրավունքի բոլոր ընդունված նորմերը ոտնահարող գործելաոճին³: Հնարավոր պահին Հայաստանին ռազմական հարված հասցնելու համար հող նախապատրաստելու նպատակով թուրքական կողմը Ադրբեջանի հետ մեկտեղ սկսեցին խաղարկել Նախիջևանի խաղաքարտը՝ ստահող լուրեր տարածելով, թե իբր հայկական կողմը խոշորամասշտաբ ռազմական գործողություններ էր սկսել Թուրքիայի հարևանությամբ անկլավային վիճակում գտնվող Նախիջևանի Ինքնավար հանրապետության նկատմամբ⁴: Քանի որ Հայաստանի ուղղակի մասնակցությունը Արցախ-Ադրբեջան ընդհարմանը միջազգային հանրության մոտ ճանաչում չէր գտնում, ապա հենց այդ պատճառով դարաբաղյան հարցում որոշակիորեն կաշկանդված Թուրքիան նպատակահարմար էր համարում Նախիջևանի խաղաթղթի խաղարկումը: Այդ իսկ պատճառով կարելի է լիովին հիմնավորված համարել այն տեսակետը, որ այդ շրջանում Նախիջևանի կողմից ձեռնարկվող սադրանքները մանրամասնորեն ծրագրվել էին հենց Թուրքիայում⁵:

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 326, ց. 9, գ. 45, թ. 49-51:

² «Հայաստանի Հանրապետություն», 21 ապրիլի, 1992:

³ Նույն տեղում, 20 մայիսի, 13 հունիսի, 5 օգոստոսի, 1992:

⁴ Նույն տեղում, 22 մայիսի, 4 հունիսի, 1992:

⁵ Նույն տեղում, 20 մայիսի, 1992:

Թուրքիան Նախիջևանի՝ ըստ էության բաց սահմանով¹ ռազմական մեծամասշտաբ օգնություն էր ցուցաբերում Ադրբեջանին: Տարածաշրջան էր գործուղում իր զինվորական խորհրդականներին, Թուրքիայի տարածքում վարժեցնում ադրբեջանական զինվորականությանը և այլն²:

Այդ նույն շրջանում Թուրքիան փարիսեցիորեն աղերսագին դիմումներ էր հղում համաշխարհային բուլոր հեղինակավոր կառույցներին՝ իբր Զայաստանի ագրեսիայի զոհ դարձած Ադրբեջանին փրկելու կոչերով³:

Ըստ էության՝ 1992 թվականի մայիսի սկզբներին Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիների կրած խոշորամասշտաբ պարտությունները հանգեցրել էին նրան, որ Անկարան հրաժարվել էր, զոնե առերևույթ, ավելի վաղ որդեգրած չեզոքությունից և սկսել Զայաստանին ուղղված կոչերի ձևով ուղղակի սպառնալիքներ տեղալ վերջինիս վրա: Բանը հասավ նրան, որ թուրքական կառավարությունը և քաղաքական ղեկավարները 1992 թվականի մայիսին հայտարարեցին, որ չի բացառվում դարաբաղյան հակամարտությանը Թուրքիայի անմիջական զինված միջամտությունը⁴: Կեղծ հաղորդագրություններ տարածելով Զայաստանի և Նախիջևանի սահմաններում՝ Սադարակ բնակավայրի մոտ իբր տեղի ունեցած թեժ մարտերի մասին՝ Թուրքիան ծավալել էր խոշորամասշտաբ հակահայկական հիստերիա՝ նպատակ ունենալով ձևավորելու հասարակական կարծիք սեփական երկրում և դրանով իսկ համաշխարհային հանրության մոտ փորձել արդարացնել իր միջամտությունը: Եվ հենց այդ պահին էր, որ իր անենավճռորոշ դերակատարությունը ունեցավ հայ ժողովրդի դարավոր բարեկամ Ռուսաստանի և Զայաստանի միջև երկու երկրների կենսական շահերի լիակատար համընկնման վրա ձևավորված ռազմավարական համագործակցությունը:

Մոտավորապես համանման իրավիճակում դեռևս 1974 թվականին՝ ողջ քաղաքակիրթ մարդկության աչքի առջև, մի քանի օրում Կիպրոսիշուրջ 15-ամյա անկախ պետականությունը ավիրած և այդ ոճիրը պարտակած Թուրքիայի զլխին իսկական անպրոպի նման ճայթեց Անկախ պետությունների համագործակցության միացյալ զինված ուժերի, որի անդամն էր նաև ԶԳ-ն, հրամանատար մարշալ Եվգենի Շապոշնիկովի հայտարարությունը այն մասին, որ հայ-ադրբեջանական կոնֆլիկտին ցանկացած պատրվակով որևէ երրորդ երկրի միջամտությունը կարող էր հանգեցնել

¹ «Զայաստանի Զանրապետություն», 25 սեպտեմբերի, 1992:

² Նույն տեղում, 14 հուլիսի, 1992:

³ Նույն տեղում, 20 մայիսի, 4 հունիսի 1992:

⁴ Նույն տեղում, 12 մայիսի, 1992:

երրորդ համաշխարհային պատերազմի¹: Այդ հայտարարությամբ Ռուսաստանը փաստորեն իր բացահայտ հովանավորության տակ առավ նորանկախ Հայաստանի Հանրապետությանը: ԱՊՀ միացյալ զինված ուժերի հրամանատարի հայտարարության մեջ ուղղակիորեն նախազգուշացվել էր թուրքական իշխանություններին, որ թուրքական կողմի՝ Հայաստանին հասցեագրված կոչերը Ռուսաստանի կողմից ընկալվում են որպես դաշնակցի նկատմամբ սպառնալիքներ, և պահանջ էր դրվում հետագայում զերծ մնալ թուրքական կողմի համար լրջագույն հետևանքներով հղի նման քայլերից:

Իհարկե, միանգամայն հասկանալի է, որ նման գործելակերպը բխում էր նաև հենց Ռուսաստանի Դաշնության տարածաշրջանային շահերից: Վերջին հաշվով, հենց նման իրավիճակների համար էին ռուսական կողմի ամենաակտիվ ջանքերով ձևավորվել թե ԱՊՀ-ն և թե նրա միացյալ զինված ուժերը: Հենց դրա համար էին կնքվել ամենաբազմատեսակ երկկողմ ու բազմակողմ համաձայնագրերը դաշնակից երկրների ու մասնավորապես Հայաստանի հետ և այլն: Սակայն խնդրո առարկա ժամանակահատվածում թուրք-հայկական սրված հակամարտության ընթացքում ՌԴ բռնած բացահայտ հայանպաստ դիրքը, որի արդյունքում էլ Հայաստանը հայտնվեց առավել շահեկան կարգավիճակում, թվում է, ավելորդ անգամ շեշտում են աշխարհի հզորագույն և բարեկամ ժողովրդի հետ հայ ժողովրդի տարածաշրջանային ու նաև համաշխարհային չափանիշներով արմատական շահերի կատարյալ հանընկնման բարեբախտությունը: Փաստորեն հայ-ռուսական այդ շրջանում դեռևս ռազմավարական համագործակցության մակարդակում գտնվող փոխգործունեությունը դարձավ այն իրական հիմքը, որը ապահովեց նորանկախ Հայաստանի ազգային կենսական շահերի գերակայությունը տարածաշրջանում՝ դրանով իսկ այդ բնագավառում ևս անրապնդելով հայոց պետական ինքնիշխանությունը:

ԱՊՀ միացյալ զինված ուժերի հրամանատարի հայտարարությունից հետո թուրքերը կտրուկ փոխեցին իրենց տոնայնությունը և սկսեցին հանիրավի մեղադրվածի կեցվածք ընդունել՝ հայտարարելով, որ Ռուսաստանը, փոխարեն մեղադրելու Հայաստանին, չգիտես ինչու, մեղադրանքներ է տեղում Թուրքիայի գլխին և այլն:

Դրանից հետո էլ թուրքերը մերթընդմերթ, հատկապես իրենց ազերի ցեղակիցների՝ հայկական ուժերից կրած ամեն մի հերթական խոշորամասշտաբ պարտությունից հետո, փորձեր էին ձեռնարկում՝ ուժի ցուցադրություն կազմակերպելու հայ-թուրքական սահմանին:

¹ «Հայաստանի Հանրապետություն», 27 մայիսի, 1992:

Այսպես՝ 1993 թվականի ապրիլին՝ Քելբաջարի շրջանում ԼԴՀ զինված ուժերի առաջին իսկ հաջողություններից հետո, Հայաստան-Թուրքիա սահմանագծում կրկին նկատվեցին թուրքական զինուժի և տեխնիկայի զգալի կուտակումներ: Թուրքերի գործողությունները կրում էին բացահայտորեն սադրիչ բնույթ: Կազմակերպվում էին զրահատեխնիկայի ցուցադրական զորախաղեր, ռազմական ուղղաթիռների թռիչքներ, զորքերի ցուցադրական շարժ դեպի սահմանը և այլն¹:

Իսկ նույն 1993 թվականի սեպտեմբերին բանը հասավ Հայաստանի տարածքը պաշտպանող ռուսական սահմանապահ ուղեկալների վրա կրակոցներին:

Ծայր առած միջադեպը հանգուցալուծվեց ռուսական կողմի խիստ նախազուշացումից հետո²:

Թուրքական կողմին, այնուամենայնիվ, հաջողվում էր պարբերաբար կրկնվող Հայաստանի տնտեսական շրջափակման իրականացումը: Չնայած այդ ամենին՝ Հայաստանի իշխանությունները շարունակում էին Թուրքիայի նկատմամբ վարվող բարիդրացիական քաղաքականությունը: Դրա դրսևորումներից էր 1993թ. ապրիլին ՀՀ նախագահի մասնակցությունը Անկարայում Թուրքիայի նախագահ Թ. Օզալի հուղարկավորությամբ³: Այդ այցը բարի կամքի միակ հաղորդագրությունը չէր՝ ուղղված թուրքական վերնախավին: Քննարկվող ժամանակահատվածում ավելի էին աշխուժացել ամենաբազմաբնույթ պատվիրակությունների այցելությունները Թուրքիա, տարբեր մակարդակներով բանակցությունները թուրք պաշտոնյաների հետ և այլն:

Հայաստանի կողմից հավուր պատշաճի ընդունվեց 1992 թվականի աշնանը փոխարինաբար ՀՀ-ին շուրջ 100 հազար տոննա հացահատիկի տրամադրման իրողությունը⁴: Հայաստանի իշխանությունների կողմից այն ընկալվեց որպես հայ-թուրքական հարաբերությունների ծանրության կենտրոնը դեպի բարիդրացիությունը տեղաշարժելուն ուղղված ծանրակշիռ քայլ: Ցավոք, հայ-թուրքական հարաբերություններում դա մնաց որպես այդ շրջանում թուրքական իշխանությունների կողմից ձեռնարկված միակ պոզիտիվ քայլը նորանկախ Հայաստանի նկատմամբ: Միաժամանակ թուրքական կողմը այդ և նույն տարում իր տարածքով Սիրիայից Հայաստան հաց ներկրելու թույլտվությունը⁵ օգտագործում էր միջազգա-

¹ «Հայաստանի Հանրապետություն», 21 ապրիլի, 1993:

² Նույն տեղում, 9 սեպտեմբերի, 1993:

³ Նույն տեղում, 23 ապրիլի, 1993:

⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 168, գ. 470, թ. 1, «Հայաստանի Հանրապետություն», 17 հոկտեմբերի, 1992:

⁵ ՀԱԱ, ֆ. 113, ց. 168, գ. 476, թ. 1:

յին ասպարեզում իր իմիջը բարձրացնելու, նաև հայոց պահանջատիրության դեմ պայքարում նման էժանագին հնարքով հաղթաթղթեր ձեռք բերելու նպատակով: Թուրքերի նման ցուցադրական գործելաոճը մի կարճ ժամանակով շարունակվեց նաև հետագայում¹:

Հայաստանի նկատմամբ Թուրքիայի իրական նպատակադրումները ի հայտ եկան հատկապես երբ թուրքական իշխանությունները որդեգրեցին Եվրոխորհրդին ու Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդին ՀՀ անդամակցությանը խոչընդոտելու հետևողականորեն իրականացվող քաղաքականությունը²: Հայաստան-Թուրքիա տնտեսական բնույթի կապերը սկզբնական շրջանում մեքենայաբար շարունակվում էին որպես նախկինում գոյություն ունեցած ԽՍՀՄ Թուրքիա կապերի շարունակությունը: Ակտիվորեն գործում էր Կարս-Գյումրի երկաթգիծը³, որով հիմնականում իրականացվում էր առևտրաշրջանառությունը երկու երկրների միջև, ակտիվորեն ընթանում էին «Մարգարա» անցման կետի շինարարական աշխատանքները⁴: Էներգետիկ ճգնաժամի պայմաններում թուրքական կողմի հետ համաձայնություն էր ձեռք բերվել նրա տարածքով Հայաստան էլեկտրաէներգիա առաքելու վերաբերյալ և այլն⁵:

Հայ-թուրքական տնտեսական փոխհարաբերությունները սկզբնական շրջանում ակտիվորեն էին զարգանում հատկապես Սևծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) կազմակերպության շրջանակներում: Այդ բազմակողմ կառույցը, ըստ էության, Թուրքիայի նախաձեռնությամբ տակավին 1990 թվականին ձևավորված⁶ միջազգային տնտեսական կառույց էր: ԱԾՏՀ շրջանակներում ՀՀ-Թուրքիա փոխգործունեությունը շարունակվեց նաև 1993 թվականից հետո, երբ թուրքական իշխանությունները միակողմանիորեն փակեցին հայ-թուրքական սահմանը⁷: Ճիշտ է, հետագայում մերթնդներթ կարծեք թե Թուրքիայում օրակարգի հարց էր դառնում Հայաստանի հետ սահմանի վերաբացման խնդիրը, բայց ամեն անգամ էլ այն ուղեկցվում էր հայկական կողմին ուղղված լրջագույն նախապայմաններով, և այդ իսկ պատճառով հիմնահարցը մնում էր չլուծված:

Նույն պատճառով էլ չլուծված էր մնում ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման խնդիրը⁸:

Այդ շրջանից սկսած՝ պաշտոնական Անկարան, որպես Հայաստանի

¹ «Հայաստանի Հանրապետություն», 30 ապրիլի, 1996:

² ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 44, ք. 6:

³ «Հայաստանի Հանրապետություն», 13 նոյեմբերի, 1992:

⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 167, գ. 101, ք. 1-4, գ. 168, գ. 135, ք. 1:

⁵ Նույն տեղում, ֆ. 113, ց. 168, գ. 486, ք. 1-2:

⁶ «Հայաստանի Հանրապետություն», 15 փետրվարի, 1992:

⁷ Նույն տեղում, 21 օգոստոսի, 1992:

⁸ Նույն տեղում, 19 մարտի, 1994, 28 փետրվարի, 23 մարտի, 1995, 13 օգոստոսի, 1996:

հետ նորմալ հարաբերությունների հաստատման հիմնական նախապայմաններ էր առաջադրում հայկական զորամիավորումների անհապաղ դուրս բերումը, այսպես կոչված՝ գրավյալ տարածքներից, հակամարտության կարգավորման գործընթացում Թուրքիայի միջնորդական առաքելությանը և այդ շրջանում Ղարաբաղի համար ծրագրավորված միջազգային խաղաղապահ ուժերում Թուրքիայի մասնակցությանը հայկական կողմի չընդդիմանալը¹: Թուրքիայի կողմից Հայաստանին պարբերաբար ներկայացվող նախապայման-պահանջների առնչությամբ, թվում է, հույժ անհրաժեշտ է համակարգված ձևով անդրադառնալ այդ բնագավառում թուրքական կեցվածքի զարգացումներին: Այսպես՝ սկզբնական փուլում, երբ տակավին դեռ ընթանում էր նորանկախ Հայաստանի միջազգային ճանաչման գործընթացը, Թուրքիան ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և նորմալ առևտրատնտեսական կապերի ձևավորման համար Հայաստանից պահանջում էր հրաժարվել պահանջատիրությունից և ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին սատարելուց: Արցախում առճակատման սրացման շրջանում և հատկապես հայկական ուժերի որոշակի հաջողությունների պայմաններում արդեն թուրքական իշխանությունները ներկայացնում էին Լեռնային Ղարաբաղի հետ կապված քաղաքական պահանջներ՝ անհապաղ հրադարար, սահմանների բռնի փոփոխման անընդունելիություն և այլն: Հայաստանին ու, ըստ էության՝ նաև համաշխարհային հանրությանը պահանջների ներկայացման հաջորդ փուլում, որը հիմնականում հանընկալ Արցախում Ադրբեջանական զինուժի ակտիվ գործողությունների վերսկսման և դրանց ձախողման հետ, թուրքերը, ի լրումն արդեն ներկայացված պահանջների, սկսեցին միջազգային կառույցներում պնդել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացին իրենց ռազմական ու քաղաքական միջնորդության անհրաժեշտությունը:

Թուրքիայի կողմից Արցախյան առճակատմանը անմիջականորեն միջամտելու անսանձ ձգտումը, ըստ էության, տարածաշրջանում թուրքական իշխանությունների կողմից վարվող մարտնչող պանթուրքիզմի քաղաքականության դրսևորումն էր²:

Հասկանալի է, որ Հայաստանին ներկայացված նախապայմանների այս շրջաբաժանումը ամենևին էլ չէր նշանակում, որ Թուրքիան հրաժարվում էր Հայաստանի հետ նորմալ դրացիություն հաստատելու նպատա-

¹ «Հայաստանի Հանրապետություն», 28 փետրվարի, 1995:

² Демоян Г., Карабахский конфликт и Турция, Историко-сравнительный анализ. Диссертация на соискание ученой степени доктора исторических наук, Ереван, 2012, стр. 194.

կով արված նախնական նախապայմաններից՝ քաղաքական շեշտադրում անելով բացառապես դարաբաղյան հիմնահարցի՝ իր համար ցանկալի լուծումների վրա: Դեպքերի հետագա զարգացումները մեկ անգամ չէ, որ ապացուցեցին, որ թուրքական իշխանությունները պահանջատիրությունից և ցեղասպանության ճանաչմանը սատարելուց Հայաստանին հրաժարվելու հարկադրանքը ամենևին էլ չեն հանել ՀՀ-ի հետ իրենց հարաբերությունների զինանոցից: Պարզապես Արցախի հարցը թուրքերին հնարավորություն ընձեռեց մանկրելու և հարցը քաղաքական պայմանների հարթությունից մարդու իրավունքների և համընդհանուր քաղաքակրթական արժեքների հարթություն ճարակորեն փոխադրելու համար¹: Նման նախապայմաններին Հայաստանի պատասխանը մեկն էր՝ Թուրքիա-Հայաստան միջպետական հարաբերությունները չպետք է կախված լինեին երրորդ երկրի հետ կողմերի ունեցած հարաբերություններից²: Ի դեպ, այդ դիրքորոշումը ավելի համապատասխանում էր Թուրքիայի՝ Հայաստանին սահմանակից տարածաշրջանների ազգաբնակչության զգալի զանգվածի ցանկություններին, որոնք էլ ինքնաբուխ կերպով պարբերաբար քայլեր էին ձեռնարկում թուրքական իշխանությունների՝ սահմանը բացելուն հորդորելու նպատակով:

Այսպես, օրինակ՝ 1996 թվականին հայ-թուրքական երկաթուղային հաղորդակցությունը անհապաղ վերաբացելու պահանջով Թուրքիայի կառավարությանը հղված դիմումի տակ ստորագրել էին 320 հազարանոց Կարսի ավելի քան 100 հազար բնակիչներ³ և այլն: Անամպ չէին նաև հայ-թուրքական հարաբերությունները արդեն հիշատակված Սևծովյան տնտեսական համագործակցության ձևաչափում: Հենց սկզբից էլ զուտ տնտեսական հարթության վրա ծավալված փոխհարաբերությունները առաջին հայացքից բավականին աննկատ կերպով վեր էին ածվում քաղաքական բնույթի ամենախիսկական հակամարտության: Եվ, ընդհանրապես, ցանկացած այլ ձևաչափերով հայ-թուրքական առնչությունները ամենավճռական պահին Թուրքիայի կողմից Հայաստանին ներկայացվող քաղաքական պահանջների արդյունքում մտնում էին փակուղի:

Այսպես՝ 1992 թվականի ամռանը Թուրքիայի տնտեսությանը նվիրված՝ Իզմիրում կայացած երրորդ միջազգային կոնգրեսին, թուրքական իշխանությունների հրավերին ընդառաջելով, մասնակցում էր նաև ՀՀ պատվիրակությունը՝ հանրապետության փոխվարչապետ, էկոնոմիկայի

¹ ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 70, ք. 10-13:

² «Հայաստանի Հանրապետություն», 25 հոկտեմբերի, 1995:

³ Նույն տեղում, 13 օգոստոսի, 1996:

նախարար Յ. Բագրատյանի գլխավորությամբ¹: Ձուտ տնտեսագիտական բնույթի ընդգծված համերաշխության մթնոլորտում ընթացած քննարկումներից հետո, երբ արդեն գործը հասավ թուրք-հայկական տնտեսական կապերի ուղղությամբ կոնկրետ իրական քայլերի իրականացմանը, թուրքական կողմը անմիջապես հարցը տեղափոխեց քաղաքական հարթություն՝ որոշակիորեն հայտարարելով, որ իրենք չեն ցանկանում այդպիսի կապեր հաստատել մի երկրի հետ, որն իբր արյուն է հեղում, զրավում տարածքներ և այլն²: Չնայած այդ բոլորին՝ Հայաստանը շարունակում էր թուրքիայի հետ նորմալ հարաբերություններ ձևավորելու իր կառուցողական գործելակերպը, որի ընթացքում թուրքիայի հետ ՀՀ առնչությունների բոլոր ոլորտներում, այդ թվում և միջպետական պաշտոնական հարաբերություններում, ակնառու էին հայկական կողմից արվող զիջումները: Սակայն թուրքական իշխանությունները ունայն գտնվեցին այդ բոլորի հանդեպ: Փաստորեն անտեսելով թուրքիայի կոշտ և անզիջում դիրքորոշումը Հայաստանի հանդեպ՝ ՀՀ իշխանությունները դեռևս հույսեր էին տածում թուրքիայի կողմից պոզիտիվ վերաբերմունքի հնարավորության հարցում և շարունակում էին թուրքիայի հետ մերձենալու ըստ էության անպատասխան գործողությունները³:

Այսպես՝ 1992 թվականի հունիսի երկրորդ կեսին ՀՀ նախագահի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը ժամանեց թուրքիա՝ Սևծովյան երկրների տնտեսական համագործակցության հերթական համաժողովին մասնակցելու համար⁴: Այդ՝ անենաբարձր մակարդակի այցի ընթացքում հայկական կողմը հույսեր ուներ, որ թուրքիայի հետ կստորագրվեին նաև որոշ տնտեսական բնույթի պայմանագրեր, որոնց նախագծերը նախօրոք ներկայացվել էին Հայաստանի կողմից: Այդ դեպքում էլ, երբ գործը հասավ տնտեսական համագործակցությանն ուղղված կոնկրետ գործողություններին, թուրքական կողմը վճռականապես հրաժարվեց դրանից: Հայկական կողմի հարցադրումն այն մասին, թե Հայաստան-թուրքիա հարաբերությունները չպետք է կախման մեջ դրվեն հայադրբեջանական հարաբերություններից, կրկին հանդիպեց թուրքական կողմի «մենք համաձայն ենք, բայց այնտեղ արյուն է հեղվում» կեցվածքին⁵: Արդեն վերը շարադրվածի համատեքստում, թվում է, չենք կարող չանդրադառնալ թուրքական իշխանությունների կողմից հայերին

¹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 168, գ. 190, թ. 1:

² «Հայաստանի Հանրապետություն», 11 հունիսի, 1992:

³ Նույն տեղում, 23 հունիսի, 1992:

⁴ Նույն տեղում, 23 մարտի, 1995:

⁵ ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 70, թ. 10-11:

ներկայացվող նախապայմանների պրիզմայով երևույթների՝ թուրքական կողմի խիստ քաղաքականացված ընկալումը հաստատող թերևս ամենաշատ չարչրկված փաստին: Խոսքը վերաբերում է 1992 թվականի սեպտեմբերին Ստամբուլում կայացած Եվրախորհրդի անդամ երկրների արտաքին գործերի նախարարների հանդիպման ժամանակ¹ ՀՀ արտգործնախարար Ր. Հովհաննիսյանի ունեցած ելույթին և մասնավորապես Թուրքիայում դրա արձագանքներին: Իր՝ ըստ էության թուրք-հայկական հարաբերությունների առումով կառուցողական ելույթում ՀՀ արտգործնախարարը մասնավորապես անդրադարձել էր Թուրքիայի տարածքում դեպի Հայաստան եկող մարդասիրական օգնության արգելափակումներին, տնտեսական փոխգործունեությանն ուղղված հայկական կողմի առաջարկությունները թուրքական իշխանությունների կողմից պարբերաբար մերժելուն, Թուրքիայի կողմից Ղարաբաղի հարցում չեզոքություն չպահպանելուն, միջազգային կառույցներում Հայաստանի անդամակցությանը խոչնդոտելուն և այլն:

Թուրքական կողմին հատկապես զայրացրել էր այն հանգամանքը, որ ՀՀ արտգործնախարարը, իր ելույթում անդրադառնալով հայ-թուրքական առնչությունների պատմության որոշ դրվագների, Ստամբուլը անվանել էր քաղաքի նախկին անունով՝ Կ. Պոլիս, օգտագործել էր ցեղասպանություն բառը, խոսել Պոլսում հայերի մշակութային ներկայությունը հավաստող փաստերի և մասնավորապես Կ. Պոլսանի նախագծով կառուցված Դոլմա Բախչի պալատի մասին, որտեղ հանդիպման մասնակիցների պատվին տրվելու էր ճաշկերույթ և այլն²: Իր ելույթում Ր. Հովհաննիսյանը առաջարկել էր բացել 1915 թվականի հայոց ցեղասպանությանը վերաբերող թուրքական արխիվները և այլն:

Ելույթում ՀՀ արտգործնախարարը մասնավորապես շեշտել էր, որ հայկական կողմը արդեն գնացել էր զգալի զիջման, և ՀՀ նախագահը, չենթարկվելով հասարակական կարծիքի ճնշմանը, արդեն իսկ ցանկանում էր Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել ու սահմանը բացել:

Եվ չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի արտաքին գործերի նախարարը իր ելույթի զգալի մասը նվիրել էր նախապայմաններից և անցյալի պատմական բեռից ազատ հայ-թուրքական հարաբերությունների հաստատման անհրաժեշտության հիմնավորմանը, նրա ելույթը սվիններով էր ընդունվել Թուրքիայում: Թուրքական կողմը այն որակել էր

¹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 168, գ. 338, ք. 1:

² Նույն տեղում ֆ. 326, ց. 9, գ. 44, ք. 6:

որպես «հարձակում թուրքիայի վրա», «ագրեսիվ սադրանք» և այլն¹: Չնայած, որ ավելի քան պարզ էր Հայաստանի՝ դեպի իրեն մեկնած ձեռքը այդուհետ ևս մերժելու թուրքիայի վճռականությունը, սակայն, այնուամենայնիվ հայկական իշխանությունները շարունակում էին իրենց բարի մտադրությունները հավաստող, թուրքական ունկը շոյող մեսիջների հղումը այդ երկրի իշխանավորներին: Այդպիսի քայլ էր նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի կողմից Հայաստանի արտգործնախարար Ր.Հովհաննիսյանին 1992 թվականի հոկտեմբերին իր զբաղեցրած պաշտոնից ազատելը²: Փաստորեն արտգործնախարարի հրաժարականը կասկածից վեր էր, որ հետևանքն էր մեկ ամիս առաջ Ստամբուլում կայացած եվրոպական երկրների արտգործնախարարների հանդիպման ժամանակ թուրքական քաղաքական շրջանակներում նեգատիվ վերաբերմունքի արժանացած նրա ելույթի: Սակայն ինչպես ապացուցեցին հետագա իրադարձությունները՝ թուրքիան Հայաստանի նկատմամբ իր վերաբերմունքը մշակել էր հաստատուն կերպով և երկար ժամանակահատվածի համար ու հայկական իշխանությունների՝ թուրքերին հաճոյանալու ցանկացած փորձ այլևս ի գորու չէր քիչ թե շատ որևէ եական փոփոխություն մտցնելու հայ-թուրքական հարաբերություններում:

Նորանկախ Հայաստանի նկատմամբ թուրքիայի ընդունած կոշտ և հատկապես Ղարաբաղի հարցում անգիջում դիրքորոշումը ամենաչնչին չափով անգամ չմեղմվեց նույնիսկ այն բանից հետո էլ, երբ 1994 թվականի վերջերին ՀՀ իշխանությունները արգելեցին հանրապետության թերևս ամենաազգայնական, հայոց պահանջատիրության, մշտապես ցեղասպանության ճանաչման միջազգայնացման գործընթացների ջահակիրը հանդիսացող, ինչպես նաև Արցախի խնդրում արմատական հայրենասիրական գործելակերպ որդեգրած «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցության գործունեությունը³:

Նույնիսկ թուրքական պաշտոնական լրատվամիջոցները, արձանագրելով, որ Հայաստանի ներքաղաքական անցուղարձի որոշակի հատվածը ուղղակիորեն առնչվում էր հայ-թուրքական հարաբերություններին և պայմանավորված էր դրանք կարգավորելու նպատակով Հայաստանի ղեկավարների ձեռնարկած միակողմանի զիջողական քայլերով, վստահաբար շեշտում էին, որ Հայաստանի ղեկավարությունը հենց թուրքիայի

¹ ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 44, ք. 5-8:

² «Հայաստանի Հանրապետություն», 17 հոկտեմբերի, 1992:

³ «Հայաստանի հանրապետության Պերագույն խորհրդի տեղեկագիր», հ. 23-24 (1075-1076), հեկտեմբեր, 1994:

հետ հարաբերությունները բարելավելու նպատակով էր կասեցրել ՀՀ-ի գործունեությունը¹:

Թուրքական ղեկավարության՝ Հայաստանի հետ պարտադրանքի լեզվով խոսելու պարագայում հայ-թուրքական հարաբերությունների հողմածեծ ծառի վրա հերթական անպտուղ ծաղիկն էր նաև տակավին 1993 թվականի ՀՀ կառավարության կողմից ստեղծված երկու երկրների միջև տնտեսական համագործակցության կառավարման հանձնաժողովը², որը Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների և անմիջական տնտեսական առնչությունների կատարյալ բացակայության պայմաններում դատապարտված էր անգործության: Երկու երկրների միջև որոշ կարգի հարաբերություններ պահպանվում էին Սևծովյան տնտեսական համագործակցության շրջանակներում:

Հայաստանի և Թուրքիայի միջպետական հարաբերությունները խնդրո առարկա ժամանակահատվածում փաստորեն կրում էին անուղղակի բնույթ և հիմնվում էին բացառապես ՀՀ անկախության ճանաչման մասին Թուրքիայի հայտարարության և ՄԱԿ-ի ու ԵԱՀԿ-ի իրավապայմանագրային համակարգի, Եվրոպայում սովորական սպառազինությունների կրճատման պայմանագրի, Սևծովյան տնտեսական համագործակցության 1992 թվականին ընդունված հռչակագրի շրջանակներում ստանձնած փոխադարձ պայմանավորվածությունների վրա³: Ինչ վերաբերում է հայ-թուրքական տնտեսական առնչություններին, ապա դրանք պահպանվում էին բացառապես երկու երկրների որոշակի գործարար շրջանների նախածեռնությամբ: Չնայած երկու երկրների միջև պաշտոնական հարաբերությունների բացակայությանը՝ տարբեր ուղիներով իրականացվող առևտրական կապերի ծավալները, այնուամենայնիվ, զգալի էին և նույնիսկ դրսևորում էին բացահայտ աճի միտումներ:

Այսպես՝ եթե տակավին 1994 թվականին ՀՀ և Թուրքիայի միջև ապրանքաշրջանառությունը կազմել էր հազիվ մոտ 748 հազար ԱՄՆ դոլար⁴, ապա 1996 թվականին այն արդեն հասել էր մոտ 12,3 մլն-ի, 1997 թվականի տվյալներով՝ ապրանքաշրջանառությունը արդեն կազմում էր ավելի քան 45,5 մլն⁵, իսկ 1998 թվականին՝ արդեն մոտ 60 մլն դոլար: 2000 թվականին հայ-թուրքական ապրանքաշրջանառությունը դրամա-

¹ «Հայաստանի Հանրապետություն», 10 փետրվարի, 1995:

² ՀԱԱ, ֆ. 113, ց. 170, գ. 90, թ. 1:

³ «Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի տեղեկագիր», N 18 (1998), 30 սեպտեմբերի» 1991, «Հայաստանի Հանրապետություն», 30 սեպտեմբերի, 1991:

⁴ Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1995, 1996), Երևան, 1998, էջ 180:

⁵ Նույն տեղում (1997, 1998), Երևան, 2001, էջ 447:

կան արտահայտությամբ կազմել էր շուրջ 42 մլն դոլար¹, և Թուրքիան Հայաստանի Հանրապետության ներմուծման մեջ զբաղեցնում էր 8-րդ տեղը²: Ընդ որում՝ Թուրքիայից ներմուծված արտադրատեսակների մեջ հատկապես մեծ քանակություն էին կազմում սննդամթերքն ու թեթև արդյունաբերության արտադրանքները, իսկ Հայաստանից դեպի այդ երկիր էին արտահանվում սև և գունավոր մետաղներ, ինչպես նաև հանրապետության կազմալուծված արդյունաբերության ձեռնարկություններից ապօրինաբար ապամոնտաժված մեծ քանակությամբ սարքավորումներ³:

Ի դեպ Թուրքիայի պարագայում ևս Հայաստանի ներմուծումը մի քանի անգամ գերազանցում էր արտահանմանը:

Այսպես՝ 1999 թվականին Թուրքիայից Հայաստան ապրանքների ներմուծումը դրամական արժեքով մոտ 36 անգամ գերազանցել էր հանրապետությունից արտադրանքի՝ դեպի Թուրքիա արտահանմանը⁴:

Ինչևէ, բերված փաստերը անհերքելիորեն ապացուցում են, որ հայթուրքական տնտեսական փոխներգործությունը ավելի քան օբյեկտիվ ինքնաբերաբար ընթացող երևույթ է՝ պայմանավորված երկու երկրների աշխարհագրական դիրքով, նրանց տնտեսական զարգացումների մակարդակով և այլն: Հայաստանի և Թուրքիայի արմատական տնտեսական շահերից բխող տնտեսական ծավալուն կապերը, սակայն, կասեցվել էին թուրքական իշխանությունների բացառապես քաղաքական դիրքորոշման հետևանքով: Ինչ խոսք, տնտեսական առնչությունների առկայությունը ամենևին էլ չի բացառում գործընկեր երկրների միջև քաղաքական խնդիրների գոյությունը: Գաղտնիք չէ, որ Հայաստանը ևս ուներ քաղաքական խնդիրներ Թուրքիայի հետ: Սակայն հայկական կողմի հետապնդած քաղաքական նպատակները (հայոց ցեղասպանության ճանաչում, Ղարաբաղի հարցի արդարացի լուծում) երբեք էլ չէին դրվում տնտեսական առնչությունների հետ նույն հարթության վրա: Ավելին, հայկական իշխանությունների հետապնդած զուտ քաղաքական բնույթի հիմնախնդիրների՝ ըստ էության երկու կողմերի համար էլ փոխադարձաբար ընդունելի լուծումների հնարավորությունները էլ ավելի էին մեծանալու տնտեսական համագործակցության սերտացման արդյունքում: Այսպիսով՝ կարելի է վստահաբար արձանագրել, որ հայկական կողմի հետապնդած քաղաքական խնդիրները՝ հայոց ցեղասպանության՝ որպես մարդկության դեմ գոր-

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Երևան, 2001, էջ 469:

² Նույն տեղում (1999, 2000), Երևան, 2001, էջ 472:

³ Մելքունյան Ա., Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Երևան, 2002, էջ 219-220:

⁴ Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Երևան, 2001, էջ 469:

ծած ոճիրի դատապարտում, Արցախի հիմնախնդրի արդարացի լուծում և այլն, ըստ էության, որպես քաղաքակրթական բացարձակ արժեքների կոնկրետ դրսևորումներ համընթաց էին շուկայական առաջավոր տնտեսաձևի՝ տնտեսականը քաղաքականից գերադասելու, քաղաքականը ընդամենը տնտեսականից ածանցելու կարևորագույն սկզբունքին: Նրանք ոչ միայն չէին խոչընդոտում հայ-թուրքական տնտեսական զարգացումներին, այլև, հանդիսանալով որպես քաղաքակրթական արժեհամակարգի արտահայտություններ, խորքային առումով նպաստում էին դրանց սերտացմանը: Մինչդեռ նույնը բոլորովին չէր կարելի արձանագրել Թուրքիայի՝ նորանկախ Հայաստանի Հանրապետության նկատմամբ որդեգրած քաղաքականության առումով: Ըստ էության՝ թուրքական կողմի հետապնդած քաղաքական նպատակների հետևանքով բացառվեցին երկու երկրների միջև ակնհայտորեն փոխշահավետ տնտեսական կապերը: Ավելին, Թուրքիան, ըստ էության չգտնվելով Հայաստանի հետ որևիցե ռազմական ընդհարման մեջ, անտեսելով նախ և առաջ իր ժողովրդի տնտեսական. այնքան ակներև շահը, դիմեց վաղուց արդեն մարդկության կողմից վերջնականորեն անարգանքի սյունին գամված՝ դրկից հարևանին տնտեսական բացահայտ շրջափակման ենթարկելու միջոցին:

Այսպիսով՝ փորձելով հնարավորինս օբյեկտիվորեն ամփոփել արդեն վերը շարադրվածը, թվում է՝ կարող ենք իմաստավորելով Հայաստանի անկախացումից հետո ձևավորված հայ-թուրքական առնչությունները՝ ամենայն որոշակիությամբ արձանագրել, որ խնդրո առարկա ժամանակահատվածում ՀՀ-ն հանդես էր գալիս որպես մարդկային հասարակության գերակա արժեքների՝ մարդու իրավունքների ու նախ և առաջ կյանքի իրավունքի, ազգերի ազատ ապրելու իրավունքի հետևողական պաշտպան, կյանքում այդ սկզբունքների կենսագործման համար պայքարող կողմ՝ փաստորեն մարմնավորելով հասարակական առաջադիմությունը: Մինչդեռ թուրքերը, ուրանալով ողջ քաղաքակիրթ աշխարհի կողմից ճանաչված և դատապարտված, Հայ ժողովրդի հանդեպ գործած ցեղասպանությունն ու սատարելով ԽՍՀՄ փլուզման արդյունքում անկախացած Արցախի դեմ ռազմական ագրեսիա սանձազերծած Ադրբեջանին և այդ հողի վրա նորանկախ Հայաստանի Հանրապետության հետ նախապայմանների լեզվով խոսելով, փաստորեն դարձել էին արդի քաղաքակրթական արժեհամակարգի չափանիշներով հետադիմության ջատագով:

Сущность армяно-турецких взаимоотношений после приобретения Арменией независимости (1990-2001 гг.)

Эдуард Погосян

Резюме

Статья посвящена анализу армяно-турецких взаимоотношений во время установления государственного суверенитета Армении. В статье конкретными фактами доказано, что армянская сторона никогда не предъявляла каких либо политических условий Турции для установления с ней взаимоотношений. Между тем, турецкие власти установление нормальных отношений с Арменией всячески связывали с Карабахской проблемой настаивая на односторонних уступках со стороны Армении. А также Турция, как необходимое условие для установления, в первую очередь, экономических отношений с Арменией выдвигала требование отречения Арменией от осуждения геноцида 1915 г. и т.д. В статье показано, что армяно-турецкие взаимоотношения исключительно по вине Турции за очень короткое время крайне обострились. В результате необоснованных политических амбиции Турции пострадали возможные экономические обоюдывыгодные связи между двумя соседними государствами. Более того, турецкая сторона прибегла к давно уже осужденному всем цивилизованным миром допотопному приему полной экономической блокады Республики Армения.

The Essence of the Armeno-Turkish Inter-Relations after the Declaration of Armenian Independence (1990 to 2001)

Eduard Poghossian

Summary

The article analyzes the Armeno-Turkish relations after the establishment of the sovereignty of Armenia. Factual evidence proves that the Armenian side never put forward any political conditions before Turkey for the formation of relations with this state. In the meantime, the Turkish authorities connected the formation of regular relations with Armenia with the Karabakh conflict in every possible way, and insisted on unilateral concessions to be made by Armenia. Besides, Turkey would agree to the formation of economic relations with Armenia on condition that it should abstain from condemning the 1915 Genocide of Armenians, etc. The article shows that within a very short time, the Armeno-Turkish relations seriously aggravated through Turkey's fault. Its unsubstantiated political ambitions caused great harm to the mutually-profitable economic ties that could have possibly been formed between the two neighbouring states. Moreover, the Turkish side made use of an antediluvian mode of action long before condemned by the entire civilized world-it imposed a total economic blockade against the Republic of Armenia.

ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ УРЕГУЛИРОВАНИЯ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА: ИСТОРИЧЕСКИЙ АСПЕКТ¹

Владимир Пономарёв

Кандидат исторических наук, доцент

*Юргинский технологический институт (филиал) Национального
исследовательского Томского политехнического университета*

Переговоры по урегулированию нагорно-карабахского конфликта продолжают уже более 20 лет практически безрезультатно. Причиной тому – неконструктивная позиция руководства Азербайджанской Республики, проигравшей Нагорному Карабаху войну. Оно требует урегулировать конфликт в Нагорном Карабахе в рамках позиции официального Баку, заключающейся в предоставлении Нагорному Карабаху автономии в составе Азербайджанской Республики. В противном случае угрожает возобновлением боевых действий, не скрывая, что конечной целью такого урегулирования должно стать изменение этнодемографического баланса в Нагорном Карабахе путём бесконтрольного заселения края азербайджанскими «беженцами», число которых завышается в разы ².

Согласно мнению политиков в карабахском урегулировании немало дополнительных, а главное – искусственных затруднений созданных со стороны Баку. В первую очередь они связаны с тем, что Нагорный Карабах (НК) не признаётся им более стороной конфликта, всячески отдалается, отстраняется от переговоров.

НК – ядро, сердцевина этого конфликта, не может быть лишь его объектом. Население НК жизненно заинтересовано в разрешении конфликта – несравненно больше, чем остальные жители Азербайджана или Армении. Если большинство этих последних травмированы тем, что конфликт в той или иной мере затронул их бытие, национальную гордость, престиж, чувство справедливости, то для всех жителей НК это вопрос выживания в самом прямом смысле этого слова. Статус НК является главной причиной и основной спорной проблемой этого конфликта ³.

Баку резко свернул прямые контакты со Степанакертом с конца 1993 г. и в ущерб рассмотрению реальных проблем урегулирования затеял многолетнюю процедурную возню, отказывая Нагорному Карабаху в статусе стороны в конфликте и мешая его участию в переговорах. Это противоречит международной практике урегулирования конфликтов (абхазы, приднестров-

¹ Статья поступила 27.05.2013 г.

Рекомендовано к печати кафедрой гуманитарного образования и иностранных языков ЮТИ.

² Пономарёв В., Динамика Нагорно-карабахского конфликта (1988–1994 гг.). Дисс. на соиск. уч. ст. к. и. н., с. 170

³ Нагорный Карабах должен участвовать в переговорах // Азат Арцах («Свободный Арцах». г. Степанакерт), 5 мая, 2012, с. 6

цы, юго–осетины признаются сторонами в конфликте; известны встречи Шеварднадзе – Ардзинба, Лучинский, Воронин – Смирнов, Рахмонов – Нури, Арафат – лидеры Израиля)¹

Первой попыткой посредничества в нагорно–карабахском конфликте стала миссия президентов России и Казахстана Б.Н. Ельцина и Н.А. Назарбаева. В сентябре 1991 г. они провели переговоры с руководством Азербайджанской Республики, Нагорно-Карабахской Республики и Республики Армения, которые закончились безрезультатно²

В январе–феврале 1992 г. урегулирование азербайджано-карабахского конфликта перешло под эгиду СБСЕ – Совещание по безопасности и сотрудничеству в Европе (с 1 января 1995 г. – Организация по безопасности и сотрудничеству в Европе, ОБСЕ)³.

В качестве рабочего органа по урегулированию нагорно-карабахского конфликта в рамках ОБСЕ была создана Минская группа по Нагорному Карабаху, призванная заниматься урегулированием накануне созыва Минской Конференции. В состав группы входят 12 стран, в том числе, Армения, Азербайджан, Россия, США, Франция, Турция и Германия⁴.

Осенью 1992 г. продолжились усилия Минской группы СБСЕ по приостановке военных действий и кровопролития в Нагорном Карабахе.

В.Н. Казимиров отмечает: «В г. Сочи 19 сентября 1992 г. министрами обороны Азербайджана и Армении Рагимом Казиевым и Вазгеном Саркисяном с участием П.С. Грачёва, В.П. Баранникова и Т. Китовани было заключено Соглашение о повсеместном прекращении огня с 26 сентября. Объявлялся «мораторий на все виды военных действий между Азербайджанской Республикой и Республикой Армения по всей линии государственной границы и в районе Нагорного Карабаха сроком на два месяца». Намечался поэтапный отвод вооружённых формирований и всех видов вооружений. Ко дню прекращения огня было условлено обменяться протоколами о механизме отвода формирований и контроле за реализацией договорённостей.

«Подписанты» обратились к правительствам России, Грузии, Беларуси, Украины и Казахстана с просьбой направить наблюдателей для размещения после прекращения огня на государственной границе и на территории Нагорного Карабаха вместе с представителями двух сторон для контроля за выполнением соглашения. Стороны обязались придать группе наблюдателей и представителей сторон контингент военнослужащих для обеспечения их личной безопасности. Было предусмотрено, что по предложению наблюдателей

¹ Нагорный Карабах должен участвовать в переговорах // *Азат Арцах («Свободный Арцах»*. г. Степанакерт), 5 мая, 2012, с. 6

² Казимиров В. *Мир Карабаху. Посредничество России в урегулировании нагорно–карабахского конфликта*. Москва, 2009, с.28, 240.

³ Казимиров В. *Указ. соч.*, с. 35.

⁴ Там же, с. 36.

и при согласии сторон в необходимых случаях вводятся миротворческие силы. Без конкретизации предусматривалось также внести предложения руководителям государств о необходимости проведения ими консультативных встреч для выработки политических решений по урегулированию конфликта.

Ответственность за нарушения соглашения определялась Советом наблюдателей (по два представителя от каждой стороны-наблюдателя). Свой порядок работы этот совет должен был определить сам на первом заседании»¹.

18 февраля 1994 г., при посредничестве Министра обороны РФ П. Грачёва, министрами обороны Азербайджанской Республики, Республики Армения и представителем Армии обороны Нагорного Карабаха в Москве был подписан военно-технический протокол по вопросам урегулирования конфликта².

5 мая в г. Бишкеке – столице Кыргызстана, был выработан и согласован Бишкекский протокол, подписанный представителями трёх сторон конфликта³.

В г. Будапеште, в ходе встречи глав государств-членов СБСЕ 6 декабря 1994 г., был принят документ «Активизация действий СБСЕ в отношении конфликта в Нагорном Карабахе»⁴. В нём признавалось, что конфликтующими сторонами являются стороны, подписавшие 12 мая 1994 г. Договорённость о прекращении огня, – то есть Азербайджан, Армения и Нагорный Карабах.

В сделанном в Праге 31 марта 1995 г. заявлении Председатель ОБСЕ подтвердил «...ранее принятые ОБСЕ решения о статусе сторон, т. е. об участии двух вовлечённых в конфликт государств-участников, а также третьей стороны в конфликте (Нагорного Карабаха) во всём процессе переговоров, включая Минскую конференцию»⁵.

С марта 1994 г. по апрель 1997 г. регулярно (примерно раз в полтора месяца) проводились трёхсторонние переговоры по политическому урегулированию нагорно-карабахского конфликта под эгидой ОБСЕ.

Только в 1996 г. при посредничестве сопредседателей Минской группы от России и Финляндии состоялось восемь встреч между участниками карабахского конфликта. Значительную активность в деле его урегулирования проявляло также руководство России⁶.

¹ Казимиров В. Указ. соч., с. 57-58.

² Митяев В. Карабахский конфликт в контексте международных отношений / Армения: проблемы независимого развития / Под общ. ред. Е.М. Кожюкина: Рос. ин-стратегич. исслед. – Москва, 1998, с. 501-502.

³ Казимиров В. Указ. соч., 345-346

⁴ Казимиров В. Указ. соч., с. 347-349.

⁵ Казимиров В. Указ. соч., с. 353.

⁶ Митяев В. Указ. соч. с.537.

Азербайджан добивался в ходе переговоров признания принципа территориальной целостности в качестве основы переговоров, подтверждая свою готовность предоставить «Нагорно-Карабахскому региону» широкую автономию и обеспечить его населению безопасность. При этом он высказывался за демилитаризацию Нагорного Карабаха или за значительное сокращение его военного потенциала уже на первых этапах урегулирования. Выдвигалось предложение о взаимном отводе войск от границы между Азербайджаном и Арменией.

Нагорный Карабах добивался полноправного участия в переговорах. Власти НКР заявляли, что «...право НКР на независимость подтверждено её военными успехами»¹.

Нагорный Карабах, настаивая на том, что независимость страны не может ставиться под сомнение, давал в то же время понять, что при её признании согласился бы на какие-то государственные связи с Азербайджаном типа конфедеративного союза, но при отсутствии «вертикальных связей», подразумевающих подчинённость властям Баку. Представители Карабаха выдвигали идею «размена территориями»: уход из Агдамского района за передачу Лачинского коридора Карабаху. Возвращение азербайджанцев–беженцев в Шушу они связывали с возвращением беженцев–армян в Баку, Гянджу и другие города Азербайджана. Они заявляли, что не пойдут ни на какое сокращение оборонного потенциала и считают мощные вооружённые силы основным гарантом безопасности Нагорного Карабаха².

С 29 апреля по 2 мая 1996 г. в г. Степанакерте проходила Международная конференция «Роль и место неправительственных организаций в урегулировании конфликтов», организованная Нагорно-Карабахским комитетом Хельсинкской гражданской ассамблеи «Хельсинкская инициатива–92». Участники конференции – представители различных организаций из 10 стран проявили озабоченность в связи с происходящими вооружёнными конфликтами и возникающими в связи с ними последствиями. В принятом Заявлении, в одном из пунктов они решительно заявили «...о готовности содействовать любым процессам и начинаниям, направленным на мирное разрешение конфликтов»³. А также призвали «...все стороны, вовлечённые в конфликт, заинтересованные международные правительственные и неправительственные организации форсировать принятие решений, устраняющих причины и последствия конфликта»⁴.

Россия в своём качестве посредника в урегулировании карабахского конфликта всегда стремилась занимать объективную позицию. Она заинте-

¹ Митяев В. Указ. соч., с.535.

² Там же, с.538-539.

³ Национальный архив Армении (НАА) Ф. 1159. Оп. 3. Д. 76., л.8.

⁴ НАА Ф. 1159. Оп. 3. Д. 76., л.9.

ресована как в развитии дружественных отношений с Азербайджаном, в расширении экономических связей с ним, так и в сохранении и упрочении по существу союзнических (по оценке руководителей обеих стран) отношений с Арменией, являющейся стратегическим партнёром РФ. Именно поэтому интересам России соответствует компромиссное урегулирование карабахской проблемы, удовлетворяющее стремления и потребности всех сторон конфликта, обеспечивающее мирное сотрудничество между ними на длительный период времени¹.

Такое положение дел никогда не устраивало азербайджанскую сторону, которая, вопреки действительности и документам ОБСЕ, трактовала и ныне трактует нагорно-карабахский конфликт как агрессию Армении против Азербайджана с целью оккупации Нагорного Карабаха.

Дэвид Аткинсон, побывавший в НКР осенью 1993 г. заявил в интервью местному телевидению: «Здесь настоящая война, которая каждый день отнимает многочисленные человеческие жизни. Очевидно, что развязал эту войну Азербайджан, и пока не будет она прекращена, Совет Европы не примет его в свой состав. Я считаю, что карабахцы имеют право самостоятельно распоряжаться своей судьбой, прокладывая себе будущее»².

После его назначения докладчиком Парламентской Ассамблеи Совета Европы (ПАСЕ) по Нагорному Карабаху и после принятия ПАСЕ резолюции 25 января 2005 г. в интервью британской ВВС он сообщил, что «Совет Европы признал территориальную целостность Азербайджана. Совет Европы не может признать независимость Нагорного Карабаха. Поэтому принцип «права наций на самоопределение» в случае с Карабахом не может быть применен»³.

При постановке в повестку дня ПАСЕ проекта антикарабахской резолюции члены делегации России в ПАСЕ воздержались от выступлений. При голосовании против резолюции выступила депутат Государственной Думы РФ Н. Нарочницкая: «Азербайджанцев открыто и очень яростно поддерживали турки, а за ними, как и при лорде Пальмерстоне 150 лет назад, стоят англичане. Старый расклад в «восточном вопросе». В Совете Европы всегда двойные стандарты, продиктованные исключительно извечными геополитическими устремлениями: Нагорному Карабаху нельзя самоопределяться, а Косово – можно; Чечне – можно, а Ольстеру, нельзя...»⁴.

¹ Митяев В. Указ.соч. с.552.

² . Интервью Генерального секретаря ПАСЕ Д. Аткинсона телевидению НКР в 1993 г. // Карабахский курьер. Бюллетень Постоянного Представительства НКР в г. Москве. 2005, №1 (12), с.6.

³ Там же

⁴ Интервью с депутатом Государственной Думы Российской Федерации Н. Нарочницкой // Карабахский курьер. Бюллетень Постоянного Представительства НКР в г. Москве. 2005, №1 (12), с.4.

С января 1997 г. сопредседателями Минской группы стали три страны: Россия, США и Франция¹. После апреля, основным способом общения сопредседателей со сторонами конфликта стали поездки в регион с посещением Баку, Еревана, Степанакерта и переговорами на местах с руководством сторон конфликта. Имеющий место де-факто формат переговоров позволил Азербайджану представить дело так, будто переговорный процесс ведётся между Баку и Ереваном, а Нагорный Карабах – это не субъект, а объект переговоров.

Прочное урегулирование должно основываться на том, что Нагорный Карабах и Азербайджан обладают равной международной правосубъектностью. Карабахская сторона готова к компромиссам с Азербайджаном, если последний пойдёт на это, но Карабах не пойдёт на односторонние уступки. В 2000 г. министр иностранных дел НКР Н.Р. Мелкумян констатировала: «Мы готовы сесть за стол переговоров ... но, нельзя требовать, чтобы Нагорный Карабах уступил всё, что завоевал за эти годы»².

«6 февраля 1995 г. официально вступило в силу соглашение между Азербайджаном, Нагорным Карабахом и Арменией об укреплении режима прекращения огня, подписанное также тремя сторонами. В рамках российско-американской Дартмутской конференции по Нагорному Карабаху, проходящей с 2001 г. в трёхстороннем формате Нагорный Карабах – Азербайджан – Армения, в 2005 г. был согласован проект «Рамочного соглашения о мирном процессе» – Дартмутское соглашение», – отметил советник министра иностранных дел НКР Р. Заргарян³.

В то же время, азербайджанская сторона не отказывается от планов решить карабахскую проблему силовым путём, напрямую заявляя об этом:

- «Все должны знать, что наше терпение не безгранично, и Азербайджан любой ценой освободит свои земли»⁴, – такого рода заявления Президент Азербайджанской Республики И.А. Алиев делает в последние годы.

- На пресс-конференции в августе 2006 г. в Баку духовный лидер Азербайджана, глава Управления мусульман Кавказа шейх-уль-ислам хаджи Аллахшукюр Пашазаде сделал предупреждение Армении, что он готов

¹ Казимиров В. Указ. соч., с. 434.

² Интервью с Министром иностранных дел НКР Н.Р. Мелкумян // Вестник Министерства иностранных дел Нагорно-Карабахской Республики, Степанакерт, 2000. №4, с.26.

³ Прорыв в переговорах возможен исключительно после признания независимости Нагорно-Карабахской Республики. Из беседы Рубена Заргаряна, кандидата исторических наук, советника министра иностранных дел Нагорно-Карабахской Республики с корр. «Политком.ру» // Карабахский курьер. Информационно-аналитический бюллетень Представительства НКР в Москве, №1 (26). Февраль 2009, с.18.

⁴ Что думают по поводу решения карабахской проблемы... ...в Баку. Президент Азербайджана Ильхам Алиев // Карабахский курьер. Информационно-аналитический бюллетень Представительства НКР в Москве, 2004, №1 (8), с.4.

объявить джихад для освобождения оккупированных территорий Азербайджана¹.

Такие публичные заявления, в том числе через средства массовой информации, светского и духовного лидеров Азербайджана недопустимы, как с точки зрения гуманитарного международного права², так и уголовного права³.

В Мадриде, в рамках заседания Совета глав правительств ОБСЕ в ноябре 2007 г. представитель и министры иностранных дел трёх стран-посредников – Н. Бернс, Б. Кушнер и С. Лавров – представили основные принципы урегулирования главам МИД Азербайджанской Республики и Республики Армения. Посредники выразили намерение «...продолжать переговоры по основным принципам в 2008 г., ... достичь их ... принятия обоими президентами»⁴.

Азербайджанская сторона многократно предпринимала попытки перенести вопрос урегулирования конфликта в ООН, Совет Европы и иные европейские структуры, а также в Организацию Исламская конференция (ОИК), ПАСЕ и др. с призывом признать Армению «агрессором».

В феврале 2008 г. Азербайджанской Республикой внесён на рассмотрение 62-й сессии Генеральной Ассамблеи ООН проект резолюции «О положении на оккупированных территориях Азербайджана». 14 марта резолюция принята голосами 39-и государств, из них 33-х – мусульманских. 7 стран, – среди которых Россия, США и Франция – сопредседатели МГ ОБСЕ по Нагорному Карабаху – голосовали против; 100 государств воздержались, остальные не голосовали⁵.

25 сентября 2008 г., выступая на 63-й сессии Генеральной Ассамблеи ООН Президент Республики Армения С.А. Саргсян подчеркнул, что маартовская резолюция была принята в результате простой ангажированности стран, поддержавших одну из сторон конфликта. А результат был очень предсказуемым: новая волна воинственной риторики в Азербайджане, ложные почести в политических спекуляциях и т. д.⁶.

В сентябре 2008 г. руководство Азербайджана потребовало сменить формат урегулирования в рамках Минской группы ОБСЕ. То есть, организацию переговоров глав Армении и Азербайджана проводить не под эгидой Минской группы ОБСЕ, до сих пор курировавшую нагорно-карабахское урегулирование, а при посредничестве Президента РФ Д.А. Медведева.

¹ Мамедов С. Армении пригрозили джихадом // *Независимая газета*. 2006, 29 авг.

² Кулаков В. *Международное гуманитарное право: краткий курс* / В.В. Кулаков, Е.И. Каширина. Ростов н/Д: Феникс, 2012, с.157-158.

³ *Уголовный Кодекс Азербайджанской Республики, СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2001, с.101.*

⁴ Казимиров В.Н. *Указ. соч.*, с. 450.

⁵ Зенькович Н.А. Ильхам Алиев. *Взгляд из Москвы*. – Москва, 2008, с.436-438.

⁶ *Речь Президента Республики Армения Сержа Саргсяна на 63-й сессии Генеральной Ассамблеи ООН 25 сентября 2008 г. (г. Нью-Йорк) // Республика Армения (г. Ереван), 2008, 26 сент.*

29 сентября 2008 г. после трёхсторонней встречи глав министерств иностранных дел Армении, Турции и Азербайджана, состоявшейся в Нью-Йорке в рамках работы Генеральной Ассамблеи ООН, Президент Республики Армения С.А. Саргсян заявил: «Особенно сильных ожиданий от этой встречи не было. Было проведено несколько встреч, но какого-то конкретного результата нет»¹.

То есть, «...весь арсенал внешнеполитических средств азербайджанского руководства в настоящее время направлен не на урегулирование нагорно-карабахского конфликта на основе разумных и взаимоприемлемых компромиссов, а на достижение другой цели. Это – неприятия Армении (и армянского народа) со стороны международного сообщества как фактора, препятствующего реализации интересов мировых и региональных держав на Южном Кавказе»².

2 ноября 2008 г. в Москве президентами России, Азербайджана и Армении была подписана Декларация о состоянии и перспективах урегулирования нагорно-карабахского конфликта, в которой содержалось подтверждение готовности продолжать переговоры по урегулированию³.

«Процесс урегулирования прошлых лет доказал, что для эффективности переговорам не хватает самого заинтересованного звена, а именно – Нагорно-Карабахской Республики, являющейся состоявшимся в полном соответствии с международным правом государством», – прокомментировал декларацию от 2 ноября Министр иностранных дел НКР Г. Петросян⁴.

Следовательно, развитие событий вокруг карабахского конфликта может пойти по одному из трёх путей: новая война, сохранение нынешнего статус-кво или урегулирование конфликта.

Но и процесс урегулирования может идти разными путями.

В. Н. Казимиров считает возможными такие варианты развития событий:

- 1) возобновление военных действий;
- 2) длительное сохранение состояния «ни войны, ни мира»;
- 3) всеобъемлющее, «пакетное» решение конфликта;
- 4) поэтапное решение:

¹ Заявление Президента Республики Армения С. Саргсяна от 29 сентября 2008 г. // *Коммерсантъ*. – 2008. – 1 окт.

² Григорян А. Реалии и перспективы // *Карабахский курьер*. Бюллетень Постоянного Представительства НКР в Москве. – 1995. – №1 (12), с.8-9.

³ Казимиров В.Н. Указ. соч., с. 372, 452.

⁴ Г. Петросян, министр иностранных дел НКР: Если бы Азербайджан был заинтересован в урегулировании конфликта, то давно бы сел за стол переговоров с Нагорным Карабахом. Интервью от 2 ноября 2008 г. // *Карабахский курьер*. Информационно-аналитический бюллетень Представительства НКР в Москве. – №1 (26). – Февраль 2009, с.7.

а) двухэтапное решение, которого добивается Азербайджан (не рассматривать статус Нагорного Карабаха, пока не освобождены занятые территории);

б) постепенное, многоэтапное продвижение к урегулированию конфликта¹.

Важно понять, что быстрое урегулирование в Карабахе пока не просматривается. Поэтому важнейшее значение приобретает сохранение международным сообществом контроля над ситуацией, недопущение её деградации и скатывания к войне, смягчение общей напряжённости и возможных конвульсий².

В последнее время посредники по урегулированию азербайджано–карабахского (нагорно–карабахского по терминологии ОБСЕ) конфликта, склоняют армянские стороны конфликта к следующему варианту урегулирования:

1) Армянская сторона сразу освобождает 5 из 7 контролируемых ею районов бывшей АзССР за пределами границ бывшей НКАО (в последнее время говорится о 7 районах), куда возвращаются беженцы–азербайджанцы.

2) В зону конфликта вводятся миротворческие силы, – то есть, силы по поддержанию мира.

3) Азербайджанские беженцы возвращаются на территорию НКР, контролируемую правительством НКР (фактически на территорию бывшей НКАО).

4) Объявляется о проведении референдума на территории НКР (фактически бывшей НКАО, так как здесь не говорится о Шаумянском районе и Геташене, оккупированных в 1991–1992 гг.) через 10–15 лет. Референдум должен окончательно решить и закрепить будущий статус НКР. Предполагается, что решение референдума будет окончательным и бесповоротным³.

Если референдум состоится, то за предшествующий ему период демографическая ситуация в НКР изменится в пользу Азербайджана и результаты голосования будут в пользу «территориальной целостности» последнего.

В Нагорном Карабахе знают, что любое решение, включающее установление даже косвенного подчинения Баку – это отложенный геноцид и неизбежность исхода со своей земли.

«Пражский формат» переговоров по Нагорному Карабаху, исключивший из процесса переговоров карабахскую сторону и заморозивший ситуацию, стал бесперспективным. В ближайшем будущем возможностей для прорыва в урегулировании конфликта нет. У Америки и Европы сейчас не хватает интеллектуальных и финансовых ресурсов для Кавказа. Они заняты Ближним Востоком, где политическая обстановка нестабильна.

¹ Казимиров В. *Альтернативы урегулирования карабахского конфликта / Аналитические записки. Выпуск 1 (3) (январь 2005). Проблемы безопасности на Кавказе, Москва, 2005, с.5-6.*

² Там же, с.11.

³ Митяев В. *Указ.соч. с.520-521, 527-528.*

В противоположность этому Нагорный Карабах наших дней – спокойный регион на Кавказе. Все возможности придать существующему статус-кво состояние прочного мира и устойчивого развития сохраняются¹.

В настоящее время существуют различные варианты и точки зрения в отношении мирного разрешения конфликта в Нагорном Карабахе и вокруг него:

- Известный американский политолог, один из создателей альтернативной модели разрешения карабахского конфликта П. Гобл предложил как вариант обмен территориями – то есть часть Зангезура возвращается Азербайджану и, таким образом, Азербайджан получает доступ к Нахичевани, а часть Нагорного Карабаха отходит к Армении. Каждая из сторон конфликта идёт на определённую уступку, но каждая из них может приобрести долгожданный мир. Однако есть много критических замечаний по этому плану с обеих сторон, но пока они носят не столько принципиальный, сколько психологический характер»².

- Российский политик и дипломат В.Н. Казимиров предлагает свой вариант урегулирования конфликта, суть которого сводится к следующим положениям:

1. Официально отказаться от применения силы в решении конфликта.
2. Перейти к регулярным, интенсивным и эффективным переговорам между полномочными делегациями на правительственном уровне.
3. Укрепить режим перемирия.
4. Окончательно определить статус Нагорного Карабаха.
5. Освободить территории, занятые НКР в ходе Карабахско–азербайджанской (Арцахской) войны 1991–1994 гг. и добровольно возвратить туда вынужденных переселенцев (азербайджанцев)³.

Такие точки зрения в отношении мирного урегулирования конфликта не устраивают ни Армению, ни Нагорный Карабах. Во главу угла их видения проблемы ставится вопрос о праве наций на самоопределение. То есть, Степанакерт и Ереван пытаются добиться юридического оформления фактической независимости НКР от Азербайджанской Республики⁴. Об освобождении семи районов бывшей Азербайджанской ССР речи не идёт, так как руководство Армении и НКР считают их исконно армянскими (арцахскими).

Таким образом, в настоящее время и в ближайшем будущем не видно возможностей для урегулирования этнополитического конфликта в Нагорном

¹ Арешев А. *Нагорный Карабах: Становление государственности и переговорный процесс*, Москва, 2010, с.68-69.

² Мирзазаде Л. , *Нагорно-Карабахский конфликт и альтернативные пути его разрешения / Материалы 9-й научно-практической конференции «Карабах вчера, сегодня и завтра» (азерб., рус. яз.) 27 мая 2010, Баку, 2010, с.117-118.*

³ Казимиров В. *Альтернативы урегулирования карабахского конфликта* .,с.13.

⁴ Григорян А. *Армяно–азербайджанские отношения: реалии и перспективы*. Ереван, 2001, с.50.

Карабахе и вокруг него. Это подтвердила встреча (саммит) лидеров России, Азербайджана и Армении в г. Казани 24 июня 2011 г.¹, которая «...завершилась без достижения договорённостей об основных принципах урегулирования в Нагорном Карабахе»². В принятом заявлении стороны отметили прогресс на пути к этой цели и «Главы государств констатировали достижение взаимопонимания по ряду вопросов, решение которых способствует созданию условий для одобрения основных принципов. Президенты Азербайджана и Армении выразили признательность лидерам России, США и Франции, которые являются сопредседателями Минской группы ОБСЕ, за их постоянное внимание к проблеме нагорно–карабахского урегулирования. Они высоко оценили личные усилия Президента РФ по содействию к достижению договорённостей»³.

Непредвзятый конфликтологический анализ приглашает согласиться с выводами о том, что непризнание НКР стороной конфликта в сложившихся условиях, по крайней мере, далеко от реализма; это недавно подтвердили международные инстанции. Более того, для Азербайджана наиболее рациональным решением Карабахского конфликта стала бы политика установления межгосударственных отношений с НКР как с равноправным партнёром⁴.

Это положение подтверждает С.М. Минасян: «С точки зрения сохранения региональной безопасности в условиях, когда Азербайджан надеется на перевооружение своей армии и военный реванш с учётом финансовых средств от продажи энергоресурсов, для Армении и Нагорного Карабаха важное значение приобретает синтез конвенционального и политического сдерживания в целях недопущения реализации вероятным противником военно-политического акта – инициирования широкомасштабных военных действий. Сдерживание предполагает совокупность военных, политических, экономических, дипломатических, психологических и иных мер, направленных на убеждение потенциального агрессора в невозможности достижения им своих целей военными методами»⁵.

¹ Габуев А. С посреднической миссией справились посредственно // *Коммерсантъ*, 27 июня, 2011.

² Мамедов С., Панфилова В. Казанские качели // *Независимая газета*. – 2011. – 27 июня, с.6.

³ Переговоры по Нагорному Карабаху завершились без сенсаций // *САР (Союз армян России) (г. Краснодар)*, № 6 (199), Июнь. – 2011, с.1.

⁴ Котанджян Г., *Политологические проблемы безопасности: перестройка СССР – Карабах, Армения, Закавказье – Афганистан / Особенности разрешения Карабахского конфликта*. Ереван: Институт национальных стратегических исследований имени Д. Канаяна МО РА, 2009, с.494-495.

⁵ Минасян С. Политика военного и политического сдерживания в контексте карабахского конфликта // *Айкакан банак (Армянская армия)*, 2011, № 4 (70), с.93-94.

**Problems and Prospects of Ethnopolitical Engagement Reconciliation
in Nagorno Karabakh: Historical Aspect**

Vladimir Ponomaryov

Summary

The paper observes problems and prospects of ethnopolitical engagement reconciliation in Nagorno Karabakh in its historical aspect since 1992 till present times, with the participation of countries – international intermediaries including Russian Federation.

Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման հեռանկարները.

Պատմական տեսակետ

Վլադիմիր Պոնոմարյով

Ամփոփում

Հոդվածում պատմական տեսանկյունից քննարկվում է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը և նրա կարգավորման ուղիները՝ սկսած 1992թ. մինջև արդի ժամանակաշրջանը՝ միջազգային միջնորդներ երկրների՝ ներարյալ Ռուսաստանի Դաշնությանը մասնակցությամբ:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՆ ԵՎ ՇՈՒՇԻՆ¹

Օֆելյա Բաբայան

*Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
ԱրՊՀ*

¹ Հոդվածն ընդունված է 12.12.13:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը:

Հայ լեզվաբանության մեջ ընդունված է գրական աշխարհաբարի հաղթանակը կապել գրապայքարի ժամանակահատվածի (1850-60-ական թթ.) հետ: Սակայն 19-րդ դարի առաջին տասնամյակներին Շուշիում աշխարհաբարն արդեն հաղորդակցման ու գրատպության լեզու էր: Այդ հարցում որոշակի ներդրում ունեն հովսեփ վարդապետ Արցախեցին, Պողոս վարդապետ Ղարաբաղցին, ինչպես նաև եվրոպական կրթություն ու դաստիարակություն ստացած, խոսակցական լեզվի դերն ըմբռնած բազելյան քարոզիչները:

XIX դարի առաջին կեսի՝ հայոց լեզվի զարգացման պատմության վաղ աշխարհաբարի ենթաշրջանի նախահյուսիսափայլյան ժամանակահատվածի լեզվավիճակը բնութագրելիս ընդունված է նշել երեք կարգի տարատեսակների առկայությունը՝ 1. հին գրական հայերեն կամ գրաբար, 2. «քաղաքական» կամ քաղաքացիական հայերեն և 3. բարբառներ: Այս տարբերակումը ճիշտ է արտացոլում ժամանակի լեզվական վիճակը, որ գոյություն ուներ 17-րդ դարից սկսած: 19-րդ դարի կեսերին Ստ. Նազարյանը «քաղաքացիական հայերենի»-ի փոխարեն գործածում է «հասարակաց հայախոսություն» անվանումը:¹

19-րդ դարի սկզբին «քաղաքացիական հայերենն» արդեն հանդես էր գալիս տարբեր գործառույթներով, դառնում է տարբեր բարբառների ներկայացուցիչների հաղորդակցման, առևտրական, գործնական-գործարարական գրագրության, նամակագրության, դատավարության, նաև տարբեր գիտությունների, թատերգության, թերթերի, հանդեսների լեզու: Սակայն այս շրջանի աշխարհաբարը դեռևս տարերային զարգացում էր ապրում, ուներ տարբեր տեսակներ՝ նայած գրաբարից, միջին հայերենից, բարբառներից օգտվելու չափերին:

XIX դարի առաջին տասնամյակներին հայ ժողովրդի կյանքում տեղի են ունենում որոշակի տեղաշարժեր, որոնք նպաստում են աշխարհաբարի մշակմանն ու զարգացմանը:

Արևելյան Հայաստանը միանում է Ռուսաստանին, բացվում են ուսումնական հաստատություններ՝ Աստրախանի Աղաբաբյան վարժարանը (1810թ.), Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1815թ.), Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1824թ.), աստիճանաբար արթնանում է ազգային ինքնաճանաչության զգացումը:

¹ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երեւան, 1964, էջ 49:

19-րդ դարի սկզբին դպրոցներ են բացվում նաև Շուշիում և Արցախի մի շարք գյուղերում:¹ Իսկ գրական լեզվի մշակման, հարստացման գործում անգնահատելի է հայ դպրոցի, ուսումնական հաստատությունների դերը:

Մեսրոպ Թաղիադյանը, որ 1821թ. Եփրեմ կաթողիկոսի հետ եղել էր Շուշիում, «ճանապարհորդություն ի Հայս» աշխատության մեջ նշում է, որ այդ ժամանակ Շուշիում էին գտնվում Հովսեփ վարդապետ Արցախեցին, ով հայտնի էր «իմաստասեր», «գիտնական», «վարժապետ» և այլ տիտղոսներով, և նրա տաղանդավոր աշակերտներից մեկը՝ արդեն մեծ գիտնական Պողոս վարդապետ Ղարաբաղցին: «Շատ լաւ համբաւ է թողել Շուշու բարձր դասակարգի մէջ մանաւանդ Յովսէփ վարդապետ Տէր-Աւագեանը, աւելի յայտնի՝ Արցախեցի մականունով: Վանական գիտութեան-աստուածաբանութեան, տրամաբանութեան, ճարտասանութեան և քերականութեան հմուտ էր, յայտնի նաև իր կրօնաւորական կենցաղով Գանձասարի և ս. Յակոբի վանքերում: Թողել է և գրաւոր աշխատութիւններ, որոնց մէջ յիշատակելի են հայերէն բառարանը գրաբարից աշխարհաբար, համառօտած տրամաբանութիւնը և քերականութիւնը»:² Իսկ Պողոս վարդապետ Ղարաբաղցին 1824-26թթ.աշխատել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, այնուհետև Շուշիում՝ 1827-34թթ.՝ միսիոներների դպրոցում, 1838-40 թթ.՝ Հայոց թեմական դպրոցում:

Շուշիում աշխարհաբարի մշակման ու գործածության հարցում կարևորվում է Բագելի միսիոներական ընկերության գործունեությունը: «Ուշադրության արժանի մի հանգամանք է նաև այն, որ 19-րդ դարի առաջին քսանամյակի կեսերին Շուշում Բագելյան միսիոներներ Դիտրիխը և Ջարեմբան ձեռնարկեցին միսիոներական գրականության հրատարակությունը այնպիսի աշխարհաբարով, որն իր նաքրությամբ և պարզությամբ գերազանց է ո՛չ միայն մինչև 30-ական թվականները, այլև մինչև 60-ական թվականները հրատարակված բոլոր գրքերի լեզվից», - գրում է Գուրգեն Սևակը:³

Բագելի միսիոներական ընկերության գործունեության մասին ոգևորությամբ է խոսում Լեոն՝ նշելով, որ այդ տարիներին կրթությունը մատչելի էր միայն վաճառական դասակարգի մի մասին և հոգևորականությանը, իսկ երկիրը ներկայացնում էր մի «խաւար անապատ», որի դեմ հնարավոր չէր մաքառել սեփական աննշան միջոցներով: Լեոն հրաշքի ցման մի բան է համարում, որ «Ղարաբաղը այդ իսկ միջոցներին ասպա-

¹ Հ.Գրիգորյան, Գ. Հարությունյան, Արցախի դպրոցը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երեւան, 2005, էջ 55:

² Լեո, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական դպրոցի (1838-1913), Թիֆլիզ, 1914, էջ 84 - 85:

³ Գ.Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի պատմություն, Երեւան, 1955, էջ 60:

րեզ է դառնում դպրոցական մի ամբողջ եռանդուն շարժման ժամանակի լուսաւորութեան ոգով:

Այս լուսաւոր երևոյթը, իհարկէ, չէր կարող բխել տեղական գիտակցութիւնից, տեղական ոյժերի համախմբումից: Նա օտարամուտ երևոյթ էր, նա եկել էր դրսից, ուներ օտար ծագում, ժառայուն էր որոշ նպատակի, բայց այս նպատակը չէր արգելում, որ ժողովրդական մի լաւ կազմակերպուած գործ սկսուի: Անդրկովկասի և յատկապէս այդտեղ ապրող հայերի վրայ ուշադրութիւն էր դարձուած շատ հեռուից»:

Բազելի ընկերութիւնը քարոզիչներին հանձնարարել էր. «1. Տարածել Աստուծոյ խոսքը նոյն կողմերի ազգաց և լեզուաց մէջ, առաջնորդ ունենալով Մեծ Բրիտանիոյ և Այլասեռից Աստուածաշնչի ընկերութեան իմաստնաբար յօրինած կանոններն ու հաստատութիւնը: 2. Սովորել տեղական նշանաւոր և Աստուծոյ խոսքը տարածելու համար կարևոր լեզուներից մի քանիսը-արաբերէն, պարսկերէն, թաթարերէն և նոր յունարէն: Ձեզանից միմն, ասած է հրահանգների մէջ, գիտէ սլաւոնական լեզուներն և նոր յունարէնի տարերքը, միւսն արաբերէնի և պարսկերէնի սկզբունքը: 3. Հիմնել մի յարմարաւոր տեղ-տպարան՝ Ս. Գիրքը զանազան լեզուներով տպելու համար. տպելու նաև դասագրեանք իրանց հիմնած ուսումնարանների համար»:¹

1827թ. Շուշիում բացվում է Բազելի միսիոներական ընկերության ուսումնարանը, որի աշակերտների թիվը մեկ տարում 30-40-ից հասնում է 130-ի: Փաստորեն դա մի ժողովրդական դպրոց էր: «Սանկունք զանազան դասակարգերից էին,- գրում էին միսիոներները,- բայց մենք աշխատում էինք, որ չքաւորներ լինին: Նոքա հասակով 10-18 տարեկան էին, մեծ մասամբ Ղարաբաղցի Հայք: Սովորում էին հայերէն գրել ու կարդալ, ընթեռնում էին Նոր Կտակարան, մասամբ և հինը, վարժվում էին թարգմանութեան մէջ՝ գրաբարից աշխարհաբար և հակադարձօրէն: Մեզանից միմն ուսուցանում էր թուրքաւորութիւն և աշխարհագրութիւն, կազմելով սոցա համար և հայերէն դասագրքեր: Մի ժամանակ աշակերտներից ոմանց ուսուցանում էինք նաև ռուսաց լեզու...»:² «Մենք հսկում էինք դասատութեանն ու աշխատութեանն: ...Երկու սարկաւազունք սովորում էին մեզանից մէկի մոտ յունարէն և իբրև սորան օժանդակ լատիներէն, իսկ մէկը սովորում էր անգլերէն: Սոքա էլ օգնում էին իրանց ուսուցչին թարգմանելու

¹ Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական դպրոցի (1838-1913), Թիֆլիզ, 1914, էջ 86 - 87:

² Գ. Ղուկասեանց, Բողոքականութիւն Կովկասու Հայոց մէջ, Թիֆլիս, 1886, էջ 4:

Նոր Կտակարանը գրաբարից աշխարհաբար: Սոքա միտք ունեին եբրայերէն էլ սովորել, որ Ս.Գիրքը բնագրով կարդան», - գրում էին նրանք:¹

Կրոնական նպատակ ունեցող եվրոպացի բողոքականները հայ երիտասարդներին այնպիսի կրթություն էին տալիս, որ, կրոնական լինելով հանդերձ, դաստիարակչական մեծ դեր էր կատարում: «Իսկապես ժողովրդական դաստիարակութեան գործն էր սկսւում Ղարաբաղում և այս կողմից Շուշու «լէմսին շօլը» (գերմանական դպրոցը) նման էր Թիֆլիսի Ներսիսիան դպրոցին, որի հիմնադիրը դրանից առաջ էր զգացել ժողովրդական կրթութեան ահագին խորհուրդը և բաց էր արել դպրոցը հասարակութեան բոլոր խաւերի առաջ»:²

Չնայած Բազելի բողոքական քարոզիչները Շուշիում հիմնած իրենց տպարանում հրատարակում էին կրոնական-բարոյական բովանդակություն ունեցող թարգմանություններ և ինքնուրույն գրքեր, բայց և այնպես նրանք դառնում են աշխարհաբարի առաջին տարածողները: Բազելի քարոզիչները, որոնք եվրոպական կրթություն ու դաստիարակություն ստացած մարդիկ էին, լավ էին ըմբռնել խոսակցական լեզվի նշանակությունը կրթության և դաստիարակության հարցում: Ինչպես վկայում է Հ. Ղուկասյանցը, «այս խմբի ղեկավարն և հոգին էր Ֆելիցիա Ջարեմբան: Սա ի բնէ Լեհացի էր և ազնուական տնից, կոմսի տիտղոսով, ուսած էր Դորպատու համալսարանում և ստացած փիլիսոփայութեան դոկտորի աստիճան, յետոյ դարձած էր քարտուղար սենատի մեջ... Գիտնական պաշարով Ջարեմբայից յետ չէին մնում նորա ընկերակից ընկերներն ևս, որոնցից մինը՝ Դիտրիխ մինչև անգամ Մոսկվայում Սալլանթեան Միք. վարդապետի մոտ սովորել էր հայոց գրաբար լեզուն»:³ Նրանցից մեկն էլ՝ Հաազը, սովորել էր «Ղարաբաղի հայ գաւառաբարբառը»:

Միսիոներական հրատարակություններ լույս էին տեսնում ինչպես Շուշիում, այնպես էլ Մոսկվայում՝ Լազարյան ճեմարանի տպարանում:

Առաջին հրատարակությունը լույս է տեսնում 1828թ.՝ «Պատմութիւն Սուրբ Գրոց»: Շուշիում հրատարակվում են նաև հայ քերականների՝ մայրենի լեզվին նվիրված գրքեր, որոնք ներկայացնում են հայերենի ուղղախոսությունը, ուղղագրությունը, քերականությունը: Այսպես, օրինակ՝ Պողոս Ներսիսյանց Ղարաբաղցի վարդապետի «Համառօտ հայկական քերականութիւն» (1829թ., 30էջ) աշխատությունը, Հովսեփ Արցախեցի

¹ Նույն տեղում, էջ 16-17:

² Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական դպրոցի (1838-1913), Թիֆլիզ, 1914, էջ 91:

³ Հ. Ղուկասեանց, նշված աշխ., էջ 3:

Վարդապետի «Համառոտ բառգիրք ի գրաբառէ յաշխարհաբառն (ի պէտս համբակաց)» (1830թ., 398 էջ) բառարանը, Միքայել Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» (1833թ., 328 էջ) գիրքը:

Ուշագրավ է, որ թե՛ Պողոս վարդապետ Ղարաբաղցին և թե՛ Հովսեփ Արցախեցին զգուն էին, որ դժվար է գրաբարով ուսուցունը և իրենց կազմած գրքերուն տալիս էին նաև գրաբար բառերի աշխարհաբար բացատրություններ:

Թե՛ Շուշիում 7-8 տարվա ընթացքում հրատարակած, թե՛ նրանց հետնորդների՝ Լազարյան ճեմարանում տպագրած գրքերը աշխարհաբար էին, ժողովրդին հասկանալի լեզվով: Գ. Սևակը հետաքրքիր է համարում այն փաստը, որ Շուշիի «Աւետարանական ժողովքի տան մէջ» վաճառվող բոլոր գրքերն էլ աշխարհաբար են. «Սեզ հետաքրքրողն այժմ ոչ այդ գրքերի մեջ կրոնական բովանդակությունն է, ոչ էլ այն, որ դրանց հրատարակիչներն ու խմբագիրները օտարազգի միսիոներներ էին: Ամենից ուշագրավն ու մեզ այստեղ հետաքրքրողը այն է, որ այդ գրքերի մեջ արտահայտություն է գտել անցյալ դարի 20-ական թվականների խոսակցական աշխարհաբարը առանց գրաբարյան ավելորդ համեմունքների, որպիսիք հատուկ էին ուղղափառ լուսավորչականների լեզվին: Այս օտարազգիները ժողովրդից սովորեցին կենդանի լեզուն և այդ լեզվով էլ հրատարակեցին իրենց պրոպագանդիստական գրականությունը առանց լեզվաշինարարական այս կամ այն նկրտումի»:¹

Ս. Ղազարյանը նույնպես նշում է, որ «Ժամանակի Արարատյան բարբառի հիման վրա մշակվող լեզվի առանձնահատկությունները դրսևորված են նաև թարգմանական գրականության մեջ: Շուշիում 1832-35 թվականներին լույս են տեսնում աշխարհաբարով գրված մի շարք այնպիսի թարգմանություններ, որոնց լեզուն բավականաչափ մշակված ու հղկված է»:²

Հր. Աճառյանը մի շարք հատվածներ է բերում Շուշիում տպագրված թարգմանություններից՝ այդ տասնամյակների աշխարհաբարը ներկայացնելու համար: Ահա մի օրինակ՝

«Մեղքն խաղ անելոյ բան չէ, Թարգմանութիւն, Շուշի, 1833: Էս ի՞նչ զարմանալի աշխարհք է որ նորա մէջն մենք կենում ենք: Լուսոյ իշխանն և խաւարի իշխանըն, բարի մարդիքն և չար մարդիքըն. Սրբութիւնն և մեղքն՝ եղ ամենին ծաղր անելոյ բան են շինում և ընտրվում: Բայց շատ

¹ Գ. Սևակ, *Նշված աշխ.*, էջ 61:

² Ս. Ղազարյան, *Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երեւան, 1981, էջ 343:*

վախենալի և վնաս տուող յիմարութիւն է՝ էնպէսի բաներով ծաղր անելն, որ շատ ահաւոր և ծանր են...»:¹

1828-1833թթ. Շուշիում տպագրվում է 13 գիրք: 1834թ. Բագելի քարոզչական ընկերությունը Մոսկվայում աշխարհաբարով հրատարակում է իրենց թարգմանած Ավետարանը: Միսիոներական ընկերության Շուշիի տպարանը, գրում է Ղարաբաղի թեմի առաջնորդ Բաղդասար Մետրոպոլիտը, շարունակում գրքեր տպագրել: 1837թ. տպագրում է «Շիլիոնեան կալանաւորը»՝ թարգմանությամբ Մովսես Չոհրապյանի, 1839-ին՝ «Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից-Եսայի կաթողիկոս Զասան Ջալալեանի: Մինչև Բաղդասար եպիսկոպոսի մահը (1854թ.) լույս են տեսնում նաև «Մաշտոց», «Քերականութիւն համառօտ», «Տետր այբբենական», «Կրօնագիտութիւն» և այլ գրքեր:²

Այսպիսով՝ 19-րդ դարի առաջին տասնամյակներին աշխարհաբարը Շուշիում արդեն հաղորդակցման և գրատպության լեզու էր:

Ашхарабар и Шуши

Офелия Бабаян

Резюме

В армянском языкознании принято становление литературного ашхарабара связывать со временем грапайкара (1850-60гг.). Но в Шуши уже в первых десятилетиях 19-го века ашхарабар был языком коммуникации и книгопечатания. В этом деле определенную роль сыграли Вардапет Овсеп Арцахеци, Вардапет Погос Карабахци, а также базельские миссионеры, которые, имея европейское образование и воспитание, хорошо восприняли важность значения и роли разговорной речи.

Ashkharabar and Shushi

Ofelia Babayan

Summary

In Armenian Linguistics had received the establishment of literary ashkharabar to associate with the grapaykar (1850-60). But in the first decade of XIX century in Shushi ashkharabar was also the language of communication and typography.

In this case the main role had played Vardapet Hovsep Artsakhecy, Vardapet Pogos Karabakhcy and Basel missionaries which having the European education and upbringing except very well the importance and main role of colloquial speech.

¹ Գր. Աճառյան, Գայրց լեզվի պատմություն, մաս 2, Երևան, 1951, էջ 469:

² Ռ. Տեր-Պատպարյան, Շուշի քաղաքը, Երևան, 1993, էջ 87-88:

ԿՐԱԿ ԷԼ ՏԱՍ՝ ՃՇՄԱՐԻՏԻՆ ՄԱՅ ՉԿԱՂ¹

Գրականագիտական էսե

Սոկրատ Խանյան

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱրՊՀ

«Քարակերտ երագներ». այսպես է կոչվում Ադրբեջանի ժողովրդական գրող Աքրամ Այլիսլիի վեպ-ռեքվիեմը, որի աշխարհ գալը, բառի բուն իմաստով, գազանային աղմուկ բարձրացրեց Ադրբեջանում: Արվեստի վաստակավոր գործիչ, «Իստիգլալ» և «Շոհրաթ» շքանշանների ասպետ, ականավոր այդ գեղագետը ակնթարթային արագությամբ ենթարկվեց հալածանքի, և ոչ միայն ինքը, այլև ամբողջ ընտանիքը: Սահմուկեցուցիչ էին այն տեսարանները, որ ցուցադրվում էին հանրապետության հեռու-տատեսության տարբեր ալիքներով: Նշանավոր այդ գրողի բոլոր գրքերը նետվեցին հրդեհի մեջ: Պատկերը հիշեցնում էր 1933 թվականի Ռայխստագի հրապարակը, որտեղ Ադուլֆ Հիտլերի հրամանով խարույկի մեջ էին նետվել գերմանական դասական գրականության բոլոր այն նմուշները, որոնցում քարոզվում էին մարդասիրություն, համերաշխություն, կենսասիրություն, հույս ու հավատ մարդկության լուսավոր գալիքի հանդեպ: Նույնը կրկնվեց Ադրբեջանի բոլոր քաղաքներում ու շրջաններում, այն բնակավայրերում, որոնց գրադարաններում կային Այլիսլիի մի քանի տասնյակ բարձրարվեստ հատորները: Եվ դա պատահական չէր, քանզի մերօրյա Ադրբեջանի կառավարող շրջանները, Իլհամ Հեյդար օղլի Ալիևի գլխավորությամբ, ոչ թե հիշեցնում են հիտլերյան ու գերբելսյան ժամանակաշրջանը, այլ գերազանցել են դրանց:

Իսկ ինչո՞ւ Ադրբեջանում կրակի ճարակ դարձրին Աքրամ Այլիսլիի ժողովածուները: Որովհետև նա իր մարդկային խղճի մտոք իր նոր գրքով ասել է ճշմարտությունը հայ ժողովրդի, հայ մարդու աստվածահաճո, աստվածալույս, աստվածաշնորհ, արարող, բարեգութ բնավորության մասին, միաժամանակ մատնանշել այն դաժան վերաբեմունքը, որ ցուցաբերել են հայերի հանդեպ իր երկրի ղեկավարները բութ ու խավարամիտ ամբոխների միջոցով:

«Քարակերտ երագներ» վեպ-ռեքվիեմը Աքրամ Այլիսլին գրել սկսել է 2006 թվականի հուլիսին՝ Այլիսում, ավարտել 2007թ. հունիսին՝ Բաքվում:

¹ Հոդվածն ընդունված է 10.06..13:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ հայ գրականության և լրագրության ամբիոնը:

վեպը հեղինակային թարգմանությամբ ռուսերեն հրատարակվել է Մոսկվայում, «Դրուժբա նարոդով» ամսագրի 2012թ. 12-րդ համարում:

75-ամյա Աքրամ Ալլիսլին (Աքրամ Նաջաֆ օլլի Նաիրով) իր գրական անունը կնքել է Ալլիսլի անվամբ, իսկ Ալլիսը հայոց Ագուլիսի ադրբեջանական ձևն է:

Աքրամը ծնվել է Ագուլիսում, բարձրագույն կրթությունն ստացել Բաքվում: Որպես գրող՝ նա աչքի է ընկել հենց առաջին գործերից: Երիտասարդ տարիքում եղել է «Ազարբայջան» գրական-գեղարվեստական ամսագրի գլխավոր խմբագիրը: Տարիների ընթացքում նա իր մայրենի լեզվով թարգմանել է Տուրգենևի, Կորոլենկոյի, Չեխովի, Դոստոևսկու, Շուկշինի, Այթմատովի, Բյուլի, Մարկեսի, Ռուշդիի երկերը: Հայտնի են նաև նրա բեմականացված պիեսներն ու ցուցադրված կինոսցենարները:

«Քարակերտ երազներ» վեպը կարճ ժամանակաընթացքում ունեցավ հայերեն երկու թարգմանություն: Սույն հոդվածը գրում են Հակոբ Սողոմոնյանի ու Լևոն Գալստյանի թարգմանության հիման վրա:

Վեպն ընդամենը 10 տպագրական մամուլ է, այսինքն՝ 160 էջ: Սակայն գիրքը գեղարվեստական բարձր մակադրակով այնպիսի բազմաշերտ հարցեր է շոշափում, որ կարելի է համարել դարակազմիկ մի երկ, որն անակնկալ էր ոչ միայն ադրբեջանական, այլև թուրքալեզու բոլոր գրականությունների մեջ: Ես նկատի ունեն առանձնապես 1988 թվականի փետրվարից սկսված հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը, որը վերածվեց Ադրբեջանի կողմից պարտադրված Արցախյան պատերազմի: Ցնցվեց աշխարհը: Մեր Շարժումն ազդարարեց ԽՍՀՄ փլուզման սկիզբը: ԽՄԿԿ Կենտկոմի գորբաչովյան հրոսակախումբը, փոխանակ վերլուծելու և ճիշտ գնահատելու Ղարաբաղյան շարժման պատճառները և հարցը լուծելու ըստ էության, բռնեց ադրբեջանամետ դիրքորոշում, կազմակերպեց «Կոլցո» («Օղակ») ռազմական ավանտյուրան, որի պատճառով հայաթափվեցին Շամախու, Շամխորի, Դաշքեսանի, Խանլարի, Շահումյանի ավանդական հայկական բնակավայրերը, ինչպես նաև Մարտակերտի և Հադրութի շրջանների տասնյակ գյուղեր: Պատերազմն ընթացավ մինչև 1994 թվականի մայիսը: Ադրբեջանի խնդրանքով կնքվեց զինադադար: Այդ տարվանից սկսած՝ տիրում է «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» քաղաքական մթնոլորտը: Սակայն խնդիրը միայն դրանում չի կայանում: Այդ տարիների ընթացքում Ադրբեջանի կառավարող շրջանները կազմակերպել և շարունակում են իրենց կեղտոտ գործը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների, կոնկրետ աշխարհասփյուռ հայության դեմ: Նշված մոտ քսան տարիների

ընթացքում Արցախ են այցելել օտարերկրյա խորհրդարանների մի քանի տասնյակ ներկայացուցիչների խմբեր, առանձին ականավոր գործիչներ, գործարարներ և կրկին ու կրկին համոզվել, որ Արցախը հայկական ոգու, շինարար ձեռքի, մեսրոպյան լեզվի բնօրրաններից է, որտեղ գոյություն ունի պետականություն, ընթացքի մեջ է ցանկալի ժողովրդավարությունը, որ արցախցին իր պապերի մի քանի հազարամյակների պատմություն ունեցող օջախի ժառանգորդն ու տերն է, ուստի նա իրավունք ունի իր տեղն ունենալու ազգերի ընտանիքում և խոսելու բոլորի հետ հավասար իրավունքով: Այդ տարիների ընթացքում, սակայն, թուրքամետ ոչ մի կառավարություն, ոչ մի գործիչ չի բարձրացրել իր ձայնը Արցախի, հայ ժողովրդի օգտին՝ արդարության և ճշմարտության անունից: Ահա հենց նման քաղաքական տհաճ մթնոլորտում, որպես ազնիվ սրտի ճիչ, որպես մարդկային աստվածանվեր խղճի արտահայտություն, ընթերցողի սեղանին հայտնվեց Աքրամ Այլիսլիի «Քարակերտ երազներ» գիրքը, որն արժանի է հանգամանալից վերլուծության ու գնահատման:

«Քարակերտ երազներ» վեպ-ռեքվիեմը բաղկացած է չորս գլխից: Հեղինակը որպես բնաբան, բերել է հետևյալ խոսքը. *«Նվիրվում է իմ երկրացիների հիշատակին, ովքեր իրենցից հետո թողեցին անամոք ցավ»*: Իսկ ո՞ւմ մասին է խոսքը, և անամոք ի՞նչ ցավ է նրան մղել ստեղծելու այդ աննախադեպ երկը:

Աքրամի վեպը գրվելու իր շարժառիթներն ունի: *Առաջին*՝ Աքրամ Այլիսլին ծնվել ու հասակ է նետել Ագուլիսում, որի քարակերտ նյութական հուշարձաններն ու արդեն հայազուրկ թաղամասերի սալարկապատ փողոցները, հայերի հոյակերտ տները, որտեղ ապրում են ադրբեջանցիները՝ հայկական կոտորածներն իրականացրած իրենց նախորդների ժառանգորդները, քաղաքի 12 եկեղեցիներից մի մասի ավերակները և դեռևս կանգուն Աստծո տները, իրենց իսկ՝ ադրբեջանցիների պատմածները 1919 թվականի հայկական կոտորածների մասին, երբեք չէին կարող արթուն չպահել նրա հիշողություններն ու կրած տպավորությունները: *Երկրորդ*՝ Աքրամ Այլիսլին՝ որպես աստվածաշնորհ գրող, չէր կարող չհետաքրքրվել իր ծննդավայր Ագուլիս-Այլիսի պատմական անցյալով, նրա մասին եղած պատմագրություններով, որոնք գոյություն ունեն Երևանի «Մեսրոպ Մաշտոց» մատենադարանում և այլ գրադարաններում թե՛ հայերեն և թե՛ ռուսերեն: *Երրորդ*՝ նա չի հաշտվել Սումգայիթում և Բաքվում կազմակերպված հայկական ջարդերի հետ:

Ե՛վ իր ժողովրդի, և՛ հայոց պատմության իմացությունը չէին կարող փակել նրա աչքերն ու ականջները: Նրա հոգու խորքում մարած չի եղել

համաշխարհային մեծանուն արվեստագետների այն խորհուրդը, որ գեղագետը իրավունք չունի նետվելու ազգայնամոլության ճահիճը, որ հայրենասիրությունը չի կարելի շփոթել այլատյացության հետ: Ըստ իս` ահա այն գործոնները, որ Աքրամ Ալլիսլիին մղել են ստեղծելու տվյալ վեպը, որ պատիվ կարող է բերել ոչ միայն իրեն, այլև այն ադրբեջանցի գրողներին, ովքեր չեն կորցրել արվեստագետի խղճի և պատվի զգացումը, սակայն վախենում են բարձրացնել իրենց հոգու ձայնը: Այս առումով կարելի է ընդգծել, որ միայն իր այս վեպով Աքրամ Ալլիսլին դասվելու է համաշխարհային հումանիստ արվեստագետների շարքը: Հեռու չէ այդ ժամանակը: Եվ ոչ միայն այդ: Այս վեպի շնորհիվ ընդգծվելու է նաև նրա խիզախությունը, հաստատվելու է այն գաղափարը, որ անհատներն ընդունակ են և կարող են փրկել իրենց սեփական ժողովրդի պատիվը:

«Քարակերտ երազներ» վեպի առաջին գլուխը բացվում է Բաքվի ողբերգական դեպքերը բնութագրող հետևյալ բնաբանով. *«Ծեր հանդերձապահուհու առեղծվածային մահը, նշանավոր դերասանի մահացու վտանգավոր կատակը և ատրճանակ-կուստոմսը»*: Բացելով այս բնաբանի փակագծերը` հեղինակն ընթերցողին տանում է Բաքվի հիվանդանոցներից մեկը, ուր ապաքինվում էին ոչ միայն հիվանդ քաղաքացիները, այլև արդեն ավելի շատ ջարդուփշուր արված անմեղ մարդիկ: Դրանցից էին կատակերգական դերերի հայտնի կատարող Նուվարիշ Ղարաբաղլին, որը ժողովրդի մեջ հայտնի է Համլետ, Օթելլո, Այդին, Քեֆլի Իսկանդեր և այլ կերպարների մարմնավորմամբ: Մահացու ծանր վիճակում է Սադայ Սադրլին, որին Հայաստանից փախած ազերի երիտասարդները, որ Բաքվում ստացել էին «երազներ» անունը, ծեծել ու ջախջախել էին այն պատճառով, որ փորձել է կատաղած ամբոխից փրկել մի ծեր հայ մարդու, որ տնային շորերով դուրս էր եկել հաց գնելու: «Երազներ» կոչվող ավազակները այդ հային սկզբում նետել էին Պարապետ կոչվող զբոսայգու ջրավազանը, ուղիղ սառցաջրի մեջ: Նա չի դիմացել ջրի սառնությանը, փորձել է դուրս գալ: Իսկ մարդասպանները կանգնել են ջրավազանի եզրին և ոտքերով խփել նրան, ծեծելով սպանել: Իսկ ականավոր դերասան Սադայ Սադրլին հենց այդ պահին հայտնվել է անիծյալ տեղում ու ձգտել օգնել հայ ծերունուն: Ինչպես պատմում է դերասան Նուվարիշ Ղարաբաղլին, Սադրլին չի դիմացել. չէ՞ որ նա դերասան է, հումանիստ մարդ: Սիրտը չի հանդուրժել, նետվել է օգնելու հայ ծերունուն:

Դժվար չէ եզրակացնել, որ Աքրամ Այլիսլին՝ որպես արվեստագետ, չի ընդունել Ադրբեջանի քաղաքական գործիչների գազանաբարո քաղաքականությունը հայերի հանդեպ:

Հիվանդանոցի վիրաբույժը՝ պարսիկ Ֆարզանին, ոչ միայն ձգտել է փրկել ականավոր դերասանին, այլև իմանալով Սադրլիի լավ արարքի մասին՝ հաստատել է. «Չենց այդպես կվարվեր յուրաքանչյուրը, ով իրեն մարդ է համարում: Սակայն այս քաղաքի բնակիչները, ասես պայմանավորված, ձգտել էին հեռու մնալ մարդկայնություն կոչվածից: Թվում էր՝ նրանց արդեն նույնիսկ ձեռնտու էլ չէր պահպանել մարդկային դեմքը»¹ (Աքրամ Այլիսլի, «Քարակերտ երազներ», «Էդիթ պրինտ» հրատ., Երևան, 2013, էջ 12):

Բժիշկ Ֆարզանին զարմանքով է խոսում Բաքվում տեղի ունեցող հակահայկական հանցագործությունների մասին: Նա ցավով է նշում, թե ինչպես մետրոյում մի քանի ադրբեջանցի կանայք հարձակվել են տասնչորս-տասնհինգ տարեկան մի հայ աղջկա վրա, ծեծել, ջարդել, որին բախտի բերումով, հասցրել են հիվանդանոց: Կատարվել է բարդագույն վիրահատություն: Իսկ դրանից մի քանի օր առաջ ինչ-որ դեգեներատ ադրբեջանցի բանաստեղծ ներխուժել էր հիվանդանոց և ծեծելով աշխատասենյակից դուրս վնդդել բժշկին (որը քառասուն տարի աշխատել էր սրտաբանական բաժանմունքում) միայն այն պատճառով, որ վերջինս հայ է: Այդ դեպքից հետո հիվանդանոցում ոչ մի հայ չմնաց՝ ոչ բժիշկ, ոչ սպասարկող: Ոմանք թաքնվել էին տանը, մյուսներն ընդմիշտ հեռացել էին Բաքվից:

Վիրաբույժի հարցին, թե որտեղացի է Սադայ Սադրլիին, Նուվարիշ Ղարաբաղլին պատասխանել է. «Սադայ Սադրլիին ծնվել է Նախիջևանում: Այնտեղ Օրդուբադի շրջանում Այլիս անվամբ մի գյուղ կա: Շատ հին գյուղ է, բժիշկ, թեև ես երբեք չեմ եղել: Մի ժամանակ, ասում են, այնտեղ շատ հայեր են ապրել: Նրանց եկեղեցիներից յոթը կամ ութը ոնց որ թե առ օրս կանգուն են: Երևում է՝ այդ հայերը շատ խելացի, լավ մարդիկ են եղել»²: Ինչ վերաբերում է Սադայ Սադրլիին, ապա նա իր անփոփոխ կարծիքն ունի: Նա պնդում է. «Հայերը չէ, մենք ինքներս ենք վատը»: Եվ չի վախենում: Ասում է ամենուր՝ և թատրոնում, և չայխանաներում»³:

Վեպի առաջին գլխից սկսած, որպես կենտրոնական կերպարներ, հանդես են գալիս Սադայ Սադրլիին, Նուվարիշ Ղարաբաղլին, հիվան-

¹ Աքրամ Այլիսլի, Քարակերտ երազներ, էջ 12:

² Նշվ. աշխ., էջ 13:

³ Նշվ. աշխ., էջ 13-14:

դանոցի վիրաբուժական բաժնի վարիչ Ֆարզանի Ֆարիդ Յասանին, Սադրղլիի կինը՝ Ազադա խանունը, Ազադայի հայրը՝ բժիշկ Աբասալիևը և ուրիշներ:

Դեպքերի և իրադարձությունների ընթացքը շաղկապվում է Բաքվում տեղի ունեցած հակահայկական հանցագործությունների հետ: Ամեն օր քաղաքում տեղի էին ունենում աննկարագրելի դաժանություններ հայերի հանդեպ: Այսպես՝ Բաքխորհրդի աննշան, բայց շատ փողաբեր պաշտոն զբաղեցնող աշխատակիցներից մեկը՝ մի հաղթանդամ ցմփոր աժդահա, հափշտակում է թատրոնի հին աշխատող, հանդերձապահուհի Գրետա Սարկիսովնա Մինասովայի բնակարանը, որը նա ստացել էր Նուվարիշի հետ նույն օրը և սարքում այնտեղ ամենախսկական պոռնկատուն: Իսկ այդ հանցագործ աժդահան Շուշիի հարուստ մարդկանցից մեկն էր՝ Շահադաքար Արմադանով անունով: Ավելի սահմնկեցուցիչն այն էր, որ մի օր՝ առավոտ կանուխ, երբ լույսը նոր էր բացվում, բակում աղմուկ է բարձրանում այն առիթով, որ Գրետա Սարկիսովնայի վտիտ ու ծերացած մարմինը նետվել է պատշգամբից: Ցավալին նաև այն է, թե իբր այդ հայուհին մահից առաջ զղջման այսպիսի նամակ է թողել. «Ատում եմ ինձ՝ հայերի կատարած հանցագործությունների համար: Ես արհամարհում եմ իմ ազգին և այդ պատճառով էլ չեմ ուզում ապրել այս աշխարհում: Ղարաբաղը Ադրբեջանին է պատկանում: Կեցցե Ադրբեջանը»¹:

Բժիշկ Նուվարիշը չէր կասկածում, որ այդ «ինքնասպանությունը» հենց նույն շուշեցի հրեշի ձեռքի գործն է:

Վեպում էջ առ էջ ներկայացվում են Բաքվում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններն ու բարձիթողությունը: Յուրաքանչյուր անհատի կյանք վտանգված է: Կազմակերպվում է «Ժողովրդական ճակատ», որի յուրաքանչյուր անդամ մեկական կամ նույնիսկ մի քանի զենք ուներ:

Վեպի պատումի ընթացքում հանդես է բերվում նաև թատրոնի տնօրեն Մոպասան Միրալամովը, որի հետ առնչվում են ոչ քիչ իրադարձություններ և մարդկանց ճակատագրեր:

Աքրամ Ալիսլին ճշմարտացիորեն ներկայացնում է Հանրապետության Տիրոջը՝ որպես փառամուլ ինքնակալի: Նա՝ այդ Տերը, կարող էր անել ամեն ինչ, բնակարաններ նվիրել կամ զրկել, պարզներ տրամադրել կամ չեզոքացնել: Ինչ վերաբերում է հայ ազգաբնակչության հանդեպ վարած նրա քաղաքականությանը, բավական է բերել գրքի հետևյալ հատվածը. «Այդ երեկո Ախունդովի «Մուսյո ժողդանը» խաղալուց հետո թատրոնի ամբողջ կոլեկտիվը հավաքվեց տնօրեն Մոպասան Միրալամովի աշխա-

¹ Աքրամ Ալիսլի, Քարակերտ երազներ, Երևան, 2013, էջ 19:

տասենյակում: Նուվարիչը դերվիշ Մաստալի շահ խաղաց ներկայացման մեջ, և պարզ է դարձել՝ նրա խաղից գոհ է մնացել ինքը՝ Առաջինը: «Դու «Մեռյալներում» Շեյխ Ահմեդ գերագանց ես խաղում,- ասել էր նա: - Չեռուստացույցով երկու անգամ նայեցի: Այդպիսի դերեր շատ խաղա»:

Ակնհայտ էր, որ այդ օրը, ճամփա ընկնելով թատրոն, Տերը նախապես որոշել էր բնակարաններ հատկացնել մի շարք աշխատողների, և երջանիկների թվում անպայման պետք է լիներ Գրետա Մինասովան: «Այստեղ պետք է որ մի հին աշխատող լինե՞ր՝ Մինասովան: Նա դեռ աշխատո՞ւմ է թատրոնում», - ձևի համար տնօրենին հարցրեց Տերը՝ անշուշտ, լավ իմանալով, որ նա թատրոնից երբեք և ոչ մի տեղ չի գնացել: Եվ Գրետա Սարկիսովնան, շփոթված անսպասելի հրավերից, մտավ Մոպասանի աշխատասենյակ, մեռյալից ավելի գունատ դեմքով, իսկ դուրս եկավ այնտեղից երջանկությունից արտասվելով և անվերջ կրկնելով. «Շնորհակալություն, որդիս, անչափ շնորհակալ եմ»¹:

Ես՝ ապրելով և աշխատելով Բաքվում 25 տարի, նախ «Կոմունիստ» թերթի խմբագրությունում և ապա՝ որպես գրականագետ-մանկավարժ, ականատես եմ եղել բոլոր այն խմորումներին, որ ներկայացված են Այլիսլիի վեպում: Լավ հիշում եմ, թե ինչպես քաղաքական խմորումների հասու մեր ընկերներից մեկը պատմեց, թե ինչպես Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի Առաջին քարտուղար Չեյդար Ալիևը խորհուրդ էր տվել պաշտոնյաներին, որ տարիքավոր հայ գործիչներին ձեռ չտան, իսկ երիտասարդների ճամփան փակեն: Եվ նա հանձնարարել էր 5-րդ անգամ 70-ն անց բանաստեղծ Սամվել Գրիգորյանին առաջադրել Ադրբեջանի Գերագույն խորհրդի պատգամավոր, փոխարենը վերացնել Հանրապետության գրողների միության հայկական սեկցիան՝ դրանով իսկ փակուղի ստեղծելով հայ երիտասարդ գրողների համար:

Կասկածից դուրս է, որ Աքրամ Այլիսլին իմացել է այդ մասին՝ ստեղծելով թատրոնի հին աշխատակցուհի Գրետա Մինասովայի կերպարը, որին շուտով ցած են նետում Տիրոջ շնորհած բնակարանից, որ գտնվում էր շենքի 10-րդ հարկում:

Առաջինի քաղաքականության հետ չէր հաշտվում անվանի դերասան Սադայ Սադըղլին: Նա խորհում էր այսպես. «Բաղնիքի բոլով բարեկամներ է ձեռք օգում: Ամեն մեկին մի բան տալիս, մարդուց խլում է ամենակարևորը՝ արժանապատվությունը: Ամորձատում է ժողովրդի հոգին, որ բոլորին դարձնի սուսիկ, հնազանդ»²: Իսկ երբ Առաջինը դիմել է նրան՝ թե

¹ Աքրամ Այլիսլի, *Քարակերտ երազներ*, էջ 29:

² Նշվ. աշխ., էջ 96:

ինչի կարիք ունի, Սադայ Սադըղլին պատասխանել է. «Ես ոչ մի բանի կարիք չունեմ»:

Աքրամ Ալլիսլին վեպում ստեղծել է երազային-տեսիլքային պատկերներ: Նման էջերից է Նուվարիշ Ղարաբաղլու երազը, որի ժամանակ նրան հալածում է Գրետա Սարկիսովայի ուրվականը մահից հետո:

Վեպի հենց առաջին գլխի մեծ մասում ուրույն տեղ է գրավում Սադըղլիի աները՝ բժիշկ Աբասալիևը, որը նույնպես ագուլիսեցի էր, և նրանք ամենուրեք միայն ու միայն Ագուլիսի մասին են խոսում, նշում, որ այնտեղ շատ հայեր են եղել ու շատ հաշտ են ապրել մահմեդականների հետ: Աբասալիևն առանձնապես գովում էր հայերին և ասում. «Այդպիսի կիրթ, ազնիվ, աշխատասեր մարդիկ աշխարհում ուրիշ ոչ մի տեղ չկան»:

Սադըղլին չէր վստահում կուսակցական բարձրաստիճան պաշտոնյաներին: Կենտկոմի անդամներից մեկի հենց դեմքին նետել է. «Էն, ինչ ձեր գրպանում է, ոչ թե կուստոմս է, այլ ատրճանակ: Ձեր ատրճանակով դուք վախեցնում եք ժողովրդին, պահում ասի մեջ, որ ինքներդ կարողանաք չվախենալով ապրել»¹:

Սադայ Սադըղլին կյանքում մի կուռք ունի՝ աները՝ բժիշկ Աբասալիևը և մեկ էլ իր պաշտելի համագյուղացին՝ Յայկանուշ անունով մի հայուհի: Կարոտի զգացումների նկարագրությունից հետո հեղինակը պատկերում է 1988 թվականի դեկտեմբերը: Արդեն մի քանի ամիս Բաքվի փողոցներում ոչ միայն երեկոները, այլև նույնիսկ ցերեկները դժվար էր միայնակ կամ զույգերով անցնող մարդ տեսնել: Հիմա մարդիկ շրջում էին ամբոխով, հոտերով: Եվ խոսելու, բղավելու ու բարբառելու լիիշխան իրավունքը տրված էր միայն այդ ամբոխին: Ու առավել տարօրինակ էր այն, որ բառերի քանակությունը, որ բղավում էին այդ արարածները, հավասար էր բառերի քանակին, որը, հավանաբար, օգտագործել են նախնադարյան մարդիկ որսի ժամանակ.

Ա-զա-տու-թյուն,

Յե-ռա-ցիր,

Ղա-րա-բաղ:

Վերջին օրերին այդ մարդիկ իրենց բառապաշարը հարստացրել էին ևս երեք արտահայտությամբ.

«Էրմանիստան,

Օլմալիսան,

Վասսալամ»:

Այսինքն՝

¹ Աքրամ Ալլիսլի, Քարակերտ երազներ, էջ 34:

«Չայ ես՝

Մահ քեզ,

Սա է վերջը»:

Այս սարսափազդու պատկերով ավարտվում է գրքի առաջին գլուխը:

* * *

Վեպի երկրորդ գլուխը բացվում է հեղինակի հիացական խոսքով՝ ուղղված իր ծննդավայրին. *«Ով Աստված ամենակարող, բարի եղիր, ասա՛ հիմձ, Դո՛ւ ես երկնել Այլիսն իմ, թե՞ Այլիսն է երկնել Քեզ»:*

Այդ հիացական բացականչությունից հետո ներկայացվում է աստվածային այն գեղեցկությունը, որ ունի Ագուլիսը, համեմատվում Միջագետքի, Ակրոպոլիսի, Պարթենոնի և այլ հրաշալի տեսարժան վայրերի հետ: Այստեղ ևս հեղինակն օգտագործում է տեսիլքային հնարանքը: Երագների մեջ է Սադայ Սադըղլին, որ պառկած է Բաքվի հիվանդանոցում: Ինչպես նշում է հեղինակը. «Այս ներաշխարհում էր հայտնվել դերասանն այն պահից ի վեր, ինչ կորցրել էր գիտակցությունը»¹:

Ուշագրավն այն է, որ Սադայ Սադըղլիի խոհերն ու երազանքները կապված են ոչ միայն Ագուլիսի, այլև Էջմիածնի հետ: Ինչպես գրում է Աքրամը. «Սադայ Սադըղլին երբեք չէր եղել Էջմիածնում: Սակայն վերջին օրերին գրեթե ամեն երագում ինչ-որ բարձրաբերձ քարերի ու ժայռերի միջով գնում էր նրա կողմ, և այդ երագներից յուրաքանչյուրում նա մոլորվում էր Վուրագըրդի եկեղեցու կեսճանապարհին, անհամար քարակերտ աստիճանների ու սանդղավանդների մեջ, որոնց մասին շատ էր կարդացել գրքերում և տեսել կինոներում»²:

Աքրամ Այլիսլին՝ արձակագրի երկարամյա փորձով հարուստ, իր տաղանդի շնորհիվ դիմելով ստեղծագործական տարբեր հնարանքների, ներկայացնում է սուևգայիթյան դեպքերը, որ բարոյահոգեբանական ծանր հետք են թողել ադրբեջանցի այնպիսի մտավորականների վրա, ինչպիսին իր վեպի գլխավոր հերոսը՝ Սադայ Սադըղլին է:

Գրողն իր հարազատ երկրի անհեռատես, գազանաբարո, երիտթուրքերի արարքներով զինված ղեկավարների կազմակերպած սուևգայիթյան ցեղասպանության աններելի մեղքերը քավելու հարց է շոշափում: Եվ այդ գաղափարի կրողը Սադայ Սադըղլին է: Վերջինիս տեսիլքի փոխված ցանկությունն է՝ մեկնել Էջմիածին, անձամբ կաթողիկոսի օրհնությամբ ընդունել քրիստոնեություն, այնտեղ ընդմիշտ դառնալ վանական, հայերի

¹ Աքրամ Այլիսլի, Քարակերտ երագներ, էջ 49:

² Նշվ. աշխ., էջ 90:

հանդեպ մահմեդականների գործած չարիքը ներելու աղոթքով Աստծուց թողություն հայցել: Դա մի ցանկություն էր, որ համակել էր Սադայ Սադըղլիին սուևգայիթյան դեպքերից հետո: Նույնիսկ հետագայում նա չէր կարողանում հասկանալ՝ երազո՞ւմ, թե արթմնի է այդ ցանկությունը համակել իրեն: Սակայն հենց այդ առավոտ նա արթնացել էր բերկրալից, նախաճաշելուց հետո, հուզախռով հաղորդակից դարձրել կնոջն իր նոր ֆանտաստիկ գաղափարին: Կինը՝ Ազադա խանումը, իմանալով այդ մասին, զանգում է Մարդաքյան՝ իր հորը: Իսկ հայրը՝ բժիշկ Աբասալիևը, փեսայի երազանքը կատակի վերածելուց հետո հայտնում է աղջկան, որ ինքը նոր գտել է այն հայ վաճառականի օրագիրը, որ վերաբերում է Ազուլիսի պատմությանը: Դա Ջաքարիան է եղել, գրագետ մի մարդ, նաև լավ վաճառական: Դայրը զարմանքով հարցնում է, թե հայերն ինչու են ստեղծել Ազուլիսը՝ դրախտային այդ անկյունը՝ շնագայլերով ու օձերով լի լեռների գրկում, ուր քարերը միլիոն անգամ շատ են, քան հող ու ջուրը: Մի՞թե աշխարհում հայերի համար այլ տեղ չկար: Միևնույն է, նա Ազուլիսն ավելի գեղեցիկ է համարում, քան Էջմիածինը: Ի պատասխան կատակի՝ Ազադան հասկացնում է հորը, որ Սադայը հիվանդագին է վերապրում բաբվեցի յուրաքանչյուր հայի ճակատագիր, ասես միայն ինքն է պարտավոր պահպանել նրանց բոլոր ոտնձգություններից: Սադայի համար ցանկացած հայ դարձել է ավելի թանկ, քան ինքը: Նա Ազուլիսի այս հայերի մասին է մտածում միայն և բնավ չի կարողանում հասկանալ, որ մերօրյա հայերը մեր այս անգլուխ վայրահաչներից լավը չեն: Նա ոչ մի կերպ չի կարողանում մոռանալ Ազուլիսում թուրքերի կազմակերպած սպանողը, որն ինքը չի էլ տեսել:

Ազադան դիմում է հորը, որ նա է այդպես դաստիարակել փեսային՝ Սադային: Աբասալիևը պատասխանում է. «Ոչ, աղջիկս, այստեղ ես գրեթե մեղք չունեմ: Նա ի ծնե ազնիվ մարդ է, խղճմտանքով և ոյուրազգաց: Եվ խնդիրն այն չէ, թե ինչպիսին են դարձել ներկայիս հայերը, այլ այն՝ ինչպիսին ենք մենք հիմա: Սադայի ցավն այն կամ ներկայի հայերը չեն: Նա մտածում է իմ ու քո՝ մեր ազգի մասին միայն»¹:

Գրողն իր ստեղծած կերպարի միջոցով առաջ է քաշում բարության և գթասրտության սկզբունքները, առանց որոնց չի կարող լինել ոչ անհատների և ոչ էլ ազգերի փոխադարձ սեր ու հարգանք:

Այլիսցի ադրբեջանցիները պատմական Ազուլիսի վանքը անվանել են Վանգ՝ այնքան հոյակերտ, որ Աբասալիևը հաճախ է կրկնել. «Վանգի մեր եկեղեցին Էջմիածնի ճշգրիտ կրկնօրինակն է»: Այս խոսքերը նա շատ էր կրկնել ապագա փեսայի՝ Սադայի ներկայությամբ:

¹ Աքրամ Այլիսի, Քարակերտ երազներ, էջ 52:

«Քարակերտ երազներ» վեպն ստեղծելիս Աքրամ Այլիսլին դիմել է կոմպոզիցիոն տարբեր ձևերի, ինչպես նաև սյուժեի զարգացման տարբեր եղանակների: Նա անդրադարձների օգնությամբ ներկայացնում է անցյալը, ներկան, ապա բնութագրում ժամանակաշրջանները: Այս ամենի ընթացքում նրա ուշադրության կենտրոնում Ազուլիսն է՝ ադրբեջաներեն դարձած Այլիս: Նա տեսել և համոզվել է, որ Ազուլիսը չեն մոռանում այն հայերը, ում արմատներն այդ բնակավայրից են, նաև նրանք, ում հետաքրքրում է նրա պատմությունը: Այս առումով հետաքրքրությամբ են ընթերցվում այն էջերը, որտեղ նկարագրվում է ազուլիսեցի Յայկանուշի տասներեք-տասնչորս տարեկան թռուռուհու՝ Լյուսիկի այցը Ազուլիս 1952 թվականին: Այդ ամռանը առաջին անգամ Լյուսիկը Երևանից եկել էր Ազուլիս և անդադար նկարում էր գլխավոր եկեղեցին՝ նրանում նշմարելով Աստծո լույսն ու ժպիտը, էջմիածնի կրկնօրինակը: Այդ երևույթը հետաքրքրում էր նաև Սադային:

Այս համապատկերին գրողը ներկայացնում է բժիշկ Աբասալիևին իր դատեր՝ Ազադայի հետ: Նա տեղավորվելուց հետո ամեն առավոտ՝ մինչև արևածագ, զբոսանքի էր գնում Վանգի եկեղեցի: Բժիշկ Աբասալիևը, ինչպես և իր մեծ տոհմը, վայելում էր ազուլիսեցիների հարգանքը: Նա կարող էր մտնել ցանկացած տուն, անել նաև դիտողություններ այն կանանց, ովքեր մաքուր չեն պահում բակերը: Նա պաշտպանում է հայուհի Անիկոյին, որը միշտ նախատում էր ծերունի Միրալի Քիշիին, որ եկեղեցին վերածել էր խորհանոցի: Աբասալիևի խորհրդով նա ազատում է եկեղեցին, լավ մաքրում, լվանում ամեն բան, իսկ բանալին անձամբ հանձնում Անիկոյին:

Աքրամ Այլիսլին իր հերոսների միջոցով ներկայացնում է Ազուլիսի անցյալն՝ ինչպես եղել է: Այսպես՝ բժիշկ Աբասալիևը պատմում է, որ ժամանակին Ազուլիսում եղել է շուրջ տասներկու եկեղեցի: Դրանցից ութի տեղը գիտեր Սադայ Սադըղլին: Մյուս չորսի ավերակների տեղը հայտնի չէր նույնիսկ բժիշկ Աբասալիևին:

Յեղիմակը, սակայն, ավստոսանքով նշում է, որ այդ ութ եկեղեցիներն այնքան էլ հնարավոր չէր եկեղեցի կոչել, որովհետև նրանցից մնացել էին միայն խղճուկ ավերակներ:

Գրքից իմանում ենք, որ այդ եկեղեցիներից ամենահինը այլիսցիները կոչում էին Իստազըն: Նույնիսկ հիմա Այլիսում որևէ մեկին անհնար է համոզել, որ իրականում այն կոչվում է ոչ թե Իստազըն, այլ Աստվածատուն, որը հայերեն նշանակում է հենց Աստծո տուն, և այդ ավերակները, որոնցից անվնաս մնացել են լոկ երկու պատ և երկու նկուղ, մի ժամանակ հայերի համար եղել են իրենց Մեքքան ու Մեդինան: Այսքանից հետո

հեղինակը կատարում է այսպիսի հուզիչ ընդհանրացում. «Գյուղից զգալի հեռու գտնվող այդ «հայկական Մեքքայի» փրկված նկուղները հիմա հովիվների և անասունների կացարան են սոսկ, իսկ նրա ավերակ պատերը կանգուն էին մնացել ասես լոկ նրա համար, որ մարդկանց հիշեցնում են, թե այս աշխարհում անցողիկ է ամենայն բան, անգամ եթե այն հենց «Աստծո տունն է»¹:

Այլիսում մյուս երեք եկեղեցիները կոչվում էին Աքքիլսե (Սպիտակ եկեղեցի), Եթին քիլսե (Որբ եկեղեցի) և Մեյդան քիլսե (Յրապարակի եկեղեցի): Իսկ պահպանված եկեղեցիները՝ Վուրագըրդը, Վանգը, Քարակերտ եկեղեցին և Դոպը, թեև մնացել էին առանց Աստծո խնամքի, սակայն դեռ լիովին չէին կորցրել երբեմնի վեհությունը:

Ա. Այլիսիին ամեն դեպքում ճշմարտացիորեն շեշտում է, որ հայերն այստեղ ավելի հին բնակիչներ էին, քան մահմեդականները: Նա գրում է. «Թե ինչպես էին կառուցել այդ չորս եկեղեցիները, որոնցից յուրաքանչյուրի թիկունքում բառիս բուն իմաստով կանգնած էր մի լեռ, Այլիսի մահմեդական բնակչությունը, բնականաբար, երբեք չէր տեսել: Սակայն այդ եկեղեցիների և նրանց թիկունքում կանգնած լեռների ներդաշնակությունը նկարելու համար հայ լիները կամ պատմության այբուբենն իմանալը բնավ պարտադիր չէ: Յուրաքանչյուր եկեղեցի այն գույնի էր, ինչ նրա թիկունքում կանգնած լեռը, ասես ամբողջությամբ կերտվել էր այդ լեռից՝ հատվելով և դրվելով այնտեղ, ուր Աստծուն դյուրին և հարմար կլինի հայել այն: Եվ յուրաքանչյուր եկեղեցի առանձին թվում էր այն լեռան հարազատ զավակը, որի ստորոտում կառուցվել էր»²:

Ա. Այլիսիին ստեղծել է մի շարք կերպարներ, որոնք մի կողմից ներկայացնում են Ազուլիսի մահմեդական ազգաբնակչության միստն ու կացը, սովորությունները, ապրելու կուլտուրան և բնավորության հիմնական գծերը, մյուս կողմից դրանք շաղկապում է նրա հին տերերի՝ հայերի ճակատագրի հետ: Այդ կերպարներից են Ջամալը՝ Սադայի դասընկերը մինչև 7-րդ դասարանը, որից հետո նա զբաղվել է հովվությամբ, խելագար Գուլուն՝ անսովոր բնավորության տեր, որը միշտ օրհների հետ է զրուցում, և՛ նրանք, ովքեր մի օր՝ 1919-ին, միացան Ադիֆ բեյի հրոսակներին, սրի քաշեցին հայ հարևաններին

Ավելորդ չեմ համարում բերել հայերի ցեղասպանության այդ սահմուկեցուցիչ պատկերները, որոնց մասին պատմում է բժիշկ Աբասալիևը Սադայ Սադըղլիին:

¹ Աքրամ Այլիսի, Քարակերտ երազներ, էջ 57:

² Նշվ. աշխ., էջ 58:

Շրջելով Ազուլիսի հայկական թաղամասում՝ բժիշկը ներքին մի ցավով ու վրդովմունքով պատմում է, որ, իրոք, գյուղում ջիներ, այսինքն՝ ոգիներ կան: «Գիտե՞ս ում տանն է ապրում Գուլուն,- ասում է բժիշկը,- մի ժամանակ այստեղ ապրել է մի հայ՝ Մինաս անունով քարտաշ վարպետը: Նրա նախնիներն էլ հնուց ի վեր քարտաշներ են եղել: Եկեղեցիներից շատերի քարերը Մինասի նախնիների ձեռքի գործն են: Մինասն էլ է պատրաստել սանդեր, երկանքներ, ջրաղացքարեր, այլևայլ բաներ: Այս գիժ Գուլուի պապ Աբդուլան սրա պես անբան էր ու քարսիրտ տխմար: Շուկայում բեռնակիր էր աշխատում, համբալ էր, ամվակից ջուր էր կրում թեյարաններին, մի քանի գրոշ ձեռք գցում ու մի կերպ ապրում: Եվ տես ինչ եղավ. երբ Ադիֆ բեյը հրամայեց կոտորել Այլիսի հայերին, այդ շուն Աբդուլան հանկարծ առյուծ կտրեց: Վազեց տուն, վերցրեց կացինն ու նետվեց Մինասի տուն: Մինասը նստել ու հանգիստ քար էր տաշում: Սրիկա Աբդուլան կացինը ձեռքին հարծակվեց Մինասի վրա ու կտրեց նրա գլուխը, իսկ հետո չխնայեց խեղճի ոչ կնոջը, ոչ երեխաներին»¹:

Ներկայացնելով այս սարսափելի տեսարան-եղելությունը՝ բժիշկն ավելացնում է, որ Գուլուն չի կարող հանգիստ ապրել Մինասի տանը: «Չի կարող, Աստծով են երդվում,- հաստատում է նա,- խոշտանգված Մինասի ոգին նրան երբեք հանգիստ չի թողնի: Աստված այնքան մոռացկոտ չէ, որ ների նման հրեշավոր ստորությունը»²:

Շարունակվում է բժշկի և Սադայ Սադըղլիի շրջագայությունն ու գրույցը: Բժիշկը նշում է, որ Այլիսի յուրաքանչյուր ընտանիքում, որը հայի տուն է հափշտակել, հոգեկան հիվանդներ կան, որ այդ ընտանիքներից ոչ մեկում խաղաղություն չի տիրում: Եվ նա թվարկում է նման ընտանիքները: Դրանցից են ադրբեջանցիներ Մուզաֆարի, Կաբան Գուլամի, Ղազանֆարի, Մահմեդաղայի և այլ ավազակների ընտանիքները:

Մտնելով ադրբեջանուհի պառավ Նուբարի բակը, հարցուփորձ անելով նրա դրության մասին՝ բժիշկը կրկին ներկայացնում է մի ուրիշ դաժան իրողություն: Բժշկի հարցին, թե՞ պառավը հիշո՞ւմ է այս տանն ապրող հային, նա պատասխանում է. «Բա ոնց, Առաքելն էր, դու ինձնից լավ գիտես: Ու կարծես հենց երեկ էր, որ նրա կին Էսփին ցած նետվեց ժայռից: Ինչ գեղեցիկն էր: Հիշո՞ւմ ես՝ ինչպես էր երգում հարսանիքներին: Եվ իրենց, և՛ մեր՝ մահմեդականներիս հարսանիքներին»³: Շարունակվում է գրույցը, հայտնի է դառնում, որ Առաքելին սպանել են իր հողամասում աշխատելիս. նրան սպանել է օձ որսացող Աբդուլ-ալիի տղան: Պարզվում

¹ Աբրամ Այլիսի, Քարակերտ երազներ, էջ 63-64:

² Նշվ. աշխ., էջ 64:

³ Նշվ. աշխ., էջ 67:

է նաև, որ Առաքելի տանն ապրող պառավ Նուբարը ևս օրերով խոսում է ինքն իր հետ, որ հատուկ է հոգեկան հիվանդներին:

Մի կողմ թողնելով հոգեկան հիվանդների մասին գրույցը՝ բժիշկը դիմում է Սադային. «Այլիսի բնակիչներից ոչ մեկը, որ այդ ժամանակ մտադրվել էր իր կյանքը բարելավել հայերի հանդեպ բռնություն գործելով, առ օրս հանգիստ չունի: Ինքդ ես լսում, թե ինչպես են ամեն երեկո բղավում և իրար հայիոյուն Մուղղուսի Ալեքսանի տունը հափշտակած Ղազանֆարի երկու որդիները: Եղբայրները պատրաստ են իրար կոկորդ կրծել: Ահա այդպես զավակները վերին պատիժ են կրում ծնողների մեղքերի համար: Նրանց որդիները, ում մենք տանջել ենք, մեզ հանգիստ ապրել չեն տալիս: Ահա մսագործ Մահմեդաղան փողոցում դաշույնով մորթեց քահանա Սկրտիչի դստերը: Ես Մահմեդաղային ծեր տարիքում չեմ տեսել, բայց Բաքու այցելածները պատմել են, որ նա սատկել է շան մման»¹:

Ագուլիսում հայկական կոտորածներին մասնակից և ականատես մարդիկ հետագայում պատմում էին նոր սերունդներին: Ինչպես գրողն է նշում, այդ սպանդի մասին յուրաքանչյուրը պատմում էր յուրովի՝ ելնելով մարդու և մարդկայնության մասին իր անձնական պատկերացումներից: Չնայած դրան՝ վկաներից ոչ ոք չէր թաքցնում այն, ինչ տեսել էր: Տարբեր մարդկանց պատմություններում հավաստի առկա էին միևնույն փաստերը: Եվ բոլորն էլ համակարծիք էին, թե ինչպես է սկսվել ամեն բան և ինչպես է ավարտվել: Ու ներկայացվում է իրական դեպքը.

«Եղել է այսպես. որպեսզի Այլիսի հայ բնակչությունը ոչինչ չկռահի, Ադիֆ բեյի 30-40 հեծյալները վաղ առավոտից շրջել են Այլիսի տներով՝ և՛ հայերի, և՛ մահմեդականների, հայտարարել, որ այսօր զինադադար է հռչակվելու, ուստի բոլորը շտապ պիտի հավաքվեն այսինչ հայի բակում: Այն բանից հետո, երբ ժողովուրդը հավաքվել է մատնանշված տեղում, թուրք զինվորները մահմեդականներին առանձնացրել են հայերից, շարք կանգնեցրել բակի տարբեր անկյուններում: Հանկարծ հնչել է բարձր հրաման. «Կրակ»: Եվ բակը բոլոր կողմերից շրջապատած թուրք զինվորները կրակի կարկուտ են տեղացել հայերի վրա: Շատերը զոհվել են անմիջապես, ողջ մնացածներին՝ մինչև վերջին մարդը, դաշույններով կտրել են կոկորդները և խողխողել սվինահար: Նրանց, ում հարկավոր է եղել թաղել տեղում, թաղել են իսկույն, մեծ փոս փորելով: Ում համար բակում և այգում տեղ չի ճարվել, նետել են գոմերը, մերձակա տների նկուղներն ու վառել: Մահմեդական կանայք, ովքեր այդ օրը տնից դուրս

¹ Աքրամ Այլիսի, Քարակերտ երազներ, էջ 65-66:

գալ նույնիսկ չէին համարձակվել, կատարվածը հետագայում նկարագրում էին այսպես. «Բոլոր առունների ջրերը մի ամբողջ շաբաթ կարմրել էին արյունից»: Ադիֆ բեյի ձին սև էր ազռավի նման: Ադիֆը՝ ձին հեծած, կանգնած էր դարպասի մոտ: «Կրակ» բղավելով նա մտրակեց ձիուն ու հեռացավ»¹:

Բժիշկ Աբասալիևը գրքում ներկայացվում է որպես Ազուլիսի պատմագիր, հոգեբան, նույնիսկ յուրատեսակ փիլիսոփա: Եվ Աբասալիևից է տեղեկանում դերասան Սադրլիև, որ նշանավոր վանական Մեսրոպ Մաշտոցը հենց Այլիսում է ստեղծել հայոց տառերը, որ հայտնի գրող Րաֆֆին ժամանակին դասավանդել է տեղի դպրոցում... Խոսելով այս նշանակալից երևույթների մասին՝ բժիշկ Աբասալիևը ներքին հոգեկան մի մղումով դիմում է Սադային. «Այլիսը, պատանյակ, աստվածային կատարելություն է... Եվ այն բանի համար, ինչ մենք արեցինք նրա հետ, ստիպված ենք լինելու Ահեղ Դատաստանի օրը պատասխան տալ Աստծո առջև»²:

Ազուլիսի կարոտը չի մարել երբեք նրանց սրտերում, ովքեր ինչ-որ չափով կապված են եղել նրա հետ: Բժիշկ Աբասալիևը վկայում է, որ մի հայ աղջիկ, որ փրկվել է 1919 թվականի կոտորածից, Ֆրանսիայում աճեցրել է նոր ծաղիկ և անվանել Ազուլիս: Թբիլիսիում ապրում է նկարչուհի Գայանե Խաչատրյանը, որն ինը-տասը տարեկանից սկսած՝ ամբողջ կյանքում նկարում է Ազուլիսի եկեղեցիները միայն: Ըստ բժիշկ Աբասալիևի՝ Աստծո 1001 անուններից մեկը հենց Այլիս է:

Ահա այս գնահատականից է հետևում Աքրամ Այլիսլիի հետևյալ ընդհանրացումը, որի ենթատեքստը խորն իմաստ ունի. «Այլիսի հանդեպ այդ սերը որևէ կապ չունի ոչ հայերի, ոչ մահմեդականների հետ: Դա, ավելի շուտ, ճշմարիտի հանդեպ մարդու հավատարմության ևս մեկ յուրատիպ և հիրավի վեհապանծ դրսևորում էր»³:

Տվյալ դեպքում ճշմարիտի գաղափարն ու իրական դեմքը Ազուլիսն է, որի հիմնադիր ու կառուցող հայերի հանդեպ կատարվել է ոճրագործություն հարևանների կողմից և երբեք չի մոռացվելու, և, որ կարևորն է, ադրբեջանցի անվանի գրողը իր հերոսի շուրթերով ներկայացնում է այդ եղելությունը՝ այն համարելով ստորություն ու հանցագործություն Աստծո հանդեպ: Ահա այս դեպքում է ժողովուրդն ասում. «Կրակ էլ տաս՝ ճշմարիտին մահ չկա»:

¹ Աքրամ Այլիսլի, Քարակերտ երազներ, էջ 69-70:

² Նշվ. աշխ., էջ 71:

³ Նշվ. աշխ., էջ 73:

Աքրամ Այլիսլին բժիշկ Աբասալիևի միջոցով գոհունակությամբ է ներկայացնում հայուհի Հայկանուշին, որն աչքի է ընկնում մաքրասիրությամբ, աշխատասիրությամբ: Նրա աճեցրած կիտրոնի ծառերն ասես խորհրդանշում են բնության հետ ունեցած իմաստնալից կապն ու բարիքներ ստեղծելու կարողությունը: Ազուլիսցի նրա հարևան Ջոհրա արվադը պատմում է, որ գյուղում Հայկանուշի նման լիմոնենիներ աճեցնող չի եղել: Հայկանուշը ունեցած-չունեցածը հավաքել է, գնացել Երևան իր որդի ժորայի մոտ: Իսկ լիմոնի ծառերը նվիրել է Ջոհրային: Վերջինս պատմում է այն մասին, որ Հայկանուշը Երևանում լավ է ընդունում շուկա գնացած ազուլիսցիներին: Իսկ երբ խոսք է բացվում Մահմեդադայի մասին, Ջոհրան անիծում է նրան, որի որդին՝ Ջինգյոզ Շարաբանին, ավելի վատն է, քան հայրը:

Հեղինակի ենթաբնագրային արձագանքն այն մասին է, որ շնից շուն է ծնվում: Այդ Շարբանն է, որ ինչ-որ տեղ մի հին գանգ է գտել, ցանկապատի վրայով նետել Ջուլֆի Աբասալիևի այգին, որի վրա կացրած թղթին գրել էր. «Սա ես եմ՝ տերտեր Սկրտիչը, հայկական լրտես Ջուլֆի Աբասալիևի հարազատ եղբայրը»¹:

Աքրամ Այլիսլին ներկայացնում է նաև իր դասընկերներ Ռումբ Բաբաշին և Ջամբուլ Ջամալին: Ջամալի հայրը, որի լուրը Մեծ Հայրենականից հասել էր, թե իբր զոհվել է, պատերազմից հետո Ղազախստանից նամակ է ուղարկում Այլիս՝ ընտանիքին, որ ինքն արդեն երկրորդ անգամ ամուսնացել է և այլևս չի վերադառնալու: Ջամալի մայրը խելագարվում է և հրաժեշտ տալիս կյանքին:

Ջամալը որբանում է, անտերանում: Նրան հետևում է Հայկանուշը՝ իմանալով, որ նրան խնամող չկա: Ու մի անգամ, ինչպես պատմում է Սադայը, եկեղեցու բակում, կեռասենու տակ Հայկանուշը խարույկ է վառում, մեծ պղնձե կաթսայով ջուր տաքացնում, օճառով լվանում նրա գլուխը, որտեղ այնքան ոջիլ կար, որքան մրջնանոցում՝ մրջյուն:

Տարիներ շարունակ Սադայի ականջներում հնչել են Հայկանուշի փաղաքշական բառերն՝ ուղղված որբ Ջամալին՝ գլուխը մաքրելու պահին. «Հարազատս, խղճուկս, որբուկս»: Սադայ Սադըղլիի ականջներում այս բառերը հնչում էին նաև այն ժամանակ, երբ նա ջարդված պառկած էր Բաքվի հիվանդանոցում:

Ջամալի գլուխը մաքրելու պահին ներկա էր նաև Հայկանուշի թոռնուհին՝ Լյուսիկը: Հայկանուշը իր գործը մայրաքար անելուց հետո աղոթում է եկեղեցու բակում: Սադայն այդ ժամանակ ասես հասկանում էր

¹ Աքրամ Այլիսլի, Քարակերտ երազներ, էջ 75:

Հայկանուշի աղոթքը և անգիտակցաբար խաչակնքում կյանքում առաջին անգամ ու նշմարում այն աստվածային լույսը, որ բխում է եկեղեցու գմբեթից: Չնայած Հայկանուշի մայրական վերաբերմունքին, հետագայում երախտամոռությանը են իրենց դրսևորում և՛ Ջամալը, և՛ Բարաշ Ջիյադովը: Ի դեպ, վերջինիս անվան տակ գրքի հեղինակը խորհրդանշում է Հայոց պատմության հայտնի գեղծարար Ջիյա Բունյաթովին:

Գրքի հեղինակը պատմում է, որ Այլիսի երկրորդ՝ աչքի զարնող ու ինքնատիպ հայուհին Անիկոն էր, որին բոլորն Անըղ էին ասում: «Նա խիզախ կին էր,- գրում է Այլիսիին,- հպարտ և կամային: Նա ամեն ինչ կարողանում էր, ամեն ինչ գիտեր, կարող էր մեղվապահներին օգտակար խորհուրդներ տալ մեղվաբուծությունից, մետաքսագործներին՝ շերամապահությունից, բժշկական կրթություն չունենալով՝ ապաքինում էր գյուղի հիվանդներին ու տկարներին, և միայն Ալլահին էր հայտնի, թե որտեղից այդ կնոջն այդքան կրակ և ուժ»¹:

Իսկ ի՞նչ ճակատագիր է ունեցել Անիկոն: Ըստ հեղինակի նկարագրության՝ Անիկոն ականատեսն էր այն բանի, թե ինչպես 1919 թվականի աշնանային այդ սև օրը թուրք զինվորները, հայերին գնդակահարելով, սրածելով, արյան լճում թաղեցին մեծից փոքր, և զոհերի մեջ էին նաև նրա ծնողները, եղբայրները, քույրերը: Ողջ Այլիսը գիտեր, որ տասնամյա Անիկոն այդ օրը թաքնվել է թոնրում ու փրկվել պատահաբար, չորս-հինգ օր այնտեղ մնացել առանց հաց ու ջրի, մինչև որ նրան գտել է միրզա Վահաբի մայրը՝ Ջոհրա արվադը: Միրզա Վահաբը, որը կրթություն էր ստացել Ստամբուլում և համարվում էր Այլիսի ամենաուսյալ մարդը, այդ ժամանակ մոտ երեսուն տարեկան էր: Նա Անիկոյին թաքցրեց իր տանը, մեծացրեց և, իհարկե, բռնի դարձրեց իր կինը: Անիկոն հոգածություն ու քնքշանք էր ցուցաբերում իրենից քսան տարով մեծ ամուսնու նկատմամբ: Նա Միրզա Վահաբին երկու որդի և դուստր պարգևեց: Անիկոն ասում էր, որ մահմեդական դավանանք է ընդունել: Եվ նույն կրակոտությանը, որևէ մեկից չվախենալով, ասում էր, որ անխուսափելի է օրը, երբ հայերը կվերադառնան Այլիս, ու այն կրկին կվերածվի դրախտավայրի: Իրեն մահմեդական կոչող Անիկոն չէր մոռանում Վանգի եկեղեցին, ավլում էր բակը, խնամում վառ ծաղիկները, որոնք ինքն էր աճեցրել և միշտ լուտանքներ էր թափում Միրալի քիչիի նախնիների գլխին, որովհետև Միրալին էր եկեղեցին դարձրել իր պահեստը և դռանը կողպեք կախել: Ինչպես ընդգծում է հեղինակը. «Անիկոյի տունն էլ չորս կողմից հիշեցնում էր հավերժ անթառամ ծաղիկների տոնական ցուցահանդես: Ծաղիկներ,

¹ Աքրամ Այլիսի, Քարակերտ երազներ, էջ 87:

որոնցից Այլիսում ոչ ոք չուներ: Այդ տանը Միրզա Վահաբը հաստատվել էր 1919 թվականի հայկական կոտորածից հետո... Գուցե, ծաղիկներ աճեցնելով՝ նա որոշակի նպատակ էր հետապնդում, կամենում էր անմահացնել սպանված յուրաքանչյուր ազգակցի հիշատակը»¹:

Սադայ Սադըղլին՝ որպես գրքի գլխավոր հերոս և բուն Ազուլիսի ծնունդ, իր հիշողության մեջ միշտ պահպանել է Անիկոյին՝ ոչ միայն իբրև հրաշալի մարդ և կին, այլև իբրև մի տեսակ յուրահատուկ՝ զվարթ և զրնգուն ձայն, որն իր մեջ ներառել էր ողջ Այլիսը՝ տներով, եկեղեցիներով, լեռներով, ճանապարհներով, ծառերով, առվակներով և աղբյուրներով, ձայն՝ վերահաս լուսաբացի զրնգուն ավետաբերը, ինչպես հաստատում է հեղինակը. «Անիկոն միշտ արթնանում էր լուսաբացին և զրնգուն երգում իր բարձրադիր պատշգամբում, ասես ցանկանում էր Այլիսի բոլոր մահմեդականներին ազդարարել, որ Այլիսում դեռ ապրում և հնչում է ձայնը հայ... Դա, անտարակույս, Այլիսի իրական տիրուհու՝ դարերի խորքից հասնող ձայնն էր»²:

Տարիներ անց Բաքվում Սադըղլին իր երազներում լսում էր Անիկոյի ձայնը, ասես Ազուլիսի ամեն առավոտը սկսվում էր հենց այդ ձայնի հետ: Եվ սարսափելին այն էր, որ Սադայը Բաքվում կռահում էր վերահաս անխուսափելի արյունահեղությունը: Ինչպես դա նկատում է հեղինակը. «Սակայն դժբախտությունը հենց այն էր, որ Սադայ Սադըղլին հիմա իր կյանքով չէր ապրում: Տարօրինակ էր. Սադայ Սադըղլին, որի նախնիներից ոչ ոք գեթ մի կաթիլ հայկական արյուն չէր ունեցել (նրա պապերից մեկը ուխտագնացություն էր կատարել Քերբալա, մյուսը՝ Մեքքա), ինչ-որ ժամանակից ի վեր իր մեջ կրում էր ոմն անանուն հայի: Ստույգ՝ ոչ թե կրում, այլ թաքցնում էր: Եվ այս հսկա քաղաքում ծեծված ու անօգնական սպանված յուրաքանչյուր հայի հետ ասես ինքն էլ էր ծեծվում, անարգվում, սպանվում»³:

Սադայը տեսնում էր նաև, թե ինչպես կայարանում մի երիտասարդ հայուհու ադրբեջանցի կանայք վառեցին՝ վրան բեռնափակ լցնելով: Սադայն իր կնոջը՝ Ազադային, այս դեպքը պատմելուց հետո նրա հետ կարծիքներ է փոխանակում Ադրբեջանի ժամանակակից իշխանությունների մասին: Ազադան նշում է. «Վաղուց արդեն ոչ մի իշխանություն չկա: Իսկ եթե կա՝ հենց ինքն է ամենուր թշնամանք սերմանում: Կարծում ես՝ ժողովուրդն էր Սունգայիթի դժոխային մղձավանջը կազմակերպել: Ոչ, թանկագինս, ոչ:

¹ Աքրամ Այլիսի, Քարակերտ երազներ, էջ 89:

² Նշվ. աշխ., էջ 89-90:

³ Նշվ. աշխ., էջ 43:

Դա ՊԱԿ-ի կամ, հավանաբար, այլևայլ մաֆիոզ խմբավորումների վերածված իշխանության մնացորդների կազմակերպածն էր: Երբեք չեն հավատա, Սադայ, թե ադրբեջանցիներն առանց իրական կազմակերպչի կարող էին դիմել այդպիսի խելագար գազանության»¹:

Կարծիքների փոխանակությունն ավելի է խորանում: Ամուսնու հարցին, թե ինչպես է այդպիսի բան ասում, չէ՞ որ եղել է Ալլիսում և գիտի ամեն ինչի մասին, կինը պատասխանում է. «Այո, ես եղել եմ Ալլիսում և գիտեմ, որ թուրքերը գազանաբար են վարվել տեղի անմեղ մարդկանց հետ: Իսկ դու եղե՞լ ես այն վայրերում, որտեղից հայերը վճռվել են հազարավոր դժբախտ ադրբեջանցիների: Գեթ մեկ անգամ մտածե՞լ ես այդ անտուն ու անհույս մարդկանց մասին: Արդյոք նրանց մասին մտածո՞ւմ են այս արյունահեղ խառնաշփոթն ստեղծած հայ հրահրիչները, որոնց նզովում են հենց իրենք՝ և՛ Ղարաբաղի, և՛ տեղի բաքվեցի հայերը: Իսկ նրանք հիմա թքած ունեն մեզ վրա միայն այն պատճառով, որ, իրենց կարծիքով, մենք էլ ենք թուրք: Եթե թուրքերը ձեզ կոտորել են՝ գնացեք նրանց հետ հաշիվներ պարզեք, ի՞նչ կապ ունենք մենք: Այդ հայ վայրահաչներն ինչո՞վ են մեր վայրենիներից լավ: Ինչո՞ւ այդ մասին չես մտածում, թանկագինս: Ինչ սկսել է այս ամենը, ինքդ քեզ կորցրել ես, գիտե՞ս ինչպես ես նիհարել, սիրելիս: Քեզ չես խղճում, գոնե ինձ խղճա: Չասկացիր, Սադայ, այդպես չի կարելի: Այս աշխարհում դու ոչինչ չես փոխի, քեզ կկործանես վերջնականապես: Ասում ես՝ կայարա՞ն էիր գնացել: Ախր ի՞նչ գործ ունեիր այնտեղ, սիրելիս»²:

Սադայը դժվարանում է պատասխանել կնոջը: Նա ասես խելագարության շենին էր, նա ասես օտարացել էր և՛ կնոջից, և՛ ընդհանրապես ամենայն երկրայինից: Ազադան ճիշտ հասկացավ, թե ինչու էր անուսինը գնացել կայարան: Չասկացավ, որ Սադայն ամբողջ օրերով դեգերում էր այնտեղ, որպեսզի դիմավորի և ճանապարհի մանկութ իրեն ծանոթ Բաքու-Երևան գնացքը: Այդ գնացքով, որ անցնում էր նրա հարազատ Օրդուբադով, նա ամեն օր մտովի ճամփորդում էր, փայփայում նոր գառանցագին երազանք էջմիածնի մասին և պատրաստվում էր քրիստոնեություն ընդունել:

Դժվար չէ նկատել, որ Սադայ Սադրլլիի կնոջ պատասխան- դատողությունների մեջ մեղադրանքներ կան նաև հայկական կողմի հանդեպ: Խոսքը վերաբերում է հազարավոր այն ադրբեջանցիներին, ում հայերը վճռվել էին Չայաստանից, ուր նրանք ապրում էին, իսկ վճռվելուց հետո մնացել են անտուն ու անհույս: Եվ այդ ամենի պատճառը Ազադան

¹ Աքրամ Ալլիսլի, *Քարակերտ երազներ*, էջ 95:

² Նշվ. աշխ., էջ 95-96:

համարում է արյունահեղ խառնաշփոթություն ստեղծած հայ հրահրիչներին:

Գրքի գլխավոր հերոսներից մեկի՝ Ազադայի այս կարծիքը գրքում մնում է անպատասխան: Հասկանալի է, որ Ադրբեջանում տիրող հակահայ քաղաքականության վտանգավոր պայմաններում գրողը չէր կարող ուղղակի պատասխանել կնոջը՝ ժխտելով նրա անընդունելի կարծիքը:

Երբեք ու երբեք չի կարելի Սումգայիթի և Բաքվի հակահայկական ոճրագործություններն ու կոտորածներն արդարացնել և դրանք առնչել Հայաստանից ադրբեջանցիների արտաքսմանը:

Նախ՝ Հայաստանում ադրբեջանցիների դեմ հայերի ընթուստությունը և նրանց արտաքսելն սկսվեց 1988թ. փետրվարի 26-28-ը՝ Սումգայիթում կազմակերպած հայերի ջարդերից ու սպանություններից հետո:

Երկրորդ՝ ոչ ոք չի կարող մատնանշել և ապացուցել, որ որևէ հայ որևէ ադրբեջանցու ջարդել կամ սպանել է: Նման դեպք չի եղել, և դա բացատրվում է հայ ժողովրդի քրիստոնեական բարոյահոգեբանական խառնվածքի ու վարքագծի հազարամյա կոփվածքով:

Երրորդ՝ Սումգայիթում, Բաքվում և, ընդհանրապես, Ադրբեջանի հայաշատ քաղաքներում ու հայկական շրջաններում հայերի դեմ իրականացված ջարդերը, կոտորածները, արտաքսումները չի կարելի համարել «հայ հրահրիչների» գործողությունների արդյունք:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարն սկսվել է այն օրվանից, երբ, թուրքամետ Լենինի և հայաստյաց Ստալինի որոշմամբ, Նախիջևանն ու Լեռնային Ղարաբաղը նետվեցին նորաթուխ Ադրբեջանի հայակույլ երախը: Խորհրդային 70 տարիների ընթացքում Ադրբեջանի կառավարող շրջանների հանցագործ քաղաքականության պատճառով Արցախում հայ ազգաբնակչությունը, որ 1921թ. 94,4 տոկոս էր, 1988-ին դարձավ 70 տոկոս: Առանձնապես կուսակցության Ադրբեջանի ԿԿ առաջին քարտուղար Յեյդար Ալիևի վարած քաղաքականության հետևանքով միայն 1969թ. սկսած, Արցախում ադրբեջանցիների թիվը ավելացավ 10 տոկոսով: Բաքվի Վ.Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը 1969թ. Բաքվից տեղափոխվեց Ստեփանակերտ՝ դրան գումարվելով նաև ադրբեջանական բաժինը, այն դեպքում, երբ Բաքվում, Նախիջևանում, Կիրովաբադում գործում էին հինգ մանկավարժական բուհեր՝ ադրբեջաներեն լեզվով: Կարճ ժամանակաընթացքում Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի գերակշիռ մասն արդեն ադրբեջանցիներ էին, իսկ

ադրբեջանցի ուսանողների թիվը համարյա կրկնակի ավելին էր, քան հայկական բաժնի ուսանողներինը:

Լեռնային Ղարաբաղի կոլտնտեսությունները երեք անգամ ավելի տուրքեր էին վճարում Յանրապետությանը, քան հարևան ադրբեջանական գյուղերը:

Ադրբեջանի կառավարությունը տարեցտարի ավելացնում էր հայկական գյուղերի ոչխարաբուծական ֆերմաների թիվը և պահանջում ավելացնել ոչխարների գլխաքանակը: Այդ պատրվակով յուրաքանչյուր հայկական գյուղում բնակություն էին հաստատում ադրբեջանցի հովիվները՝ իրենց բազմաքանակ երեխաներով:

Ադրբեջանի կառավարության պահանջով հավաքագրվում էին հայ պատանիները և տեղափոխվում Բաքու՝ որպես նավթարդյունաբերության բանվորներ: Իսկ դա ավելի էր արագացնում Արցախի հայաթափման գործընթացը:

Արցախի առողջապահության բնագավառում աշխատելու իրավունք չունեին Յայաստանում կրթություն ստացած երիտասարդ հայ բժիշկները: Փոխարենը տեղավորում էին ադրբեջանցի մասնագետներին:

Անվտանգության, կոնկրետ՝ ոստիկանության բնագավառի աշխատողներն Արցախում, կոնկրետ՝ Ստեփանակերտում, արդեն կազմում էին գերակշիռ մասը:

Ահա այն ոչ լրիվ հակահայ քաղաքականության արդյունքները, որոնք էլ հենց թելադրեցին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մտավորականությանն ու ազգաբնակչությանը՝ սահմանադրորեն բարձրացնել Մայր Յայաստանին վերամիավորվելու պահանջը: Սակայն և՛ Ադրբեջանի, և՛ ԽՍՀՄ ղեկավարությունը՝ Գորբաչովի գլխավորությամբ, մերժեցին արցախցիների արդարացի պահանջը, դեռ ավելին, Ադրբեջանն սկսեց դաժան պատերազմ Արցախի դեմ: Արցախահայությունը ոտքի ելավ՝ պաշտպանելու իր հայրենիքն ու ազատ ապրելու իրավունքը:

Այնպես որ, չի կարելի Սումգայիթում, Բաքվում և ամբողջ Ադրբեջանում կազմակերպված հայկական ջարդերի ու կոտորածների մեղքը բարդել «հայ հրահրիչների» վրա: Այս բարդույթի պատասխանն է, որ հեղինակը շրջանցել է «Քարակերտ երազներ» գրքում: Սակայն այս փաստը չի կարող ստվեր ձգել այդ չափազանց արժեքավոր գրքի վրա, քանզի նրանում բերված փաստերն ու իրադարձություններն ապացուցում են և՛ Նախիջևանում, և՛ Ադրբեջանում ազերի-թուրքերի իրականացրած հայկական կոտորածները՝ նախ 1918-1919, ապա 1988-1990 թվականների

ընթացքում: Հեղինակը միաժամանակ դատապարտում է այդ հանցագործության կազմակերպիչներին:

«Քարակերտ երազների» երրորդ գլուխը բացվում է հետևյալ բնաբանով. «Սեփական ժողովրդին բարոյական ցեղասպանության ենթարկելու համար նախկին տիրոջը մեղադրում է երիտասարդ հեղինակն այն պիեսի, որի մեջ Սադայ Սադըղլին երբեք չի խաղալու»: Աքրամ Այլիսլին այստեղ արտահայտում է իր դժգոհությունը ադրբեջանցի այն գործիչներից, ովքեր հանուն իրենց շահի կարող են հաշտվել կեղծիքի, ստի ու ստորության հետ:

Գրքի գլխավոր հերոսը՝ Սադայ Սադըղլին, չի ընդունում Բաքվի դրամատիկական թատրոնի տնօրեն Մուպասան Միրալամովի հարմարվող բնավորությունը: Թատրոնում նոր բեմադրվող պիեսում գլխավոր դերը ցանկանում է հանձնարարել Սադային: Վերջինս, սակայն, չի մարմնավորում այն դերը, որի արարքում կարող է դրսևորվել քծնանքն այն ղեկավարի հանդեպ, որին ժողովուրդը չի ընդունում և չի հարգում:

Այս չլուծվող հարցի քննարկման պահերին ներկայացվում են նաև Սադայի մանկության տարիների ընկերները: Առանձնապես ընդգծված է Ջամալի կերպարը: Վերջինս եկել էր գյուղից: Սադայի՝ կարոտ հարուցող հարցին, թե ինչ նորություն կա գյուղում, Ջամալը դրսևորում է իր երախտամոռությունը հայուհիների հանդեպ: Նա հայտնում է, որ գարնան շեմին մահացավ Միրալի Քիչին: Այս վերջին օրերին էլ Անըղը հեռացավ կյանքից: Ջամալը վայրահաչում է այսպես. «Թե ինչքան չարություն կար պառավի մեջ, նույնիսկ մահվան շեմին էլ մնաց հայուհի: Երբ մեր կնանիք գնացին նրան հրաժեշտ տալու, բուլդրին հայտարարեց՝ իբր մտքով չի էլ անցել փոխել իր հավատքը և երբեք իր Աստուծոց չի հրաժարվել: Այսինքն՝ ես ձեզ, կուլտուրական ասած, քթներից բռնած ման եմ տվել... ինչ ստոր եմ էդ հայերը»¹:

Սադայը չի հանդուրժում Ջամալի վայրահաչությունը՝ դիմելով. «Ի՞նչ է, հայերին զազրախոսելու մոդան հիմա Այլիս է՞լ է հասել»²: Սադային հուզել էր Այլիսի վերջին հայուհու՝ Անիկոյի մահվան լուրը:

Սադայը, զարմանքով նայելով Ջամալի թանկարժեք փափախին, հիշում է նրա կեղտոտ, ոջլոտած կեպին, որը մի օր ահով հանել էր նրա գլխից հայկանուշը:

Սադայը Ջամալին հանդիմանում է երախտամոռության համար, իսկ վերջինս բնավ չի վիրավորվում: Դերասանը եզրափակում է խոսքը. «Դու

¹ Աքրամ Այլիսլի, Քարակերտ երազներ, էջ 103:

² Նշվ. աշխ., էջ 103:

ծիշտ ես, հայերն իրենց Աստծու հետ միշտ էլ հաշտվել են»¹: Գրողն այս գլխում ևս անդրադառնում է Բաբաշ Ջիյադովի կերպարին, որն ստեղծել էր «Ժողովրդի նվիրյալների միություն» կազմակերպությունը և նրա նախագահն էր:

Սադայը հրաժարվում է խաղալ այն պիեսում, որտեղ պետք է փառաբանվի Առաջինը, քննադատվի Նախկինը: Իսկ երբ կրկին խոսք է բացվում Այլիսի հայերի մասին, նրա հոգում ասես դողանցում են նրա բոլոր 12 եկեղեցիների զանգերը, կրկին զայրույթով է խոսում Ադիֆ բեյի սև ձիու, մսագործ Մահմեդադայի սուրսայր դաշույնի մասին:

Ջրույցը տանելով թատրոնի տնօրենի հետ՝ Սադայն արտահայտում է իր զայրույթը երկրում տիրող քաղաքական իրավիճակի կապակցությամբ. «Այս երկու-երեք ամիսը լիուլի բավարար էր, որպեսզի հատուկ պատկերացում կազմեի, թե վերակառուցողական սույն ողջ կաղկանձը և քաղաքական ժխորն ուր են տանում երկիրը: Ես համոզվեցի, որ երկիրն այսպես անտաղանդորեն կարող են քանդել միայն գերանտաղանդ մարդիկ: Երկիրը վերածել են հսկա գծանոցի»²:

Սակայն դրանով չի սահմանափակվում Սադայ Սադըղլիի վրդովմունքը: Նա բացարձակ անարգանքի սյունին է գամում Բաբաշ Ջիյադովի զեղծարարությունը հայոց պատմության հանդեպ: Ջիյադովը հողված էր տպագրել «Կոմունիստ» թերթում՝ «Չայկական նենգ հետքը» խորագրով՝ Բաբախան Ջիյադխանլի ստորագրությամբ: Հողվածագիրը ստորությամբ վիրավորում է հայերին: Սադայը զարմանում է «Իստազըն» բառի նրա բացատրությամբ: Ըստ Բաբաշ Ջիյադովի՝ «Իստազըն» բառն ի սկզբանե նշանակել է «ուստա օզան» և, իբր, որպեսզի պատմության միջից ջնջեն այդ հողերի իրական բնիկների գոյության հետքերը, հայերը նենգամտորեն աղավաղել են այն, հարմարեցրել իրենց լեզվին: Իբր այս «ուստա օզանները» դեռևս մ.թ.ա. 3 հազար տարի ու ավելի առաջ լեռնային Այլիսից վերաբնակվել են Միջագետքում ու շուն-երում, այսինքն՝ հարթավայրում և այնտեղ հիմնել պետություն ու իրենց լեզվով կոչել «Շուներ»: Այդպես՝ այնտեղ սկիզբ է դրվել հնագույն մշակույթի, որը հիմա հայտնի է «Շուներական» անվամբ:

Սադըղլին զարմանում է Բաբախան Ջիյադխանլիի ցնդաբանությամբ: Ըստ այդ զեղծարարի՝ «Այլիս» բառը ծագել է «այլաջ» բառից, որը նշանակում է «բնակության վայր, բնակավայր»: Իբր Այլիսում հայեր երբեք

¹ Աքրամ Այլիսլի, Քարակերտ երազներ, էջ 104:

² Նշվ. աշխ., էջ 117-118:

չեն ապրել, և բոլոր եկեղեցիներն ու գերեզմանները նախկինում «օղա-րերեն» լեզվով կոչվել են «գյուր-օղ»՝ «նուլեգին կրակ» և հանդիսացել են հնագույն թուրքերի հողեր, իսկ այդ «հնագույն թուրքերը» առավել հայտ-նի են «աղվաններ» անվամբ: Սադայի զարմանքը շարունակվում է, երբ Բաբախան Ձիյադխանլին կրքոտ ձգտում է ապացուցել, որ մեր «ապե-րախտ» հարևանները ողջ պատմության ընթացքում փոփոխել են Ադր-բեջանի տեղանունները, դրանց տվել իրենց անունները: Օրինակ՝ Օդեր-մանը նրանք կոչել են Գարդման, Գյուրսուն՝ Գորիս, Գուրբաղը՝ Ղարա-բաղ, Էլվենդը՝ Երևան, այդ տարածքները ներկայացրել իբրև պատմակա-նորեն իրենցը: Տարածքը, որ օղայերեն կոչվել է Գապուարգըզ (այսինքն՝ մուտք, դարպաս), հետագայում ռուսականացվելով՝ դարձել է Կովկաս և եղել է հնագույն «էրմենների»՝ թուրք փաշայի այրերի երկիր, սակայն, իբր, մեր հարևաններն իրենց ազգի անունը վերցրել են հենց այդ բառից, ու հենց այդպես էլ Կովկասում ի հայտ է եկել առաջներում երբեք այնտեղ գոյություն չունեցած «էրմենի»՝ հայ ժողովուրդը: Կարդալով այս զառան-ցանքը՝ ինչպես գրում է Աքրամ Այլիսլին. «Դերասանը մտովի փողոց առ փողոց, տուն առ տուն անցնում էր Այլիսով՝ Իստազընից (Աստվածատուն) մինչև Վուրազըրդ (Վարդակերտ), իսկ ընթերցանությունն ավարտելով՝ հանկարծ, չգիտես ինչու, մտածեց, որ այլևս երբեք չի տեսնի Այլիսը, չի անցնի նրա այգիներով ու փողոցներով»¹:

Դերասանը վրդովված դիմում է թատրոնի տնօրենին. «Ո՞վ է Բաբաշ Ձիյադդին թույլատրել պետական պաշտոնաթերթում նման գարշահոտ աղբ տպագրել, և ինչո՞ւ այդ աղբի տակ ստորագրել է ոչ թե Բաբաշ Ձիյադդ, այլ Բաբախան Ձիյադխանլի անվամբ: Այդ տականքի տոհմում երբևէ ոչ խան է եղել, ոչ բեկ»²:

Յեղիմակը խիստ քննադատում է Բաքվի փողոցներում ամբոխների առկայությունը, նրանց, ովքեր, ամենուր «Ղարաբաղ, Ղարաբաղ» գոռա-լով, դարձել են իսկական աճաբարարներ: Գրողը, իր հերոսի արտահայ-տությամբ, նշում է, որ այդ «կռված տղերքը» թքած ունեն Ղարաբաղի վրա: Նրանց նպատակն այս իշխանությունը տապալելն ու իշխանու-թյունն իրենց ձեռքը վերցնելն է: Իսկ ամբոխը փողոցում հիմա լսում է միայն նրանց, ովքեր հայերին են հայհոյում:

Սադայ Սադղլին հրաժարվում է այն պիեսից, որտեղ պիտի մարմնա-վորեր նման քաղաքականությունը խրախուսող Առաջնորդի կերպարը:

¹ Աքրամ Այլիսլի, Քարակերտ երազներ, էջ 124:

² Նշվ. աշխ., էջ 125:

* * *

Գրքի չորրորդ՝ վերջին գլխի բնաբանը բերվում է գլխավոր հերոսներից մեկի՝ բժիշկ Աբասալիկի հավաստմամբ. «Եթե յուրաքանչյուր սպանված հայի համար գեթ մի մոմ վառվի՝ այդ մոմերի ցուլքը լուսնի լուսից վառ կլինի»:

